ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր»

12-րդ միջազգային գիտաժողով

Գյումրի, 26-27-ը սեպտեմբերի, 2025

Գյումրի 2025

ՀՏԴ 94(479.25):39(=19):008(082)
ԳՄԴ 63.3(5Հ)+63.5(5Հ)+71գ43
Շ 642

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:

Ժողովածուն հրատարակվում է «Hi Am» բարեգործական միության (ԱՄՆ) ու Գիտության և մշակույթի Ռուսաստանյան կենտրոնի Գյումրու մասնաճյուղի (Հայաստան) ֆինանսական աջակցությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Սերգո Հայրապետյան՝ բ.գ.դ. (գլխավոր խմբագիր), **Արկադի Ակոպով՝** պ.գ.թ., (պատասխանատու քարտուղար), **Կարինե Բազեյան՝** պ.գ.թ., **Աշոտ Գրիգորյան** (Հայկազուն)՝ ճարտ.գ.դ., **Արմեն Հայրապետյան՝** պ.գ.թ., **Հասմիկ Հարությունյան՝** արվ.գ.թ., **Սարգիս Պետրոսյան՝** պ.գ.դ., **Կոնդոր Ռուսլան** պ.գ.դ., (ՌԴ), **Կավրելիշվիլի Ռոին** պ.գ.դ., (Վրաստան), **Խոսրովևա Անահիտ** պ.գ.թ. (ԱՄՆ),

Շ 642 **«Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր»** 12-րդ միջազգային գիտաժողովի (Գյումրի, 26-27 սեպտեմբերի) նյութերի ժողովածու/ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն; Խմբ. խորհուրդ՝ Ս.Հայրապետյան և այլք-Եր.: «Գիտություն», 2025.- 376 էջ:

Ժողովածուն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի կողմից 2025թ. սեպտեմբերի 26-27-ին Գյումրիում անցկացվող «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 12-րդ միջազգային գիտաժողովին ներկայացված հաղորդումները, որոնք վերաբերում են հայագիտության տարբեր ոլորտների՝ պատմագիտության ու ժողովրդաբանության, ազգաբանության ու բանագիտության, հնագիտության ու մարդաբանության, ճարտարապետության ու արվեստագիտության հիմնախնդիրներին:

ՀՏԴ 94(479.25):39(=19):008(082)
ԳՄԴ 63.3(5Հ)+63.5(5Հ)+71գ43

ISBN 978-9939-1-2141-3
© Հեղինակային խումբ, 2025
© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2025

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
ШИРАКСКИЙ ЦЕНТР АРМЕНОВЕДЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ

REPUBLIC OF ARMENIA
NATIONAL ACADEMY OF SCIENCES
SHIRAK CENTER FOR ARMENOLOGICAL STUDIES

СБОРНИК МАТЕРИАЛОВ

«Историко-культурное наследие Ширака: современные вопросы арменоведения»

12-ая международная научная конференция
Гюмри, 26-27 сентября, 2025

COLLECTION OF MATERIALS

26-27 September, 2022, Gyumri
12th International Conference

“Historical and Cultural Heritage of Shirak: Contemporary Issues of Armenology”

Gyumri 2025 Гюмри

Печатается по решению ученого совета Ширакского центра
армановедческих исследований НАН РА

Is published by the decision of the Academic Council of the
Shirak Center for Armenological Studies of NAS RA

Сборник издаётся при финансовой поддержке Благотворительного фонда «Hi Am» (США) и Гюмрийского филиала Российского центра науки и культуры (РФ–Армения).

The collection is published with the financial support of the "Hi Am" Charity Foundation (USA) and the Gyumri branch of the Russian Center for Science and Culture (Russia-Armenia).

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Серго Айрапетян – д. ф. н. (главный редактор), **Аркадий Акопов** – к.ист. н. (ответственный секретарь**), Карине Базеян** – к. ист. н., **Ашот Григорян** (Айказун) – д. арх. н., **Асмик Арутюнян** – к. иск., **Армен Айрапетян** – к.ист. н., **Саргис Петросян** – д. ист. н., **Кандор Руслан -** д. ист. н. (РФ), **Каврелишвили Роин -** д. ист. н. **(**Грузия), **Хосроева Анаит -** к. ист. н., (США),

EDITORIAL BOARD

Sergo Hayrapetyan: Doctor of Philology (editor-in-chief), **Arkadi Akopov:** PhD in History (responsible secretary), **Lilit Asoyan:** PhD in History, Karine Bazeyan: PhD in History, **Ashot Grigoryan** (Haykazun): Doctor of Architecture, **Gagik Khachikyan:** Doctor of Philology, **Armen Hayrapetyan:** PhD in History, **Hasmik Harutyunyan:** PhD in Art Studies, **Sargis Petrosyan:** Doctor of History, **Kandor Ruslan:** Doctor of History (RF), **Kavrelishvili Roin:** Doctor of History (Georgia), **Khosroeva Anahit:** PhD in History (USA)

Сборник материалов 12-ой международной научной конференции “Историкокультурное наследие Ширака: современные вопросы арменологии” (Гюмри, 26-27 сентября,) / Ширакский центр армановедческих исследований НАН РА; Ред. совет: С. Айрапетян и др.- Ереван, “ Гитутюн”, 2025.- 376 стр.

Collection of materials of the 12th International Scientific Conference “Historical and Cultural Heritage of Shirak: Contemporary Issues of Armenology” (September 26-27, Gyumri) / Shirak Center for Armenological Studies of the National Academy of Sciences of Armenia; Ed. board: S. Hayrapetyan and others- Yerevan, “Gitutyun”, 2025.- 376 p

В сборник включены сообщения, представленные на 12-ой международной армановедческой научной конференции “Историко-культурное наследие Ширака”.

This volume comprises the scholarly papers presented at the 12th International Armenological Conference titled 'Historical and Cultural Heritage of Shirak.'"

© Авторская группа, 2025
© ШЦАИ НАН РА, 2025

© Authors group, 2025
© SCAS NAS RA, 2025

ԱԴԱՄՅԱՆ Սուսաննա (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ susannaiae@mail.ru

ՎԱՐՍԵՐ (ՎԻՄԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ)

Գեղարքունիքի մարզը, հարուստ լինելով պատմաճարտարապետական կոթողներով, ունի հարուստ վիմագրական ժառանգություն: Մինչև 20-րդ դարի 70-ական թթ. Գավառի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններից գրառվել, վերծանվել և հրատարակվել է մոտ 1600 վիմագիր, որոնց թիվը տարեցտարի ավելանում է՝ կապված հողաշինական, հնագիտական աշխատանքների հետ:

Հաշվի առնելով, որ մարզում կան բնակավայրեր, որոնք տարբեր ժամանակներում դուրս են մնացել հետազոտողների ուշադրությունից, մեր կողմից փորձ է արվել հավաքել, հրատարակել նորահայտ վիմագրերն ըստ իրենց բնակավայրի, բովանդակության և ժամանակաշրջանի՝ դրանով իսկ նյութը դարձնելով արդիական և նշանակալի:

Սույն հոդվածում ներկայացվում է մարզի Վարսեր գյուղի և դրա հարակից տարածքներից հավաքած, ընդօրինակված երկու տասնյակ վիմագրերի ուսումնասիրությունը, որը իրականացվել է մեր կողմից 2018-2019 թթ.:

Վարսերը պատմական աղբյուրներում հիշատակվում է դեռևս 9-րդ դարում Աշոտ Ա արքայի դստեր՝ Մարամ իշխանուհու կողմից Սևանավանքին նվիրաբերված գյուղերի շարքում: Փաստագրած և վերծանված հիշատակագրային վիմագրերը պահպանվել են հիմնականում գյուղի գերեզմանատանը միջնադարյան և հատկապես ուշ միջնադարյան խաչքարերի և հարթ տապանաքարերի վրա: Բնակավայրի վիմագրերը վկայում են 16-18-րդ դդ. տեղի բացարձակապես հայ բնակչության առկայության, մշակութային արժեքների, հասարակական հարաբերությունների մասին: Ուսումնասիրության նյութը լրացնում է մարզի վիմագրական ժառանգությունը, միաժամանակ հանդիսանում է խթան նոր վիմագրերի հայտնաբերման, հավաքման և պահպանման ուղղությամբ: Քանի որ դրանք վտանգված են բնական և մարդկային գործոնների ազդեցությամբ, ուստի վիմագրերի գրառումը, վերծանումն ու թվայնացումը պետք է դիտարկվի առաջնահերթություն:

Այսպիսով, հետազոտության միջոցով փորձում ենք նպաստել Վարսերի, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի պատմության և մշակութային ժառանգության ավելի խոր և բազմակողմանի ընկալմանը:

ADAMYAN Susanna (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: susannaiae@mail.ru

VARSER (EPIGRAPHIC STUDY)

The Gegharkunik province, rich with historical and architectural monuments, has a significant epigraphic heritage, which is important for understanding the history of the region. Until the 1970s about 1600 inscriptions from Gavar, Martuni and Vardenis were studied and published. As a result of the construction earthworks and archaeological excavations, the number of discovered inscriptions continues to increase.

Taking into account that there are settlements in the province which at different times have forgotten from the attention of researchers. We have attempted to collect and publish newly discovered inscriptions by settlement, content and historical period. This makes our research topical and significant.

This article presents the study of about two dozen inscriptions collected and copied from village of Varser and its surrounding areas, conducted in 2018-2019.

Varser is mentioned in historical sources as early as the 9-th century among the villages donated to Sevanavank Monastery by Princess Mariam, daughter of King Ashot I. The documented memorial inscriptions have been mainly preserved in the village cemetery, carved on medieval and especially late medieval khachqars (cross-stones) and flat tombstones. Those testify the presence of an exclusively Armenian population during the 16^{th}-18^{th} centuries, reflecting cultural values and aspects of social relations. The epigraphical heritage of the region at the same time serves as an incentive for discovering, collecting, and preserving new inscriptions of the region.

Since these inscriptions are endangered by natural and human factors, their documentation, deciphering, and digitization should be regarded as a priority.

Thus, through this research, we contribute to a deeper and more comprehensive understanding of the history and cultural heritage of Varser and more broadly the Gegharkunik Province.

АДАМЯН Сусанна (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: susannaiae@mail.ru

ВАРСЕР (ЭПИГРАФИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

Гегаркуникская область, богатая историко-архитектурными памятниками, также обладает значительным эпиграфическим наследием, которое важно для понимания истории региона. До 1970-х годов было изучено и опубликовано около 1600 надписей из районов Гавар, Мартуни и Варденис. В результате строительных, земляных

работ и археологических раскопок количество обнаруженных надписей продолжает увеличиваться.

Учитывая, что в области имеются населенные пункты, которые в разные периоды оставались вне поля зрения исследователей, нами предпринята попытка собрать и опубликовать вновь выявленные эпиграфические памятники, распределив их по населенным пунктам, содержанию и эпохе. Таким образом материал приобретает актуальность и научную значимость.

В данной статье представлено исследование около двух десятков надписей, собранных и скопированных в селе Варсер и его окрестностях в 2018-2019 годах. Варсер упоминается в исторических источниках уже в 9-ом веке среди деревень подаренных Севанаванку княгиней Мариам, дочерью царя Ашота I. Зафиксированные и расшифрованные памятные надписи в основном сохранились на территории сельского кладбища высеченные на средневековых и особенно позднесредневековых хачкарах и плоских надгробиях. Надписи Варсера свидетельствуют о присутствии исключительно армянского населения в 16-18-ых веках, отражая культурные ценности и особенности общественных отношений. Это исследование обогащает эпиграфическое наследие региона и одновременно служит стимулом для дальнейшего выявления, сбора и сохранения новых надписей в этом районе.

Поскольку эти надписи находятся под угрозой из-за воздействия природных и антропогенных факторов, их фиксация, расшифровка и оцифровка должны рассматриваться как приоритетное направление. Таким образом посредством данного исследования мы стремимся способствовать более глубокому и всестороннему пониманию истории и культурного наследия Варсера, а также в целом Гегаркуникской области.

ՂՂԻԿՅԱՆ Լևոն (Հայաստան)
Շիրակի երկրագիտական թանգարան
էլ. հասցե՝ Levonaghikyan@gmail.com

ԲԵՆԻԱՄԻՆ. ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ (2022-2025 ԹԹ. ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ)

Սույն զեկուցման մեջ ներկայացված են 2022 թ. Շիրակի երկրագիտական թանգարանի փրկարարական պեղումների և 2023-2025 թթ. հայ-ֆրանսիական (Շիրակի երկրագիտական թանգարան/Լիոն 2 համալսարան) համատեղ արշավախմբի դաշտային աշխատանքների արդյունքները: Երկարատև դադարից հետո հայ-ֆրանսիական նոր ձևավորված արշավախումբը վերսկսել է դաշտային հնագիտական հետազոտական աշխատանքները Բենիամինի ողջ հնավայրի և հատկապես աբեմեն-

յան պալատի տարածքում: Արշավախմբի հիմնական նպատակն է նորագույն մեթոդներով փաստագրել հնավայրի անավարտ կամ չուսումնասիրված խնդիրները, մասնավորապես՝ հուշարձանի հստակ սահմանների ճշտումը և դրան հարակից անհայտ հնավայրերի փաստագրում, բարձորակ և մանրակրկիտ օդալուսանկարահանում, պեղված և չպեղված տարածքների չափագրում և տեղադրում կոորդինատային համակարգում, երկրաֆիզիկական մեթոդներով հնավայրի չբացված հատվածների ստորգետնյա սկանավորում քարտեզագրում և մ.թ.ա. 4-մ.թ.2 դարերում Բենիամինի լանդշաֆտի և բնակլիմայական պայմանների փաստագրում՝ հատկապես նշված ժամանակաշրջանում առկա ջրային պաշարների բնահուների հայտնաբերում:

Հետազոտական թիմը նաև ձեռնամուխ է եղել մոտ 20 տարի առաջ իրականացված պեղումների արդյունքների, արխիվային նյութերի թվայնացմանը և Շիրակի երկրագիտական թանգարանի պահոցներում զետեղված գտածոների վերաուսումնասիրմանը:

Մեր խորին համոզմամբ՝ մոտ կես դար կարևորությունը չկորցրած և գիտական գրականության մեջ «դրասխանակերտ» անունը ստացած Հայաստանի հյուսիսային շրջանների աքեմենյան և անտիկ ադմինիստրատիվ կենտրոնի՝ նորագույն մեթոդներով ուսումնասիրությունն այժմ ավելի քան արդիական է:

AGHIKYAN Levon (Armenia)
Shirak Geological Museum
e-mail: Levonaghikyan@gmail.com

BENYAMIN: NEW APPROACHES (RESULTS OF 2022-2025 FIELD WORK)

This report presents the results of the 2022 rescue excavations conducted by the Shirak Regional Museum and the 2023–2025 fieldwork carried out by the Armenian-French joint expedition (Shirak Regional Museum / Lyon 2 University). After a long hiatus, the newly formed Armenian-French team has resumed archaeological field research at the entire Benyamin site, with a particular focus on the Achaemenid palace area.

The main objective of the expedition is to document the unresolved or unexplored aspects of the site using modern methodologies—specifically, to clarify the exact boundaries of the site and document adjacent, previously unknown archaeological sites; to conduct high-quality and detailed aerial photography; to measure and geolocate both excavated and unexcavated areas; to perform underground scanning and mapping of unexcavated sections using geophysical methods; and to document the landscape and climatic conditions of Benyamin from the 4th century BC to the 2nd century AD, with special attention to identifying the natural courses of water resources during that period.

The research team has also undertaken the digitization of archival materials from excavations conducted about 20 years ago and the reanalysis of artifacts stored in the collections of the Shirak Museum of Regional Studies.

We firmly believe that the renewed study of the Achaemenid and Antique administrative center in the northern regions of Armenia—known in scientific publications under the name "Draskhanakert" and whose importance has not diminished over half-century—is now more relevant than ever.

АГИКЯН Левон (Армения)
Ширакский геологический музей
e-mail: Levonaghikyan@gmail.com

БЕНИАМИН: НОВЫЕ ПОДХОДЫ (РЕЗУЛЬТАТЫ ПОЛЕВЫХ РАБОТ 2022-2025 ГОДОВ)

Этот отчет представляет результаты спасательных раскопок 2022 года, проведённых Ширакским краеведческим музеем, а также полевых работ 2023–2025 годов, осуществляемых армяно-французской совместной экспедицией (Ширакский краеведческий музей / Университет Лион 2). После длительного перерыва вновь сформированная армяно-французская команда возобновила археологические полевые исследования на всём памятнике Бениамин, с особым вниманием к району ахеменидского дворца.

Основная цель экспедиции — документирование нерешённых или ранее не исследованных аспектов памятника с использованием современных методик. В частности, предполагается уточнить точные границы памятника и зафиксировать прилегающие, ранее неизвестные археологические участки; провести высококачественную и детализированную аэрофотосъёмку; осуществить измерения и геолокацию как раскопанных, так и нетронутых зон; выполнить подземное сканирование и картографирование нераскопанных участков с применением геофизических методов; а также задокументировать ландшафтные и климатические условия местности Бениамин с IV века до н.э. по II век н.э., уделяя особое внимание определению естественных русел водных ресурсов того периода.

Научная группа также приступила к цифровке архивных материалов раскопок, проведённых около 20 лет назад, и к повторному анализу артефактов, хранящихся в коллекции Ширакского краеведческого музея.

Мы твердо убеждены, что обновленное изучение ахеменидского и античного административного центра в северных регионах Армении — известного в научной литературе под названием «Драскханакерт», значение которого не утратилось за полвека — сегодня актуальнее, чем когда-либо.

ԱՎԱԳՅԱՆ Ինգա (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան
էլ. հասցե՝ inga.avagyan.76@mail.ru

«ՍԵՎ ԱՄՐՈՑ» ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՈՒՄ ՊԵՂՎԱԾ ԾԻՍԱԿԱՆ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Կումայրի» արգելոց-թանգարանի եզակի ցուցանմուշներից մեկը՝ ծիսական ցուլն է, որը շահեկանորեն առանձնանում է մյուս ցուցանմուշներից: Արձանիկը համարվում է ցուցադրության հնագիտական հավաքածուի հնագույն գտածոներից մեկը և թվագրվում է Ք.ա. IV-III հազարամյակներով: Ծիսական ցուլը պեղվել է Գյումրու տարածքում գտվող «Սև ամրոց» հնագիտական հուշարձանի վաղ բրոնզիդարյան բնակատեղիից 1993-94թթ. պեղումների ժամանակ (Ս. Տեր-Մարգարյան, Ն. Պողոսյան, Ի. Ավագյան): Բնակատեղիի հատակին 54 սմ խորության վրա հայտնաբերվել է 120 սմ տրամագիծ ունեցող կավածեփ օջախ, որի նմանօրինակը հայտնի է Ամիրանիս-գորայից: Օջախից 70 սմ հյուսիս - արևելք, 30 սմ խորության վրա հայտնաբերվել է թրծակավից պատրաստված ցուլի խիստ ոճավորված արձանիկ (17 X 9 X 10 սմ): Ծիսական արձանիկին թույլ նմանություն ունեցող արձանիկներ հայտնի են Հառիճից և Քյուլ-թափայից, սակայն դրանք տարբերվում են նաև կատարման տեխնիկայով և կարևոր են արձանիկի թվագրման համար: Արձանիկի մոտակայքում պեղվել են թրծակավից մեկ այլ նմանօրինակ նմուշի բեկորներ: Ցուլը և այն միջավայրը, որում պեղվել է արձանիկը՝ օջախը, օջախի հենակը, գտածոն կապում են վաղ բրոնզիդարյան հավատալիքների հետ: Ակնառու է հատկապես ցլի ուժն ու հզորությունը, որպես օջախի հովանավոր գործոն: Ուշ բրոնզ-վաղերկաթիդարյան դարաշրջանում ցլի պաշտամունքի հետ են կապվում տիեզերքի մոդելների վրա Կլոր ձև ունեցող Երկիր մոլորակը խորհրդանշող սկավառակի կենտրոնում տապարացուլը՝ շրջապատված երկու օղակով (ջրով և մթնոլորտով): Տապարիկի ձև հիշեցնող այս մանրամասնը մասնագետները նաև անվանում են ցուլ, եզան կամ ցուլի գլուխ և տապարացուլ: «Սև ամրոցի» ծիսական ցուլը վերականգնվել է Շիրակի երկրագիտական թանգարանի վերականգնող մասնագետ Համլետ Ավետիսյանի ջանքերով, մի քանի ամիս ցուցադրվել է Ֆրանսիայի Նանտ քաղաքում կազմակերպված ցուցահանդեսում: Վաղ բրոնզիդարով թվագրվող հաջորդ գտածոն Գուսանագյուղից հայտնաբերված ծիսական օջախի մաս կազմող խոյն է, որը բնորոշ է Շիրակի և Հայաստանի վաղբրոզիդարյան հնագիտական հուշարձաններին և լրացնում է թանգարանի ցուցադրությունը: Ծիսական օջախի նմանօրինակները պահպանվում են Շիրակի երկրագիտական թանգարանում: Վաղ բրոնզով կարելի է թվագրել նաև «Սև ամրոցից» հայտնի երկու մարդակերպ կուռքերը, որոնք պեղվել են ուշ բրոնզ-վաղերկաթիդարյան դամբարաններից մեկում: Դրանք պարզունակ են, ունեն պարզ փոսիկներով ոճավորված աչքեր, քիթ և բերան: Կուռքերի՝ դամբարանում հայտնվելու մասին երկու վարկած կա: Կա՛մ դրանք դրվել են դամբարան որպես ուղեկցող նյութ

և այս դեպքում թվագրվում են Ք.ա. XII-X դդ., կա՛մ Ք.ա. XII-X դդ. թվագրվող դամբարանում են հայտնվել ավելի վաղ հնագիտական շերտերից: Հաշվի առնելով, որ դամբարանի միջավայրը խաթարել է վաղ բրոնզիդարյան հնագիտական շերտի երկրորդ շինարարական հորիզոնը, հնարավոր է, որ լիցքի հետ քանդված սրբարանի կուռքերը հայտնվել են թիվ ութ մանկական դամբարանում:

Ավելացնենք նաև, որ լիցքի մեջ առկա է նաև աղորիքի ստորին մասից մի կոտրված հատված: Ծիսական առարկաներից ամենաերիտասարդը Ք.ա. VIII-VI դարերով թվագրվող սև թրծակավից արձանիկի բեկորն է, որը ձի կամ ռնգեղջյուր է հիշեցնում: Արձանիկը պեղվել է «Սև ամրոցի» ուրարտական դարաշրջանով թվագրվող կառույցում: Նմանօրինակները Ծաղկահովտի, Շենգավիթի, ավելի ուշ նմանօրինակները՝ Բենիամինի հուշարձաններում են: Ըստ Ռուբեն Բադալյանի բանավոր հաղորդման՝ շենգավիթյան նմուշը անհամեմատ երիտասարդ պիտի լինի և թվագրվի այնպես, ինչպես մեր «Սև ամրոցի» սև թրծակավից արձանիկը:

AVAGYAN Inga (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
"Kumayri" Historical-Cultural Reserve-Museum
e-mail: inga.avagyan.76@mail.ru

ABOUT RITUAL STATUETTES EXCAVATED IN THE ARCHAEOLOGICAL MONUMENT “BLACK FORTRESS”

One of the unique exhibits of the exposition of the historical and cultural museum-reserve ‘Kumairi’ is a ritual bull, which especially stands out among other exhibits. The statuette is considered to be one of the oldest finds in the archeological collection of the exposition and is dated IV-III millennia BC. The ritual bull was excavated in 1993-94 in the Early Bronze Age settlement of the archeological monument ‘Black Fortress’ located in the city of Gyumri (S. Ter-Margarian, N. Poghosyan, I. Avagyan). During the excavations a clay hearth with a diameter of 120 cm was found on the floor of the dwelling at a depth of 54 cm, a similar sample of which is known from the Amiranis-Gora monument. A strongly stylised terracotta bull statuette (17 X 9 X 10 cm) was found 70 cm north-east of the hearth, at a depth of 30 cm. Statuettes bearing a faint resemblance to our ritual statuette are known from Arıç and Kül-tepa, but they also differ in execution technique and are important for the dating of the statuette. Fragments of another similar specimen made of terracotta were excavated next to the statuette. The bull and the environment in which the statuette was excavated - hearth, hearth support - link the find to Early Bronze Age beliefs. The strength and power of the bull as the patron saint of the domestic hearth is particularly noticeable. In the Late Bronze-Early Iron Age, the bull cult is associated with a round disc symbolising the planet Earth on models of the universe, with a stylised bull symbol in the centre surrounded by two rings (water and atmosphere). This detail, resembling an axe in shape, is also called bull, bull's head or and axe. The ritual bull

of the ‘Black Fortress’ was restored through the efforts of Hamlet Avetisyan, a restorer of the Shirak Local History Museum, and was exhibited for several months at an exhibition organized in Nantes, France.

The next finding belonging to the Early Bronze Age is a ram, a ritual hearth leg discovered in Gusannagyugh, which is typical for the archaeological monuments of the Early Bronze Age not only in Shirak, but also in Armenia and complements the museum's exposition. Similar models of the ritual hearth are kept in the Local History Museum of Shirak. Two anthropomorphic idols known from the ‘Black Fortress’, which were excavated in one of the Late Bronze-Early Iron Age burials, can also be dated to the Early Bronze Age. They are primitive, having simple stylised eyes, nose and mouth with holes. There are two versions of the appearance of idols in the burial. Either they were placed in the burial as accompanying material, in which case they are dated to the XII-X centuries B.C., or they entered the burial of the XII-X centuries B.C. from earlier cultural layers.

Taking into account that the burial environment disturbed the second construction horizon of the archaeological layer of the Early Bronze Age, it is possible that the idols from the destroyed sanctuary, together with the backfill, ended up in the children's burial No. 8. In the backfill of the burial there is also a broken off part of the lower part of the grain grinder. The youngest of the ritual objects is a fragment of a black terracotta statuette dated to the 8^{th}-11^{th} centuries B.C. It resembles a horse or a rhinoceros. The figurine was found in the Urartian era construction of the monument ‘Black Fortress’.

Similar examples are found in the monuments of Tsakhkahovit, Shengavit, and more recently in Beniamin.

According to Ruben Badalyan's oral report, the Shengavit specimen should be incomparably younger and dated in the same way as the terracotta black’ statuette from the “Black Fortress”.

АВАГЯН Инга (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Историко-культурный музей-заповедник "Кумайри"
e-mail: inga.avagyan.76@mail.ru

О РИТУАЛЬНЫХ СТАТУЭТКАХ РАСКОПАННЫХ В АРХЕОЛОГИЧЕСКОМ ПАМЯТНИКЕ «ЧЕРНАЯ КРЕПОСТЬ»

Одним из уникальных экспонатов экспозиции историко-культурного музея-заповедника «Кумайри» является ритуальный бык, который особенно выделяется среди других экспонатов.

Статуэтка считается одной из древнейших находок в археологической коллекции экспозиции и датируется IV-III тысячелетиями до р. Х. Ритуальный бык был раскопан в 1993-94 гг. в городище раннего бронзового века археологического

памятника «Черная крепость», расположенного в городе Гюмри (С. Тер-Маргарян, Н. Погосян, И. Авагян). В ходе раскопок на полу жилища на глубине 54 см был обнаружен глиняный очаг диаметром 120 см, аналогичный образец которого известен из памятника Амиранис-гора. В 70 см к северо-востоку от очага, на глубине 30 см, была найдена сильно стилизованная статуэтка быка из терракоты (17 Х 9 Х 10 см). Статуэтки, имеющие слабое сходство с нашей ритуальной статуэткой, известны из Арича и Кюль-тепы, но они также отличаются техникой исполнения и важны для датировки статуэтки. Рядом со статуэткой были раскопаны фрагменты другого похожего образца, выполненного из терракоты. Бык и среда, в которой была раскопана статуэтка — очаг, опора очага — связывают находку с верованиями раннего бронзового века. Особенно заметна сила и мощь быка, как покровителя домашнего очага. В эпоху поздней бронзы — раннего железного века культ быка связан с круглым диском, символизирующим планету Земля на моделях вселенной, в центре стилизованный символ быка окруженный двумя кольцами (вода и атмосфера). Эту деталь, напоминающую по форме топорик, также называют быком, головой быка или и топорик. Ритуальный бык «Черной крепости» был восстановлен усилиями Гамлета Аветисяна, реставратора Ширакского краеведческого музея, и в течение нескольких месяцев экспонировался на выставке, организованной в Нанте, Франция. Следующая находка, относящаяся к раннему бронзовому веку — это овен, ножка ритуального очага, обнаруженная в Гусанагюхе, которая типична для археологических памятников раннего бронзового века не только Ширака, но и Армении и дополняет экспозицию музея. Аналогичные модели ритуального очага хранятся в Краеведческом музее Ширака. Известные из «Черной крепости» два антропоморфных идола, которые были раскопаны в одной из погребений позднего бронзового — раннего железного века, также могут быть датированы ранним бронзовым веком. Они примитивны, имеют простые стилизованные глаза, нос и рот с отверстиями. Существует две версии появления идолов в погребении. Либо они были помещены в погребение в качестве сопутствующего материала и в этом случае датируются XII–X вв. до р. Х., либо они попали в погребение XII–X вв. до р. Х. из более ранних культурных слоев. Учитывая, что среда погребения нарушила второй строительный горизонт археологического слоя раннего бронзового века, не исключено, что идолы из разрушенного святилища, вместе с засыпкой, оказались в детском погребении № 8. В засыпке погребения имеется также отломанная часть нижней части зернотерки. Самый молодой по датировке из ритуальных предметов - фрагмент черной, терракотовой статуэтки, датируемой VIII-VI вв. до р. Х. Она напоминает лошадь или носорога. Фигурка была найдена в сооружении урартской эпохи памятника «Черная крепость». Аналогичные примеры имеются в памятниках Цахкаовита, Шенгавита, более поздние - Бениамина. Согласно устному сообщению Рубена Бадаляна, шенгавитский экземпляр должен быть несравненно моложе и датироваться так же, как и терракотовая черная статуэтка из «Черной крепости».

ՂԱԶԱՐՅԱՆ Գոռ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտ
էլ. հասցե՝ ghazaryan3329@gmail.com

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ. ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սևանա լիճը, հանդիսանալով Հարավային Կովկասի ամենամեծ քաղցրահամ լիճը, Հայաստանի Հանրապետության համար ունի ինչպես էկոլոգիական և տնտեսական, այնպես էլ ազգային-ռազմավարական նշանակություն: Սևանա լիճը համարվում է հայ ժողովրդի ազգային խորհրդանիշներից մեկը, ուստի վերջինիս վերաբերող յուրաքանչյուր հիմնախնդիր մեծ արձագանք է ստանում հայ հանրության շրջանում՝ ընդգրկելով հասարակական-քաղաքական տարբեր ոլորտներ:

Խորհրդային շրջանում Սևանա լճի մակարդակի իջեցումն առաջ բերեց էկոլոգիական տարաբնույթ հիմնախնդիրներ: Լճի մակարդակի իջեցումից հետո հայտնաբերվեցին մի շարք հնագիտական հուշարձաններ, ինչը պարզ դարձրեց, որ լճի մակարդակի տատանումները պայմանավորված են ինչպես մարդածին, այնպես էլ բնական գործոններով:

Լճաշեն, Ծովազարդ, Քանագեղ և Արտանիշ հնավայրերի ուսումնասիրությունները, ինչպես նաև մատենագիրների վկայությունները կարևոր տվյալներ են տալիս լճի մակարդակի ուսումանսիրության համար: Դրանց համադրությունը երկրաբանական տվյալների հետ դառնում է առանցքային մեթոդ՝ լճի մակարդակի տատանումների կորը հավաստի վերականգնելու համար:

Սույն աշխատանքում փորձ է արվել միջգիտակարգային մոտեցմամբ՝ արդի երկրաբանական, պատմական և հնագիտական տվյալների հիման վրա ներկայացնել հոլոցենում Սևանա լճի մակարդակի տատանումները: Քննարկվել են Սևանա լճի մակարդակի տատանումներին վերաբերող նորահայտ երկրաբանական տվյալները, Սևանի ավազանի բնապատմական միջավայրը և շրջակա հնագիտական հուշարձանների հետ փոխկապակցվածությունը:

Սևանա լճի մակարդակի տատանումների խնդիրը կարևոր նշանակություն ունի նաև Հայաստանի հնագիտության և Հայոց պատմության համար, քանզի Սևանի ավազանը մարդու և հայ ժողովրդի հնագույն օրրաներից է՝ Հայաստանի պատմական մեծ նշանակություն ունեցող երկրամասերից մեկը:

Աշխատանքը նպատակ ունի նաև ընդգծել պատմական և երկրաբանական գիտությունների սերտ փոխկապակցվածությունը, ինչպես նաև ներկա գիտական հետազոտություններում դրա կարևորությունը:

GHAZARYAN Gor (Armenia)
Institute of Geological Science of NAS RA
e-mail: ghazaryan3329@gmail.com

THE PROBLEM OF STUDYING LAKE SEVAN'S WATER LEVEL FLUCTUATIONS: INTEGRATING ARCHAEO-HISTORICAL AND GEOLOGICAL DATA

Lake Sevan, as the largest freshwater lake in the South Caucasus, holds immense ecological, economic, and national-strategic significance for the Republic of Armenia. Recognized as one of the Armenian people's national symbols, any issue concerning the lake resonates deeply within the Armenian society, spanning various socio-political spheres.

During the Soviet era, the artificial lowering of Lake Sevan's water level led to diverse ecological challenges. However, this intervention also revealed numerous archaeological sites, demonstrating that the lake's water level fluctuations result from both anthropogenic and natural factors.

Studies of archaeological sites such as Lchashen, Tsovazard, Kanagegh, and Artanish, combined with historical chronicles, provide crucial data for understanding the lake's hydrological history. Integrating these findings with geological data forms a key methodology for reliably reconstructing the lake's water level fluctuations.

This study employs an interdisciplinary approach, utilizing modern geological, historical, and archaeological data to examine Lake Sevan's water level variations during the Holocene epoch. It discusses newly discovered geological evidence related to these fluctuations, the paleoenvironmental context of the Sevan basin, and its interconnection with surrounding archaeological sites.

The issue of Lake Sevan's water level fluctuations holds particular importance for Armenian archaeology and history, as the Sevan basin represents one of humanity's and the Armenian people's ancient cradles, being among Armenia's most historically significant regions.

This work also aims to emphasize the close interdependence between historical and geological sciences and highlight their critical role in contemporary scientific research.

КАЗАРЯН Гор (Армения)
Институт геологических наук НАН РА
e-mail: ghazaryan3329@gmail.com

ПРОБЛЕМА ИЗУЧЕНИЯ КОЛЕБАНИЙ УРОВНЯ ОЗЕРА СЕВАН: СОПОСТАВЛЕНИЕ АРХЕОЛОГО-ИСТОРИЧЕСКИХ И ГЕОЛОГИЧЕСКИХ ДАННЫХ

Озеро Севан, являясь крупнейшим пресноводным водоемом Южного Кавказа, имеет важное экологическое, экономическое и стратегическое значение для Республики Армения. Как один из национальных символов армянского народа, любые вопросы, связанные с озером, находят широкий отклик в армянском обществе, затрагивая различные социально-политические сферы.

В советский период искусственное понижение уровня озера Севан привело к многочисленным экологическим проблемам. Однако это вмешательство также позволило обнаружить множество археологических памятников, демонстрируя, что колебания уровня воды обусловлены как антропогенными, так и природными факторами.

Исследования археологических объектов (Лчашен, Цовазард, Канагех, Артаниш) вместе с данными исторических хроник предоставляют важную информацию для изучения гидрологической истории озера. Комбинация этих данных с геологическими исследованиями формирует ключевой методологический подход для достоверной реконструкции колебаний уровня воды.

В данной работе применяется междисциплинарный подход, использующий современные геологические, исторические и археологические данные для анализа изменений уровня озера Севан в голоцене. Рассматриваются новые геологические данные, связанные с этими колебаниями, палеосредовые условия бассейна Севана и его взаимосвязь с окружающими археологическими памятниками.

Проблема колебаний уровня озера Севан имеет особое значение для армянской археологии и истории, поскольку бассейн Севана представляет собой одну из древнейших колыбелей человечества и армянского народа, являясь одним из наиболее исторически значимых регионов Армении.

Данное исследование также подчеркивает тесную взаимосвязь исторических и геологических наук и их важную роль в современных научных изысканиях.

ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ levoncultur@gmail.com
ԴԱՎԹՅԱՆ Ռուբեն (Գերմանիա)
Հալլե Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարան
ԱՌՆՈԼԴ Սիմոնե (Գերմանիա)
Հելգոլանդի թանգարան
ՎԱՐԴԱՆՅԱՆ Բենիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ vbenik@yahoo.com
ԹԱԴԵՎՈՍՅԱՆ Անժելա (Հայաստան)
Վաղարշապատի պատմագգագրական թանգարան

ԽԱՆՋՅԱՆ ԳՅՈՒՂԻ ԾԻՍԱՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Խանջյան նորահայտ ամրոցը հայտնաբերվել է 2021 թ.: Այն գտնվում է ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի կենտրոնից 8,62 կմ դեպի հյուսիս-արևմուտք՝ ՀՀ ՊՆ մարշալ Հովհաննես Բաղրամյանի անվան զորավարժարանի հարավային ծայրամասում տեղակայված, շրջակա միջավայրի վրա իշխող դիրք ունեցող, 912 մ. ծ. մ. բարձրությամբ և մոտ 3,60 հա տարածք զբաղեցնող ժայռոտ բլրին: Ամրոցը Արգիշտիխինիլի (Արմավիր) հնավայրից գտնվում է 14 կմ հյուսիս-արևմուտք, իսկ Երվանդաշատից՝ 26 կմ հյուսիս-արևելք: Այս հանգամանքն էլ կարևորում է հուշարձանի վերին շերտերի կապը այդ հուշարձանների հետ:

Բլուրն ունի հյուսիս-հարավ ձգվածություն՝ մոտ 180 մ երկարությամբ և 110 մ լայնությամբ, իսկ հարաբերական բարձրությունը՝ մոտ 20 մ է: Խորհրդային տարիներին բլրի շրջակայքում անցկացվել են առուներ, տեխնիկայի միջոցով մելորացրել՝ խոշոր քարերից ազատել և հարթեցրել են տարածքը գյուղատնտեսական նպատակներին ծառայեցնելու համար: Այս ամենից խիստ տուժել է բնակավայրը, որը տարածվում է բլրի լանջերին:

Բլուրը կազմված է մի քանի ամրացված դարավանդներից, որոնք դեպի վեր հետզհետե նեղանալով՝ հասնում են հարթ գագաթին: Այստեղ, ամենաբարձր մասում նկատելի էին մի քանի քարերի շարքեր: Հավանաբար, խորհրդային տարիներին գագաթի ամենաբարձր կետում եղել է երկաթե եռոտանի՝ երկրաբաշխության (գեոդեզիա) նպատակով, որից մնացել են մոտ երկու մետրանոց փոս և որոշ բետոնե կտորներ:

Բլուրի գագաթին պեղումներով բացվեց 8x7 մ չափերով, ուղղանկյուն հատակագծով հոծ աշտարակ: Այն պահպանվել է տեղ-տեղ մինչև երկու մետր չափով:

Աշտարակի նիստերը շարվել են խոշոր, որոշակի ձև տված քարերով՝ լայնակի դրված, որոնց չափերը տատանվում են 70-100 սմ երկարությամբ և 50-70 սմ լայնությամբ: Աշտարակի ներսույթը ծածկվել է մանր և միջին մեծության քարերի լիցքով՝ հողով (գուցե կավաշաղախով) շաղված: Պեղման ընթացքում, աշտարակի կանոնավոր մասերը բացելու համար հեռացվեցին մեծ քանակությամբ քարեր՝ տարբեր չափերի, որոնք աշտարակից թափված քարերը պետք է լինեին: Ըստ այդ քանակի՝ որոշակիանում է աշտարակի վիզուալ վերակազմությունը, որով աշտարակը բավակա-

նին բարձր կարող էր լինել ներկայիս պահպանված վիճակից: Հավանաբար աշտարակի նիստերի արտաքին հատվածները նույնպես ծեփվել և հարթեցվել են հողով (կավով՞), ինչի մասին խոսում է կրեմագույն չոր փոշու քանակը, այն դեպքում, երբ բնահողը աղքատիկ է և քարքարոտ:

Աշտարակի բոլոր կողմերում բացվեցին խոշոր կարասներ, որոնք in situ (իրենց տեղում) են: Այն ծածկված էր նախ հրդեհված հաստ շերտով, որի տակ էլ բացվեց անչափ հարուստ մշակութային շերտը՝ մ.թ.ա. 6-3-րդ դդ վերաբերող նյութերով: Այս շերտն էլ իր հերթին ավարտվում է ողորկ և անչափ խնամքով կոկված քարե սալահատակին: Սալահատակը հատկապես լավ է մնացել աշտարակի արևմտյան մասում, գուցե սա շարունակվի ավելի արևմուտք և ծածկի ողջ գագաթը: Թեպետ գագաթը ամբողջությամբ պեղված չէ, սակայն դեռ հողով ծածկված վիճակով էլ երևում է, որ այն հարթեցված և հարմարեցված է արարողությունների համար:

Սակայն կարասային իրավիճակներից ամենանշանավորը աշատարակի հյուսիսում էր: Ի տարաբերություն արևմտյան և հարավային մասում բացված կարասների, սա ամբողջական է և տեղակայված է քարե շարքի մեջ: Պեղումներով պարզվեց, որ այստեղ կարասային թաղում է: Այս կարևոր բացահայտումով էլ աշտարակը ստացավ կոնկրետ հնագիտական համատեքստ՝ թաղումնային, դամբարանային:

Այն որ իր մոնումենտալությամբ, զբաղեցրած դիրքով, ճարտարապետական ուրույն ձևով աշտարակը ենթադրելի էր, որ պիտի կապ ուներ ծիսապաշտամունքի հետ, կարասային այս թաղումով ավելի հաստատվեց: Այսպիսով, Հայաստանի ավելի հին՝ մեգալիթյան աշտարակների նման՝ Խանջյանի աշտարակը նույնպես կապվեց թաղման ծեսի հետ:

MKRTCHYAN Levon (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: levoncultur@gmail.com
DAVTYAN Ruben (Germany)
Martin Luther University of Halle Wittenberg
ARNOLD Simone (Germany)
Helgoland museum
VARDANYAN Benik (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: vbenik@yahoo.com
TADEVOSYAN Angela (Armenia)
Vagharshapat Historical and Ethnographic Museum

THE RITUAL AND CULTIC COMPLEX OF KHANJYAN VILLAGE

The newly discovered Khanjyan fortress was identified in 2021. It is located 8.62 km northwest of the center of the Armavir community in the Armavir region of the Republic of Armenia, situated on a rocky hill at an elevation of 912 meters above sea level (m a.s.l.), occupying an area of approximately 3.60 hectares. The site lies on the southern

outskirts of the Marshal Hovhannes Baghramyan military training ground, commanding the surrounding environment. The fortress is positioned 14 km northwest of the Argishti-Khinili (Armavir) archaeological site and 26 km northeast of Yervandashat. This proximity suggests a cultural or chronological connection between the upper stratigraphic layers of the monument and these historical sites.

The hill extends along a north-south axis, approximately 180 meters in length and 110 meters in width, with a relative height of about 20 meters. During the Soviet period, irrigation canals were constructed around the hill, and the area was reclaimed and leveled using machinery—cleared of large stones and prepared for agricultural use. These interventions severely damaged the settlement that extended along the hill's slopes.

The hill comprises several fortified terraces which gradually narrow upward, culminating in a flat summit. On the highest part of the summit, several rows of stones were visible. It is presumed that during the Soviet era, the highest point of the summit hosted a metal tripod used for geodetic (surveying) measurements, remnants of which include a pit approximately two meters deep and some concrete fragments.

Excavations at the hilltop revealed a substantial rectangular tower measuring 8 by 7 meters, preserved in some places up to two meters in height. The tower's foundations consist of large, shaped stones placed transversely, measuring between 70 and 100 cm in length and 50 to 70 cm in width. The interior fill of the tower was covered with a layer of small to medium-sized stones bound together with soil, possibly mixed with clay-based mortar. During excavation, a significant number of stones of various sizes were removed to expose the tower's regular structure; these stones likely originated from the collapsed tower walls. Based on their quantity, a visual reconstruction suggests that the tower was considerably taller than its currently preserved state. It is probable that the external parts of the tower's foundations were also plastered and leveled with soil or clay, as indicated by the presence of pale gray dry powder, contrasting with the poor and rocky natural soil.

Large ceramic vessels (jars) were found in situ around all sides of the tower. They were covered by a thick layer of burnt deposits, beneath which an exceptionally rich cultural layer dating to the 6th to 3rd centuries BCE was uncovered. This layer ends with a carefully crafted, hollowed stone pavement. The pavement is especially well preserved on the western side of the tower and possibly extends further west and along the entire summit of the wall. Although the summit has not been fully excavated, even the portions still covered with soil indicate that it was leveled and adapted for ritual purposes. However, the most significant ceramic context was discovered north of the tower. Unlike the fragmented vessels uncovered on the western and southern sides, this context was complete and situated within a stone row. Excavations revealed that this was a ceramic burial. This important discovery established the tower's specific archaeological context as funerary or sepulchral.

Given its monumental character, strategic location, and distinctive architectural form, the tower was presumed to be connected with ritual practices—a hypothesis confirmed by the ceramic burial. Thus, similarly to Armenia's older megalithic towers, the Khanjyan tower is also linked to funerary rites.

МКРТЧЯН Левон (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: levoncultur@gmail.com
ДАВТЯН Рубен (Германия)
Университет Мартина Лютера Галле-Виттенберг
АРНОЛЬД Симоне (Германия)
Музей Гельголанда
ВАРДАНЯН Беник (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: vbenik@yahoo.com
ТАДЕВОСЯН Анжела (Армения)
Вагаршапатский историко-этнографический музей

РИТУАЛЬНО-РЕЛИГИОЗНЫЙ КОМПЛЕКС СЕЛА ХАНДЖЯН

Новооткрытая крепость Ханджян была выявлена в 2021 году. Она расположена в 8,62 км к северо-западу от центра общины Армавир в Армавирской области Республики Армения, на скалистом холме высотой 912 метров над уровнем моря, занимающем площадь около 3,60 гектаров.

Объект находится на южной окраине военного полигона имени маршала Ивана Баграмяна, контролируя окружающую территорию. Крепость расположена в 14 км к северо-западу от археологического памятника Аргиштихинили (Армавир) и в 26 км к северо-востоку от Ервандашата. Такая близость свидетельствует о культурной или хронологической связи верхних стратиграфических слоев памятника с указанными историческими объектами.

Холм простирается вдоль оси север-юг, его длина составляет около 180 метров, ширина — 110 метров, относительная высота — около 20 метров. В советский период вокруг холма были построены ирригационные каналы, территория была мелиорирована и выровнена с помощью техники — очищена от крупных камней и подготовлена для сельскохозяйственного использования. Эти работы нанесли значительный ущерб поселению, расположившемуся на склонах холма.

Холм состоит из нескольких укрепленных террас, которые постепенно сужаются к вершине, образуя ровный плато. На самой высокой точке вершины наблюдались несколько рядов камней. Предполагается, что в советское время на самой высокой точке вершины стояла металлическая тренога, используемая для геодезических измерений, остатки которой представлены ямой глубиной около двух метров и несколькими бетонными фрагментами.

В ходе раскопок на вершине холма было обнаружено массивное прямоугольное башенное сооружение размером 8 на 7 метров, сохранившееся в отдельных местах до высоты двух метров. Фундаменты башни состоят из крупных обработанных камней, уложенных поперечно, размеры которых варьируются от 70 до 100 см в длину и от 50 до 70 см в ширину. Внутреннее пространство башни было заполнено мелкими и средними камнями, скрепленными грунтом, возможно

смешанным с глиняным раствором. В процессе раскопок было извлечено значительное количество камней различного размера для раскрытия правильной конструкции башни; эти камни, вероятно, происходят из обрушенных стен башни. Исходя из их количества, визуальная реконструкция позволяет предположить, что башня была значительно выше, чем её нынешнее сохранившееся состояние. Вероятно, внешние части фундаментов башни также были оштукатурены и выровнены грунтом или глиной, о чем свидетельствует наличие светло-серого сухого порошка, контрастирующего с бедной и каменистой природной почвой.

Вокруг всех сторон башни в естественном положении (in situ) были обнаружены крупные керамические сосуды (карасы). Они были покрыты толстым слоем обожжённых отложений, под которым была выявлена исключительно богатая культурная стратиграфия, относящаяся к VI–III векам до н.э. Этот слой заканчивается тщательно выполненным каменным покрытием с углублениями. Покрытие особенно хорошо сохранилось с западной стороны башни и, возможно, продолжается дальше на запад и вдоль всей вершины стены. Несмотря на то, что вершина полностью не раскапывалась, даже части, покрытые грунтом, свидетельствуют о её выравнивании и приспособлении для ритуальных целей.

Однако самым значительным керамическим контекстом оказалось захоронение керамикой на северной стороне башни. В отличие от фрагментарных сосудов, обнаруженных с западной и южной сторон, это захоронение было цельным и расположено в каменной кладке. Раскопки показали, что это было керамическое погребение. Это важное открытие установило конкретный археологический контекст башни как погребального сооружения.

Учитывая её монументальность, стратегическое расположение и уникальную архитектурную форму, предполагалось, что башня связана с ритуальной практикой — гипотеза, подтверждённая керамическим погребением. Таким образом, подобно более древним мегалитическим башням Армении, башня Ханджян также связана с погребальными обрядами.

ՌԱՅՆՀՈԼԴ Սաբինե (Գերմանիա)
Գերմանիայի հնագիտական ինստիտուտ
էլ. հասցե՝ sabine.reinhold@dainst.de
ՎԱՐԴԱՆՅԱՆ Բենիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ vbenik@yahoo.com
ՄԱՐԻԱՇԿ Դիրկ (Գերմանիա)
Գերմանիայի հնագիտական ինստիտուտ
էլ. հասցե՝ dirk.mariaschk@dainst.de
ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Մարիամ (Գերմանիա)
Հալլե Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարան
Նախապատմական հնագիտության, միջնադարյան և ժամանակակից հնագիտության ինստիտուտ
էլ. հասցե՝ mariamgsaribekyan@gmail.com

ԼԱՎ ՆԱԽԱՆՇԱՆ. ԼԵՌՆԱԿԵՐՏԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԻԴԱՐՅԱՆ ՄԻ ԴԱՄԲԱՐԱՆ, ՈՐԸ ԿԱՊՎԱԾ Է ԳՈՒՇԱԿՈՒԹՅԱՆ ԾԻՍԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ՀԵՏ

Որքա՞ն հյուսիս էր տարածվում Մերձավոր Արևելքի մշակութային ազդեցության ոլորտը մ.թ.ա. 2-րդ հազարամյակում: 2023 թվականի ամռանը հայ-գերմանական համատեղ հնագիտական արշավախմբի կողմից Շիրակի մարզի Լեռնակերտ գյուղի մոտ՝ Վերի Բերդ ամրոցի հարևանությամբ, բացվել է ուշ բրոնզի դարաշրջանի եզակի դամբարան (№24): Դամբարանում հայտնաբերվել են երկու դեռահաս անհատի կմախք և հարուստ դամբանային գույք՝ այդ թվում՝ մանր եղջերավոր անասունների 65 վեգ (աստրագալ), ձիու վեգ, սև և կարմիր տեսակի օբսիդիանից պատրաստված գործիքներ, կավե շերեփ, տեքստիլի արտադրության հետ առնչվող ոսկորե գործիքներ, քարե մուրճեր և բազմատեսակ անոթներ:

Գույքի կառուցվածքն ու խորհրդանշական բովանդակությունը հուշում են, որ այն կապ ունի գուշակության ծիսակարգերի հետ, որոնք նման են խեթական և միջագետքյան աղբյուրներում նկարագրվածներին: Դամբարանի նյութական համալիրն ուղղակի նմանություններ ունի Գեղարոտի և Հոռոմի ժամանակակից սրբավայրերի հետ, ինչը վկայում է տարածաշրջանում ծիսական համակարգերի միատեսակության մասին: Հնարավոր է, որ թաղված անհատները պատկանել են սոցիալական մի խավի, որը ներգրավված էր գուշակության կամ օրակուլական գործունեության մեջ:

Դամբարանում հայտնաբերված գործիքները, որոնք առնչվում են տեքստիլի արտադրության հետ, ակնարկում են ճակատագրի և հնագույն գիտելիքի խորհրդանիշների մասին՝ միտք տալով մերձավորարևելյան ու միջերկրածովյան մշակույթներում տարածված հյուսող աստվածուհիների գաղափարին: Դամբարանի ռադիոածխածնային թվագրումը համապատասխանում է մ.թ.ա. 13-րդ դարին, երբ ակտիվ գործունեություն էին ծավալում Գեղարոտի սրբավայրերը:

Լեռնակերտի այս դամբանը կարևոր նյութական հիմք է՝ ուսումնասիրելու ուշ բրոնզի դարում տարածաշրջանում գուշակության դերակատարությունը, ծիսական դերակատարների ինքնությունը և կապը Մերձավոր Արևելքի մշակութային համակարգերի հետ:

REINHOLD Sabine (Germany)
German Archaeological Institute
e-mail: sabine.reinhold@dainst.de
VARDANYAN Benik (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
Shirak Centre for Armenological Studies of NAS RA
e-mail: vbenik@yahoo.com
MARIASCHK Dirk (Germany)
German Archaeological Institute
e-mail: dirk.mariaschk@dainst.de
SARIBEKYAN Mariam (Germany)
Martin Luther University of Halle Wittenberg
Institute for Prehistoric Archaeology and Medieval and Modern Archaeology
e-mail: mariamgsaribekyan@gmail.com

A GOOD OMEN? A GRAVE ASSOCIATED WITH LATE BRONZE AGE DIVINATION PRACTICES AT LERNAKERT, ARMENIA

How far north did the Near Eastern cultural sphere extend in the 2nd millennium BCE? In the summer of 2023, an Armenian-German excavation team uncovered a unique Late Bronze Age grave (Tomb 24) near the fortress of Veri Berd in Lernakert. The burial contained the remains of two juvenile individuals and an exceptionally rich assemblage of artefacts, most notably a deliberately arranged deposit of 65 astragali (knucklebones) from sheep or goats, a horse phalange, obsidian tools of red and black varieties, a ceramic scoop, spindle-shaped and carved bone tools, hammerstones, and multiple vessels.

The spatial arrangement, typology, and symbolic nature of these objects strongly associate the grave with divination practices, echoing techniques described in the Hittite and Mesopotamian sources. The inventory closely parallels ritual deposits discovered at contemporary sanctuaries in Gegharot and Horom, suggesting a shared cultural-religious tradition across the region. The presence of multiple tools associated with divination—possibly including astragalomancy, lithomancy, and the preparation of incense or flour—implies that the deceased may have held or were being prepared for ritual roles within a specialized social class.

Furthermore, the inclusion of textile-related bone implements evokes broader symbolic themes of fate and sacred knowledge, hinting at cosmological beliefs potentially akin to Mediterranean and Near Eastern weaving goddesses. Radiocarbon dating of the burial places it in the 13th century BCE, contemporaneous with the active ritual phases of

the Gegharot shrines, strengthening the argument for a localized ritual complex operating within wider cultural networks.

Tomb 24 at Lernakert offers rare material evidence for the social identity and ritual agency of diviners in the Late Bronze Age South Caucasus. It bridges the gap between textual models from the Ancient Near East and the archaeological realities of a non-literate yet symbolically rich northern highland society.

РАЙНХОЛЬД Сабине (Германия)
Археологический институт Германии
e-mail: sabine.reinhold@dainst.de
ВАРДАНЯН Беник
Институт археологии и этнографии НАН РА
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: vbenik@yahoo.com
МАРИАШК Дирк (Германия)
Археологический институт Германии
e-mail: dirk.mariaschk@dainst.de
САРИБЕКЯН Мариам (Германия)
Университет Мартина Лютера Галле-Виттенберг
Институт доисторической археологии, средневековой и современной археологии
e-mail: mariamgsaribekyan@gmail.com

ХОРОШЕЕ ПРЕДЗНАМЕНОВАНИЕ? ЗАХОРОНЕНИЕ, СВЯЗАННОЕ С ПРАКТИКАМИ ГАДАНИЯ ПОЗДНЕГО БРОНЗОВОГО ВЕКА В ЛЕРНАКЕРТЕ, АРМЕНИЯ

Насколько далеко на север простиралась культурная сфера Древнего Ближнего Востока во II тысячелетии до н.э.?

Летом 2023 года армяно-немецкая археологическая экспедиция обнаружила уникальное захоронение позднего бронзового века (погр. 24) у крепости Вери-Берд в Лернакерте, на северном склоне массива Арагац в Армении. В погребении находились останки двух подростков, а также исключительно богатый инвентарь, включая преднамеренно размещённый комплекс из 65 астрагалов овец или коз, фалангу лошади, изделия из обсидиана чёрного и красного цвета, керамический черпак, кости с резьбой и прядильной формой, тёрочные камни и разнообразную керамику.

Пространственная организация, типология и символика этих находок свидетельствуют о связи с гадательными практиками, подобными тем, что описаны в хеттских и месопотамских текстах. Инвентарь имеет поразительные параллели с ритуальными комплексами, раскопанными в Гехароте и Хороме, что указывает на существование единой религиозной традиции в регионе. Наличие многочисленных предметов, связанных с гаданием — астрагаломантией, литомантией, а также с приготовлением благовоний

или муки, — позволяет предположить, что погребённые могли принадлежать к специализированной социальной группе ритуальных специалистов.

Кроме того, наличие костяных инструментов, ассоциируемых с ткачеством, вызывает ассоциации с символикой судьбы и сакрального знания, аналогичной представлениям о богинях пряжи в Средиземноморье и на Ближнем Востоке. Радиоуглеродное датирование относит погребение к XIII веку до н.э., что совпадает с активной фазой функционирования святилищ Гехарота и укрепляет гипотезу о ритуальном центре на севере Арагаца.

Таким образом, могила 24 в Лернакерте предоставляет редкие археологические свидетельства о социальной роли гадателей в позднем бронзовом веке Южного Кавказа и способствует переосмыслению взаимодействия между письменными традициями древнего Востока и безписьменными горными культурами.

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ Մարիամ (Գերմանիա)
Հալլե Վիտտենբերգի Մարտին Լյութերի անվան համալսարան
էլ. հասցե՝ mariamgsaribekyan@gmail.com

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՎԱՂԲՐՈՆԶԻԴԱՐՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՄ

Դեռևս էնեոլիթից սկսած՝ Հայաստանի մի շարք հուշարձաններում սկսում են հայտնվել բազմազան կենդանիների պատկերագրություններ: Սրանք արտահայտվում են հիմնականում կա՛մ արձանիկների տեսքով, կա՛մ խեցեղենի վրա յուրահատուկ թռչունների, խոյերի, այծերի և ցուլերի պատկերումներով: Այս առարկաների ամենամեծ կուտակումը՝ արձանիկների տեսքով, հայտնաբերվել է Շիրակի մարզի Հառիճ գյուղի տարածքում գտնվող վաղբրոնզիդարյան բնակատեղիում, որտեղ 1966-1984թթ. Տ.Իսաչատրյանի ղեկավարած հնագիտական արշավախումբը 337 կենդանակերպ արձանիկներ է հայտնաբերել, որոնց ճնշող մեծամասնությունը այժմ պահվում է Հայաստանի պատմության թանգարանում, ևս 10 օրինակ՝ Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ում:

Այս արձանիկների մեծամասնությունը խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ են, շատ ավելի քիչ քանակությամբ՝ շներ, թռչուններ, արջեր, ձիեր: Նմանատիպ արձանիկներ, բացի Հառիճի վաղբրոնզիդարյան բնակատեղիից, կան գտնված նաև Շենգավիթից, Մոխրաբլուրից, Ազարակից, Ջրահովիտից: Բայց կենդանակերպ արձանիկներից զատ հատկապես վաղբրոնզիդարյան բնակատեղիներում սկսում են կենդանակերպ օջախի հենակներ և պատվանդաններ հայտնվել, խեցեղենի վրա կենդանիների պատկերումներ՝ երկրաչափական պատկերների տեսքով, որոնք հետագայում ավելի են

կատարելագործվում, վերածվում բրոնզից պատրաստված սիմվոլների, իշխանության խորհրդանիշների, արծաթե կամ բրոնզե գավաթների զարդանախշերի:

Վաղ բրոնզի դարում կամ հնագետների կողմից այլ կերպ կոչված՝ Կուր-Արաքսյան ավանդույթի տարածման ժամանակաշրջանում է, որ անասնապահության և երկրագործության զարգացման հետ մեկտեղ կենդանիների նման պատկերումները սկսում են տարածվել, և արդեն կարելի է պատկերացում կազմել ժամանակի մարդու առօրյայի, մտածելակերպի, շրջապատող աշխարհի մասին:

Ձեկուցման շրջանակներում կքննարկվեն վաղբրոնզիդարյան հուշարձաններում ոչ միայն Հայաստանում, այլ նաև ամբողջ Կովկասում հանդիպող կենդանակերպ առարկաները, դրանց պատկերագրման ձևերն ու օրինակները:

SARIBEKYAN Mariam (Germany)
Martin Luther University of Halle Wittenberg
e-mail: mariamgsaribekyan@gmail.com

ANIMAL ICONOGRAPHY IN EARLY BRONZE AGE MONUMENTS OF THE SOUTH CAUCASUS

Since the Eneolithic period, numerous monuments in Armenia have featured various forms of animal iconography. These are primarily expressed through figurines or depictions of distinctive birds, rams, goats, and bulls on pottery. The largest concentration of such objects—specifically animal figurines—was discovered at the Early Bronze Age settlement in the village of Harich, located in the Shirak region, Armenia. These figurines were uncovered between 1966 and 1984 during an archaeological expedition led by T. Khachatryan.

A total of 337 animal figurines were found, most of which are now housed in the History Museum of Armenia, with another 10 preserved by the Service for the Protection of Historical Environment and Cultural Museum-Reservations" SNCO.

The majority of the figurines represent large and small cattle, while a smaller number depict dogs, birds, bears, and horses. Similar figurines have also been discovered at other Early Bronze Age sites, including Shengavit, Mokhrablur, Agarak, and Jrahovit. In addition to animal figurines, this period also saw the emergence of animal-shaped andirons and pedestals, as well as geometric animal motifs on pottery. These forms were later refined and developed into bronze statuettes, symbols of power, and decorative ornaments on silver and bronze cups.

It is during the Early Bronze Age—corresponding with the spread of the Kura-Araxes cultural tradition—that such animal representations became widespread. This development coincided with the growth of animal husbandry and agriculture, offering insight into the daily life, worldview, and beliefs of the people of that time.

This report will explore animal-shaped artifacts from Early Bronze Age sites not only in Armenia but across the broader Caucasus region, focusing on their forms, styles of depiction, and cultural significance.

САРИБЕКЯН Мариам (Германия)
Университет Мартина Лютера Галле-Виттенберг
e-mail: mariamgsaribekyan@gmail.com

ИКОНОГРАФИЯ ЖИВОТНЫХ В ПАМЯТНИКАХ РАННЕГО БРОНЗОВОГО ВЕКА ЮЖНОГО КАВКАЗА

Начиная с эпохи энеолита, на ряде памятников Армении начинает появляться иконография различных животных. Эти образы выражены преимущественно в виде фигурок, а также изображений характерных птиц, баранов, козлов и быков на керамических изделиях. Самое большое скопление подобных предметов в виде статуэток было обнаружено на поселении раннего бронзового века в селе Арич Ширакской области, где раскопки проводились в 1966–1984 годах. Археологическая экспедиция под руководством Т. Хачатряна выявила 337 фигурок животных. Подавляющее большинство из них в настоящее время хранится в Историческом музее Армении, а ещё 10 экземпляров — в ГНКО «Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников».

Большая часть этих фигурок изображает крупный и мелкий рогатый скот, а гораздо меньше представлено собак, птиц, медведей и лошадей. Аналогичные фигурки, помимо Арича, были найдены также на других памятниках раннего бронзового века, таких как Шенгавит, Мохраблур, Агарак и Джраховит. Помимо зооморфных фигурок, особенно в поселениях данного периода, начинают встречаться подставки и тумбы в форме животных, а также изображения животных на керамической посуде в виде геометрических мотивов. Со временем эти изображения становятся более изысканными, трансформируясь в бронзовые символы, знаки власти и орнаменты на серебряных и бронзовых сосудах.

Именно в эпоху ранней бронзы, в период распространения Куро-Аракской культурной традиции — как её обозначают археологи, — наряду с развитием животноводства и земледелия, такие изображения получают широкое распространение. На их основе уже можно сформировать представление о повседневной жизни, менталитете и мировоззрении людей того времени.

В докладе будут рассмотрены предметы в форме животных, обнаруженные на памятниках раннего бронзового века не только в Армении, но и на всей территории Кавказа, а также формы их изображений и конкретные примеры.

ՎԱՐԴԱՆՅԱՆ Բենիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ vbenik@yahoo.com
ՄԿՐՏՉՅԱՆ Լևոն (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ levoncultur@gmail.com
ՍԵՄՅԱՆ Իվան (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. փոստ՝ i.a.semyan@gmail.com

ՋՐԱՁՈՐԸ ԵՐԿԱԹԻ ԴԱՐՈՒՄ (ԸՍՏ ՊԱՏՄԱՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

Ջրաձոր համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսարևմըտյան հատվածում, Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջանում: Հուշարձանը (պետական ցուցիչ՝ **7.96.1**) տեղակայված է Ախուրյան և Հողմիկ գետերի միախառնման հատվածում ձևավորված հրվանդանի վրա, որի վրա վեր է խոյանում կոնաձև ֆա(բարձրությունը ծ.մ. 1820 մ): Բլուրը, որի վրա տեղակայված է ամրոցը, հյուսիսային կողմում ունի զառիթափ լանջ: Արևմտյան լանջը, սկսվելով գետի խորը կիրճից, ձևավորում է 310x120 մ չափերի մի հարթակ, որն աստիճանաբար վերածվում է թեքադիրք լանջի: Բլրի հարավային լանջն ավելի ընդարձակ է (երկ.՝ արևելք-արևմուտք 750 մ, լայն.՝ հյուսիս-հարավ՝ 190 մ), որտեղ և տեղադրված է ժամանակակից գյուղը: Արևելյան կողմից բլուրը թամբաձև իջվածքով միացված է փոքր բլրին, որի լանջերին է տեղադրված 19-րդ դարի և ժամանակակից գերեզմանոցը:

2023-2024 թթ. ամրոցակիր բլրի արևմտյան լանջի առաջին պաշտպանական դարավանդի պարսպապատի պեղումները ցույց տվեցին ամրոցի պաշտպանական համակարգի ձևավորման հաջորդականությունը: Ըստ այդմ՝ առաջին դարավանդի պարիսպը, որն ուներ երեք մետր երկարությամբ դեպի արևմուտք բացվող զանգվածեղ որմնահեց, կառուցվել է մ.թ.ա. 11-9-րդ դարերում: Հետագայում ամրոցի այս հատվածն ենթարկվել է ձևափոխությունների. մ.թ.ա. 7-5-րդ դարերում պարսպին հարավ-արևելքից կցվել է 2.5 մ լայնությամբ պատով մի շինություն, որը շարունակվում է դեպի հարավ-արևմուտք՝ միաձուլվելով արևմտյան դարավանդն եզրագծող երկաթիդարյան պարսպին: 2022թ. պեղումներով (Հ. Խաչատրյան և Ա. Փուրթվենգլեր) արևմտյան դարավանդի կենտրոնում բացվել էր մ.թ.ա. 7-6-րդ դարերով թվագրվող 1.80 մ լայնությամբ եռաշար պատ՝ որմնահեցով: 2024 թ. ամրոցակիր բլրի գագաթին բացվեց 8.3x8.3 մ արտաքին և 5.5x5.5 մ ներքին չափերով մի շինություն: Բազալտե սալահատակով և հարավային մուտքով կառույցը, ըստ կառուցվածքային և համատեքստային հատկանիշների, կարելի է նախնականորեն մեկնաբանել որպես պաշտամունքային կառույց: Այն մերձենում է ուրարտական տիպի *<u>սուսի</u>* տաճարների կառուցվածքին: Կառույցի չափերն ու ձևը, ինչպես նաև շարվածքի որոշ հատկանիշներ՝ տուֆ և բազալտ քարերի օգտագործում, խոշոր անկյունաքարերի առկայություն, հստակ համապատասխանություն ունեն ուրարտական պաշտամունքային

ճարտարապետությանը: Ամենայն հավանականությամբ, այս կառույցը ևս մ.թ.ա. 7-5-րդ դարերի կառուցման արդյունք է:

Այսպիսով, ըստ հուշարձանի պեղումների առաջին տարիների և ուրարտական սեպագիր աղբյուրների ընձեռած տվյալների՝ ամրոցը մ.թ.ա. 8-րդ դարում ենթարկվել է հարձակման: Մարմաշենի և Խորխորյան տարեգրության համապատասխան տողերը *Էրխախի* երկրի քաղաքի գրավման մասին տեղեկություններ են, որտեղ հիշատակվում է *Իրդանիունի* քաղաքը ([URU]Irdaniuni): Ըստ նախնական դիտարկումների, կարծում ենք հավանական է տեքստերում հիշատակվող տեղանվան նույնացումը Ջրաձորի հնավայրի հետ:

Այս պահին եղած տվյալներով՝ ամրոցի կենսագործունեությունը մ.թ.ա. 8-7-րդ դարերում դադարել է կամ եղել է խիստ աննշան: Ուրարտական պետության անկման շրջանում Շիրակում, ինչպես նաև մի շարք այլ ծայրագավառներում, կյանքը նորից վերսկսվում է: Ջրաձորի ամրոցում ուրարտական շինարարական և գաղափարական ազդեցությամբ կառուցված պաշտամունքային կառույցը խոսում է այս բնակավայրի՝ Աշոցքի սարահարթում ունեցած ռազմավարական, տնտեսական և հոգևոր կարևոր դերի մասին:

VARDANYAN Benik (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: vbenik@yahoo.com
MKRTCHYAN Levon (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: levoncultur@gmail.com
SEMYAN Ivan (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: i.a.semyan@gmail.com

JRADSOR IN THE IRON AGE (BASED ON HISTORICAL AND ARCHAEOLOGICAL DATA)

The archaeological site of Jratsor is located in the northwestern part of the Republic of Armenia, in the Amasia region of Shirak Province. The site (state registry number 7.96.1) occupies a promontory formed at the confluence of the Akhuryan and Hoghmik rivers, rising into a conical hill with an elevation of 1820 meters above sea level. The northern slope of the hill is steep, while the western side, descending from a deep river gorge, forms a platform approximately 310×120 meters in size, gradually sloping down. The southern slope is more expensive (east–west: 750 m; north–south: 190 m), and the modern village is situated there. To the east, the hill connects via a saddle to a smaller elevation, on the slopes of which are located both a 19th-century and a modern cemetery.

Excavations conducted in 2023–2024 on the first defensive terrace of the western slope revealed the sequential development of the fortress's fortification system. The earliest wall on this terrace, featuring a massive stonework extending three meters westward, dates to

the 11th–9th centuries BCE. In subsequent centuries—particularly the 7th–5th centuries BCE—this section underwent significant architectural modifications. A structure with a 2.5-meter-wide wall was appended to the southeastern face of the existing fortification, continuing southwest and merging with the Iron Age wall that defined the terrace's perimeter.

Earlier excavations in 2022 (directed by H. Khachatryan and A. Furtwängler) revealed a three-course stone wall, 1.80 meters wide, in the central part of the western terrace, dated to the 7th–6th centuries BCE.

In 2024, on the summit of the hill, excavations uncovered a square structure measuring 8.3×8.3 meters externally and 5.5×5.5 meters internally, featuring a basalt slab floor and a southern entrance. Based on its structural and contextual characteristics, the building is preliminarily interpreted as a cultic structure. Its proportions, building materials (tuff and basalt), and the presence of large corner stones closely resemble the architectural layout of Urartian "susi"-type temples. It is most likely that this structure was constructed in the 7th–5th centuries BCE.

According to preliminary archaeological data and a comparative analysis of the Urartian cuneiform sources, the fortress of Jratsor appears to have been subjected to military assault in the 8th century BCE. References found in the inscriptions of Khorhor and Marmashen mention the conquest of a city in the land of Eriahi—URU Irdaniuni—which, based on current observations, may plausibly be identified with the site of Jratsor.

Available evidence suggests that by the 8th–7th centuries BCE, active occupation of the fortress either ceased entirely or was reduced to a minimal level. In the post-Urartian period, habitation resumed not only in the Shirak region but also across several other peripheral zones. The cultic structure constructed under the architectural and ideological influence of the Urartian tradition points to the strategic, economic, and spiritual importance of Jratsor during the fragmentation and eventual collapse of the Urartian state.

ВАРДАНЯН Беник (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: vbenik@yahoo.com
МКРТЧЯН Левон (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: levoncultur@gmail.com
СЕМЯН Иван (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: i.a.semyan@gmail.com

ДЖРАДЗОР В ЭПОХУ ЖЕЛЕЗА (ПО ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКИМ ДАННЫМ)

Археологический памятник Джрадзор расположен в северо-западной части Республики Армения, в Амасянском районе Ширакской области. Памятник (гос. реестр № 7.96.1) занимает мыс, образованный в месте слияния рек Ахурян и Охмик,

с возвышающимся на нём коническим холмом (высота 1820 м над уровнем моря). Холм, на котором размещена крепость, имеет крутой северный склон. Его западная сторона, начинаясь от глубокого ущелья, формирует платформу размером 310×120 м, постепенно переходящую в наклонный склон. Южный склон более протяжённый (восток–запад 750 м, север–юг 190 м) — здесь расположен современный населённый пункт. С востока холм соединяется седловиной с меньшим возвышением, на склонах которого находятся кладбища XIX века и современности.

Раскопки 2023–2024 гг. на первой оборонительной террасе западного склона холма выявили поэтапное формирование оборонительной системы крепости. Первая линия стены, с массивной трёхметровой кладкой, ориентированной к западу, датируется XI–IX вв. до н.э. В VII–V вв. до н.э. данный участок подвергся реконструкции: к юго-восточной стороне стены было пристроено новое помещение шириной 2,5 м, соединённое со стеной, ограничивающей террасу. В ходе раскопок 2022 г. (рук. Х. Хачатрян и А. Фуртвенглер) в центре западной террасы была выявлена стена с контрфорсом с шириной 1,80 м, датируемая VII–VI вв. до н.э.

В 2024 г. на вершине холма был открыт прямоугольный комплекс размерами 8,3×8,3 м (внешне) и 5,5×5,5 м (внутри), с базальтовым мощением и входом с южной стороны. По архитектурным и контекстуальным признакам он предварительно интерпретируется как культовое сооружение, близкое по структуре к урартским храмам типа «суси». Применение туфа и базальта, наличие крупных угловых блоков и чёткие пропорции соответствуют архитектурным приёмам урартской храмовой традиции. Вероятно, постройка относится к VII–V вв. до н.э.

Согласно предварительным данным археологических раскопок и анализу урартских клинописных источников, крепость Джрадзор, по-видимому, подверглась нападению в VIII веке до н.э. В надписях из Хорхора и Мармашена упоминается захват города страны Эриахи — URU Irdaniuni, который, по предварительным наблюдениям, может быть отождествлён с археологическим памятником Джрадзора.

На основании имеющихся материалов можно предположить, что к VIII–VII векам до н.э. жизнедеятельность в крепости либо полностью прекращается, либо сводится к минимуму. В постурартский период, как в Ширакe, так и в ряде других периферийных регионов, наблюдается возобновление обитания. Обнаруженное в Джрадзоре культовое сооружение с урартским архитектурным и идейным влиянием свидетельствует о значительной стратегической, экономической и духовной роли этого поселения на Ашоцком плато в условиях распада Урарту.

ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ Իրենա (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ irenkalntarian@mail.ru

ԹԵՂՈՒՏՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԵՏՔԵՐԸ ԳԵՏԱՀՈՎԻՏ-2 ՔԱՐԱՅՐՈՒՄ

Թեղուտյան տիպի ուշ պղնձիքարիդարյան մշակույթի առկայությունը Տավուշում, որը դրա կենտրոնից բավականին հեռու է գտնվում, հուշում է այդ մշակույթը կրող հասարակության մոբիլ բնույթի մասին: Հայաստանի ուշ էնեոլիթի ժամանակաշրջանով թվագրվող հուշարձանները խիստ սակավ են: Դրանցից է Արարատյան դաշտում գտնվող Թեղուտի բնակատեղին, որի մշակութային հետքերն, ըստ նոր տվյալների, կարելի է տեսնել նաև Նախիջևանում:

Ըստ ընդունված տեսակետի՝ պղնձիքարիդարյան ժամանակաշրջանին վերաբերող հուշարձանները Հարավային Կովկասում երկու մշակութային խմբերի են բաժանվում, որոնցից մեկը կոչվում է սիոնյան և կրում է իր կենտրոնի՝ Վրաստանում գտնվող Սիոնի բնակատեղիին հատուկ մշակութային առանձնահատկությունները, որոնցից են մշակույթի լավագույն ցուցիչ հանդիսացող խեցեղենի կավախմորի ավազախառն լինելը: Երկրորդ խմբին հատուկ են հարավային շրջանների հուշարձանները, որոնք կարելի է բնորոշել հարդախառն խեցեղենով:

Գետահովիտ քարայրը եղել է ժամանակավոր կացարան, որտեղ հայտնաբերվել են թե՛ տարբեր պատմական ժամանակաշրջաններ, թե՛ պղինձ-քարի դարի վաղ ու միջին ժամանակային հատվածներին վերաբերող բնակության հետքեր:

Այս շրջանի ավարտական փուլին վերաբերող շերտերը միջնադարի շրջանի շինարարական ակտիվության պատճառով քարայրում թերի են պահպանվել: Սակայն խեցեղենի քննության ժամանակ ի հայտ եկան հետաքրքիր մանրամասներ, որոնք քարայրի դարավանդից գտնված նմուշները մնացյալից առանձնացնելու հիմք տվեցին: Հիմնական սրահից գտնված մի քանի նմուշներ մեծ հետաքրքրություն առաջացրին, քանի որ կրում են սիոնյան տիպի խեցեղենին հատուկ նախշաձև, իսկ մի քանիսի պարագայում նաև կավի մեջ վանակատի խառնուրդի մեծ քանակ կար:

Այսպիսով, պարզ դարձավ, որ քարայրի պղնձիքարիդարյան ժամանակաշրջանի միջին փուլի ավարտական հատվածին(մ.թ.ա.V հազ. վերջին քառորդ) վերաբերող շերտերն օգտագործվել են սիոնյան մշակույթը կրողների կողմից:

Դարավանդին իրականացված աշխատանքների արդյունքում բացված և շերտագրորեն պղինձ-քարի դարի ավարտական փուլերին վերաբերող խեցեղենի նմուշները ևս տարբերակվում են գունային և կավախառնուրդի առանձնահատկություններով:

Վերջին մի քանի տարիներին քարայրի երկրորդ սրահի պեղումների շնորհիվ նաև հետաքրքիր տվյալներ են ստացվել: Այստեղից դարձյալ խեցեղեն բացվեց, որը նման չէր մինչ այդ գտնված պղնձիքարիդարյան նմուշներին: Դրանք մեծմասամբ թեղուտյան տիպի խեցեղեն են հիշեցնում:

Երկրորդ սրահում նաև թաղում կար: Երիտասարդի կմախքի հատվածները հայտնաբերվեցին տարբեր տեղերից: Թաղման փոս կամ այլ կառույց չի գտնվել, որը խոսում է կամ պատահական մահվան, կամ էլ քարայրի երկրորդ սրահը որպես դամբան օգտագործելու փաստի մասին:

Վերջին պեղաշրջանի ընթացքում հայտնաբերվեց ոսկրե ուշագրավ իր, որը ոչխարի կամ այծի թիակ է՝ եզրին շեղ կտրված հետքերով և կրկնում է սիոնյան տիպի խեցեղենի շուրթերին արված նախշազարդերը: Սա ամենայն հավանականությամբ թաց կավին նախշը դաջելու համար նախատեսված գործիք է:

Դեռևս թվագրություն չունենք, սակայն նյութի համեմատական քննությունը թույլ է տալիս հետաքրքիր փաստերի շուրջ քննարկում ծավալել:

Առաջին՝ Գետահովիտի քարայրի ուշ պղնձիքարիդարյան շերտերում կան սիոնյան մշակույթի հետքեր, որ ապացուցվում են տիպիկ խեցեղենի առկայությամբ: Երկրորդ՝ դարավանդին և երկրորդ սրահից գտնված նմուշների մեջ բացահայտորեն կարելի է տեսնել թեղուտյան խոշոր անոթների խմբին հատուկ արտաքին հատվածի կոպտավուն ավազախառն անհարթ մակերեսներ: Նույն միջավայրից սիոնյան խեցեղենի նախշազարդման համար կիրառվող գործիքը պետք է վկայի այս երկու մշակույթների սերտ առնչությունների ու համաժամանակյա լինելու օգտին: Նման գործիքը առայժմ միակ գտածոն է:

KALANTARIAN Irena (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: irenkalntarian@mail.ru

TRACES OF THE TEGHUT CULTURE IN THE GETAHOVIT-2 CAVE

The presence of the Teghut type of Late Chalcolithic culture quite far from its center, in the Tavush region, suggests the mobile nature of the society carrying this culture. The settlements dating back to the Late Chalcolithic period in Armenia are rare. That is the settlement of Teghut itself, located in the Ararat Valley, whose cultural traces (according to new data) can also be seen in Nakhichevan.

According to the accepted point of view, the monuments related to the Chalcolithic period in the South Caucasus are divided into two cultural groups, one of which is called Sioni and bears the cultural features specific to its center, the settlement of Sioni located in Georgia, of which, of course, is the Grit ware, which is the best indicator of culture. The monuments of the second cultural group can be characterized by Chaff ware. The monuments of the southern regions are typical of this group.

The Getahovit-2 cave itself represented a temporary dwelling, where traces of habitation from different historical periods and as well as the early and middle phases of the Chalcolithic period are presented.

The layers related to the final stage of this period were incompletely preserved in the cave due to the construction activity of the medieval period. During the examination of the

pottery, interesting details emerged, which provided a basis for distinguishing the pottery found from the cave's terrace from the rest. Several samples found in the main hall aroused great interest, as they bore a pattern specific to the Sionian type of ceramics, and in the case of some, a large amount of obsidian mixture was found in the clay.

Thus, it became clear that the layers related to the final stage of the middle phases of the Chalcolithic period in the cave were used by the bearers of the Sionian culture(the last quarter of V mill. BC).

The pottery assemblage recovered from the terrace and the stratigraphically associated layers of the main hall, corresponding to the final stages of the Chalcolithic period, was notable for its distinctive colouring and compositional features.

In recent years, further significant discoveries have emerged from the excavation of the cave's second hall. A new assemblage of ceramics was unearthed, differing markedly from the previously recovered Chalcolithic pottery. These newly discovered sherds exhibit strong affinities with the Teghut ceramic tradition.

Additionally, a burial was uncovered within this hall. Skeletal remains, identified as those of a young male, were found dispersed throughout the area. The absence of a defined burial pit or any architectural structure associated with interment suggests either a case of accidental death or the use of the second hall as a burial space.

During the last excavation season, an interesting bone object was found, which is a sheep or goat shoulder blade with oblique cut marks on the edge, which repeats the patterns made on the rims of Sion-type pottery. This is most likely a tool intended for embossing a pattern on wet clay. Unfortunately, we do not have a 14C date yet, but a comparative examination of the material allows us to evaluate an interesting discussions.

First, that in the Late Chalcolithic layers of the Getahovit-2 cave there are traces of the bearers of the Sioni culture, which is proven by the presence of typical pottery. Second, in the samples found in the terrace and the second hall, one can clearly see the phenomenon of rough, sandy, uneven surfaces of the outer parts, typical of the Teghut large vessel group. And the finding of the tool used for the stamping decoration of Sioni pottery from the same environment should testify to the close connections and synchronicity of these two cultures. The finding of such a tool is the only one so far.

КАЛАНТАРЯН Ирена (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: irenkalantarian@mail.ru

СЛЕДЫ ТЕХУТСКОЙ КУЛЬТУРЫ В ПЕЩЕРЕ ГЕТАОВИТ-2

Наличие Техутского типа позднеэнеолитической культуры довольно далеко от ее центра, в Тавушком регионе, говорит о мобильном характере общества, носителей этой культуры. Памятники, относящиеся к позднему энеолиту в Армении очень редки. Это само поселение Техут, расположенное в Араратской долине, следы которого, по новым данным, выявлены и в Нахичеване.

Согласно принятой точке зрения, памятники, относящиеся к периоду халколита на Южном Кавказе, делятся на две культурные группы, одна из которых называется Сионской и несет культурные черты, характерные для ее центра, поселения Сиони в Грузии, к которым, конечно же, относится песчаная керамики, являющаяся наилучшим индикатором культуры. Памятники второй культурной группы можно охарактеризовать саманной керамикой. Для этой группы типичны памятники южных регионов.

Сама пещера Гетаовит представляла собой временное жилище, в котором представлены следы обитания людей разных археологических периодов, а также раннего и среднего периодов меднокаменного века. Слои, относящиеся к заключительному этапу этого периода, сохранились в пещере не полностью из-за строительной активности средневекового периода. При изучении керамика выявились интересные детали, которые дали основание отличить керамику, найденную на террасе пещеры, от остальных. Несколько образцов, найденных в главном зале, вызвали большой интерес, так как имели декор, характерный для сионийского типа керамики, а в некоторых из них в глине было обнаружено большое количество смеси обсидиана. Таким образом, стало ясно, что слои, относящиеся к заключительному этапу среднего периода энеолита в пещере, использовались носителями сионской культуры (последняя четверть V тыс. до н.э.).

Образцы керамики, обнаруженные в результате работ, проведенных на террасе и стратиграфически относящиеся к заключительным этапам данного периода, также отличались своими цветовыми и композиционными особенностями.

В течение последних нескольких лет интересные данные были получены также благодаря раскопкам второго зала пещеры. Здесь снова начали находить керамику, которая, однако, не была похожа на образцы керамики энеолита, обнаруженные ранее. Они в основном напоминали керамику техутского типа.

Здесь также было открыто захоронение. Фрагменты скелета, принадлежавшие молодому человеку, были найдены в разных местах. Не было обнаружено ни могильной ямы, ни другой погребальной конструкции, что говорит либо о случайной смерти, либо о том, что второй зал пещеры использовали как гробницу. Во время последних раскопок был найден интересный костяной предмет, представляющий собой лопаточную кость овцы или козы с косыми насечками по краю, которые повторяют узоры, сделанные на венчиках керамики сионского типа. Скорее всего, это инструмент, предназначенный для штампования узора по влажной глине.

Правда, у нас пока нет датировки, но сравнительное изучение материала позволяет нам выявить интересные факты.

Во-первых, в позднеэнеолитических слоях пещеры Гетаовит есть следы носителей культуры Сиони, что доказывается наличием типичной керамики. Во-вторых, в образцах, найденных на террасе и втором зале, отчетливо виден феномен грубых, песчаных, неровных поверхностей керамики, характерный для группы крупных сосудов Техута. А находка инструмента, использовавшегося для декорирования керамики Сиони из той же среды, должна свидетельствовать о тесных связях и синхронности этих двух культур. Находка такого инструмента пока единственная.

ԱԴԱՄՅԱՆ Սուսաննա (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ susannaiae@mail.ru
ՊԱՊՅԱՆ Աղվան (Հայաստան)
ՀՅԴ պատմության թանգարան
էլ. հասցե՝ aghvan_papyan@mail.ru

ՀՅԴ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

Հայ Յեղափոխական Դաշնակցության պատմության թանգարանը ներկայացնում է հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920 թթ.) և ՀՅԴ գործունեության հարուստ ժառանգությունը: Այն սկզբնապես հիմնադրվել է Ժնևում՝ հիմնադիր տնօրեն Արտաշես Վանարյան-Հացագործյանի կողմից: Հետագայում տեղափոխվել է Փարիզ, իսկ 2006 թ. վերջնական հաստատվել է Երևանում, որտեղ և բացվել է ցուցասրահը:

Թանգարանի մշտական ցուցադրությունը ներկայացնում է Հայաստանի առաջին հանրապետության կազմավորման և ՀՅԴ գործունեության պատմությունը՝ ներառելով փաստաթղթեր, լուսանկարներ, պետական կնիքներ, անձնական իրեր, զենքեր և այլ ցուցանմուշներ, որոնք այդ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները ներկայացնող բացառիկ ցուցանմուշներ են: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում թանգարանի դրամների հավաքածուն՝ շուրջ 60 միավոր, որոնք տարբեր անձանց կողմից ժամանակի ընթացքում են փոխնացվել թանգարանին: Դրանք ներառում են բյուզանդական, սելջուկյան, ռուսական դրամներ, որոնք պահանջում են խորքային մասնագիտական հետազոտություն: Բացի այդ մեր կողմից ուսումնասիրվում են նաև թանգարանի արձանագիր նմուշները, որոնց շնորհիվ հնարավոր է բացահայտել արժեքավոր տեղեկություններ տվյալ իրերի տերերի մասին:

Թանգարանը մշակութային կենտրոն է, որի առաքելությունն է՝ ներկայացնել 1918-1920 թթ. Հայաստանի անկախության համար պայքար մղած հայորդիների, նրանց սխրանքների պատմությունը:

Թանգարանը ոչ միայն անցյալի հիշողության վայր է, այլև ներկայի և ապագայի համար կարևոր ուղեցույց՝ պետականության արժեքների և ինքնության պահպանման գործում:

ADAMYAN Susanna (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: susannaiae@mail.ru
PAPYAN Aghvan (Armenia)
ARF History Museum
e-mail: aghvan_papyan@mail.ru

THE COLLECTION OF THE MUSEUM OF HISTORY OF THE ARF

The Museum of History of the Armenian Revolutionary Federation (ARF) preserves and presents the rich heritage of the Armenian national liberation movement, the First Republic of Armenia (1918-1920), and the enduring activities of the Armenian Revolutionary Federation spanning over a century. The museum was originally established in Geneva by its founding director Artashes Vanaryan-Hatsagortsyan, as a response to the need for documenting and safeguarding the historical memory of the Armenian people's struggle for freedom and self-determination. Later, it was relocated to Paris and in 2006 it found its permanent home in Yerevan, where its exhibition hall was opened to the public.

The museum's permanent exhibition illustrates the history of the formation of the Republic of Armenia (1918-1920) and the pivotal role played by the Armenian Revolutionary Federation. On display are authentic documents, photos, state seals, personal things and a wide range of historical artifacts, that serve as unique historical testimonies of that period. Each exhibit serves not only as a testament to past events, but also as a source of scholarly inquiry into the socio-political, cultural, and intellectual dimensions of the Armenian struggle for independence.

The museum's coin collection is more interesting; it comprises about 60 pieces that were donated to the museum by various individuals over time. Among them are Byzantine, Seljuk and Russian coins, which require deep scholarly research. In addition, we also study inscriptions in the museum, through which it becomes possible to uncover valuable information about the former owners of these items.

The museum functions as a cultural and educational center, whose mission is to convey the story of the Armenians, who fought for the independence of Republic of Armenia in 1918-1920 and to honor their heroism. Through its collections, exhibitions and research, the museum builds a vital bridge connecting the past with the present, it plays a crucial role in preserving and transmitting collective memory. It reminds visitors that history is not merely a record of past events, but a living force that shapes cultural heritage and strengthens national consciousness for future generation.

АДАМЯН Сусанна (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: susannaiae@mail.ru
ПАПЯН Агван (Армения)
Музей истории АРФ
e-mail: aghvan_papyan@mail.ru

КОЛЛЕКЦИЯ МУЗЕЯ ИСТОРИИ АРФ

Музей истории Армянской Революционной Федерации (АРФ) представляет богатое и многогранное наследие армянского национально-освободительного движения, Первой Республики Армения, а также более чем вековой деятельности самой партии АРФ. Изначально основанный в Женеве (основатель и директор Арташес Ванарян-Ацагорцян) музей впоследствии был перенесен в Париж, а с 2006 года окончательно обосновался в Ереване, где был открыт выставочный зал.

Постоянная экспозиция музея подробно освещает историю формирования Первой Республики Армения и ключевую роль, которую сыграла Армянская Революционная Федерация в истории страны. В экспозиции представлены уникальные документы, редкие фотографии, государственные печати, личные вещи, рукописи и другие ценные экспонаты, которые являются уникальными свидетельствами исторических событий того времени. Особый интерес представляет коллекция монет музея, насчитывающая около 60 единиц, которые в разное время были переданы музею. Среди них-византийские, сельджукские и царские монеты, каждая из которых является не только материальным свидетельством прошлого, но и предметом, требующим углубленного профессионального исследования и анализа. Кроме того, значительное внимания уделяется изучению экспонатов с надписями, которые позволяют получить ценную информацию об их владельцах и тем самым глубже понять социальный и культурный контекст эпохи.

Музей выполняет не только роль хранителя исторической памяти, но и является важным культурным и образовательным центром. Его миссия заключается в передаче нынешним и будущим поколениям памяти о борьбе армян за независимость в 1918-1920 гг., сохранении национальной идентичности, государственных ценностей и увековечении подвига тех, кто посвятил свою жизнь свободе и процветанию Армении.

Помимо того, что музей является местом памяти, он служит важным ориентиром для настоящего и будущего в деле сохранения ценностей государственности и национальной идентичности.

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ Կարինե (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ karineal@mail.ru

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Աշխարհաքաղաքական նոր փոփոխությունների արդյունքում հայոց պետականությունը և համայն հայությունը հայտնվել են գոյաբանական պայքարի անհրաժեշտության առաջ: Հայոց պետականության և հայության կյանքում երբեմն թաքնըված, երբեմն բացահայտ որոշիչ դեր է խաղացել և շարունակում է խաղալ թուրքական գործոնը: Հայության ոչնչացման թուրքական մոլագար մղումները և դրանց իրականացման համար թուրքական դիվանագիտական զինանոցում մշակված ռազմավարություններն ու մեթոդներն իրենց բացասական ազդեցությունն են ունեցել թե՛ Առաջին հանրապետության, թե՛ Խորհրդային Հայաստանի և թե՛ Երրորդ հանրապետության քաղաքական կյանքում:

Թուրքիայի հովանավորությամբ՝ իբր անկախ, քաղաքականապես միավորված, առանց ազգային և դավանական խտրականության Կովկասի ստեղծման, հայոց պետականության վերացման, հայկական տարածքների զավթման և հայութան ոչնչացման գաղափարների հիման վրա թուրքական դիվանագիտական զինանոցում մշակված «Սողացող նվաճման», «Տեղական իշխանությունների օգտագործման», «Խաղաղության օրակարգով պատերազմելու», «Գաղթականների տեղափոխման» և այլ ռազմավարությունները ներմուծվել և արմատավորվել են հայկական քաղաքական դաշտում, պառակտել հայ հասարակությանը, կոտրել դիմադրական կորովը:

Թուրքական ժխտողականության արմատները և հայոց ոչնչացման գաղափարը սնուցող ռազմավարությունները կենսունակ գտնվեցին նաև հարյուր տարի անց: 2020թ. Արցախի Հանրապետության դեմ Ադրբեջանի և նրան դաշնակցած Թուրքիայի սանձազերծած պատերազմում նորագույն ռազմական սպառազինությունը զուգակցվեց թուրքական դիվանագիտական զինանոցի հին ռազմավարություններով:

Հայ ժողովուրդը, ցավոք, ոչ միայն անպատրաստ գտնվեց դիմագրավելու թուրք-ադրբեջանական դաշինքի սանձազերծած պատերազմում թուրքական նորագույն սպառազինությանը, այլ նաև թուրքական զինանոցում մշակված հին ռազմավարություններին, որոնք գործածվել էին իր դեմ ուղիղ 100 տարի առաջ:

Արցախյան երկրորդ պատերազմում կրած պարտությունը,Արցախի հայության էթնիկ զտումը, Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախների կազմաքանդումը, Հայաստանի Հանրապետության տարածքների զավթումը, հայոց ինքության ոչնչացման փորձերը օրակարգի հարց են դարձրել հայոց պատմության վերագնահատումը, հայության նոր ազգային անվտանգության ռազմավարության մշակումը, այլևս երբեք չցեղասպանվելու տրամաբանությամբ ապրելու և գործելու հրամայականը: Եվ, վերջապես, թուրքական գործոնին հայկական գործոնի հակադրումը: Ար-

ցախյան երկրորդ պատերազմում կրած պարտությունը Հայոց բանակը անհրաժեշտ տեխնոլոգիական միջոցներով և սպառազինությամբ զինելու հետ նույնքան առաջնային և կարևոր դարձրեց թուրքական դիվանագիտական զինանոցի հանգամանալի ուսումնասիրության հիման վրա հայոց ազգային անվտանգության նոր ռազմավարության ստեղծումը:

Հետազոտության խնդիրներն ենք համարել ուսումնասիրել Հայաստանի առաջին հանրապետության և խորհրդային իշխանության հաստատման և ամրապնդման շրջանում հայ քաղաքական կյանքի վրա թուրքական գործոնի ազդեցությունը, գիտական հիմքի վրա դնել հայ-թուրքական հարաբերությունները: Բացահայտել թուրքական դիվանագիտական զինանոցը և այն հիմնական գաղափարները, և դրանց հիման վրա կոփված թուրքական դիվանագիտական զինանոցի ռազմավարությունները, որոնցով առաջնորդվում են արդեն հարյուր տարուց ավելի:

ALEKSANYAN Karine (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: karineal@mail.ru

THE TURKISH FACTOR IN THE ARMENIAN POLITICAL LIFE DURING THE PERIOD OF THE ESTABLISHMENT AND CONSOLIDATION OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA AND THE SOVIET POWER

Due to recent geopolitical shifts, the Armenian statehood and the Armenian people have been compelled to confront an existential struggle. The Turkish influence has played a pivotal, albeit sometimes concealed, role in shaping the trajectory of Armenian statehood, affecting its political landscape throughout history. The Turkish zeal for annihilating Armenians, combined with the strategic methods devised within Turkish diplomacy, has had profound repercussions on the political life of the First Republic, Soviet Armenia, and the Third Republic. Under Turkish influence, a series of strategic approaches, including "Creeping Conquest," "Utilizing Local Authorities," "Waging War with a Peace Agenda," and "Relocation of Refugees," have reportedly been introduced and established within the Armenian political landscape. These strategies, ostensibly aimed at fostering a supposedly independent and politically unified Caucasus devoid of national and religious discrimination, are perceived to be instrumental in efforts to undermine Armenian statehood, facilitate the occupation of Armenian territories, and contribute to the annihilation of the Armenian populace. Their alleged implementation has led to the fragmentation of Armenian society and a clear weakening of its capacity for resistance.

The enduring legacy of Turkish denialism and the strategies underlying the notion of Armenian annihilation have persisted a century later. In the 2020 war initiated by Azerbaijan and its ally Turkey against the Republic of Artsakh, advanced military

technology was overtly combined with historical tactics from the Turkish diplomatic arsenal. Regrettably, the Armenian populace exhibited a lack of preparedness not only for the modern Turkish weaponry utilized by the Turkish-Azerbaijani alliance but also for the resurgence of these established tactics, which had been employed against them approximately one hundred years earlier. The ramifications of recent events, including the Second Artsakh War, the ethnic cleansing of Armenians from Artsakh, the disruption of Armenian communities in the Middle East, the occupation of territories belonging to the Republic of Armenia, and ongoing efforts to diminish Armenian identity, have necessitated a thorough reassessment of Armenian history. This need extends to the development of a new national security strategy for Armenians, focused on the prevention of future genocides. A crucial part of this involves actively countering the "Turkish factor" with a strengthened "Armenian factor."

The defeat in the Second Artsakh War highlighted the urgent need for a new Armenian national security strategy. This strategy should be based on a thorough analysis of the "Turkish diplomatic arsenal" and be carried out alongside the modernization and technological enhancement of the Armenian armed forces.

The research objectives are to examine the influence of the Turkish factor on Armenian political life during the establishment and strengthening of the First Republic of Armenia and Soviet power, to establish a scientific foundation for Armenian-Turkish relations, and to uncover the Turkish diplomatic arsenal along with the main ideas and strategies that have guided them for over a century.

АЛЕКСАНЯН Карине (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: karineal@mail.ru

ТУРЕЦКИЙ ФАКТОР В ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ АРМЕНИИ В ПЕРИОД СТАНОВЛЕНИЯ И УТВЕРЖДЕНИЯ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И СОВЕТСКОЙ ВЛАСТИ

Из-за недавних геополитических сдвигов армянская государственность и армянский народ были вынуждены столкнуться с экзистенциальной борьбой. Турецкое влияние сыграло ключевую, хотя иногда и скрытую, роль в формировании траектории армянской государственности, влияя на ее политический ландшафт на протяжении всей истории. Турецкое рвение к уничтожению армян в сочетании со стратегическими методами, разработанными в рамках турецкой дипломатии, имело глубокие последствия для политической жизни Первой республики, Советской Армении и Третьей республики. Под турецким влиянием, как сообщается, был введен и закреплен в армянском политическом ландшафте ряд стратегических подходов,

включая «ползучее завоевание», «использование местных властей», «ведение войны с мирной повесткой дня» и «переселение беженцев».

Эти стратегии, якобы направленные на создание якобы независимого и политически единого Кавказа, лишенного национальной и религиозной дискриминации, воспринимаются как инструменты подрыва армянской государственности, содействия оккупации армянских территорий и уничтожения армянского населения. Их предполагаемая реализация привела к фрагментации армянского общества и наглядному ослаблению его способности к сопротивлению.

Устойчивое наследие турецкого отрицания и стратегии, лежащие в основе идеи уничтожения армян, сохранились и столетие спустя. В войне 2020 года, начатой Азербайджаном и его союзником Турцией против Республики Арцах, передовые военные технологии открыто сочетались с историческими стратегиями из турецкого дипломатического арсенала. К сожалению, армянское население продемонстрировало неготовность не только к современному турецкому оружию, используемому турецко-азербайджанским альянсом, но и к возрождению этих устоявшихся стратегий, которые были использованы против них примерно сто лет назад. Последствия недавних событий, включая Вторую Арцахскую войну, этническую чистку армян из Арцаха, разрушение армянских общин на Ближнем Востоке, оккупацию территорий, принадлежащих Республике Армения, и продолжающиеся попытки принизить армянскую идентичность, потребовали глубокой переоценки армянской истории. Этот императив распространяется на формулирование новой стратегии национальной безопасности для армян, руководствуясь принципом предотвращения будущих геноцидов. Важнейшим аспектом этого является активное противодействие «турецкому фактору» посредством усиления «армянского фактора».

Поражение во Второй Арцахской войне, в частности, подчеркнуло актуальность разработки новой стратегии национальной безопасности Армении. Эта стратегия должна быть основана на всестороннем анализе «турецкого дипломатического арсенала» и реализована в тандеме с модернизацией и технологическим усовершенствованием армянских вооруженных сил.

Цели исследования - изучить влияние турецкого фактора на политическую жизнь Армении в период становления и укрепления Первой Республики Армения и Советской власти, поставить армяно-турецкие отношения на научную основу. Раскрыть турецкий дипломатический арсенал и основные идеи, и стратегии турецкого дипломатического арсенала, которые им руководствовались на протяжении более ста лет.

ԱԿՈՊՈՎ Արկադի (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ arkadone1@gmail.com
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Արմեն (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ armenani@mail.ru

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՅՔԸ 16-18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՅԱԿՆԵՐՈՒՄ[1]

«Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարը» օսմանյան պաշտոնական փաստաթուղթ է, որը կազմվել է օսմանյան պաշտոնյաների կողմից օսմանյան կառավարության կարգադրությամբ: Երեք տեղ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ում հանդիպում է «թուղրա»: Այն իրենից ներկայացնում է անոթակապ պատկերազիր, ուր պատկերված են սուլթանի անունն ու տիտղոսը, և որը հանդիսանում էր օսմանյան կայսրության պետական կնիքը:

Այս սկզբնաղբյուրը կարևոր տվյալներ է հաղորդում Պատմական Տայքի վերաբերյալ: Կարևոր է նրա արժանահավատ լինելը, քանի որ այն ստեղծված է պետական պաշտոնեության կողմից: Հարկացուցակը բացառիկ նյութեր է պարունակում ինչպես տնտեսական, այնպես էլ աշխարհագրական և տեղանվանական բնագավառներում:

Դավթարը կարևորագույն սկզբնաղբյուր է սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրության տեսակից, քանի որ ներկայացված են բոլոր մարդաբնակ և անմարդաբնակ բնակավայրերի անվանումներն ըստ գյուղախմբերի, դրամական և բնամթերքային հարկի տեսակները և չափը, բնակավայրերի ծխերի քանակը, նրանց նահապետների անվանացանկերը, որոնք բացառիկ նյութ են տարածաշրջանի ժողովրդագրական պատկերը վեր հանելու համար: Ուշագրավ է, որ ապրանքները ներկայացված են իրենց գներով և դրամատեսակով: Կան ապրանքներ, որոնք հարկվում էին բացառապես դրամով: Ներկայացված են երկրագործության, այգեգործության, խաղողագործության, մեղվաբուծության, անասնապահության վերաբերյալ կարևոր տեղեկություններ:

Հարկացուցակում ներկայացված են բոլոր հարկատու ծխերի ղեկավարները, որ թույլ է տալիս գոնե մոտավոր իմանալու երկրամասի բնակչության թիվը, իսկ անձնանունների ուսումնասիրությունը լույս է սփռում այնտեղ ապրող ժողովուրդների էթնիկական կազմի վրա:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի պատմաաշխարհագրական բնույթի տեղեկությունները: Թվարկված են բոլոր աշխարհագրական օբյեկտները, բնակավայրերը, գետերը, լճերը, առուները, ձկնաբուծարանները: Տայքի բնակավայրերի ճնշող մեծամասնության անվանումներն այստեղ ներկայացված են ավելի ճիշտ տարբերակով, ուստի սա հնարավորություն է ընձեռում վերականգնելու շատ բնա-

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 25RG-6A091 գիտական թեմայի շրջանակներում:

կավայրերի իրական պատմական անվանումները, ինչպես նաև կատարելու կարևոր ստուգաբանումներ:

Չլդըրի էյալեթի ջաբա դավթարը ներկայացնում է 1694-1732 թթ. ընկած ժամանակաշրջանը: Այստեղ թվարկվում են Ախալցխայի նահանգի բոլոր թվով 21 գավառները, նրանց մեջ մտնող բոլոր գյուղախմբերը և բնակավայրերը: Այս հարկացուցակը կարևոր տեղեկություններ է հաղորդում նշված ժամանակաշրջանում Ախալցըխայի գավառի վարչաքաղաքական բաժանման, հողատիրության ձևերի, գանձվող հարկերի տեսակների վերաբերյալ: Շատ կարևոր է նաև այն, որ երբ համեմատում ես «Չլդըրի էյալեթի ջաբա դավթարը» «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթարի» հետ, ակնհայտորեն երևում է, թե ինչ ժողովրդագրական բնույթի բացասական տեղաշարժեր են տեղի ունեցել:Անմիջապես աչքի է զարնում այն իրողությունը, որ մեկ հարյուրամյակի ընթացքում կտրուկ նվազել է Ախալցխայի նահանգի բնակավայրերի թիվը: Օրինակ՝ Բանակի գավառը 1595 թ. տվյալներով ուներ 109 բնակավայր, որից 55-ը Բանակի նահիեում, 16-ը Քիամխիսում, 38-ը Փանազկերտում: «Չլդըրի էյալեթի ջաբա դավթարի» տվյալներով Բանակի գավառի կազմում մնացել էր 46 բնակավայր, որից Բանակի նահիեում՝ 23 բնակավայր, Քիամխիսում՝ 5 բնակավայր, Փանազկերտում՝ 18 բնակավայր: Նմանատիպ էր նաև վիճակը Օլթիի լիվայում: 1595 թ. մոտ 90 բնակավայրի փոխարեն մենք այժմ հանդիպում ենք 45 բնակավայրի: Այս երկու լիվաների մոտ 200 բնակավայրից կանգուն մնացել էր ընդամենը 91-ը: Եթե նախկինում հանդիպում ենք միևնույն անունը կրող մի քանի գյուղերի Վերին, Ներքին, Մեծ, Միջին և Փոքր, ապա այժմ նրանց մի մասն առհասարակ չի հիշատակվում, մյուսներն էլ նշվում են իբրև մեկական գյուղեր: Այս գործընթացը բնորոշ էր նաև Ախալցխայի նահանգի մյուս շրջաններին:

AKOPOV Arkadi (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: arkadone1@gmail.com
HAYRAPETYAN Armen (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: armenani@mail.ru

HISTORICAL TAYK IN THE OTTOMAN TAX REGISTERS OF THE 16TH–18TH CENTURIES[1]

“The Great Defter of the Gürcistan Vilayet” is an official Ottoman document compiled by Ottoman officials on the orders of the Ottoman government. In three places within “The Great Defter of the Vilayet of Gurjistan”, a *tughra* appears — an intricate

[1] The research was carried out with the financial support of the Committee on Higher Education and Science of the Ministry of Education, Science and Sports of the Republic of Armenia within the framework of the scientific topic 25RG-6A091.

monogram depicting the sultan's name and title, which served as the state seal of the Ottoman Empire.

This source provides important information about Historical Tayk. Its credibility is significant because it was created by the state administration. The defter contains unique material relevant to the economic, geographical, and toponymic aspects of the region.

The defter is a crucial primary source for studying the socio-economic condition of the area, as it records the names of all inhabited and uninhabited settlements grouped by village clusters, the types and amounts of monetary and in-kind taxes, the number of households in each settlement, and lists of the heads of households — all of which are invaluable for reconstructing the demographic picture of the region. Notably, goods are listed with their prices and currency. There are items that were taxed exclusively in money. It also provides important details about agriculture, horticulture, viticulture, beekeeping, and animal husbandry.

The tax register includes all the heads of taxable households, which allows at least an approximate estimate of the region's population, while the study of personal names sheds light on the ethnic composition of the peoples living there.

Particularly noteworthy are the historical and geographical details: all geographical features, settlements, rivers, lakes, streams, and fisheries are listed. The names of the vast majority of Tayk's settlements are given here in a more accurate form, which enables researchers to restore the authentic historical names of many localities and to conduct important verifications.

"The Jaba Defter of the Çıldır Eyalet" covers the period from 1694 to 1732. It lists all 21 sanjaks of the Akhaltsikhe Eyalet, as well as all the village clusters and settlements included within them. This tax register provides important information about the administrative and political division of the Akhaltsikhe Eyalet during that period, the forms of land ownership, and the types of taxes collected. It is also significant that when comparing the "The Jaba Defter of the Çıldır Eyalet" with the "Great Defter of the Gürcistan Vilayet", clear negative demographic shifts become evident. It is striking that within a century, the number of settlements in the Akhaltsikhe Sanjak decreased sharply. For example, according to data from 1595, the Banak Liva had 109 settlements, of which 55 were in the Banak Nahiyah, 16 in Kiamkhis, and 38 in Panaskert. According to the "Jaba Defter of the Çıldır Eyalet", only 46 settlements remained in the Banak liva: 23 in the Banak Nahiyah, 5 in Kiamkhis, and 18 in Panaskert. A similar situation was observed in the Olti Liva: instead of about 90 settlements recorded in 1595, now only 45 are mentioned. Out of nearly 200 settlements in these two livas, only 91 survived. If previously there were several villages with the same name — Upper, Lower, Great, Middle, and Small — now some of them are not mentioned at all, while others appear as single villages. This process was also typical for other areas of the Akhaltsikhe Eyalet.

АКОПОВ Аркадий (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: arkadone1@gmail.com
АЙРАПЕТЯН Армен (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: armenani@mail.ru

ИСТОРИЧЕСКИЙ ТАЙК В ОСМАНСКИХ НАЛОГОВЫХ РЕЕСТРАХ XVI–XVIII ВЕКОВ[1]

«Большой дефтер Гюрджистанского вилайета» является официальным османским документом, составленным османскими чиновниками по распоряжению османского правительства.

В трёх местах в «Большом дефтере Гюрджистанского вилайета» встречается «тугра». Она представляет собой орнаментальную монограмму, в которой изображаются имя и титул султана, и которая служила государственной печатью Османской империи.

Данный источник содержит важные сведения о Историческом Тайке. Его достоверность значительна, так как он создан государственной администрацией. Дефтер содержит уникальные материалы как по экономике, так и по географии и топонимике.

Дефтер — важнейший источник для изучения социально-экономического состояния региона, так как в нём приводятся названия всех населённых и ненаселённых пунктов по сельским округам, виды и размеры денежных и натуральных налогов, количество дымов (домохозяйств) в поселениях, списки глав родов и семей, что является уникальным материалом для восстановления демографической картины региона. Примечательно, что товары указаны с их ценами и валютой. Есть товары, облагавшиеся исключительно денежным налогом. Приводятся важные сведения о земледелии, садоводстве, виноградарстве, пчеловодстве, животноводстве.

В налоговом реестре перечислены все старосты налогоплательщиков, что позволяет хотя бы приблизительно узнать численность населения области, а изучение имён проливает свет на этнический состав народов, проживавших там.

Особого внимания заслуживают сведения историко-географического характера: перечислены все географические объекты, населённые пункты, реки, озёра, ручьи, рыбные хозяйства. Названия большинства населённых пунктов Тайка приведены здесь в более точной форме, что даёт возможность восстановить подлинные исторические названия многих местностей, а также провести важные уточнения и проверки.

«Джаба дефтер Чылдырского эялета» охватывает период с 1694 по 1732 годы. В нём перечислены все 21 санджака Ахалцихского эялета, а также все входящие в них группы деревень и населённые пункты. Этот налоговый реестр содержит важные сведения об административно-политическом делении Ахалцихского эялета в указанный пе-

[1] Исследование выполнено при финансовой поддержке Комитета по высшему образованию и науке Министерства образования, науки и спорта Республики Армения в рамках научной темы 25RG-6A091

риод, формах землевладения и видах собираемых налогов. Очень важно и то, что при сравнении «Джаба дефтер Чылдырского эялета» с «Большим дефтером Гюрджистанского вилайета» отчётливо видны негативные демографические сдвиги, произошедшие за это время. Бросается в глаза тот факт, что за одно столетие резко сократилось количество населённых пунктов Ахалцихского санжака. Например, по данным 1595 года Банакская лива насчитывала 109 населённых пунктов, из них 55—в нахие Банак, 16—в Кямхиси, 38— в Панаскерте. По «Джаба дефтеру Чылдырского эялета» в составе гавара Банак осталось всего 46 населённых пунктов, из них в нахие Банак-23, в Кямхисе—5, в Панаскерте—18. Подобная ситуация наблюдалась и в ливе Олти: вместо примерно 90 населённых пунктов в 1595 году теперь упоминаются лишь 45. Из почти 200 населённых пунктов этих двух ливов сохранилось всего 91. Если раньше встречались несколько деревень с одним и тем же названием—Верхняя, Нижняя, Большая, Средняя и Малая, то теперь часть из них вовсе не упоминается, а другие отмечены как единичные сёла. Этот процесс был характерен и для других районов Ахалцихского эялета.

ԱՅՎԱԶՅԱՆ Գրիգորի (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ grigoriayvazyan@gmail.com

ՈՒԴԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ուդիների մի մասը 1988-1990 թթ. (փախստականներ Ադրբեջանից) բնակություն է հաստատել Հայաստանում հիմնականում Տավուշի մարզում՝ Նոյեմբերյան, Դեբետավան, Հաղթանակ, Պտղավան, Բագրատաշեն և այլ բնակավայրերում, նաև Երևան քաղաքում, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերում: Էթնիկ ուդիների թիվը Հայաստանի տարբեր մարզերում կարող է տատանվել մոտ 200-500-ից մինչև 1000-1500 մարդ: Հայաստանում բավականին շատ կրիպտոուդիններ կան, ինչը դժվարացնում է դրանց ճշգրիտ թիվի պարզումը: 2018 թ. Հայաստանում ուդիների նախաձեռնող խումբը ստեղծել է «Պատմական Աղվանքի ուդի ժողովրդի վերածնունդ» ՀԿ: ՀՀ ուդիական համայնքի հիմնական նպատակներն ու խնդիրները հետևյալն են: 1) Ուդիերեն լեզվի ուսումնասիրություն, 2) պատմության ուսումնասիրություն, 3) մշակույթի 4) ծեսերի, սովորույթների ու ավանդույթների պահպանումը Հայաստանում: Իր գոյության ընթացքում 2018-2024 թ.թ. Կազմակերպությունն արդեն իրականացրել է մի շարք մշակութային և կրթական միջոցառումներ: Առաջիկայում ուդիական

համայնքը նախատեսում է մի շարք այլ միջոցառումներ: Հայաստանի աղվանուդիական համայնքը սերտորեն համագործակցում է հայ կովկասագետների հետ՝ նպատակ ունենալով զարգացնել և ամրապնդել ուդի և հայ ժողովուրդների դարավոր եղբայրական հարաբերությունները:

AYVAZYAN Grigori (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: grigoriayvazyan@gmail.com

UDIS IN ARMENIA:
HISTORY AND CURRENT SITUATION

Some of the Udis refugees from Azerbaijan 1988-1990 settled in Armenia, mainly in the Tavush region in Noyemberyan, Debetavan, Haghtanak, Ptghavan, Bagratashen, Hakhtanak and other settlements. The Udis also settled in the city of Yerevan, in the Gegharkunik, Kotayk regions, etc. The number of ethnic Udis in different regions of the Republic of Armenia can range from about 200-500 to 1000-1500 people. There are many crypto-Udis in Armenia, which makes it difficult to determine their exact number. In 2018, an initiative group of the Udis of Armenia created the Udi public organization “Revival of the Udi People of Historical Albania”. The main goals and objectives of the Udi community of the Republic of Armenia are as follows: 1) The study and popularization of the Udi language; 2) The study of Udi history, 3) The study of culture; 4) the preservation of the rituals, customs and traditions of the Udis in Armenia. During its existence in 2018-2024, the organization has already held a number of cultural and educational events. In the near future, the community is planning a number of other events. The Albanian-Udi community of Armenia closely cooperates with Armenian Caucasian scholars in order to develop and strengthen the centuries-old fraternal relations between the Udi and Armenian peoples.

АЙВАЗЯН Григорий (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: grigoriayvazyan@gmail.com

УДИНЫ АРМЕНИИ:
ИСТОРИЯ И НЫНЕШНЕЕ ПОЛОЖЕНИЕ

В 1988-1990 гг. в Армении поселилась часть удин беженцев из Азербайджана 1988-1990 гг. в основном в Тавушской области в Ноемберяне, Дебетаване, Ахтанаке, Птгаване, Баграташене и других населённых пунктах. Поселились удины также и в городе Ереване в Гегаркуникской, Котайкской областях и т.д. Численность этнических удин в разных

регионах Республике Армения, может составлять от около 200-500, до 1000-1500 человек. В Армении не мало криптоудин, это делает затруднительным вопрос о точном их количестве. В 2018 г. инициативная группа удин Армении создала удинскую общественную организацию «Возрождение народа удин исторической Албании». Основными целями и задачами удинской общины Р. А. заключаются в следующем: 1) Изучение и популяризация удинского языка; 2) изучение удинской истории, 3) культуры; 4) сохранения обрядов, обычаев и традиций удин в Армении. За время своего существования 2018-2024гг. организация уже провела целый ряд культурных и просветительских мероприятий. В ближайшее время удинской общиной Армении намечается ещё целый ряд мероприятий. Албано-Удинская община Армении тесно сотрудничает с армянскими кавказоведами в целях развития и укрепления многовековых братских отношений между удинским и армянским народами.

ԱՅՎԱԶՅԱՆ Գևորգ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ Ayg.84@mail.ru

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՆԱԳՐԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԱ (1840-1870-ԱԿԱՆ ԹԹ.)

XVIII-XIX դդ. հայ ազգը ձգտել է վերագտնել իր ինքնությունը: Ստեղծելով պարբերական հրատարակություններ՝ նա իր ներկան դարձրել է գրանցված հիշողություն: Մամուլն ընդհանրապես ազգային հիշողության ամենաճկուն, բայցև հաստատուն կրողն է հանդիսացել: Այդտեղ բաբախել են ազգային զգացմունքներ, վեր են հառնել Ուխտեր: Հաճախ բախվել ենք անցումային ժամանակների խավարին: Հենց մամուլն է, որ բազմաբաժան աշխարհում միավորել է տարանջատված հայերին:

Հայկական պարբերականները և դրանց վերնագրերը պատմական-գրական երկերի, բանավոր պատումների պես հավաքական հիշողության պահոցներ էին: Դրանք մեր ժամանակագրությունն են, մեր ինքնության օրագիրը, հանրային տրամադրությունների ու քաղաքական օրակարգերի հայելիները: Լրագրերի հրատարակիչները վերնագրերի միջոցով մատնանշել են ազգի՝ իրենց ժամանակի համար կարևոր և երկրորդական խնդիրները:

Վերնագրերը, որպես տեքստային ամենաազդեցիկ տարրեր, պարզապես գեղագիտական հիմքով չեն ընտրվել: Դրանք մշակվել են՝ ծառայելու մի քանի հիմնական նպատակների. ազդել, ուղղորդել, նպաստել վաճառքին:

100 և ավել վերնագրեր ուսումնասիրելուց հետո համատեքստային վերլուծության (discourse analysis) մեթոդով ցույց ենք տվել, թե ինչպես է լեզուն գործածվում իրական համատեքստում իբրև իրականության «փաթեթավորման» ձև (Framing Theory):

Հայրենասիրական և ազգանվեր շարքի վերնագրերը փոխանցել են ազգի ինքնության, պատմական հպարտության և հերոսության, ազգաշինության, փրկչականության գաղափարներ: Նպատակ են ունեցել բարձրացնել ազգային ինքնագիտակցությունն ու հավաքական ԵՍ-ին պատկանելության զգացումը. «Արշալույս Արարատյան», «Հայրենասեր», «Հայաստան», «Արարատ», «Արփի Արարատյան», «Մասիս», «Հայկական աշխարհ», «Կիլիկիա», «Ծիլն Ավարայրի», «Եփրատ», «Հայրենիք»:

Քրիստոնեական և բարոյափիլիսոփայական բովանդակությամբ վերնագրերն ունեցել են բարոյական բարձր հնչեղություն և հավատարիմ են մնացել քրիստոնեական արժեքներին: Առաջ են մղել մշակութային վերածննդի, հույսի և փրկության գաղափարները. «Երևակ», «Մասյաց Աղավնի», «Հավերժահարս», «Ավետաբեր», «Ժամանակ», «Հույս», «Սիոն», «Լույս»:

Կրթալուսավորչական և բանասիրական դիսկուրսը խթանել է լուսավորությունը, ինքնակրթությունը, ընթերցասիրական մշակույթի վերելքը, բարձր գնահատել գործառական գիտելիքի դերը. «Ուսումնասեր», «Բանասեր», «Շտեմարան պիտանի գիտելյաց», «Երկասեր», «Մանրալուրք Մասիս լրագրոյ», «Մուսայք Մասեաց», «Մուսայք Ս. Մեսրոպեան վարժարանին», «Օրագիր», «Դպրոց», «Թատրոն», «Թատրոն մանկանց», «Մանկավարժական թերթ»:

Միության և եղբայրասիրության կոչերով հանդես եկած վերնագրերը շեշտել են միասնականության, ընդհանուր նպատակի շուրջ համախմբման, պառակտվածության վերացման, ազգային միաբանության անհրաժեշտությունը. «Եղբայրասեր», «Միություն», «Սեր»:

Գեղարվեստական և պոետիկ բնույթի վերնագրերը օգտագործել են բնության, տարվա եղանակների կամ թռչունների խորհրդանիշեր՝ որպես հույսի, ազատության, ազատաբաղձության, նրբազգացության, բնության հետ ներդաշնակության ցուցիչներ. «Արծուի Վասպուրական», «Մեղու», «Թութակ Հայկազեան», «Մեղու Հայաստանի», «Ճռաքաղ», «Ծաղիկ», «Հայկական աշխարհի կռունկ», «Թռչնիկ», «Պեգասյան Թռչնիկ», «Ձեփյուռ հայրենյաց», «Գարուն Հայաստանի», «Գարուն», «Ծիածան», «Վարդ Կեսարիո», «Արծուիկ Տարոնո», «Փունջ»:

Քաղաքակրթական (Արևելք-Արևմուտք) թեքվածությամբ խորագրերը, հղում կատարելով աշխարհաքաղաքական կենտրոններին, ընթերցողներին հաղորդակից են դարձրել մշակութային երկբևեռության, միջազգային համագործակցության, ցանցային ազգ լինելու գաղափարներին. «Կովկաս», «Եվրոպա», «Արևելք», «Արևմուտք», «Հյուսիսափայլ», «Հյուսիս», «Փարիզ», «Երկրագունդ», «Ասիա»:

Այսպիսով՝ պարբերականների վերնագրերն իբրև հավաքական հիշողության տեքստային նշաններ արտացոլել են պատմական իրողությունները, ազգային տագնապներն ու իդեալները:

AYVAZYAN Gevorg (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: Ayg.84@mail.ru

IDEOLOGICAL STRUCTURE OF ARMENIAN PERIODICAL TITLES AND THEIR IMPACT ON PUBLIC CONSCIOUSNESS (1840-1870S)

In the 18th-19th centuries, the Armenian people sought to restore their national identity. Through the periodical press, they recorded the events of the present, forming a collective memory. The press became a flexible but stable carrier of national consciousness, uniting Armenians in the face of historical challenges and division.

Armenian periodicals and their titles acted as repositories of collective memory - like historical and literary works and oral traditions. They were a chronicle of their time, a diary of national identity, a mirror of public sentiment and political agendas. Through their titles, newspaper publishers designated both priority and secondary issues that worried the nation.

Headlines, as one of the most influential textual elements, were chosen not only for aesthetic reasons. They were developed with several key goals in mind: to influence, direct perception, and promote the publication's distribution.

After studying more than a hundred headlines using the discourse analysis method, we demonstrated how language functions in a real context as a form of "packaging" reality (Framing Theory).

Patriotic and nationally oriented headlines conveyed ideas of national identity, historical pride and heroism, statehood and messianic mission. Their goal was to raise national consciousness and strengthen the sense of belonging to the collective “I”: “Ararat Dawn”, “Patriot”, “Armenia”, “Ararat”, “Ararat Sun”, “Masis”, “Armenian World”, “Cilicia”, “The Sprout of Avarayr”, “Euphrates”, “Motherland”.

Headlines with Christian and moral-philosophical content were distinguished by high moral coloring and commitment to Christian values. They promoted the ideas of cultural revival, hope and salvation: “Phenomenon”, “Dove of Masis”, “Nymph”, “Herald”, “Time”, “Hope”, “Zion”, “Light”.

The educational, enlightening and philological discourse contributed to the promotion of the ideas of enlightenment, self-education, development of the culture of reading, and also highly valued the importance of applied knowledge: “Studious”, “Philologist”, “Treasury of Useful Knowledge”, “Book Lover”, “News of Masis”, “Muses of Masis”, “Muses of the School of St. Mesrop”, “Diary”, “School”, “Theater”, “Theater for Children”, “Pedagogical Newspaper”.

Headlines that appealed to the ideals of unity and brotherly love emphasized the need for cohesion, consolidation around a common goal, overcoming divisions and achieving national unity: “Brotherly Lover,” “Unity,” “Love”.

The artistic and poetic titles used symbols of nature, seasons or birds as an expression of hope, freedom, the desire for liberation, sophistication and harmony with nature: “The Eagle of Vaspurakan”, “The Bee”, “The Armenian Parrot”, “The Bee of Armenia”,

“Gathering the Remains of the Harvest”, “The Flower”, “The Crane of the Armenian World”, “The Bird”, “The Pegasus Chick”, “The Breeze of the Motherland”, “The Spring of Armenia”, “The Spring”, “The Rainbow”, “The Rose of Caesarea”, “The Eaglet of Taron”, “The Bouquet”.

Headlines with a civilizational focus (East-West), referring to geopolitical centers, introduced readers to the ideas of cultural bipolarity, international cooperation and the concept of the nation as a network community: “Caucasus”, “Europe”, “East”, “West”, “Northern Lights”, “North”, “Paris”, “Globe”, “Asia”.

Thus, the headlines of periodicals functioned as textual markers of collective memory, becoming a reflection of historical realities, national concerns, ideals and aspirations.

АЙВАЗЯН Геворг (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: Ayg.84@mail.ru

ИДЕОЛОГИЧЕСКАЯ СТРУКТУРА ЗАГОЛОВКОВ АРМЯНСКИХ ПЕРИОДИЧЕСКИХ ИЗДАНИЙ И ИХ ВЛИЯНИЕ НА ОБЩЕСТВЕННОЕ СОЗНАНИЕ (1840–1870-Е ГГ.)

В XVIII–XIX веках армянский народ стремился к восстановлению своей национальной идентичности. Через периодическую печать он фиксировал события настоящего формируя коллективную память. Пресса стала гибким, но устойчивым носителем национального сознания, объединяя армян в условиях исторических вызовов и разделённости.

Армянские периодические издания и их заголовки выступали хранилищами коллективной памяти — подобно историко-литературным произведениям и устным преданиям. Они представляли собой хронику своего времени, дневник национальной идентичности, зеркало общественных настроений и политических повесток. Издатели газет посредством заголовков обозначали как приоритетные, так и второстепенные вопросы, волновавшие нацию.

Заголовки, как один из самых воздействующих текстовых элементов, выбирались не только по эстетическим соображениям. Они разрабатывались с учётом нескольких ключевых целей: оказывать влияние, направлять восприятие и способствовать распространению издания.

После изучения более ста заголовков методом контекстуального анализа (discourse analysis), мы продемонстрировали, каким образом язык функционирует в реальном контексте как форма «упаковки» действительности (Framing Theory).

Заголовки патриотического и национально ориентированного характера передавали идеи национальной идентичности, исторической гордости и героизма, госу-

дарственности и мессианской миссии. Их целью было повышение национального самосознания и укрепление чувства принадлежности к коллективному «Я»: «Араратский рассвет», «Патриот», «Армения», «Арарат», «Араратское солнце», «Масис», «Армянский мир», «Киликия», «Росток Аварайра», «Евфрат», «Родина».

Заголовки с христианским и нравственно-философским содержанием отличались высокой моральной окраской и приверженностью христианским ценностям. Они продвигали идеи культурного возрождения, надежды и спасения: «Явление», «Голубь Масиса», «Нимфа», «Вестник», «Время», «Надежда», «Сион», «Свет».

Образовательно-просветительский и филологический дискурс способствовал продвижению идей просвещения, самообразования, развития культуры чтения, а также высоко оценивал значение прикладного знания: «Любознательный», «Филолог», «Сокровищница полезных знаний», «Книголюб», «Новости Масиса», «Музы Масиса», «Музы школы Св. Месропа», «Дневник», «Школа», «Театр», «Театр для детей», «Педагогическая газета».

Заголовки, обращавшиеся к идеалам единства и братолюбия, подчёркивали необходимость сплочённости, консолидации вокруг общей цели, преодоления раскола и достижения национального единства: «Братолюбец», «Единство», «Любовь».

Заголовки художественного и поэтического характера использовали символы природы, времён года или птиц как выражение надежды, свободы, стремления к освобождению, утончённости и гармонии с природой: «Орёл Васпуракана», «Пчела», «Армянский попугай», «Пчела Армении», «Сбор остатков урожая», «Цветок», «Журавль армянского мира», «Птичка», «Пегасов птенец», «Ветерок Родины», «Весна Армении», «Весна», «Радуга», «Роза Кесарии», «Орёлнок Тарона», «Букет».

Заголовки с цивилизационной направленностью (Восток–Запад), отсылая к геополитическим центрам, приобщали читателей к идеям культурной биполярности, международного сотрудничества и концепции нации как сетевого сообщества: «Кавказ», «Европа», «Восток», «Запад», «Северное сияние», «Север», «Париж», «Земной шар», «Азия».

Таким образом, заголовки периодических изданий функционировали в качестве текстовых маркеров коллективной памяти, становясь отражением исторических реалий, национальных тревог, идеалов и устремлений.

ԱՍՈՅԱՆ Լիլիթ (Հայաստան)
Շիրակի պետական համալսարան,
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն
Գյումրիում Ռուսական համագործակցության ներկայացուցչություն
Էլ. հասցե՝ lilitasoyan@rambler.ru

ԳԵՆԵՐԱԼ Ե.Ե. ՎԻՇԻՆՍԿԻ. ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ (ԸՍՏ ՌԴ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ)

Ե.Ե. Վիշինսկին ռուս զինվորականի բացառիկ օրինակ է, որը պատմական, ճակատագրական պահին նշանակալի դեր է խաղացել հայ զինվորական գործի կայացման մեջ: Նրա գործունեությունն արտացոլում է սերտ կապերը ռուսական սպայական կորպուսի և հայկական զինվորական ուժի ձևավորման գործընթացում՝ 1917–1918 թթ.: Չնայած գոյություն ունեցող հարուստ պատմական գրականության, զինակիցների հուշերի և հուշագրությունների, ռազմական գործողությունների նկարագրությունների ու արխիվային տվյալների՝ մինչ օրս չկա առանձին ամբողջական ուսումնասիրություն գեներալ-մայոր Վիշինսկու մասին: Մեր ուսումնասիրության նպատակն է՝ ներկայացնել լայն հանրությանը նրա կենսագրության քիչ ուսումնասիրված փաստերը՝ հիմնված ՀՀ Ազգային արխիվում և ՌԴ Ռազմապատմական արխիվում պահպանվող փաստթղթերի վրա:

Ե. Վիշինսկին Լեհական թագավորության ազնվականական ընտանիքից էր, ավարտել էր Նիկոլաևյան գլխավոր շտաբի ակադեմիան, 1900 թ. ծառայել է Կովկասում: Ծառայության բոլոր փուլերում դրսևորել է իրեն որպես տաղանդավոր շտաբային սպա, հետազոտող, ռազմական արևելագետ: Նրա ծառայությունը Էրզրումում և Ստամբուլում հաստատում է նրա կարևոր հետախուզա-դիվանագիտական դերակատարումը: Նա անցել է կարևոր մարտական ճանապարհ՝ Առաջին համաշխարհայինի ռազմաճակատներից մինչև Հայկական կորպուսի ձևավորում:

Լինելով 13-րդ Էյլբ-Գրենադերական Երիվանյան գնդի հրամանատար՝ Վիշինսկին մասնակցել է արևելյան ճակատի ծանր մարտերին: Քաջության համար պարգևատրվել է Սուրբ Գեորգիի զենքով և Սուրբ Գեորգիի շքանշանով: Այս պարգևները Ռուսական կայսրությունում համարվում էին անձնական խիզախության և պրոֆեսիոնալիզմի առավել բարձր ճանաչում:

Առաջին համաշխարհային պատերազմի թեժ ժամանակահատվածում Կովկասյան ճակատը փլուզվեց: Թուրքական ներխուժումներից պաշտպանվելու նպատակով նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը սեփական բանակի կարիքն ուներ, որի ձևավորման գործում մեծ ներդրում ունեցավ Ե. Վիշինսկին: Փետրվարյան հեղափոխությունից հետո նա նշանակվեց Կովկասյան բանակի շտաբի պետ: 1917 թ. դեկտեմբերից՝ նա հանդես է գալիս որպես Հայկական կորպուսի կազմավորման շտաբի պետ՝ գեներալ-լեյտենանտ Նազարբեկովի հրամանատարության տակ: Նրա դերը Հայկական կորպուսի կազմակերպման և Սարդարապատի ճակատամարտի նախապատրաստման գործում գնահատվում է որպես առանցքային:

Վիշինսկու կենսագրության քիչ ուսումնասիրված հատվածներից է նրա դիվանագիտական ծառայությունն ու գիտական գործունեությունը: Նրա աշխատանքը հյուպատոսություններում, Օսմանյան կայսրության և Անդրկովկասի ռազմական աշխարհագրության վերաբերյալ գիտական աշխատությունները, Կովկասյան ռազմական օկրուգի հետախուզական աշխատանքներին մասնակցությունը գիտական և գործնական աշխատանքների սինթեզի վառ վկայությունն են: Նրա ուսումնասիրությունները պահպանվում են Հայաստանի Ազգային գրադարանում:

1918 թ. սեպտեմբերի 30-ին Վիշինսկին մահացավ Դիլիջանում: Հուղարկավորվել է զինվորական արարողակարգով, սակայն գերեզմանն այժմ կորսված է սողանքի պատճառով:

Վիշինսկու կենսագրությունը հայ-ռուսական փոխներգործության վառ դրսևորումներից է Ռուսական կայսրության փլուզման ժամանակաշրջանում: Նրա ճակատագիրը՝ անձնական նվիրվածության, զինվորական պատվի և ռազմավարական մտածողության օրինակ է, և հենց պատմաքաղաքական ենթատեքստում գեներալ Վիշինսկու կերպարը կարիք ունի հետագա ավելի խորը ուսումնասիրության թե՛ ռուսական և թե՛ հայկական պատմագիտության մեջ:

ASOYAN Lilit (Armenia)
Shirak State University,
International Scientific and Educational Center of NAS RA
Representative Office of Rossotrudnichestvo in Gyumri
e-mail: lilitasoyan@rambler.ru

GENERAL E. E. VYSHINSKY – PAGES FROM A MILITARY BIOGRAPHY (BASED ON THE MATERIALS FROM THE RUSSIAN CENTRAL STATE MILITARY ARCHIVE AND THE NATIONAL ARCHIVES OF ARMENIA)

E.E. Vyshinsky is a unique example of a Russian military officer who played a notable role in the formation of Armenian military affairs during a pivotal historical period. His service reflects the close ties between the Russian officer corps and the process of establishing the Armenian armed forces in 1917–1918. Despite a wealth of historical literature—including memoirs of fellow officers, descriptions of military operations, and archival data—no comprehensive monographic study has yet been devoted to Major General Vyshinsky. The goal of this research is to identify and present to the broader public the lesser-known aspects of his biography based on archival materials preserved in the National Archives of Armenia and the Russian Central State Military Archive.

Evgeny Vyshinsky, a nobleman from the Kingdom of Poland and a graduate of the Nikolaev General Staff Academy, had been serving in the Caucasus since 1900. At all stages of his career, he demonstrated himself to be a talented staff officer, researcher, and military orientalist. His assignments in Erzurum and Constantinople confirmed his critical

role in military-intelligence and diplomatic activities. Vyshinsky's military path spanned from the fronts of the First World War to the creation of the Armenian Corps. As commander of the 13th Leib-Grenadier Erivan Regiment, he participated in some of the fiercest battles on the Eastern Front. For his bravery, he was awarded the St. George's Weapon and the Order of St. George—some of the highest honors for valor and professionalism in the Russian Empire.

During the height of the World War, the Caucasus Front collapsed. The newly formed Republic of Armenia, facing Turkish intervention, urgently needed to build its own armed forces. Vyshinsky played a significant role in this process. Following the February Revolution, he was appointed Chief of Staff of the Caucasus Army. In December 1917, he became Chief of Staff of the forming Armenian Corps under Lieutenant General Tovmas Nazarbekov. His contributions to the military organization of the corps and preparation for the Battle of Sardarapat are considered essential.

One of the lesser-studied aspects of Vyshinsky's biography is his diplomatic service and academic activity. His work in Russian consulates, scholarly publications on the military geography of the South Caucasus and the Ottoman Empire, and participation in intelligence activities of the Caucasus Military District stand as clear evidence of the synthesis of scholarly and practical military work. His writings are preserved in the National Library of Armenia.

In September 1918, Vyshinsky died in Dilijan. He was buried with military honors, but his burial site has since been lost.

Vyshinsky's biography is one of the most vivid examples of Armenian-Russian cooperation during the collapse of the empire. His life serves as a model of personal dedication, military honor, and strategic thinking. Within the historical-political context, the figure of General Vyshinsky deserves deeper and more extensive research in both Russian and Armenian historical scholarship.

АСОЯН Лилит (Армения)
Ширакский государственный университет
Международный научно-образовательный центр НАН РА
Представительство Россотрудничества в Гюмри
e-mail: lilitasoyan@rambler.ru

ГЕНЕРАЛ Е.Е. ВЫШИНСКИЙ – СТРАНИЦЫ ВОЕННОЙ БИОГРАФИИ (ПО МАТЕРИАЛАМ ЦГВИА И НАЦИОНАЛЬНОГО АРХИВА АРМЕНИИ)

Е.Е. Вышинский – уникальный пример русского военного, сыгравшего заметную роль в становлении армянского военного дела в переломный исторический момент. Его деятельность отражает тесные связи между российским офицерским корпусом и процессом формирования армянских вооружённых сил в 1917–1918 гг. Несмотря на

обилие исторической литературы: воспоминания сослуживцев, описаний военных действий, архивных данных, отдельного монументального исследования о генерал-майоре Вышинском нет. Цель нашего исследования - выявить и представить широкой общественности малоизученные факты его биографии на основании архивных материалов, хранящихся в Национальном архиве Армении и ЦГВИА РФ.

Евгений Вышинский - выходец из дворянства Царства Польского, выпускник Николаевской академии Генштаба, с 1900 года служит на Кавказе. На всех этапах проявляет себя как талантливый штабной офицер, исследователь, военный востоковед. Его служба в Эрзруме и Стамбуле подтверждает важную разведывательно-дипломатическую роль. Он прошел весомый боевой путь от фронта Первой мировой войны до создания Армянского корпуса. Командуя 13-м Лейб-Гренадерским Эриванским полком, Вышинский участвует в тяжелейших боях на Восточном фронте. За храбрость награждён Георгиевским оружием и орденом Святого Георгия. Эти награды — высшее признание личного мужества и профессионализма в Российской империи.

В разгар мировой войны Кавказский фронт развалился. Сформированная молодая Республика Армения для защиты территорий от турецкой интервенции нуждалась в создании собственной армии, в деле формирования которой значимую роль сыграл Е.Е.Вышинский. После Февральской революции он назначается начальником штаба Кавказской армии. С декабря 1917 года — начальник штаба формируемого Армянского корпуса при генерал-лейтенанте Назарбекове. Его роль в военной организации корпуса и в подготовке Сардарапатского сражения оценивается как ключевая.

Одним из малоизученных отрывков биографии Вышинского является его дипломатическая служба и научная деятельность. Работа Вышинского в генконсульствах, его научные труды по военной географии Закавказья и Османской империи, участие в разведке Кавказского ВО — яркое свидетельство синтеза научной и практической работы. Его труды хранятся в Национальной библиотеке Армении.

В сентябре 1918 года Вышинский скончался в Дилижане. Похоронен с воинскими почестями, место его захоронения ныне утрачено.

Биография Вышинского - одна из ярких проявлений армяно-российского взаимодействия в эпоху распада империи. Его судьба - пример личной преданности, воинской чести и стратегического мышления, и именно в историко-политическом контексте фигура генерала Вышинского требует дальнейшего более глубокого изучения в российской и армянской исторической науке.

ԲԵՐԻԶԵ Մերաբ (Վրաստան)
Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարան
էլ. փոստ՝ merab.beridzee@gmail.com
ԲԵՐԻԶԵ Մակա (Վրաստան)
Սամցխե-Ջավախեթիի պետական համալսարան
էլ. փոստ՝ beridzemaka@gmail.com

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՋԱՎԱԽՔՈՒՄ XIX–XX ԴԱՐԵՐՈՒՄ

19–20-րդ դարերում Ջավախք տարածաշրջանը Կովկասում արտագաղթի գործընթացների տեսանկյունից ամենակարևոր շրջաններից մեկն էր: Տարածաշրջանի պատմական միջավայրը այս ժամանակաշրջանում ձևավորվել էր ինչպես Ռուսական կայսրության քաղաքականությամբ, այնպես էլ Օսմանյան և Պարսկական ազդեցություններով, ինչպես նաև տեղական սոցիալ–տնտեսական առանձնահատկություններով: Ջավախքի աշխարհագրական դիրքը՝ որպես Հայաստանի, Թուրքիայի և Վրաստանի ներքին տարածքների խաչմերուկ, այն դարձնում էր ռազմավարական տարածք, ինչը մեծապես պայմանավորում էր միգրացիոն դինամիկան:

Ռուսական կայսրության կողմից Հարավային Կովկասի վերջնական նվաճումից հետո (19-րդ դարի սկզբին) սկսվեցին լայնածավալ բնակչության տեղափոխություններ: Առավել նշանակալից էր հայերի վերաբնակեցումը Օսմանյան և Պարսկական տարածքներից: Ռուսական իշխանությունները խրախուսում էին այս գործընթացը՝ նպատակ ունենալով ինչպես ամրապնդել կայսրության հարավային սահմանները, այնպես էլ խթանել տնտեսական զարգացումը: Հայկական համայնքները Ջավախքում արագ աճեցին և կարևոր դեր խաղացին գյուղատնտեսության, արհեստների և մշակութային կյանքի զարգացման մեջ:

Բացի հայերից, տարածաշրջանում հաստատվեցին ռուս դուխոբորները և այլ կրոնական խմբեր, որոնք փախչում էին հալածանքներից: Նրանց տեղափոխությունը ոչ միայն փոխում էր ժողովրդագրական պատկերը, այլև նոր սոցիալական ու մշակութային շերտեր էր ավելացնում: Նշանավոր էր նաև հունական համայնքների հայտնվելը, որոնք առանձնանում էին առևտրով և հանքարդյունաբերությամբ: Արդյունքում՝ 19-րդ դարի երկրորդ կեսից Ջավախքը աստիճանաբար վերածվեց բազմազգ տարածքի, որտեղ տեղի վրաց բնակչությանը միանում էին տարբեր էթնիկ խմբեր:

Միգրացիոն գործընթացները կարևոր տնտեսական հետևանքներ ունեցան: Նոր բնակիչները տարածաշրջան բերեցին տարբեր գյուղատնտեսական փորձառություններ, տեխնոլոգիաներ և մշակութային ավանդույթներ: Հայերը զարգացրեցին հացահատիկի մշակումը և արհեստագործությունը, իսկ ռուս վերաբնակիչները կիրառեցին նոր գյուղատնտեսական մեթոդներ: Բազմազգ բնակչությունը ստեղծեց առևտրային ցանցեր, որոնք Ջավախքը կապում էին ինչպես Կովկասի ներսում, այնպես էլ Օսմանյան ու Ռուսական կայսրությունների այլ շրջանների հետ:

Մշակութային փոխազդեցությունը և ավանդույթների համակեցությունը նույնպես կարևոր դեր ունեցան: Չնայած էթնիկական և կրոնական տարբերություններին՝

տարածաշրջանում աստիճանաբար ձևավորվեցին առօրյա կյանքի ընդհանուր շրջանակներ: Դա դրսևորվում էր շուկաներում, առևտրային հարաբերություններում և գյուղատնտեսական համագործակցությունում: Սակայն որոշ դեպքերում բազմազգ միջավայրը դառնում էր լարվածության աղբյուր, հատկապես քաղաքական ճգնաժամերի ժամանակ՝ Առաջին համաշխարհային պատերազմի և հետագա խորհրդային բարեփոխումների ընթացքում:

20-րդ դարում խորհրդային իշխանության քաղաքականությունը արմատապես փոխեց միգրացիոն գործընթացները: Մի կողմից տեղի ունեցավ բնակչության հարկադիր տեղափոխություն և գյուղատնտեսության վերափոխում կոլեկտիվացման պայմաններում: Մյուս կողմից՝ զարգացավ արդյունաբերությունը և տարածվեց կրթությունը: Այս գործընթացները նպաստեցին էթնիկ խմբերի աստիճանական ինտեգրմանը, թեև ազգային ինքնությունը պահպանելու ձգտումը մշտապես ներկա էր:

Վերջապես, 19–20-րդ դարերում Ջավախքի միգրացիոն գործընթացները ձևավորեցին եզակի բազմազգ միջավայր, որի ժառանգությունը զգացվում է մինչ օրս: Տարածաշրջանի պատմությունը հստակ ցույց է տալիս, թե ինչպես կարող են աշխարհաքաղաքական շահերը, կրոնական շարժումները և տնտեսական գործոնները համատեղ ձևավորել էթնիկական և սոցիալական լանդշաֆտ: Ջավախքի օրինակն ընդգծում է միգրացիայի երկարաժամկետ հետևանքները՝ ինչպես մշակութային հարստության, այնպես էլ քաղաքական մարտահրավերների տեսանկյունից:

BERIDZE Merab (Georgia)
Samtskhe-Javakheti State University
e-mail: merab.beridzee@gmail.com
BERIDZE Maka (Georgia)
Samtskhe-Javakheti State University
e-mail: beridzemaka@gmail.com

THE MIGRATION PROCESSES OF JAVAKHETI IN THE 19TH–20TH CENTURIES

In the 19th and 20th centuries, Javakheti was one of the most important regions of the Caucasus in terms of migration processes. The historical context of the region during this period was shaped by the policies of the Russian Empire, the influence of the Ottoman Empire and Persia, as well as local socio-economic conditions. Javakheti's geographical position — a crossroads between Armenia, Turkey, and inner Georgia — made it a strategically significant space, strongly influencing the dynamics of migration.

After the Russian Empire fully annexed the South Caucasus in the early 19th century, large-scale population movements began. Particularly notable was the resettlement of Armenians from Ottoman and Persian territories. Russian authorities actively supported this policy, aiming both to strengthen the empire's southern borders and to stimulate

economic development. Armenian communities in Javakheti quickly grew in size and played an important role in developing agriculture, crafts, and cultural life.

In addition to Armenians, Russian Doukhobors and other religious groups settled in the region to escape persecution. Their arrival not only altered the demographic balance but also introduced new social and cultural elements. Greek communities also appeared, distinguished by their involvement in trade and mining. By the second half of the 19th century, Javakheti was gradually becoming a multiethnic space where the local Georgian population lived alongside diverse migrant groups.

These migration processes had significant economic consequences. New settlers brought with them different agricultural practices, technologies, and cultural traditions. Armenians expanded grain cultivation and craft production, while Russian settlers introduced new farming methods. At the same time, the region's diverse population created trading networks that linked Javakheti not only to the wider Caucasus but also to parts of the Ottoman Empire and the Russian Empire.

Equally important were cultural interactions and the coexistence of traditions. Despite ethnic and religious differences, the region gradually developed shared frameworks of everyday life. These were visible in markets, trade relations, and agricultural cooperation. Yet in some instances, ethnic diversity became a source of tension, particularly during times of political crisis — for example, during World War I and the subsequent Soviet reforms.

In the 20th century, Soviet policies reshaped migration patterns even further. On one hand, forced resettlements and the transformation of agriculture under collectivization disrupted traditional life. On the other hand, industrial development and the spread of education promoted integration. These processes encouraged closer connections among ethnic groups, though the desire to preserve cultural identity remained strong.

Ultimately, the migration processes of the 19th and 20th centuries created in Javakheti a unique multiethnic environment, the legacy of which is still evident today. The region's history demonstrates how geopolitical interests, religious movements, and economic factors can collectively shape an ethnic and social landscape. Javakheti's example highlights the long-term consequences of migration, both in terms of cultural enrichment and political challenges.

БЕРИДЗЕ Мераб (Грузия)
Самцхе-Джавахетский государственный университет
e-mail: merab.beridzee@gmail.com
БЕРИДЗЕ Мака (Грузия)
Самцхе-Джавахетский государственный университет
e-mail: beridzemaka@gmail.com

МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ В ДЖАВАХЕТИ В XIX–XX ВЕКАХ

В XIX–XX веках Джавахети представлял собой один из ключевых регионов Кавказа в контексте миграционных процессов. Историческая ситуация, сложившаяся здесь в данный период, была связана как с политикой Российской империи, так и с

влиянием Османской империи и Персии, а также с местными социально-экономическими особенностями. Географическое положение Джавахети — перекресток дорог между Арменией, Турцией и внутренними районами Грузии — превращало его в стратегически важное пространство, что во многом определяло динамику миграций.

После окончательного завоевания Южного Кавказа Российской империей (начало XIX века) начались масштабные переселения населения. Особенно значительным стало переселение армян с территорий Османской империи и Персии. Российские власти поощряли этот процесс, преследуя цель укрепления южных границ и стимулирования экономического развития. Армянские общины в Джавахети быстро увеличивались численно и сыграли важную роль в развитии сельского хозяйства, ремесел и культурной жизни.

Помимо армян, в регион переселялись русские духоборы и другие религиозные группы, спасавшиеся от преследований. Их переселение меняло демографическую картину и вносило новые социальные и культурные элементы. Также примечательно появление греческих общин, отличавшихся активностью в торговле и горнодобывающей деятельности. В результате, начиная со второй половины XIX века, Джавахети постепенно превращался в многоэтничное пространство, где к местному грузинскому населению присоединялись различные этнические группы.

Миграционные процессы имели важные экономические последствия. Новые поселенцы привнесли в регион разные аграрные практики, технологии и культурные традиции. Так, армяне усилили выращивание зерновых культур и ремесленное производство, русские переселенцы внедрили новые сельскохозяйственные методы. Многообразие населения способствовало формированию торговых сетей, связывавших Джавахети как с внутренним Кавказом, так и с другими районами Османской империи и России.

Особого внимания заслуживает культурное взаимодействие и сосуществование традиций. Несмотря на этнические и религиозные различия, в регионе постепенно складывались общие рамки повседневной жизни. Это проявлялось на рынках, в торговых отношениях и сельскохозяйственном сотрудничестве. Однако в ряде случаев этническое многообразие становилось источником напряженности, особенно в периоды политических кризисов — например, во время Первой мировой войны и последующих советских реформ.

В XX веке советская политика радикально изменила миграционные процессы. С одной стороны, имели место насильственные переселения и трансформация сельского хозяйства в условиях коллективизации. С другой стороны, усилились промышленное развитие и распространение образования. Эти факторы способствовали постепенной интеграции этнических групп, хотя стремление сохранить национальную идентичность оставалось неизменным.

В итоге, миграционные процессы XIX–XX веков создали в Джавахети уникальную многоэтническую среду, наследие которой ощущается и поныне. История региона ясно демонстрирует, как геополитические интересы, религиозные движения и экономические факторы совместно формируют этнический и социальный ландшафт. Пример Джавахети позволяет увидеть долгосрочные последствия миграции как в плане культурного богатства, так и в контексте политических вызовов.

ԲՈՅԱՋՅԱՆ Արտաշես (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ a.bojajyan@mail.ru

ԷԹՆՈԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՔԱՂԱՔԱՆԵՐՈՒՄ 1886–1916 ԹԹ.

Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնիկական կազմում զգալի փոփոխություններ տեղի ունեցան XIXդ. վերջին և XXդ. սկզբին՝ պայմանավորված՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական և ժողովրդագրական գործոններով: Այդ տարիներին խոշոր քաղաքները, հատկապես Բաքուն, Թիֆլիսը, Ալեքսանդրապոլը, Ելիզավետպոլը և Շուշին տարանջատված էին առանձին էթնիկական թաղամասերով՝ հայկական, վրացական, մահմեդական, ռուսական և այլն:

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հարավային Կովկասի քաղաքների էթնոժողովրդագրական գործընթացները:Ուսումնասիրության հիմնական ուղղություններն են քաղաքային բնակչության էթնոժողովրդագրական փոփոխությունները և քաղաքայնացման գործընթացները: Մեթոդաբանությունը և մեթոդները. ուսումնասիրությունը հիմնված է արխիվային փաստաթղթերի, պաշտոնական վիճակագրության տվյալների՝ «Կովկասյան օրացույց», նահանգային տեղեկագրերի վրա, օգտագործվել են նաև նախախորհրդային, խորհրդային և հետխորհրդային տարիներին հրատարակված գիտական գրականություն, ներկայացվող ժամանակահատվածում հրատարակված թերթերի և պարբերականների նյութեր: Հետազոտության գիտական նորույթն է Հարավային Կովկասի քաղաքային էթնոժողովրդագրության պատմության չլուսաբանված հիմնահարցերի հրապարակայնացումը:

Քաղաքայնացումը (ուրբանիզացիան) XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հարավային Կովկասում զգալի փոփոխություններ մտցրեց քաղաքների էթնիկ կազմի մեջ: Այս գործընթացը պայմանավորված էր արդյունաբերության զարգացմամբ, նավթային բումով, երկաթուղիների կառուցմամբ և Ռուսական կայսրության վարչատնտեսական քաղաքականությամբ: Քաղաքայնացման գործընթացի առանձնահատկություններից է եղել տարբեր ազգությունների միջմշակութային ինտեգրումը, իսկ մյուս կողմից՝ ազգային հակամարտությունների սրացումը:

Այդ տարիներին ռուսական կայսրության քաղաքականությունը, տնտեսական փոփոխությունները և ազգայնական շարժումների աճը հանգեցրին էթնիկական լարվածության ուժեղացմանը, որն իր արտահայտությունն է գտել հետևյալ առումներով. ազգությունների տեղաշարժերի ակտիվացմամբ և փախստականների հոսքերի ծավալային աճով: Օրինակ՝ 1905–1906թթ. հայերի և Կավկասի թաթարների (ներկայիս ադրբեջանցիներ) Բաքվի, Ելիզավետպոլի և Երևանի նահանգներում, հիմնականում քաղաքներում էթնիկական բախումների հետևանքով գրանցվեցին տարբեր ազգությունների զանգվածային տեղահանություններ: Տարածաշրջանի խոշոր քաղաքներում՝ Բաքու, Ելիզավետպոլ, Երևան և Շուշի, աճել է փախստականների թիվը, ինչը փոխել է էթնիկական հավասարակշռությունը: Բաքվում հայ ազգաբնակչության մասնաբաժինը նվազել է, իսկ Կովկասի թաթարներինը՝ աճել: Երևանում շեշտակի ավելացել է հայերի

տեսակարար համաթիվը: Այդ բախումների հիմնական շարժառիթ հանդիսացել է տնտեսական մրցակցությունը և ազգային քաղաքական ուժերի միջև լարվածության խորացումը: Այսպես կոչված՝ «ռուսականացման» քաղաքականությունը նպաստել է խոշոր քաղաքներում ռուսների թվի աճին: Հիշատակենք, որ լեզվական, կրոնական և էթնիկական տարբերությունները, խոչընդոտում էին համընդհանուր քաղաքային ինքնության ձևավորմանը:

Սոցիալ-տնտեսական ծանր վիճակով և ռուսական կառավարության ազգային քաղաքականությունով պայմանավորված՝ հայերն ու վրացիները արտագաղթում էին կայսրության եվրոպական գոտի և արտասահմանյան երեկրներ՝ մասնավորապես, ԱՄՆ:

Սակայն, եվրոպական պետություններից և կայսրության եվրոպական գոտուց տեղի է ունեցել տարբեր ազգությունների՝ ռուսների, գերմանացիների, լեհերի, հրեաների և այլ ազգությունների ներգաղթ հիմնականում Բաքու և Թիֆլիս քաղաքներ ու Կարսի մարզ: Տարածաշրջանի արդյունաբերության զարգացման պայմաններում գրանցվել է գյուղական բնակչության արտագաղթ դեպի խոշոր քաղաքներ, ինչը հարուցել է տեղի բնակչության դժգոհությանը: Գյուղական բնակչության արտագաղթողների մեջ մեծ է եղել հայերի մասնաբաժինը: Բնական վերարտադրությունը կարևոր ազդեցություն է ունեցել տարածաշրջանի քաղաքների էթնիկ կազմի փոփոխության վրա: Այն ուղղակի ազդել է տարբեր էթնիկ խմբերի թվաքանակի և տեսակարար կշռի վրա:

Ի վերջո, 1886–1916թթ. Հարավային Կովկասի քաղաքային բնակչության էթնոժողովրդագրական զարգացումները վկայում են տարածաշրջանում ընթացող բարդ և բազմաշերտ գործընթացների մասին: Ազգաբնակչության տեղաշարժերը, ներքին ու արտաքին միգրացիաները, ինչպես նաև ազգային հակամարտություններն ու բախումները էական դեր ունեցան էթնիկական փոխհարաբերությունների ձևավորման և վերափոխման գործում:

Ուսումնասիրությունն ապացուցում է, որ տվյալ ժամանակաշրջանում էթնոժողովրդագրական դինամիկան եղել է պատմական, տնտեսական ու քաղաքական զարգացումների արդյունք՝ առաջ բերելով համակեցության ինչպես ինտեգրացիոն, այնպես էլ հակամարտային դրսևորումներ:

BOYAJYAN Artashes (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: a.bojajyan@mail.ru

ETHNO-DEMOGRAPHIC PROCESSES IN THE TOWNS OF THE SOUTH CAUCASUS IN 1886–1916

Significant changes took place in the ethnic composition of the urban population in the South Caucasus from the late 19th to the early 20th century, driven by economic, political, social, and demographic factors. During this period, major cities — particularly

Целью доклада является ознакомление читателя с политикой издателя газеты в целях информирования общественности; определение основных направлений официальной позиции делегаций, участвовавших в Брест-Литовских переговорах; разъяснение причин решений, принятых в отношении Кавказа в ходе их встреч. Газетные статьи хорошо отражают политику Османской империи на Кавказе и нега-

тивно оценивают Брест-Литовский мирный договор, подписанный большевистским правительством России.

В докладе газетная информация дополнена архивными материалами, мемуарами и книгами, изданными на грузинском, турецком, русском и армянском языках. Надо отметить, что со стороны Османского государства Закавказский комиссариат был приглашён на участие в Брест-Литовских мирных переговорах. Однако, последний отказался от участия. Такой подход Закавказского комиссариата со стороны одной части учёных считается ошибкой.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Արմեն (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
էլ. հասցե՝ armenani@mail.ru
ԱԴԱՄՅԱՆ Նինետա (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
էլ. հասցե՝ ninettadamyan@gmail.com

ԴՐՎԱԳՆԵՐ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1915-1917թթ.)

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին շուրջ 300000 ցեղասպանությունը վերապրած արևմտահայեր ապաստան գտան Արևելյան Հայաստանում և Կովկասի հայաբնակ շրջաններում: Մեծ Բրիտանիան՝ ինչպես անհատների, այնպես էլ բարեգործական կազմակերպությունների միջոցով, էական դեր է ունեցել այդ փախստականների ընդունման և նրանց տարրական կենսապահովման պայմանների ապահովման հարցում:

Սույն հետազոտության նպատակն է լուսաբանել բրիտանական բարեգործական երկու կազմակերպությունների՝ «Հայկական Կարմիր խաչի և փախստականների ֆոնդի» ու «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» գործունեությունը 1915–1917 թթ.: Նշված ժամանակահատվածում այս կազմակերպությունները հազարավոր մարդկանց փրկեցին սովից և ֆիզիկական ոչնչացումից: Բացի որբանոցների, հոսպիտալների, աշխատանքային արհեստանոցների և ճաշարանների հիմնադրումից, նրանք հիմնեցին հագուստի, կոշկեղենի և տեքստիլի արտադրության գործարաններ՝ աշխատանքով ապահովելով որբերին և գաղթականներին:

Հայաստանի ազգային արխիվում պահվող փաստաթղթերի, հայերեն գիտական գրականության և ժամանակի պարբերական մամուլի նյութերի հիման վրա զեկույցում ներկայացվում են նշված բրիտանական կազմակերպությունների գործու-

նեության հիմնական ուղղություններն ու արդյունքները Հայաստանում: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև տարածաշրջանում գործող հայկական բարեգործական կառույցների՝ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության», «Հայաստանի վերակառուցման հանձնաժողովի», «Հայկական կենտրոնական կոմիտեի» ու «Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերության» հետ այդ կազմակերպությունների համագործակցության հարցին:

Հետազոտության առաջին բաժինը նվիրված է «Հայկական կարմիր խաչի և փախստականների օգնության հիմնադրամի» 1915–1917 թթ. գործունեությանը: Քննարկվում են հիմնադրամի ստեղծման պատմությունը, կառուցվածքը, ֆինանսավորման աղբյուրները, ինչպես նաև համագործակցության ձևերն ու արդյունքները «Հայկական կենտրոնական կոմիտեի» և «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հետ: Էմիլի Ռոբինսոնի գրագրության և բրիտանական կառավարությանը ներկայացված հաշվետվությունների հիման վրա հատուկ ուշադրություն է դարձվել հիմնադրամի ֆինանսական գործունեությանը: Ներկայացվող փաստաթղթերը թույլ են տալիս բացահայտել հիմնադրամի հիմնական աշխատանքային ուղղություններն ու իրականացված ներդրումների ծավալը զանգվածային ներգաղթի տարիներին:

Զեկույցի երկրորդ բաժնում վերլուծվում է «Հայ փախստականների (Լորդ քաղաքագլխի) ֆոնդի» գործունեությունը: Սա բրիտանական ամենամեծ բարեգործական կազմակերպությունն էր,որը օգնություն տրամադրեց արևմտահայերին ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ դրանից հետո: Ներկայացվում է հիմնադրամի ձևավորման գործընթացը, դրամահավաքի մեթոդները, ինչպես նաև համագործակցության ձևերը Կովկասում գործող հայկական կազմակերպությունների հետ: Այս հիմնադրամը դարձավ առաջին բրիտանական կազմակերպությունը, որը ոչ միայն մարդասիրական օգնություն տրամադրեց գաղթականներին, այլև սնունդ, սերմեր, գյուղատնտեսական գործիքներ և տնային կենդանիներ տրամադրեց իրենց բնակավայրեր վերադարձողներին:

«Հայաստանի վերակառուցման հանձնաժողովի» և «Հայկական գյուղատնտեսական և արհեստագործական ընկերության» հետ համագործակցությամբ հիմնադրամը հիմնեց նաև բրդի ու բամբակի վերամշակման ձեռնարկություններ Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգներում: Այս նախաձեռնությունները հազարավոր արևմտահայերի հնարավորություն տվեցին բարելավել իրենց կյանքի պայմանները և հասնել տնտեսական կայունության:

HAYRAPETYAN Armen (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
Institute of History of NAS RA
e-mail: armenani@mail.ru
ADAMYAN Nineta (Armenia)
Institute of History of NAS RA
e-mail: ninettadamyan@gmail.com

FRAGMENTS FROM THE HISTORY OF COOPERATION BETWEEN BRITISH AND ARMENIAN CHARITABLE ORGANIZATIONS (1915–1917)

During the First World War, approximately 300,000 Western Armenians who had survived the genocide found refuge in Eastern Armenia and the Armenian-populated regions of the Caucasus. The United Kingdom—both through private individuals and charitable organizations—played a significant role in receiving these refugees and meeting their basic needs.

This study focuses on the humanitarian activities of two British charitable organizations: the "Armenian Red Cross and Refugees Fund" and the "Armenian Refugees (Lord Mayor's) Fund", active between 1915 and 1917. These organizations saved thousands of lives from starvation and physical annihilation. In addition to establishing shelters, hospitals, workshops, and food distribution centres, they also founded factories producing clothing, shoes, and textiles, thereby providing employment for orphans and displaced persons.

Based on archival documents preserved in the National Archives of Armenia, scholarly literature, and articles from the periodical press of the time, the report examines the main directions and outcomes of the activities of these British organizations in Armenia. Particular attention is also given to the efforts of Armenian charitable structures operating in the region, such as the "Armenian Benevolent Society of the Caucasus", the "Reconstruction Commission of Armenia", the "Armenian Central Committee", and the "Armenian Agricultural and Handicraft Society".

The first part of the study is dedicated to the activities of the "Armenian Red Cross and Refugees Fund" during the years 1915–1917. It explores the fund's founding, organizational structure, sources of financing, and its cooperation with the "Armenian Central Committee" and the "Armenian Benevolent Society of the Caucasus". Special attention is paid to the fund's financial operations, based on the correspondence of Emily Robinson and reports submitted to the British government. These documents shed light on the fund's primary areas of activity and the scale of financial investment during the period of mass emigration.

The second part of the report analyzes the work of the "Armenian Refugees (Lord Mayor's) Fund"—the largest British charitable organization providing aid to Western Armenians during and after the First World War. It details the process of the fund's establishment, methods of fundraising, and forms of collaboration with Armenian organizations operating in the Caucasus. This fund became the first British institution which, in addition to delivering emergency humanitarian assistance, also supplied food, seeds, agricultural tools, and livestock to those returning to their former homes.

In cooperation with the “Reconstruction Commission of Armenia” and the “Armenian Agricultural and Handicraft Society”, the fund also established wool and cotton processing enterprises in several provinces of Western Armenia. These initiatives offered thousands of Western Armenians an opportunity to improve their living conditions and achieve economic self-sufficiency.

АЙРАПЕТЯН Армен (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Институт истории НАН РА
e-mail: armenani@mail.ru
АДАМЯН Нинета (Армения)
Институт истории НАН РА
e-mail: ninettadamyan@gmail.com

ФРАГМЕНТЫ ИЗ ИСТОРИИ СОТРУДНИЧЕСТВА БРИТАНСКИХ И АРМЯНСКИХ БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ (1915–1917 гг.)

В годы Первой мировой войны около 300 000 западных армян, переживших геноцид, нашли убежище в Восточной Армении и армянонаселённых районах Кавказа. Великобритания — как на уровне отдельных лиц, так и через благотворительные организации — сыграла значительную роль в приёме этих беженцев и обеспечении их базовых потребностей.

Настоящее исследование направлено на изучение гуманитарной деятельности двух британских благотворительных организаций — «Армянского Красного Креста и Фонда помощи беженцам» и «Фонда помощи армянским беженцам (лорд-мэра)» в 1915–1917 гг. Эти организации спасли тысячи человек от голода и физического уничтожения. Помимо создания приютов, больниц, мастерских и пунктов питания, они основали фабрики по производству одежды, обуви и текстиля, предоставив рабочие места сиротам и беженцам.

На основе архивных документов, хранящихся в Национальном архиве Армении, научной литературы на армянском языке и публикаций в периодической печати того времени в докладе рассматриваются основные направления и результаты деятельности указанных британских организаций на территории Армении. Отдельное внимание уделено также работе армянских благотворительных структур, действовавших в регионе, таких как «Армянское благотворительное общество Кавказа», «Комиссия по восстановлению Армении», «Армянский центральный комитет» и «Общество сельскохозяйственного и ремесленного труда армян».

Первая часть исследования посвящена деятельности «Армянского Красного Креста и Фонда помощи беженцам» в 1915–1917 гг. В ней рассматриваются история создания фонда, его структура управления, источники финансирования, а также формы и результаты сотрудничества с «Армянским центральным комитетом» и

«Армянским благотворительным обществом на Кавказе». Особое внимание уделяется финансовой стороне деятельности фонда на основе переписки Эмили Робинсон и отчётов, представленных британскому правительству. Эти документы позволяют выявить ключевые направления работы фонда и объёмы вложенных средств в период массовой эмиграции.

Во второй части анализируется деятельность «Фонда помощи армянским беженцам (лорд-мэра)» — крупнейшей британской благотворительной организации, оказывавшей помощь западным армянам в годы и после Первой мировой войны. Освещаются процесс учреждения фонда, методы сбора средств, а также формы взаимодействия с армянскими организациями, действовавшими на Кавказе. Данный фонд стал первым британским институтом, который, помимо экстренной гуманитарной помощи, осуществлял поставки продовольствия, семян, сельскохозяйственного инвентаря и домашнего скота для тех, кто возвращался на свои прежние места жительства.

В сотрудничестве с «Комиссией по восстановлению Армении» и «Обществом сельскохозяйственного и ремесленного труда армян» фонд также основал предприятия по переработке шерсти и хлопка в ряде провинций Западной Армении. Эти инициативы предоставили тысячам западных армян возможность улучшить условия жизни и обрести экономическую стабильность.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (Հայաստան)
Շիրակի պետական համալսարան
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
Գյումրու մասնաճյուղ
էլ. հասցե՝ artakh76@mail.ru

ԻՍՐԱՅԵԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՋԻՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԴԵՊՔԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Իսրայելի հայկական համայնքը այստեղ հաստատվել է դեռևս Տիգրան Մեծի ժամանակներից՝ Ք.ա. 1-ին դարում, երբ հայերը հասան այժմյան Հայֆա քաղաքի մատույցները և Կլեոպատրա թագուհին իր թագը դրեց Տիգրան մեծի ոտքերի մոտ: Այժմ Իսրայելում ապրում են մոտ 10,000 հայեր, որոնք բաժանվում են 3 մասի: Առաջին հատվածն այստեղ ապրում է վերոնշյալ ժամանակներից և նրանց իրավունքների պաշտպանությունը ստանձնել է Երուսաղեմի «Բարեսիրաց հայկական միությունը»: Այս խմբում հիմնականում տարեց մարդիկ են, որոնք ակտիվ չեն ներհամայնական կյանքի մեջ: Երկրորդ հատվածը ցեղասպանությունից հետո Լիբանանից և Սիրիայից այստեղ տեղափոխված հայերն են, որոնց ընդունել և այժմ էլ ներկայացնում է Երուսաղեմի հայոց պատրիարքարանը: Երրորդ խումբը՝ 1990-ական թթ հետո այս-

տեղ հաստատված խառը ընտանիքներն են, որոնք 2004թ. ստեղծել են «Նաիրի միությունը» և շատ կարճ գործունեություն ծավալած «Արարատ» միությունը: Իսրայելում գործում են նաև ՌԱԿ-ը,որը միշտ ՀՀ իշխանություններին կողմնակից է, անկած իշխանության կրողներից և ՀՅԴ-ն: Վերջին հայկական ՀԿ-ն հիմնադրվել է 2020թ. վերջին: Համայնքը բավականին լավ հարաբերություններ ուներ Հայ Դատի գրասենյակի հետ, որը 2019թ. հետո չի գործում:

Իսրայելական քաղաքական ուժերից հայկական համայնքը հատկապես սերտ է «Մեներեց» ձախակողմյան կուսակցության հետ, որը պաշտպանում է հայ և արաբ փոքրամասնությունների շահերը: ցավոք այն կամ ներկայացված չէ 120-հոգանոց Կնեսետում, կամ լավագույն դեպքում ունի 5 անդամ:

Ըստ 1948թ. հետո գործող կարգավորման պատրիարքի ընտրությունից հետո, նրա պաշտոնավարումը պետք է հաստատեն Իսրայելի կառավարությունը, Հորդանանը և Պաղեստինի արաբական իշխանությունները: Սակայն նոր պատրիարքի ընտրությունից հետո հաստատում կատարեցին միայն Հորդանանը և Պաղեստինյան իշխանությունը: Նորընտիր պատրիարքը իր ինագուրացիային սակայն հրավիրեց նաև ներկայացուցիչներ Իսրայելի ԱԳՆ-ից և կառավարությունից: Դրանից հետո, զարմանալիորեն հայկական համայնքի հողերի 25%-ը 98 տարով տրվեց վարձակալությամբ «Քսանա կապիտալ» ընկերությանը՝ առանց հաշվի առնելու Երուսաղեմի զինյալ միաբանության և Ընդհանուր ժողովի որոշումը: 120 միլիոն դոլար հայտնվեց պատրիարքարանի հաշվին: Համայնքում լուրջ բողոքբեր չեղան, քանի որ բոլորը կախված են պատրիարքարանից և մարդիկ ամսեկան 200 դոլար գումար են մուծում տանվարձակալության համար, իսկ զրկվելու պարագայում այդ վարձը առնվազն հնգապատկվում է: Նախկինում ևս հողատարածքներ զիջվել են այլ հարանվանությունների, արաբների կամ հրեաների: Բոլոր դեպքում պայքարող համայնականների շնորհին հարուցված է 2 դատական հայց: Վարձու դիմակավորված մարդիկ հարձակվեցին «կովերի պարտեզի» վրա և ոստիկանությունը ոչինչ չարեց, այն դեպքում, երբ ոստիկանությունը իրավունք ունի տեղում գնդակահարելու դիմակ կրող ցանկացած անձի:

Պատրիարքարանը գրեթե չի խառնվում ներհամայնական կյանքին, բացի կրոնական հարցերից և պահում է «Ժառանգավորաց և Թարգմանչած» վարժարանները: Նույնիսկ պատերազմի ժամանակ որևէ էական օգնություն չի ցուցաբերում: Երուսաղեմի հայերի և Իսրայելի մյուս հայերի մեջ կա լուրջ անջրպետ: Իսրայելահայերի դիրքորոշումը խիստ տարբեր է Երուսաղեմի հայերի դիրքորոշումից: Վերջիններս պարփակված են, իսկ երկրի տարածքի հայերն հիմնականում ունեն պրոիսրայելական դիրքորոշում: Երկրի կենտրոնում ապրում են 3000 հայեր, որոնցից 400-ը արևմտահայերի սերունդ են:Հայֆայի շրջանում ապրում են 3000 հայեր, որոնցից 500-ը արևմտահայերի սերունդ են: Երուսաղեմում ապրում են 2000 հայեր, իսկ մնացած շրջաններում՝ ևս 2000 Բերշեվա, Էյլաթ, Արադ քաղաքներում: Երուսաղեմի հայերը Արևմտյան ափի արաբական իշխանությունների հետ ունեն շատ ջերմ հարաբերություններ և նույնիսկ նախարար կառավարության կազմում: Արևմտյան ափում ապրում են 400 հայեր Բեթղեհեմ, Ռամալա քաղաքներում, որոնք հայերեն չեն խոսում: Կան նույնիսկ հայեր, որոնք դրական են վերաբերվում Համասին, քանի որ գտնում են, որ արաբները

պետք է պետություն ունենան: Բայց ճնշող մեծամասնությունը ոչ միայն դեմ է Համասին և Հզբոլահին, այլև գտնում է, որ չպետք է լինի Պաղեստինյան արաբական պետություն, քանի որ այդ դեպքում կլինի պետական մակարդակով ահաբեկչություն: Փեյջերների գործողությունից հետո Լիբանանի իշխանությունները մաքրում են երկիրը, իսկ Իսրայելի բանակը կանգնած է Լիտանի գետի մոտ:

2023թ. մայիսին Իսլամական Ջիհադի դեմ Գազայում 50-օրյա պատերազմի ժամանակ զոհվեց 1 հայ: Ես մեկ հայ՝ սերժանտ, զոհվեց հոկտեմբերի 7-ից հետո, սակայն հայեր չգերեվարվեցին՝ չնայած Ստերեոոտ քաղաքում կան հայեր:

Իսրայելահայերը ունեն հիմնականում հակահիրանական դիրքորոշում, քանի որ Իրանը ստեղծել է հրե օղակ Իսրայելի շուրջ և սպառնում է վերցնել այն: հոկտեմբերի 7-ի ահաբեկչության ժամանակ 1200 զոհ եղավ: Իսրայելահայերը կարծում են, որ Իրանը ստեղծում է զենքի խոչընդոտներ ՀՀ համար, ստորագրում է Արևմտյան Ադրբեջան պարունակող փաստաթղթի տակ և թշնամի է ՀՀ-ին:

Իրանահսրայելական բախման ժամանակ Իրանը արձակել է 1000 աթս, որից 98,5%-ը չեզոքացվել է Իսրայել չհասած: Արձակվել է 560 բալիստիկ, այդ թվում կասետային հրթիռներ, որոցից 86%-ը ՀՕՊ-ը խոցել է: Իսրայելը տվել է ընդամենը 29 զոհ: Վնասվել է Վայցմանի ուռուցքաբանական կենտրոնը և Հայֆայի նավթավերամշակման գործարանը, որը 3 օր հետո վերագործարկվել է: Իսրայելն ունեցել է 2000 վիրավոր, 12000 մարդ կորցրել է բնակարան: Պետությունը մասնավոր սեկտորի աշխատողներին տվել է 70% փոխհատուցում, իսկ պետական սեկտորին՝ 100% փոխհատուցում:

HOVHANNISYAN Artak (Armenia)
Shirak State University
Gyumri Branch of the Armenian State University of Economics
e-mail: artakh76@mail.ru

THE SITUATION OF THE ARMENIAN COMMUNITY IN ISRAEL IN THE LIGHT OF THE EVENTS OF THE LAST YEAR

The Armenian community of Israel was founded here even at the time of Tigran the Great, in the 1st century AD. e. In the 1st century, when the Armenians reached the outskirts of the modern city of Haifa, Queen Cleopatra laid her crown at the feet of Tigran the Great. Currently, there are about 10,000 Armenians living in Israel, divided into three parts. The first part has been living here since the above-mentioned times, and the protection of their rights was taken upon itself by the "Armenian Union of Baresirov" of Jerusalem. This group mainly includes elderly people who do not take an active part in public life. The second group is the Armenians who moved here from Lebanon and Syria after the genocide, who were accepted and are currently represented by the Armenian Patriarchate of Jerusalem. The third group is mixed families that settled here after the 1990s, which in 2004 created the Union "Nairi" and the Union "Ararat", which did not last very long. ADL, which has always supported the authorities of Armenia, also operates in Israel together with

ARFD, one of the leaders of the fallen government. The last Armenian NGO was founded in 2020. The community had quite good relations with the Office of Armenian Affairs, but in 2019 they stopped working.

Among the Israeli political forces, the Armenian community is especially close to the left party "Mierets", which protects the interests of the Armenian and Arab minorities. Unfortunately, it is either not represented in the Knesset, consisting of 120 members, or at best represented by 5 members.

According to the resolution of 1948, after the election of the patriarch of the current settlement, his powers must be confirmed by the government of Israel, Jordan and the authorities of the Palestinian Arab states. However, after the election of the new patriarch, only Jordan and the Palestinian administration confirmed him. However, the newly elected patriarch also invited representatives of the Ministry of Foreign Affairs of Israel and the government to his inauguration. After that, strangely enough, 25% of the lands of the Armenian community were leased to the company "Xana Capital" for a period of 98 years, without taking into account the decision of the Jerusalem Military Order and the General Assembly. 120 million dollars came to the Patriarchate's account. There were no serious protests in the community, since everyone is dependent on the patriarchy and people pay 200 dollars a month for rent, and in case of eviction, this rent increases at least five times. In the past, the land was also transferred to other denominations, Arabs or Jews. In any case, two lawsuits were filed against members of the community who were in a difficult situation. Masked mercenaries attacked the "cow garden", and the police did nothing, although the police have the right to shoot on the spot anyone who wears a mask.

The Patriarchate practically does not interfere in intracommunal life, with the exception of religious matters, and contains schools "Inheritance and Translation". Even during the war, he does not provide significant help. There is a serious gap between the Armenians of Jerusalem and the rest of the Armenians of Israel. The position of Israeli Armenians is very different from the position of Jerusalem Armenians. The latter are isolated, and the Armenians in the country mostly adhere to the pro-Israel position. 3,000 Armenians live in the center of the country, 400 of whom are descendants of Western Armenians. There are 3,000 Armenians living in Haifa, 500 of whom are descendants of Western Armenians. 2,000 Armenians live in Jerusalem, another 2,000 live in other regions, in the cities of Beer Sheva, Eilat and Arad.

The Armenians of Jerusalem maintain very warm relations with the Arab authorities of the West Bank and even occupy positions of ministers in the government. 400 Armenians who do not speak Armenian live in the cities of Bethlehem and Ramallah on the West Bank. Even some Armenians have a positive attitude towards Hamas, because they believe that the Arabs should have their own state. However, the overwhelming majority not only opposes Hamas and Hezbollah, but also believes that there should be no Palestinian Arab state, because in this case, state terrorism will arise. After the paging operation, the Lebanese authorities are clearing the country, while the Israeli army is standing by the river Litani.

In May 2023, 1 Armenian was killed during the 50-day war in Gaza against "Islamic Jihad". and after October 7, one Armenian sergeant was killed, but no Armenian was taken prisoner, although there are Armenians in the city of Stereut. Israeli Armenians take a predominantly anti-Iranian position because Iran has created a ring of fire around Israel and threatens to capture it. As a result of the terrorist attack on October 7, 1200 people died. Israeli Armenians believe that Iran is creating weapons barriers for Armenia, signed a document containing information about Western Azerbaijan, and is an enemy of Armenia.

During the Iranian-Israeli conflict, Iran launched 1,000 missiles, 98.5% of which were neutralized before reaching Israel. 560 ballistic missiles were launched, including cluster missiles, 86% of which were shot down by air defenses. Israel lost only 29 people.The Weizman Oncology Center and the Haifa Oil Refinery, which was reopened 3 days later, were damaged. In Israel, 2,000 people were injured, 12,000 people lost their blood. The government provided 70% compensation to private sector workers and 100% compensation to workers

ОГАННИСЯН Артак (Армения)
Ширакский государственный университет
Гюмрийский филиал Армянского государственного экономического университета
e-mail: artakh76@mail.ru

ПОЛОЖЕНИЕ АРМЯНСКОЙ ОБЩИНЫ В ИЗРАИЛЕ В СВЕТЕ СОБЫТИЙ ПОСЛЕДНЕГО ГОДА

Армянская община Израиля была основана здесь еще во времена Тиграна Великого, в I веке до н. э. В I веке, когда армяне достигли окраин современного города Хайфа, царица Клеопатра положила свою корону к ногам Тиграна Великого. В настоящее время в Израиле проживает около 10 000 армян, разделенных на три части. Первая часть проживает здесь с вышеупомянутых времен, а защиту их прав взял на себя «Армянский союз баресиров» Иерусалима. В эту группу в основном входят пожилые люди, не принимающие активного участия в общественной жизни. Вторая группа — это армяне, переселившиеся сюда из Ливана и Сирии после геноцида, которых принял и в настоящее время представляет Армянский Патриархат Иерусалима. Третья группа – это смешанные семьи, обосновавшиеся здесь после 1990-х годов, которые в 2004 году создали Союз «Наири» и Союз «Арарат», который просуществовал совсем недолго. АДЛ, которая всегда поддерживала власти Армении, также действует в Израиле вместе с АРФД, одним из лидеров павшего правительства. Последняя армянская НПО была основана в 2020 году. У общины были довольно хорошие отношения с Офисом по делам армян, но в 2019 году они перестали работать.

Среди израильских политических сил армянская община особенно близка к левой партии «Миэрец», которая защищает интересы армянского и арабского

меньшинств. К сожалению, она либо не представлена в Кнессете, состоящем из 120 членов, либо в лучшем случае представлена 5 членами.

Согласно постановлению 1948 года, после выборов патриарха нынешнего поселения его полномочия должны быть подтверждены правительством Израиля, Иордании и властями Палестинских арабских государств. Однако после избрания нового патриарха его подтвердили только Иордания и Палестинская администрация. Однако новоизбранный патриарх также пригласил на свою инаугурацию представителей МИД Израиля и правительства. После этого, как ни странно, 25% земель армянской общины были сданы в аренду компании «Xana Capital» сроком на 98 лет, без учета решения Иерусалимского воинствующего ордена и Генеральной ассамблеи. На счет Патриархии поступило 120 миллионов долларов. Серьёзных протестов в общине не было, поскольку все находятся на иждивении патриархата и люди платят за аренду 200 долларов в месяц, а в случае лишения эта арендная плата увеличивается как минимум в пять раз. В прошлом земли также передавались другим конфессиям, арабам или евреям. В любом случае против членов общины, находящихся в затруднительном положении, было подано два иска. Наемные люди в масках напали на «коровий сад», а полиция ничего не предприняла, хотя у полиции есть право застрелить на месте любого, кто носит маску.

Патриархат практически не вмешивается во внутриобщинную жизнь, за исключением религиозных вопросов, и содержит школы «Наследие и перевод». Даже во время войны он не оказывает существенной помощи. Между армянами Иерусалима и остальными армянами Израиля существует серьезный разрыв. Положение израильских армян сильно отличается от положения иерусалимских армян. Последние изолированы, а армяне в стране в основном придерживаются произраильской позиции. В центре страны проживает 3000 армян, 400 из которых являются потомками западных армян. В районе Хайфы проживает 3000 армян, 500 из которых являются потомками западных армян. В Иерусалиме проживает 2000 армян, еще 2000 — в остальных регионах, в городах Беэр-Шева, Эйлат и Арад.

Армяне Иерусалима поддерживают очень теплые отношения с арабскими властями Западного берега и даже занимают посты министров в правительстве. На Западном берегу в городах Вифлеем и Рамалла проживает 400 армян, которые не говорят по-армянски. Даже некоторые армяне положительно относятся к ХАМАС, поскольку считают, что у арабов должно быть свое государство. Однако подавляющее большинство не только выступает против ХАМАС и Хезболлы, но и считает, что не должно быть никакого палестинского арабского государства, поскольку в этом случае возникнет государственный терроризм. После пейджерной операции ливанские власти зачищают страну, в то время как израильская армия стоит у реки Литани.

В мае 2023 1 армянин был убит во время 50-дневной войны в Газе против «Исламского джихада», а после 7 октября был убит один армянский сержант, но ни один армянин не был взят в плен, хотя в городе Стереут есть армяне. Израильские армяне занимают преимущественно антииранскую позицию, поскольку Иран создал

огненное кольцо вокруг Израиля и угрожает его захватить. В результате теракта 7 октября погибло 1200 человек. Израильские армяне считают, что Иран создает оружейные барьеры для Армении, подписал документ, содержащий информацию о Западном Азербайджане, и является врагом Армении.

Во время ирано-израильского конфликта Иран выпустил 1000 ракет, 98,5% из которых были нейтрализованы до достижения Израиля. Было запущено 560 баллистических ракет, включая кассетные, 86% из которых были сбиты средствами ПВО. Израиль потерял всего 29 человек. Были повреждены онкологический центр имени Вейцмана и Хайфский нефтеперерабатывающий завод, который был вновь открыт через 3 дня. В Израиле пострадали 2000 человек, 12 000 человек лишились крова. Государство предоставило 70%-ю компенсацию работникам частного сектора и 100%-ю компенсацию работникам государственного сектора.

ՂԱՄԲԱՐՅԱՆ Արմենուհի (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
էլ. հասցե՝ armenuhi.ghambaryan@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՆ-ՈՒՄ 1919թ. ՎԵՐՋԻՆ - 1920թ. ՍԿԶԲԻՆ

Հայաստանի Առաջին հանրապետությանը՝ հռչակման առաջին իսկ օրվանից վիճակված էր անցնել դժվարագույն՝ փորձություններով լի ճանապարհ: 1919թ. մայիսից մինչև խոր աշուն՝ Առաջին աշխարհամարտի ավարտը, նորածին հանրապետությունն արտաքին քաղաքականության դաշտում կռիվ տալով իր ֆիզիկական գոյության համար, միևնույն ժամանակ անհավասար պայքար էր մղում երկրի ներքին խնդիրներին հնարավոր չափով լուծում ապահովելու համար:

Ներքին և արտաքին ծանր վիճակը շարունակվեց և 1919թ.: Հանրապետության խորհրդարանի կողմից 1919թ. փետրվարի սկզբին հաստատված օրինագծի համաձայն կազմավորվում է քաղաքացիական առաքելություն, որին՝ սովի դեմն առնելու նպատակով, հանձնարարվում էր ուղևորվել Եվրոպա և Ամերիկա ու խնդրել նրանց օգնությունը՝ ներմուծելու պակասող պարենը և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքացիական պատվիրակությունը՝ ՀՀ առաջին վարչապետ Հ. Քաջազնունու նախագահությամբ հունիսին մեկնում է Եվրոպա: Այստեղից պաշտոնական պատվիրակությունը հոկտեմբերի սկզբին ուղևորվում է Վաշինգտոն՝ դիմելու ամերիկյան կառավարությանը հենց ԱՄՆ-ում: Քաջազնունու առաքելությունը՝ ԱՄՆ-ից տնտեսական աջակցություն ստանալու հիմնական նպատակից բացի, նաև լիազորվում է ապահովել քաղաքա-

կան որոշ հարցերի լուծում: Նշված պահին Հայաստանի իշխանությունները գիտակցում էին՝ Մեծ տերությունների շարքում ԱՄՆ-ի հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման անհրաժեշտությունը: Առավելապես այդ նպատակով Ֆրանսիայից ԱՄՆ մեկնող պատվիրակությանը միանում է Փարիզում ՀՀ պատվիրակության անդամ և Ազգային պատվիրակության փոխնախագահ Գարեգին Փաստըրմաճյանը (Արմեն Գարո), ով նշանակվեց ԱՄՆ-ում ՀՀ լիազոր ներկայացուցիչ:

ԱՄՆ-ում Գ. Փաստրմաճյանին հանձնարարված էր աշխատանքներ ծավալել տարբեր հարցերի շուրջ՝ իհարկե առաջնահերթություն տալով քաղաքական խնդիրներին: Իրեն լիազորված գործունեությունը նա մեկնարկեց կենտրոնանալով երեք հիմնական ուղղությունների վրա: Այն է. Հայաստանի Հանրապետության՝ քաղաքական և իրավական ճանաչման հասնելը; ամերիկյան պետական և հասարակական շրջանակներին Հայաստանի գոյության անհրաժեշտության մասին իրազեկումը; ԱՄՆ-ի կողմից նյութական, հումանիտար, ռազմական և քաղաքական աջակցության ապահովումը: Գ. Փաստրմաճյանի դիվանագիտական ջանքերի առանցքն էր Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի կողմից մանդատ ստանձնելու խնդրի իրականացումը:

Վաշինգտոնի հյուրանոցներից մեկում ՀՀ պաշտոնական ներկայացուցչությունը բացած Գ.Փաստրմաճյանը հանդես եկավ բավական ակտիվ դիվանագիտական գործունեությամբ: Նա հանդիպումներ էր կազմակերպում, դիմումներ հղում Սպիտակ տուն, Կոնգրես, Պետական դեպարտամենտ, բանակցություններ վարում նաև անհատ ձեռնարկատերերի հետ, միջնորդում սննդի, հագուստի, սերմացուի, գյուղատնտեսական ասարքավորումների, ռազմական աջակցության վերաբերյալ: Ու թեև 1919 թ. վերջին քաղաքական հարցերի շուրջ ձեռքբերումներ գրեթե չկային, ՀՀ լիազոր ներկայացուցչի ջանքերն ամբողջությամբ անարդյունք չէին: Գ. Փաստրմաճյանն իր բաժին ներդրումն էր ունեցել 1919թ. վերջին ԱՄՆ-ում՝ ՀՀ օգտին տնտեսական՝ մասնավորապես հումանիտար օգնության առումով ձեռք բերված հաջողություններում: Գ. Փաստրմաճյանն ակտիվ գործունեություն էր ծավալել նաև ամերիկահայ պառակտված համայնքի միավորման գործում:

1920 թ. սկզբին, երբ ԱՄՆ-ը դեռևս չէր ճանաչել Հայաստանի Հանրապետությունը, Գ. Փաստրմաճյանը քաղաքական խնդիրների շուրջ տարվող աշխատանքներում միտված էր առաջնահերթությունը տալ երիտասարդ հայկական պետության ճանաչմանը: Նշվածը նաև ՀՀ կառավարության հանձնարարականն էր: Այն խիստ արդիական դարձավ ոչ մրայն այն պատճառով, որ դաշնակից պետություններն հունվարին ճանաչեցին Հայաստանի հանրապետությունը, այլև կապված էր ԱՄՆ-ի քաղաքական կողմնորոշումներում ակնհայտ փոփոխությունների հետ՝ այն է. մանդատային կուրսի փոփոխությունը դեպի անկախություն: 1920 թ. սկզբին Հայաստանի հանրապետությունը ճանաչելու հարցն ապահովելու նպատակով Գ. Փաստրմաճյանը նամակագրական փոխադարձ կապ էր հաստատել պետական քարտուղար Ռ. Լանսինգի և, անգամ, նախագահ Վ. Վիլսոնի հետ: Գ. Փաստրմաճյանի անմնացորդ ջանքերը մեծ հաջողությունների չբերեցին՝ թեև Հայաստանի հանրապետությունն ապրիլի վերջին ճանաչվեց դե ֆակտո ԱՄՆ-ի կողմից, վերջինս ավելի քան մեկ ամիս հետո մերժեց ստանձնել ՀՀ մանդատը:

GHAMBARYAN Armenuhi (Armenia)
Institute of History of NAS RA
e-mail: armenuhi.ghambaryan@gmail.com

DIPLOMATIC REPRESENTATION OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA IN THE USA IN LATE 1919- EARLY 1920

From the first day of its proclamation, the First Republic of Armenia was destined to go through a difficult path full of trials. From May 1919 until late autumn, the end of the First World War, the newborn Republic, fighting for its physical existence in the foreign policy field, simultaneously waged an unequal struggle for the maximum possible solution to the country's internal problems. The difficult internal and external situation continued in 1919. In response to this, the Parliament of the Republic approved a bill in early February that formed a civilian mission to travel to Europe and America to combat hunger and seek assistance in importing food and other essential goods.

A civilian delegation of the Government of the Republic of Armenia headed by the First Prime Minister of the Republic of Armenia, O. Kajaznuni, left for Europe in June. From here, an official delegation travelled to Washington in early October to address the American government in the US: In addition to the main goal of obtaining economic support from the United States, the Kajaznuni mission was also authorized to ensure the resolution of certain political issues. At that time, the Armenian authorities realized the need for establishing diplomatic relations with the United States. For this purpose, Garegin Pastrmadjian (Armen Garo), a member of the Armenian delegation in Paris, vice-president of the National Delegation, appointed as the plenipotentiary representative of the Republic of Armenia in the United States, joins the delegation leaving France for the United States.

In the USA, Mr. Pastermadjian was tasked with working on various issues. Of course, political issues were given priority. He began the activities for which he was authorized, focusing on three main directions. Namely: achieving political and legal recognition of the Republic of Armenia; informing American government and public circles about the need for Armenia's existence; ensuring material, humanitarian, military, and political support from the United States. The focus of G. Pastrmadjian's diplomatic efforts was the implementation of the issue of the United States accepting a mandate over Armenia.

G. Pastermadjian, who set up his semi-official diplomatic office in one of the hotels in Washington, conducted very active diplomatic activities. He organized meetings, sent appeals to the White House, Congress, and the State Department, and negotiated with individual entrepreneurs and brokered deals on food, clothing, seeds, agricultural equipment, and military aid. Although there were practically no achievements on political issues at the end of 1919, the efforts of the RA Plenipotentiary Representative were not completely fruitless. G. Pastermadjian played a significant role in the successes achieved in the United States at the end of 1919 in terms of economic, in particular humanitarian, assistance to Armenia. G. Pastermadjian was also actively involved in uniting the disunited Armenian community in the United States. This became very relevant not only because the Allies states recognized the Republic of Armenia in January, but also because of the

obvious changes in the political orientations of the United States, namely: the change in the mandate course towards independence. In early 1920, in order to ensure the recognition of the Republic of Armenia, G. Pastermadjian initiated correspondence with Secretary of State R. Lansing and even President W. Wilson. G. Pastrmadjian's tireless efforts did not lead to great success. Despite the fact that the Republic of Armenia was recognized de facto by the United States at the end of April, the latter refused to accept the mandate of the Republic of Armenia a little over a month later.

ГАМБАРЯН Арменуи (Армения)
Институт истории НАН РА
e-mail: armenuhi.ghambaryan@gmail.com

ДИПЛОМАТИЧЕСКОЕ ПРЕДСТАВИТЕЛЬСТВО ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В США В КОНЦЕ 1919 - НАЧАЛЕ 1920 ГГ.

Первой Республике Армения с первого дня провозглашения было суждено пройти трудный, полный испытаний путь. С мая 1919 года и до глубокой осени - окончания Первой мировой войны, новорожденная Республика, борясь на внешнеполитическом поле за свое физическое существование, одновременно вела неравную борьбу за максимально возможное решение внутренних проблем страны. Тяжелая внутренняя и внешняя обстановка сохранялась и в 1919 году. Согласно законопроекту, одобренному парламентом республики в начале февраля 1919 года, была сформирована гражданская миссия, которой в целях борьбы с голодом было поручено отправиться в Европу и Америку и просить их о помощи в импорте недостающего продовольствия и других товаров первой необходимости.

Гражданская делегация правительства Республики Армения во главе с первым премьер-министром Республики Армения О. Качазнуни в июне отправляется в Европу. Отсюда официальная делегация в начале октября отправляется в Вашингтон чтобы обратиться к американскому правительству в США. Помимо основной цели — получения экономической поддержки от США, миссия Качазнуни, также была уполномочена обеспечить решение некоторых политических вопросов. В отмеченное время власти Армении осознавали необходимость установления дипломатических отношений с Соединенными Штатами. С этой целью к делегации, отправляющейся из Франции в США, присоединяется Гарегин Пастрмаджян (Армен Гаро), член армянской делегации в Париже, вице-президент Национальной делегации, назначенный полномочным представителем Республики Армения в США.

В США Г. Пастрмаджяну было поручено развернуть работу по различным вопросам, приоритетное внимание уделяя, конечно, политическим вопросам. Деятельность, на которую он был уполномочен, он начал, сосредоточившись на трех основных направлениях. А именно: достижение политического и правового признания Республики Армения; информирование американских государственных и общественных кругов о необходимости существования Армении; обеспечение материальной, гуманитарной, военной и политической поддержки со стороны США. В центре дипломатических уси-

лий Г. Пастрмаджяна была реализация вопроса о принятии Соединенными Штатами мандата на Армении.

Г. Пастрмаджян, открывший полуофициальное представительство Республики Армения в одном из отелей Вашингтона, вел весьма активную дипломатическую деятельность. Он организовывал встречи, отправлял обращения в Белый дом, Конгресс и Государственный департамент, а также вел переговоры с отдельными предпринимателями и выступал посредником в сделках по поставкам продовольствия, одежды, семян, сельскохозяйственного оборудования и военной помощи. И хотя в конце 1919 года по политическим вопросам практически не было никаких достижений, усилия полномочного представителя РА не были полностью безрезультатными. Г. Пастрмаджян сыграл значительную роль в успехах, достигнутых Соединенными Штатами в конце 1919 года в плане экономической, в частности гуманитарной, помощи Армении. Г. Пастрмаджян также принимал активное участие в объединении разобщенной армянской общины США.

В начале 1920-х годов, когда США еще не признали Республику Армения, Дж. Пастрмаджян в работе, проводимой вокруг политических проблем, отдавал приоритет признанию молодого армянского государства. Последнее было также поручением правительства РА. Это стало очень актуальным не только потому, что союзные государства признали Республику Армения в январе, но и в связи с очевидными изменениями в политических ориентациях США, а именно: изменением мандатного курса в сторону независимости. В начале 1920 года, в целях обеспечения признания Республики Армения, Г. Пастрмаджян установил переписку с государственным секретарем Р.Лансингом и, даже, президентом В. Вильсоном. Неутомимые усилия Г. Пастрмаджяна не привели к большим успехам. Несмотря на то, что Республика Армения была признана де-факто Соединенными Штатами в конце апреля, последние, чуть более чем через месяц, отказались принять мандат РА.

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ Աշոտ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ ashot.manucharyan.1959@mail.ru

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ. ՇԻՐԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920) Երևանի թեմի փոխանորդները, այդ թվում նաև Ալեքսանդրապոլի, արդեն ենթարկվում էին ոչ թե Երևանի թեմակալին, որն Ամենայն հայոց կաթողիկոսն էր, այլ՝ փոխթեմակալին:

Թեմը բաժանվում էր փոխանորդությունների, որոնք իրենց հերթին ճյուղավորվում էին գործակալությունների: Ալեքսանդրապոլի փոխանորդության գործակալություններն էին Արթիկի, Համամլուի (Սպիտակի), Մահմուդջուղի (Պեմզաշենի), Մեծ Պարնո (Անուշավանի), Չորլիի (Լեռնագյուղի), Մեծ Ղարաքիլիսայի (Վանաձորի), Օրթաքիլիսայի (Մայիսյանի), Թալինի: Հետագայում ավելացել են Նորաշենի, Ջաջուռի, Դիլիջանի, Իջևանի, Ղազախի, Լոռի-Փամբակի, Շամշադինի գործակալությունները:

1918 թ. հունիսին Արտակ վարդապետ Սմբատյանցը Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե. Սուրենյանցին (1911-1930) ներկայացնում է հրաժարական Ալեքսանդրապոլի վիճակի փոխանորդի պաշտոնից և խնդրում, որ թույլ տան իրեն հեռանալ Սևանավանք: Նա Ալեքսանդրապոլի փոխանորդ է եղել 1914 թ. հունվարի 30-ից մինչև 1918 թ. հունիս:

1919 թ. հունվարի 14-ին Շիրակի հասարակության և քահանայական դասի պահանջով Արտակ վարդապետ Սմբատյանցը վերստին հաստատվում է Ալեքսանդրապոլի փոխանորդության պաշտոնին՝ միաժամանակ նշանակվելով նաև Կարուց փոխանորդության թափուր աթոռի վիճակավոր: Սմբատյանցն Ալեքսանդրապոլի վիճակում փոխանորդ է մնում մինչև 1920 թ. փետրվար ամիսը:

Հայոց եկեղեցու պատմության վավերագրերի ուսումնասիրությունից պարզվում է, որ Հայաստանի Առաջին Հանրապետության օրոք Ալեքսանդրապոլի փոխանորդ,Կարսի վիճակավոր Արտակ վարդապետ Սմբատյանը կատարել է նաև Շիրակի շրջանի դպրոցների թեմական տեսուչի պարտականությունները: Եվ չնայած իր գերծանրաբեռնավածությանը՝ նա այնուհանդերձ ժամանակ էր գտնում այցելելու Ալեքսանդրապոլ քաղաքի և գավառի ծխական դպրոցներ, մոտիկից ծանոթանում վիճակին, դասալսումներ կատարում տարբեր առարկաներից, հարցեր տալիս աշակերտներին և այլն: 1920 թ. սկզբի դրությամբ Ալեքսանդրապոլի գավառում արդեն բացված էր 72 դպրոց՝ 162 ուսուցչով: Միաժամանակ Ալեքսանդրապոլ քաղաքում գործում էր Առևտրական դպրոցը՝ 381 աշակերտով և Օրիորդաց գիմնազիան՝ 332 աշակերտուհիներով:

Արտակ Սմբատյանը մտահոգ էր նաև թուրքական ռազմակալման (1918 թ. մայիս-դեկտեմբեր) հետևանքով ժողովրդի նյութական ծանր վիճակով և ջանում էր հնարավորինս պիտանի լինել շիրակցիներին:

Արտակ Սմբատյանցը մեծ ոգևորությամբ ողջունեց 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում Հայաստանի անդրանիկ համալսարանի բացումը: Համալսարանի միակ՝ պատմալեզվաբանական կրթաճյուղի դեկան էր նշանակվել Մեսրոպ եպս. Տեր-Մովսիսյանը, որին հետո հաջորդում է Գարեգին եպս. Հովսեփյանը: Համալսարանում բացի Մեսրոպ և Գարեգին եպիսկոպոսներից, դասախոսել են պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը, դոցենտներ Ստ. Մալխասյանցը, Աշխարհիբեկ Քալանթարը, Հակոբ Մանանդյանը և ուրիշներ:

1920 թ. սեպտեմբերի 4-ի կաթողիկոսական կոնդակով ստեղծվում է Շիրակի թեմը՝ հետևյալ սահմաններով՝Ալեքսանդրապոլի նախկին փոխանորդություն,Լոռու հայկական մաս, Ղազախի հայկական մաս, Արևմտյան Շիրակի և Թալինի գործակալություններ:

Շիրակի թեմի առաջնորդի ընտրություն է սահմանվում հոկտեմբերի 11-12-ին: Առաջնորդ է ընտրվում Արտակ ծայրագույն վարդապետ Սմբատյանցը:

MANUCHARYAN Ashot (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: ashot.manucharyan.1959@mail.ru

ALEXANDROPOL VICARIATE DURING THE YEARS OF THE FIRST REPUBLIC: CREATION OF A SEPARATE DIOCESE OF SHIRAK

During the First Republic of Armenia (1918-1920), the vicars of the Yerevan diocese, including Alexandropol, were subordinate not to the Yerevan diocesan, which was the Catholicos of All Armenians, as before, but to the vice-diocesan.

The diocese was divided into vicariates, which in turn were divided into agencies. The agencies of the Alexandropol Vicariate were Artik, Hamamlu (Spitak), Mahmujug (Pemzashen), Mets Parni (Anushavan), Chorli (Lernagyugh), Mets Gharakilisa (Vanadzor), Ortakilisa (Maisyan), Talin. Later, the agencies of Norashen, Jajur, Dilijan, Ijevan, Gazakh, Lori-Pambak, Shamshadin were added to them.

In June 1918, Archimandrite Artak Smbatyants submitted to the Catholicos of All Armenians Gevorg V Surenyants (1911-1930) a request to resign from the post of vicar of Alexandropol and asked permission to leave for the Sevan Monastery. From January 30, 1914 to June 1918 he was vicar of Alexandropol.

On January 14, 1919, at the request of the Shirak Society and the clergy, Archimandrite Artak Smbatyants was again appointed to the post of vicar of Alexandropol, while simultaneously being appointed rector of the vacant post of vicar of Kars. Smbatyants remained vicar in Alexandropol until February 1920.

A study of the documents of the history of the Armenian Church shows that during the First Republic of Armenia, the vicar of Alexandropol, the vicar of Kars, Archimandrite Artak Smbatyan also performed the duties of the diocesan inspector of schools in the Shirak region. And, despite his workload, he still found time to visit parochial schools in the city of Alexandropol and the province, getting to know the environment up close, listening to lessons on various subjects, asking questions to students, etc. By the beginning of 1920, 72 schools with 162 teachers had already been opened in the Alexandropol province. At the same time, in the city of Alexandropol, there was a Commercial School with 381 students and a Women's Gymnasium with 332 students.

Artak Smbatyants was concerned about the difficult financial situation of the people as a result of the Turkish occupation (May-December 1918) and tried to be as useful as possible for the people of Shirak.

Artak Smbatyants greeted with great enthusiasm the opening of the first Armenian university in Alexandropol on January 31, 1920. Bishop Mesrop Ter-Movsisyan was appointed dean of the university’s only historical and linguistic faculty; he was later

replaced by Bishop Garegin Hovsepyan. In addition to Bishops Mesrop and Garegin, Professor Ervand Ter-Minasyan, Associate Professors St. Malkhasyants, Ashkharbek Kalantar, Hakob Manandyan and others taught at the university.

By the decree of the Catholicosate of September 4, 1920, the Shirak diocese was formed within the following borders: the former vicariate of Alexandropol, the Armenian part of Lori, the Armenian part of Ghazakh, the agencies of Western Shirak and Talin.

The elections of the head of the Shirak diocese were scheduled for October 11-12. Supreme Archimandrite Artak Smbatyants was elected head of the diocese.

МАНУЧАРЯН Ашот (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: ashot.manucharyan.1959@mail.ru

АЛЕКСАНДРОПОЛЬСКИЙ ВИКАРИАТ В ГОДЫ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ: СОЗДАНИЕ ОТДЕЛЬНОЙ ЕПАРХИИ ШИРАКА

Во времена Первой Республики Армения (1918-1920) викарии Ереванской епархии,включая Александропольскую, подчинялись не Ереванской епархии, которым был Католикос Всех Армян, как прежде, а вице-епархии.

Епархия была разделена на викариатства, которые в свою очередь разветвлялись на агентства.Агентствами Александропольского викариатства были Артик, Хамамлу (Спитак), Махмуджуг (Пемзашен), Мец Парни (Анушаван), Чорли (Лернагюх), Мец Каракилиса (Ванадзор), Ортакилиса (Маисян),Талин. Позже к ним добавились агентства Норашена, Джаджура, Дилижана, Иджевана, Газаха, Лори-Памбака, Шамшадина.

В июне 1918 года архимандрит Артак Смбатянц подал Католикосу Всех Армян Геворгу V Суренянцу (1911-1930) прошение об отставке с должности викария Александрополя и попросил разрешения уехать в Севанский монастырь. С 30 января 1914 года по июнь 1918 года он был викарием Александрополя.

14 января 1919 года по ходатайству Ширакского общества и духовенства архимандрит Артак Смбатянц был вновь назначен на должность викария Александрополя, одновременно будучи назначен настоятелем вакантного места викария Карса. Смбатянц оставался викарием в Александрополе до февраля 1920 года.

Изучение документов истории Армянской Церкви показывает, что во времена Первой Республики Армения викарий Александрополя, викарий Карса архимандрит Артак Смбатян исполнял также обязанности епархиального инспектора школ в Ширакской провинции. И, несмотря на свою загруженность, он все же находил время посещать церковно-приходские школы города Александрополя и провинции, знакомясь с обстановкой вблизи, слушая уроки по разным предметам, задавая вопросы ученикам и т. д. К началу 1920 года в Александропольской провинции было открыто уже 72 школы со 162 учителями. В это же время в городе Александрополе действовали Коммерческое училище с 381 ученицей и Женская гимназия с 332 ученицами.

Артак Смбатянц был обеспокоен тяжелым материальным положением народа в результате турецкой оккупации (май-декабрь 1918 г.) и старался быть максимально полезным для народа Ширака.

Артак Смбатянц с большим энтузиазмом приветствовал открытие первого университета Армении в Александрополе 31 января 1920 года. Деканом единственного историко-лингвистического факультета университета был назначен епископ Месроп Тер-Мовсисян, позднее его сменил епископ Гарегин Овсепян. Помимо епископов Месропа и Гарегина, в университете преподавали профессор Ерванд Тер-Минасян, доценты Ст. Малхасянц, Ашхарбек Калантар, Акоп Манандян и другие.

Постановлением Католикосата от 4 сентября 1920 года была образована Ширакская епархия в следующих границах: бывшее викариатство Александрополя, армянская часть Лори, армянская часть Казаха, агентства Западный Ширак и Талин.

Выборы главы Ширакской епархии были назначены на 11-12 октября. Главой епархии был избран верховный архимандрит Артак Смбатянц.

ՄՈՎՍԻՍՅԱՆ Ֆելիքս (Հայաստան)
Վանաձորի պետական համալսարան
էլ. հասցե՝ felmov52@gmail.com

ՓԱՐԻԶԻ «ԱԶԱՏ ՌՈՒՍԱՍՏԱՆ» ՕԹՅԱԿԻ ՀԱՅ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Ֆրանսիա վտարանդված մեծ թվով հայ գործիչներ անդամագրվել են Փարիզի մասոնական օթյակներին: Դրանցից մեկը 1931թ. սեպտեմբերի 25-ին «Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակի» հավաստագրով հիմնված «Ազատ Ռուսաստան» ռուսախոս օթյակն է:

Հիմնադրման պահին օթյակի Քարտուղար ընտրվել է հայազգի գրող, լրագրող, արդյունաբերող, ՀՅԴ անդամ Ռուբեն Իվանի Բերբերովը: Նա, մինչ այդ, մասոն ձեռնադրվել էր Փարիզի «Le Compagnons» օթյակում, 1828 թ. անդամագրվել «Հյուսիսային աստղ» օթյակին, դարձել օթյակի արարողակարգային վարպետ:

1934թ. մարտի 16-ի դրությամբ «Ազատ Ռուսաստան» օթյակն ունեցել է 100 անդամ, որոնցից 11-ը ազգությամբ հայեր էին: Նրանցից երկուսը՝ Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ, ՀՅԴ անդամ Ալեքսանդր Իվանի Խատիսյանը և բժշկագիտության դոկտոր Կարապետ Սարգիսի Աղաջանյանը, օթյակի հիմնադիր անդամներ էին:

Ա. Ի. Խատիսյանը 1924-1931թթ. Փարիզի «Հյուսիսայի աստղ» օթյակի անդամ էր, Առաջին Վերահսկիչ, Կնիքի պահապան, Երկրորդ արարողապետ, Վարպետ:

1931-1934թթ. նա «Ազատ Ռուսաստան» օթյակի Առաջին հսկիչն էր, իսկ 1935թ.՝ Հռետորը: Մինչև 1937 թ. մնացել է այդ օթյակի անդամ:

Կ. Ս. Աղաջանյանը 1926-1934 թթ. «Հյուսիսային աստղ» օթյակի անդամ էր: 1932 թ. նա «Ազատ Ռուսաստան» օթյակի երրորդ փորձագետն էր, 1932-1933 թթ.՝ տիտղոսակիր իրավական պատգամավորը: 1934թ. հունիսի 22-ին համալրել է Ֆրանսիայի Մեծ Օթյակի միության շարքերը:

1931 թ. դեկտեմբերի 14-ին «Ազատ Ռուսաստան» օթյակի անդամ են դարձել իրավաբան, լրագրող Իվան Քրիստոփորի Զավրիևը, մաթեմատիկոս, գյուտարար Երվանդ Գևորգի Կողբետլյանցը և զինվորական Բոգդան-Բախշի Եղիազարով-դե Նորկը:

Ի. Ք. Զավրիևը 1932 թ. հոկտեմբերի 20-ին ձեռնադրվել է երկրորդ աստիճանի մասոն, իսկ 1933 թ. դեկտեմբերի 13-ին անդամավճար չմուծելու համար հեռացվել է օթյակից: Նույն թվականին անդամակցել է «Հյուսիսային աստղ» օթյակին, որից 1937 թ. նույն պատճառով հեռացվել է:

Ե.Գ. Կողբետլյանցը 1932 թ. հուլիսի 12-ին ձեռնադրվել է երկրորդ, 1933 թ. հունիսի 14-ին՝ երրորդ աստիճանի մասոն: 1933 թ. դեկտեմբերի 30-ին Պարսկաստան մեկնելու կապակցությամբ դուրս է եկել օթյակից:

Բոգդան-Բախշի Եղիազարով-դե Նորկը 1932 թ. հուլիսի 12-ին ստացել է մասոնության երկրորդ, իսկ 1933 թ. հունիսի 4-ին՝ երրորդ աստիճան:

1932 թ. փետրվարի 9-ին մասոնական ձեռնադրում է անցել վաճառական, հնահավաք, հասարակական գործիչ Միխայիլ Ալեքսանդրի Ջանշիևը: Նույն թվականի հոկտեմբերի 20-ին նա ստացել է մասոնության երկրորդ, իսկ 1933 թ. նոյեմբերի 8-ին՝ երրորդ աստիճան: Հետագայում դարձել է «Լոտոս» և «Իմաստասիրության եղբայրներ» օթյակների անդամ:

1932 հոկտեմբերի 20-ին «Ազատ Ռուսաստան» օթյակի անդամ են դարձել փոխգնդապետ Ստեփան Սմբատի Եղիազարյանը և իրավագիտության դոկտոր, դիվանագետ, ձեռնարկատեր Ալեքսանդր Հարությունի Պարոնյանը:

Ս.Ս. Եղիազարյանը ձեռնադրվել է Մ. Ա. Ջանշիևի և Ա. Ի. Խատիսյանի երաշխավորությամբ: 1933 թ. հուլիսի 21-ին նրան շնորհվել է մասոնության երկրորդ, իսկ 1934թ. մարտի 14-ին՝ երրորդ աստիճան: 1948-1949 թթ. Ս.Ս. Եղիազարյանը «Ազատ Ռուսաստան» օթյակի Գերհարգելի Վարպետն էր, իսկ 1952 թ.՝ Տեղապահ Վարպետը:

Ա. Հ. Պարոնյանը 1933 թ. հուլիսի 12-ին օթյակում ստացել է մասոնության երկրորդ, իսկ 1934 թ. ապրիլի 11-ին՝ երրորդ աստիճան: Մինչև 1945 թ. մնացել է «Հյուսիսային աստղ» օթյակի անդամ:

1933 թ. մարտի 8-ին օթյակի շարքերը համալրել է Միքայել Ս. Բաղդասարյանը, ով 1933 թ. հունվարի 10-ին ձեռնադրվել է երկրորդ աստիճանի մասոն: «Ազատ Ռուսաստան» օթյակի հայ անդամները եղել են բարձրաստիճան մասոններ:

Նրանց գործունեությունը օթյակում, բացառությամբ Ս. Ս. Եղիազարյանի, ավարտվել է 1930-ական թթ. երկրորդ կեսին: 1940 թ. «Ազատ Ռուսաստան» օթյակը վերանվանվել է «Ուղենիշ» օթյակ, իսկ 1946 թ. անդամների մի մասը համալրել է «Լոտոս» օթյակի շարքերը: 1955 թ. «Ազատ Ռուսաստանը» միավորվել է «Հյուսիսային աստղ» օթյակին:

MOVSISYAN Feliks (Armenia)
Vanadzor State University
e-mail: felmov52@gmail.com

THE ARMENIAN MEMBERS OF THE PARIS "FREE RUSSIA" LODGE

After the end of World War I, a significant number of Armenian activists who had taken refuge in France joined the Masonic lodges of Paris. One of these was the Russian-speaking "Free Russia" Lodge, established on September 25, 1931, with a charter from the "Grand Orient of France."

Upon its establishment, the lodge's secretary was elected to be Ruben Ivanovich Berberov, an Armenian writer, journalist, industrialist, and member of the Armenian Revolutionary Federation (ARF). Previously, he had been initiated as a Mason in Paris's "Le Compagnons" Lodge, joined the "Northern Star" Lodge in 1828, and became its Ritual Master.

As of March 16, 1934, the "Free Russia" Lodge had 100 members, 11 of whom were Armenians. Two of them, Alexander Ivanovich Khatisian, the former Prime Minister of the First Republic of Armenia and ARF member, and Dr. Karapet Sargsi Aghajanian, were founding members of the lodge.

A.I. Khatisian was a member of the "Northern Star" Lodge in Paris from 1924 to 1931, serving as First Warden, Keeper of the Seal, Second Ritualist, and Master. From 1931 to 1934, he was the First Warden of the "Free Russia" Lodge, and in 1935 he became its Orator. He remained a member of the lodge until 1937.

K.S. Aghajanian was a member of the "Northern Star" Lodge from 1926 to 1934. In 1932, he served as the Third Expert of the "Free Russia" Lodge and was the titular legal envoy in 1932–1933. On June 22, 1934, he joined the ranks of the Union of the Grand Lodge of France.

On December 14, 1931, Ivan Khristoforovich Zavriyev, a lawyer and journalist; Yervand Gevorgi Kogbetlyants, a mathematician and inventor; and Bogdan-Bakhshi Yeghiazaryan-De Nork, a military officer, joined the "Free Russia" Lodge.

I.K. Zavriyev was initiated into the second degree of Masonry on October 20, 1932, but was expelled from the lodge on December 13, 1933, for failing to pay membership dues. That same year, he joined the "Northern Star" Lodge but was again expelled in 1937 for the same reason.

Y.G. Kogbetlyants was initiated into the second degree on July 12, 1932, and into the third degree on June 14, 1933. He left the lodge on December 30, 1933, due to his departure for Persia.

Bogdan-Bakhshi Yeghiazaryan-De Nork received the second degree of Masonry on July 12, 1932, and the third degree on June 4, 1933.

On February 9, 1932, merchant, antiquarian, and social activist Mikhail Alexandrovich Janshiyev was initiated as a Mason. On October 20 of the same year, he was promoted to the second degree, and on November 8, 1933, to the third degree. He later became a member of the "Lotus" and "Brothers of Wisdom" lodges.

On October 20, 1932, Lieutenant Colonel Stepan Smbati Yeghiazaryan and legal scholar, diplomat, and entrepreneur Alexander Harutyuni Paronyan joined the “Free Russia” Lodge.

S.S. Yeghiazaryan was initiated upon the recommendation of M.A. Janshiyev and A.I. Khatisian. On July 21, 1933, he was promoted to the second degree, and on March 14, 1934, to the third degree. In 1948–1949, S.S. Yeghiazaryan served as the Worshipful Master of the “Free Russia” Lodge, and in 1952, he became its Deputy Master.

A.H. Paronyan received the second degree on July 12, 1933, and the third degree on April 11, 1934. He remained a member of the “Northern Star” Lodge until 1945.

On March 8, 1933, Mikayel S. Baghdasaryan joined the lodge. He had been initiated into the second degree of Masonry on January 10, 1933.

The Armenian members of the “Free Russia” Lodge held high-ranking positions within the Masonic hierarchy. Their activities within the lodge, with the exception of S.S. Yeghiazaryan, ended in the second half of the 1930s. In 1940, the “Free Russia” Lodge was renamed the “Beacon” Lodge, and in 1946 some of its members joined the “Lotus” Lodge. In 1955, “Free Russia” merged with the “Northern Star” Lodge.

МОВСИСЯН Феликс (Армения)
Ванадзорский государственный уриверситет
e-mail: felmov52@gmail.com

АРМЯНСКИЕ ПРЕДСТАВИТЕЛИ ПАРИЖСКОЙ ЛОЖИ "СВОБОДНАЯ РОССИЯ"

После окончания Первой мировой войны большое количество армянских деятелей, эмигрировавших во Францию, вступили в масонские ложи Парижа. Одной из них была русскоязычная ложа «Свободная Россия», основанная 25 сентября 1931 года под юрисдикцией ложи «Великий Восток Франции».

В момент ее создания Секретарем ложи был избран Рубен Иванович Берберов – армянский писатель, журналист, промышленник, член АРП «Дашнакцутюн». До этого он был посвящен в парижскую масонскую ложу «Le Compagnons», а в 1928 году вступил в ложу «Северная Звезда», став церемониймейстером ложи.

По состоянию на 16 марта 1934 года ложа «Свободная Россия» насчитывала 100 членов, 11 из которых были этническими армянами. Двое из них – бывший премьер-министр Республики Армения, член АРП «Дашнакцутюн» Александр Иванович Хатисян и доктор медицины Карапет Саргисович Агаджанян – были членами-основателями ложи.

С 1924 по 1931 гг. А.И. Хатисян был членом парижской ложи «Северная Звезда», Первым Надзирателем, Хранителем Печати, Вторым Церемониймейстером,

Мастером. В 1931-1934 гг. он был Первым Надзирателем ложи «Свободная Россия», а в 1935 году – Оратором, оставаясь членом этой ложи до 1937 года.

С 1926 по 1934 гг. К.С. Агаджанян был членом ложи «Северная Звезда». В 1932 году он стал Третьим Экспертом ложи «Свободная Россия», а с 1932 по 1933 гг. – Титулованным Правовым Депутатом. 22 июня 1934 года он вступил в ряды ложи «Великий Восток Франции».

14 декабря 1931 года членами ложи «Свободная Россия» стали юрист и журналист Иван Христофорович Завриев, математик и изобретатель Ерванд Геворгович Кохбетлянц и военнослужащий Богдан-Бахши Егиазаров-де Норк.

20 октября 1932 года И.Х. Завриев был посвящен в масоны второй степени, однако, 13 декабря 1933 года был исключен из ложи за неуплату членских взносов. В том же году он вступил в ложу «Северная Звезда», из которой был исключен в 1937 году по той же причине.

12 июля 1932 года Е.Г. Кохбетлянц был посвящен в масоны второй степени, а 14 июня 1933 года – в масоны третьей степени. 30 декабря 1933 года он покинул ложу в связи с отъездом в Иран.

12 июля 1932 года Богдан-Бахши Егиазаров-де Норк получил вторую степень масонства, а 4 июня 1933 года – третью степень.

9 февраля 1932 года негоциант, антиквар и общественный деятель Михаил Александрович Джаншиев принял масонское посвящение. 20 октября того же года он получил вторую степень масонства, а 8 ноября 1933 года – третью степень. Позднее он стал членом лож «Лотос» и «Братья Любомудрия».

20 октября 1932 года членами ложи «Свободная Россия» стали подполковник Степан Смбатович Егиазарян и доктор правоведения, дипломат и предприниматель Александр Арутюнович Паронян.

С.С. Егиазарян был посвящен по рекомендации М.А. Джаншиева и А.И. Хатисяна. 21 июля 1933 года ему была присвоена вторая степень масонства, а 14 марта 1934 года – третья степень. В 1948-1949 гг. С.С. Егиазарян стал Досточтимым Мастером ложи «Свободная Россия», в 1952 году – Местоблюстителем Мастера.

12 июля 1933 г. А.А. Паронян получил вторую степень масонства, а третью степень – 11 апреля 1934 года. До 1945 г. он оставался членом ложи «Северная Звезда».

8 марта 1933 года ряды ложи пополнил Микаэл Багдасарян, который 10 января 1933 года был рукоположен в масоны второй степени.

Армянские члены ложи «Свободная Россия» являлись масонами высших степеней. Их деятельность в ложе, за исключением С.С. Егиазаряна, завершилась во второй половине 1930-х гг. В 1940 году ложа «Свободная Россия» была переименована в ложу «Веха», а в 1946 году часть ее членов афилировалась к ложе «Лотос». В 1955 году «Свободная Россия» объединилась с ложей «Северная Звезда».

ՄՈՒՐԱԴՅԱՆ Հակոբ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
«Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամ
էլ. հասցե՝. muradyanhakob@yahoo.com

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ (1918-1920 ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Օսմանյան կայսրությունը, պարտվելով Առաջին համաշխարհային պատերազմում, հարկադրված էր իր զորքերը դուրս բերել Անդրկովկասում գրավված երկրամասերից: Թուրքերի հեռանալուց հետո Կարսի մարզի պատկանելիության հարցը մնաց անորոշ:

Հեռանալուն զուգահեռաբար թուրքերն այդ երկրամասերում ստեղծում էին «մուսուլմանական հանրապետություններ», որպեսզի այդ տարածքները չմիավորվեին Հայաստանի Հանրապետության հետ:Այդպիսի միավորներից էր Կարսի մարզի նախկին տարածքում առաջացած Հարավարևմտյան Կովկասի Հանրապետությունը, որը կառավարվում էր Կարսի Մուսուլմանական խորհրդի (Ազգային խորհուրդ՝ Միլլի Շուրա) կողմից:

Միևնույն ժամանակ տարածաշրջան մուտք գործած բրիտանական ուժերի աջակցությամբ 1919 թ. հունվարի 17-18-ը տեղի ունեցած մուսուլմանական պատվիրակների խորհրդաժողովում որոշվեց հռչակել Հարավարևմտյան կովկասյան ժամանակավոր ազգային կառավարություն: Վերջինիս իշխանությունը պետք է տարածվեր Աջարիայից մինչև պարսկական սահման՝ ներառյալ Նախիջևանը: Կենտրոնը հայկական Կարս քաղաքն էր:

Կարսի մարզի և հարակից հայկական այլ տարածքների նկատմամբ հավակնություններ սկսեց դրսևորել նաև Ադրբեջանի Հանրապետությունը:

Կարսի, Բաթումի, Ախալցխայի, Ախալքալաքի, Շարուրի և Նախիջևանի տարածքներում հրահրվեցին և կազմակերպվեցին հակահայկական շարժումներ: Այդ գործում կարևոր դեր էր խաղում Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչությունը՝ Ալի խան Թեքինսկու գլխավորությամբ, իսկ քարոզչության գործում մեծ դեր ուներ Ադրբեջանի Հանրապետության մամուլը:

1919 թ. ապրիլի 10-ին բրիտանացի գեներալ Թոմսոնը հրապարակեց հայտարարություն «Հարավարևմտյան Կովկասյան կառավարության» լուծարման մասին՝ նշելով, որ Փարիզի Հաշտության վեհաժողովը պետք է որոշի Կարսի և մյուս վիճելի տարածքների վերջնական կարգավիճակը: Ապրիլի 19-ին բրիտանացիներն իշխանությունը փոխանցեցին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից նշանակված Կարսի նահանգապետ Ստեփան Ղորղանյանին: Սակայն Ադրբեջանը հրաժարվեց ճանաչել այդ միացումը:

Ադրբեջանի Հանրապետության կողմից ակտիվ աշխատանք էր տարվում նաև միջազգային ասպարեզում: 1919 թ. օգոստոսի 20-ին Փարիզի խաղաղության վեհաժողովին է ներկայացվում բողոքի նոտա: Ադրբեջանական պատվիրակությունը խորը մտահոգություն է հայտնում, թե ինչպես կարող է ոտնահարվել Կարսի մարզի

մուսուլմանների ցանկությունը՝ հանրաքվեի միջոցով միանալու Ադրբեջանին (հետաքրքրական է, որ Ադրբեջանը կտրականապես դեմ էր այդ նույն սկզբունքով Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի խնդրի լուծմանը)։ 1919 թ. օգոստոսի 29-ին Ադրբեջանի պատվիրակությունը վեհաժողովին ներկայացրած հուշագրում և քարտեզում տարածքային հավակնություններով հանդես եկավ։ Դրանց մեջ մտնում էին Բաթումը, Կարսը, Արդահանը, Օլթին, Ախալցխան, Կաղզվանը, Սուրմալուն, Վաղարշապատը, Ճարուրը, Նախիջևանը, տարածքներ Երևանի, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառներից, Վրաստանի հարավային մի շարք շրջաններից։

1920 թ. սկզբին Ադրբեջանը շարունակեց հակահայկական քաղաքականությունը հատկապես Կարսի մարզում և Զանգիբասարում, որտեղ տեղի մուսուլմանական բնակչությունը խռովություն բարձրացրեց, որն արագորեն ճնշվեց։ Զարիշատի, Աղբաբայի և Չըլդրի մուսուլմանական բնակչության ներկայացուցիչները Կարսի նահանգի հայկական ղեկավարությանը հավաստիացրին, որ իրենք ցանկանում են հաշտ ապրել հայերի հետ, իսկ խռովությունը հրահրել են Ադրբեջանից եկած քարոզիչները։

Փաստորեն՝ Կարսին տիրելու Ադրբեջանի հավակնությունները ձախողվեցին։ Արհեստածին անունով Ադրբեջան պետության ագրեսիվ նկրտումներն ու հավակնությունները պատահական չէին։ Նրա թիկունքում կանգնած էր Թուրքիան, որը ձգտում էր ամեն գնով Կարսն ու հարակից տարածքները պահել իր ազդեցության ոլորտում։ Այն դրան հասավ 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրով, որով Կարսը հանձնվեց Թուրքիային։

MURADYAN Hakob (Armenia)
Institute of History of NAS RA
"Geghard" Scientific-Analytical Foundation
e-mail: muradyanhakob@yahoo.com

THE CLAIMS OF THE REPUBLIC OF AZERBAIJAN ON KARS (1918-1920)

The Ottoman Empire, having been defeated in World War I, under the terms of the armistice, had to withdrew its troops from the occupied territories in the South Caucasus.

Simultaneously, the Turks were establishing "Muslim republics" in these regions to prevent their unification with the Republic of Armenia. One such entity was the Southwestern Caucasus Republic, which emerged on the former territory of the Kars region and was governed by the Kars Muslim Council (National Council – Milli Shura).

At the same time, with the support of the British forces that had entered the region, a congress of Muslim delegates was held on January 17-18, 1919, where it was decided to proclaim the provisional national government of Southwestern Caucasus. It claimed the territory from Ajaria to the Persian border, including Nakhijevan. The center of it should be the Armenian city of Kars.

At the same time, the Republic of Azerbaijan began asserting claims over the Kars region and other adjacent Armenian territories.

Anti-Armenian movements were incited and organized in these territories, including Kars, Batumi, Akhalkalaki, Akhaltsikhe, Sharur, and Nakhijevan. A key role in this played the Azerbaijani diplomatic mission in Yerevan, led by Ali Khan Tekinski, while the press of the Republic of Azerbaijan played a significant role in the propaganda efforts.

On April 10, 1919, British General Thomson issued a statement announcing the dissolution of the Southwestern Caucasus Government, noting that the Paris Peace Conference would determine the final status of Kars and other disputed territories. On April 19, the British handed over power to Stepan Ghorghanyan, the governor of Kars appointed by the government of the Republic of Armenia. However, Azerbaijan refused to recognize this unification.

The Republic of Azerbaijan was also actively working on the international stage. On August 20, 1919, a protest note was presented at the Paris Peace Conference. The Azerbaijani delegation expressed deep concern about how the desire of the Muslims of the Kars region to join Azerbaijan through a referendum could be violated (it is interesting to note that Azerbaijan was categorically opposed to solving the issues of Nagorno-Karabakh and Zangezur based on the same principle).

On August 29, 1919, the Azerbaijani delegation presented a memorandum and a map at the conference, making territorial claims, which included Batumi, Kars, Ardahan, Olti, Akhaltsikhe, Kaghzvan, Surmalu, Vagharshapat, Sharur, Nakhijevan, and territories from the provinces of Yerevan, Alexandrapol, and New Bayazet, as well as several southern regions of Georgia.

In the early months of 1920, Azerbaijan continued its anti-Armenian policies, especially in the Kars region and Zangibasar, where the local Muslim population rioted, which was quickly suppressed. Representatives of the Muslim populations of Zarishat, Aghbaba, and Chyldyr assured the Armenian leadership of the Kars province that they wished to live in peace with the Armenians, and that the rebellion had been incited by propagandists sent from Azerbaijan.

Azerbaijan’s claims to control Kars were thwarted. The aggressive ambitions and claims of the artificially created Azerbaijani state were not accidental. Behind it stood Turkey, which sought to keep Kars and the surrounding territories within its sphere of influence at any cost. Turkey finally succeeded to get Kars according to Kars Treaty on October 13, 1921.

МУРАДЯН Акоп (Армения)
Институт истории НАН РА
Научно-аналитический фонд «Гегард»
e-mail: muradyanhakob@yahoo.com

ПРЕТЕНЗИИ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ ПО ОТНОШЕНИЮ К КАРСУ В 1918-1920 ГГ.

Османская империя, проиграв в Первой мировой войне, должна была вывести свои войска из оккупированных областей Закавказья. Вопрос принадлежности Карсской области оставался неопределенным.

Покидая данные территории, турки создавали в этих областях «мусульманские республики», чтобы воспрепятствовать их присоединению к Республике Армения. Одной из таких единиц стала Юго-Западная Кавказская Республика, созданная на территории бывшей Карсской области. Она управлялась Карсским мусульманским советом (Национальный совет Милли Шура).

В то же время при содействии вошедших в регион британских войск 17-18 января 1919 г. состоялся конгресс мусульманских делегатов, на котором было решено объявить Юго-Западное Кавказское временное национальное правительство. Власть последнего должна была распространяться от Аджарии до персидской границы, включая Нахиджеван. Центром должен был стать армянский город Карс.

Одновременно по отношению к Карсской области и сопредельным армянским территориям стала выдвигать претензии Азербайджанская Демократическая Республика. В Карсе, Батуме, Ахалцихе, Ахалкалаке, Шаруре и Нахиджеване были спровоцированы и организованы антиармянские мятежи. Важную роль в этом сыграло дипломатическое представительство Азербайджана в Ереване во главе с Али ханом Текинским, а в вопросе пропаганды значительное влияние оказала пресса Азербайджанской Демократической Республики.

10 апреля 1919 г. британский генерал Томсон опубликовал заявление о роспуске «Юго-Западного Кавказского правительства», отметив, что окончательный статус Карсской области и других спорных территорий должен быть установлен на Парижской мирной конференции. 19 апреля британцы передали власть назначенному правительством Республики Армении Карсскому губернатору Степану Горганяну, однако Азербайджан отказался признать это воссоединение.

Азербайджанская Демократическая Республика вела активную деятельность и на международной арене. 20 августа 1919 г. Азербайджан представил ноту протеста на Парижской международной конференции. Азербайджанская делегация выражала глубокую озабоченность тем, что волеизъявление мусульман Карса о присоединении к Азербайджану посредством референдума может быть ущемлено (примечательно, что Азербайджан выступал против решения вопросов Нагорного Карабаха и Зангезура таким же образом). 29 августа 1919 г. Азербайджан выступил на Парижской конференции с меморандумом и картой территориальных притязаний. Среди

территорий, на которые притязал Азербайджан, были Батуми, Карс, Ардаган, Ольты, Ахалцихе, Кагзван, Сурмалу, Вагаршапат, Шарур, Нахиджеван, ряд районов Ереванского, Александропольского и Новобаязетского уездов, ряд областей южной Грузии.

В начале 1920 г. Азербайджан продолжил антиармянскую политику особенно в Карсской области и Зангибасаре. Мусульманское население этих областей подняло мятеж, который, однако, был быстро подавлен. Представители мусульманского населения Заришата, Агбабы и Чылдыра заверили, что хотят жить в мире с армянами, а мятеж был спровоцирован прибывшими из Азербайджана агитаторами.

Фактически притязания Азербайджана на Карс потерпели неудачу. Агрессивные поползновения и претензии искусственного образования под названием Азербайджан были отнюдь не случайны. За ним стояла Турция, которая стремилась любой ценой удержать в сфере своего влияния Карс и сопредельные территории. Она достигла этого согласно Карсскому договору от 13 октября того же года, когда Карс был окончательно передан Турции.

ՊԵՏՐՈՍՅԱՆ Լուսինե Ս. (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՔՐՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հին աշխարհում հասարակության կարևոր դասերից էր քրմականը: Այն համախմբված էր տաճարների շուրջը և հսկայական դեր էր կատարում երկրի հասարակական-քաղաքական և տնտեսական կյանքում: Ինչպես հինարևելյան, հելլենիստական երկրներում, Հայաստանում ևս բոլոր աստվածներն ունեին իրենց ձոնված տաճարներ: Տաճարներում գործող քրմերը՝ աստվածների ծառաները, մարդկանց ու աստվածների միջնորդները, ունեի մշակովի հողեր, ստրուկներ, գաղափարախոսական բնագավառից զատ, նաև արհեստագործական և առևտրական կենսագործունեության ձևեր:

Հին Հունաստանում քրմերը բացառապես ազնվական տոհմերի ներկայացուցիչներ էին: Նրանց գործառույթներից էին աստվածներին զոհեր մատուցելը, հասարակության համար աղոթքներ հղելը, զոհաբերվող կենդանիների մաքրության մասին հոգալը: Քրմերն այստեղ կրում էին սպիտակ զգեստներ, սպիտակ սանդալներ, սպիտակ ու կարմիր գլխաշորեր և երկար մազեր: Կային թե՛ քրմեր, թե՛ քրմուհիներ:

Ասկլեպիոսի տաճարում իրականացվում էր հիվանդների բուժում, բայց ոչ՝ ծանր հիվանդների և ծննդկանների:

Հին Եգիպտոսում ապագա քրմերը իրենց գործունեության ցանկացած ոլորտ ընտրելիս անպայման նախապատրաստական երկար ուսուցման կուրսեր էին անցնում: Նրանք պարտավոր էին գրագետ լինել և հաշվարկներ կատարել, ինչպես նաև մանրամասն ուսումնասիրել աստվածների անունները և մականունները, նրանց խորհրդանիշները, ծիսակարգերն ու աղոթքները: Ով հաղթահարում էր քննությունները, իրավունք էր ստանում սափրել գլխի և մարմնի մազերը՝ ի նշան ծիսական մաքրության, հագնել սպիտակ սանդալներ և անցնել մաքրման ընթացակարգը, որպեսզի տաճար մտներ որպես լիիրավ հոգևորական:

Միջագետքում սկզբնական շրջանում քրմական դաս ձևավորվել էր կուռքերին ճիշտ դիմելու անհրաժեշտությունից դրդված: Ժամանակի հետ քրմերի գործառույթն ընդարձակվեց և նրանք վերածվեցին «աստվածների ունեցվածքը» տնօրինողների: Միջագետքում ևս քրմերն հիմնականում կատարում էին զոհաբերություններ, տարբեր ծիսակատարություններ, գուշակություններ, կանխատեսումներ և չար հոգիների արտաքսում, նրանք աստղագիտության, մաթեմատիկայի և երաժշտության գիտակներ էին, զբաղվում էին նաև առևտրով, վաշխառությամբ: Նրանց դիրքն այնքան էր բարձրացել հասարակության մեջ, որ փաստաթղթերը թվագրվում էին քրմերի իշխանության գալու տարով: Տղամարդ քրմերի կողքին գործում էին նաև քրմուհիներ, որոնք ևս ունեին իրենց աստիճանակարգը: Քրմուհիներ կային, որոնք զրկված էին զավակներ ունենալու իրավունքից, սակայն որդեգրման հնարավորության կար: Իսկ քրմապետուհին աղքատ ծնողներից տաճարների համար երեխաներ գնելու իրավունք ուներ: Սարգոնի մասին ավանդազրույցներում հիշատակվում է, որ քրմուհին նրան թաքուն լույս աշխարհ բերելով, հանձնել է գետի հոսանքին: Երբեմն քրմուհիները համարձակվել են հաճախել անգամ գիհետներ, ինչի համար հատուցել են իրենց կյանքով: Ի տարբերություն սովորական կանանց, նրանք օժտված էին նաև ժառանգություն ստանալու իրավունքով:

Ուշագրավ է, որ Կապադովկիայում հասարակությունը առավել հնազանդ էր քրմին, քան թագավորին: Ընդհանրապես, թագավորից հետո քուրմը երկրորդ անձնավորությունն էր: Թագավորներն ու քրմերը երբեմն նույն տոհմիհն էին պատկանում:

Հին Իրանում յուրաքանչյուր քուրմ պետք է գիտենար նաև զոհաբերվող կենդանու մարմնի մասերը տիեզերքի հետ նույնականացնելու կանոնները:

Հայաստանում ևս քրմերը սերում էին թագավորական տոհմից, նույնիսկ իրենք թագավորներն էին միաժամանակ քրմապետ: Հայաստանում քրմերի հեղինակության, տնտեսական հզորության ու քաղաքական ազդեցության աճը սկսեց հասնել թագավորական իշխանության համար վտանգավոր չափերի: Թագավորները շահագրգռված լինելով վայելելու քրմության օժանդակությունը, առատ նվիրատվություններ էին կատարում տաճարներին: Ինչպես Արևելքի երկրներում, այնպես էլ Հայաստանում, քրմության ձեռքին է եղել դատական իշխանությունը, քրմությունն ունեցել է զինվորական ջոկատներ, մասնակցել է արտաքին և միջպետական հարաբերություններին:

PETROSYAN Lusine S. (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: vahe1996@mail.ru

DISCUSSIONS ON THE PRIESTLY INSTITUTIONS OF ANCIENT ARMENIA AND WEST ASIA

In the Ancient world, priests estate was one of the most important social estate. It was united around temples and played a huge role in the socio-political and economic life of the country. In the countries of the Ancient East and the Hellenistic world, as well as in Armenia, all gods had temples dedicated to them. The priests who served in these temples - servants of the gods and intermediaries between people and gods - owned cultivated lands, slaves, and in addition to ideological activities were also engaged in crafts and trade.

In ancient Greece, priests were exclusively representatives of noble families. Their functions were to offer sacrifices to the gods, pray for the community, and take care of the purity of the sacrificed animals. They wore white robes, white sandals, white and red headdresses, and had long hair. There were priests as well as priestesses. The temple of Asclepius treated the sick, but did not admit the seriously ill or women in labor.

In Ancient Egypt, future priests, choosing the field of their activity, necessarily underwent long preparatory courses. They had to master writing and counting, as well as to study all the details related to the assemblies - from their names, epithets and symbols to all the rites and prayers. Those who passed the tests were allowed to shave their head and body hair as a sign of ritual purity, wear white sandals, and undergo a purification procedure to enter the temple as a full-fledged cleric.

In Mesopotamia, the estate of the priests was initially formed out of the need to ensure correct worship. Over time, the priests functions expanded and they began to manage the “property of the gods”. The priests in Mesopotamia performed sacrifices, various rituals, divination, fortune-telling, exorcism of evil spirits, were engaged in trade and usury. They also mastered sacred knowledge in astronomy, mathematics and music. Their position in society was so high that documents date from the beginning of the priest's reign. Along with male priests there were also priestesses who had their own hierarchy.

For some, childbearing was forbidden, but adoption was allowed. The high priestess could buy children from the poor for the temple. In the tales of Sargon it is mentioned that the priestess secretly gave birth to him and gave the baby to the current of the river. Sometimes priestesses dared to visit even drinking establishments, for which they paid with their lives. Unlike ordinary women, priestesses could claim inheritance.

It is noteworthy that in Cappadocia society obeyed the priest more than the king. In general, the priest was the second most important figure after the king. Sometimes kings and priests came from the same family.

In ancient Iran, every priest was also required to know the rules for identifying the parts of the sacrificial animal’s body with elements of the cosmos.

In Armenia, the priests also came from the royal family, and sometimes the kings themselves were High Priests. The growth of the authority, economic power and political influence of the priesthood in Armenia eventually reached such a degree that it began to

pose a threat to royal power. In an effort to gain the support of the priesthood, the kings generously gave gifts to the temples. As in the Eastern countries, so in Armenia, the priests had judicial power, had their own armed forces and participated in foreign and interstate policy.

ПЕТРОСЯН Лусине С. (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: vahe1996@mail.ru

ОБСУЖДЕНИЯ О ЖРЕЧЕСКИХ ИНСТИТУТАХ ДРЕВНЕЙ АРМЕНИИ И ПЕРЕДНЕЙ АЗИИ

В древнем мире одним из важнейших сословий общества было жречество. Оно было объединено вокруг храмов и играло огромную роль в общественно-политической и экономической жизни страны. Как в странах Древнего Востока и эллинистического мира, так и в Армении все боги имели посвящённые им храмы. Жрецы, служившие в этих храмах — слуги богов и посредники между людьми и богами — владели культивированными землями, рабами, а помимо идеологической деятельности занимались также ремёслами и торговлей.

В Древней Греции жрецы были исключительно представителями знатных родов. Их функциями были принесение жертв богам, молитвы за общество, забота о чистоте жертвоприношенных животных. Они носили белые одежды, белые сандалии, бело-красные головные уборы и имели длинные волосы. Были как жрецы, так и жрицы. В храме Асклепия занимались лечением больных, но не принимали тяжело больных и рожениц.

В Древнем Египте будущие жрецы, выбирая сферу своей деятельности, обязательно проходили длительные подготовительные курсы. Им нужно было освоить письмо и счет, а также изучить все детали, связанные с богами – от их имен, эпитетов и символов до всех обрядов и молитв. Преодолевший испытания получал право обрить волосы на голове и теле в знак обрядовой чистоты, надеть белые сандалии и пройти процедуру очищения, чтобы войти в храм как полноправное духовное лицо.

В Месопотамии жреческое сословие изначально формировалось в результате необходимости слежения за правильностью отправления культа. Со временем функции жрецов расширились, и они стали управлять "имуществом богов". Жрецы в Месопотамии совершали жертвоприношения, различные ритуалы, гадания, предсказания, изгнание злых духов, занимались торговлей и ростовщичеством. Они также овладевали сакральными знаниями в области астрономии, математики и музыки. Их положение в обществе было настолько высоким, что документы датировались началом правления жреца. Наряду с мужчинами-жрецами были и жрицы, имевшие свою иерархию. Для некоторых из них рождение детей было под запретом, однако, было возможность усыновления. Верховная жрица могла покупать у бед-

няков детей для храма. В сказаниях о Саргоне упоминается, что жрица, тайно родив его, отдала младенца течению реки. Иногда жрицы осмеливались посещать даже питейные заведения, за что расплачивались жизнью. В отличие от простых женщин, жрицы могли претендовать на наследство.

Примечательно, что в Каппадокии общество повиновалось жрецу больше, чем царю. В целом, жрец был второй по значимости фигурой после царя. Иногда цари и жрецы происходили из одного рода.

В Древнем Иране каждый жрец должен был знать еще и правила отождествления частей жертвы и космоса.

В Армении жрецы также происходили из царского рода, а порой сами цари были Верховными жрецами. Рост авторитета, экономической мощи и политического влияния жречества в Армении со временем достиг такой степени, что начал представлять угрозу царской власти. Стремясь заручиться поддержкой жречества, цари щедро преподнесли дары храмам. Как в странах Востока, так и в Армении, жрецы обладали судебной властью, имели собственные вооружённые отряды и участвовали во внешней и межгосударственной политике.

ՊԵՏՐՈՍՅԱՆ Սարգիս (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ vahe1996@mail.ru

ԵՐԿՈՒ ՊԱԿՏՅՈՒԻԿԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԵՐՈԴՈՏՈՍԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՇՈՒՐՋ

Հերոդոտոսի «Պատմության» մեջ Պակտյուիկա (Πακτυΐκη) անվանումով հիշատակվում են երկու տարբեր երկրներ: Դրանցից մեկը գտնվում էր Աքեմենյանների տերության ծայր արևելյան սահմանագլխին, իսկ մյուսը՝ Հայկական լեռնաշխարհում՝ XIII սատրապության կազմում: Արևելյան Պակտյուիկան նախկինում գտնվել էր հյուսիս-հնդկական Գանդհարա պետության կազմի մեջ, ապա դարձել Աքեմենյան տերության մաս: Հետագայում այն գտնվել է Սելևկյանների, իսկ հետո՝ հույն-բակտրիական թագավորության մեջ: Այդ ժամանակաշրջանում ընթացել էր Պակտյուիկայի բնակչության բակտրիացումը (իրանացումը), ինչի հետևանքով Պակտյուիկա և Բակտրիա երկրանունները հաճախ շփոթվել են: Այս նույնացումներն իրենց արտացոլումն են գտել նաև հունա-հռոմեական մատենագրության մեջ: Հայկական լեռնաշխարհի Պակտյուիկեի համարժեքը նրանց աշխատություններում համարվում է Բակտրիան:

Արևելքում տարածված Պակտյուիկա երկրանունը հին հնդկական ծագում ունի և, ամենայն հավանականությամբ, բխում է սանսկրիտի pakthā՛ բառից, որն ունի «հինգ» իմաստը: Ենթադրելի է, որ հին հնդիկները այդպես են անվանել այն հինգ ցեղերի միությունը, որը ժամանակին կազմել է Գանդհարայի մի մասը: Նկատելի է, որ նույն վայրերում՝ ներառյալ Բակտրիան, հետագայում հինգ յուեչժիական ցեղերի հիման վրա ձևավորվել է Քուշանների հինգ իշխանություններից բաղկացած թագավորությունը:

Մովսես Խորենացին, հիմնվելով հունալեզու աղբյուրների վրա, Զարավանդ (Զարուանդ) գավառը՝ պատմական Հայաստանի հարավ-արևելյան մասում ընկալել է որպես Բակտրիայի հարևան: Սակայն այս Բակտրիան չի կարող նույնացվել Մարաստանի (կամ, ընդհանրապես, Իրանի) հետ, քանի որ «Զարավանդ» (< հին հայ. *z-harav-and) անվանումը նշանակում է «հարավային երկիր», իսկ համանուն ուրարտական տեղանուն Zaranda-ն և Զարավանդը գտնվել են Ուրմիա լճի ավազանում՝ Մարաստանի հյուսիսում: Ուստի, «հարավ» նշանակությունը պետք է դիտել Հայկական լեռնաշխարհից տրված լինելու, հյուսիսից հարավ ընկալման համատեքստում: Իսկ այդտեղ նախաաքեմենյան շրջանում գտնվել է Ուրարտու պետությունը, այսինքն՝ հայկական Պակտյուիկան, ոչ թե արևելյան Բակտրիան:

Ուրարտու պետությունը ձևավորվել է մ.թ.ա. IX դարի առաջին կեսին՝ նաիրյան ցեղերի ռազմական միության հիման վրա: Ուրարտական թագավորների տիտղոսներում հիշատակվում են երեք նաիրյան երկրամասեր՝ Շուբրա, Բիայնա և Տուշպա: Այս երկրամասերն են կազմել Ուրարտուի՝ ի սկզբանե դաշնային կառուցվածք ունեցած պետության հիմքը: «Ուրարտու» անվանումը (Ur-arṭu) կազմված է հին հայ. ուրանալ բառի արմատից, որը ծագում է հնդեվրոպական *ōr- (<*or- խոսել, կանչել հիմքից): Նույն արմատը նկատվում է հուն. αρα «աղոթք, աղաչանք», «անեծք», լատ. ōrō/orare («աղաչել, խոսել») բառերում: Ur-arṭu-ի երկրորդ բաղադրիչը՝ -arṭ- հավանաբար կապված է արևի աստծու՝ Արեգակի և նրա արդարության խորհուրդն ընդգծող արդար (արդ-ար <art-) բառի հետ: Ուստի, Ur-arṭu անվանումը կարելի է հասկանալ որպես «արդար կարգ» կամ «սրբազան դաշինք»:

Եթե Պակտյուիկան նույնական է Ուրարտուի հետ, ապա հնարավոր է, որ այդ անվանումը ևս մեկնաբանվի որպես «սրբազան դաշինք»: Մեր դիտարկմամբ Պակտյուիկա/Πακτυῖκη տեղանունը տեղական (հայկական) ծագում չունի, այլ գալիս է Փոքր Ասիայի լիդիական մշակույթից: Այն, հավանաբար, Ուրարտու անվան իմաստային ազատ թարգմանությունն է: Լիդիայում հայտնի են նման արմատով հատուկ անուններ՝ ինչպես անձնանուն Պակտյուես-ը (Πακτυες), այնպես էլ գետանուն Պակտոլոս-ը (Πακτολος): pakt- հ.-ե. արմատը, թերևս, էտրուսկերենի միջնորդությամբ անցել է նաև լատիներեն, ուր բաղարկությամբ ձևավորվել են pactio («պայմանագիր») և pactum («համաձայնություն») բառերը: Էտրուսկները լինելով զարգացած մշակույթի կրողներ, զգալի ազդեցություն են գործել հռոմեացիների վրա: Ըստ Հերոդոտոսի, էտրուսկները եկել են Լիդիայից՝ որպես Տյուրեններ (Τυρρηνοί/Τυρσηνοί): Իսկ բուն լիդիացիները մ.թ.ա. VI դ. սկզբին հասել էին մինչև Ալիս/Հալիս գետը, որի այս կողմում գտնվում էր Հայկական լեռնաշխարհը՝ ներառյալ բուն Արմենիա/Արմինան և նրան միաձուլված՝ Հերոդոտոսի Պակտյուիկան՝ նախկին Ուրարտուն/Ուրաշտուն:

PETROSYAN Sargis (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: vahe1996@mail.ru

ABOUT HERODOTUS' REPORTS OF THE TWO PACTUICAS

In Herodotus' "History" two different countries are mentioned under the name Pactuica (Πακτυΐκη). One is located on the eastern edge of the vast Achaemenid Empire, and the other is grouped with Armenia (or the Armenians) in the XIII satrapies. The eastern region of Pactuica was once part of North Indian country of Gandhara, but was later incorporated into the Achaemenid Empire. After that, it came under the rule of the Selevkid and later the Greco-Bactrian kings. Then the Iranization (Bactrization) of the population of Pactuica occurred. As a result, the choronym of Pactuica began to merge with that of Bactria/Bactriana. This confusion was spread by the ancient Greeks and later by Greco-Roman historians, effecting the Armenian Pactuica as well.

As for the choronym of Pactuica in the East, among Indian-speaking and Iranian-speaking peoples, it has ancient Indian origins. It derives from the Sanskrit word pakthā́, meaning "five". The ancient Indians probably used this term to refer to the union of five Pactuya tribes, which were once part of the Indian state of Gandhara: it is interesting that in the same places, including Bactria, the Kushan kingdom was later created by five Yuezhi-Kushan tribes.

Movses Khorenatsi, based on Greek sources, considered Zaruand/Zaravand (in the south-east of historical Armenia) to be a neighboring region of Bactria. But this "Bactria" cannot be Media, (or, more widely, Iran), as the toponym Zaravand (<ancient Armenian *z-harav-and) means "southern country" or "country in the south". The point is that Zaravand and its eponymous Urartian cuneiform Zaranda were located in the basin of Lake Urmia, i.e. not in the south, but in the north of Media (and, of course, the whole of Iran). So, the "southern country" Zaravand received its name not from its southern location, but from the north, i.e. from the Armenian Highland. In pre-Achaemenid times there was the country of Urartu, i.e. Armenian Pactuica, not Bactria.

The Urartian state emerged in the first half of the IX century BC on the basis of a military alliance of Nairian tribes. Only three Nairian countries are mentioned in the titulature of Urartian kings - Shura, Biayna and Tushpa (cf. the city of Tushpa//Tushpian city). These Nairian countries were the founders of the originally federated state of Urartu. Its name exactly reflects this structure of unified state. The first component of the Urarṭu choronym (<*ur-arṭu) shares its origin with Armenian word uranal "to give up, to renounce" (ritual, ceremonial word), which comes from the I.-E. *ōr- (<*or- "to speak, call, summon", etc.). This Indo-European root also appears in the Greek word αρα "prayer, supplication", "cursed" and the Latin ōrō/orare ("to ask, to speak", etc.).

The name *Ur-arṭu, in its second component, is based on the epithet of the sun arṭ- the most ancient solar god of the Armenians. Let us recall that in Armenian mythology, the bearer of social order, and order in general, is the sun god Aregakn ardar: the epithet ardar

<ard-ar, where -ar is a suffix, and ard-//*arṭ- <I.-E. *art-. Thus the name of the Urartian state Ur-arṭu means “Sacred Order”, i.e., “Sacred Treaty”, “Sacred Union”.

If the countries of Pactuica and Urartu are identical, than the name Pactuica like the choronym Urarṭu may also mean “Sacred Treaty” or something similar. In our opinion, choronym Pactuica/Πακτυῖκη is not of local (Armenian) origin, but is an Asia Minor-Lydian free translation of the name Urarṭu. Probably, already in Lydian it meant “agreement, treaty”, since it is based on the root paḱt- (<*paḱ-t) of Indo-European origin. This is evident in such Lydian names as the onthroponym Pactues/Πακτυες and the potamonym Paktolos/Πακτολος in primordial Lydia (in western Asia Minor). It is likely that the root *pakt- entered Latin through the Etruscan language, where it was merged with similar native words. As a result, such Latin words as pactio “contract, agreement, condition” and pactum “agreement, contract, condition” appeared. It must be kept in mind that originally the more cultured Etruscans were influenced by the Romans, who appropriated many features of Etruscan culture. It is also known that certain features of Etruscan culture are similar to the culture of ancient Asia Minor. The ancestors of the Etruscans - Τυρρρηνοί/Τυρσηνοί (in Greek), Etrusci/Tusci (in Latin) - emigrated from there (according to Herdotus, it was from Lydia). In the early VI century B.C. the Lydians reached the river Halys/Alys, beyond which lay the Armenian Highlands. This region included not only the original Armenia (Armina<*Arme/Armi), but also Pactuica, the successor of the once mighty state of Pactuica/Urartu.

ПЕТРОСЯН Саргис (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: vahe1996@mail.ru

К СООБЩЕНИЯМ ГЕРОДОТА О ДВУХ ПАКТЮИКАХ

В “Истории” Геродота упоминаются две различные страны под названиями Пактюика (Πακτυῖκη). Одна из них упомянута на восточной окраине обширной Ахеменидской державы, а другой вместе с Арменией (или армянами) в XIII сатрапии. Восточная страна Пактюика когда-то находилась в составе североиндийской страны Гандхара, но потом была включена в состав Ахеменидской державы. После она была под господством Селевкидов, а потом Греко-Бактрийских царей. Тогда и происходила иранизация (бактризация) населения Пактюики. Вследствие чего хороним Пактюика начинали путать с хоронимом Бактрия/Бактриана. Эту путаницу древние греки, а затем греко-римские историографы распространяли также на армянскую Пактюику.

Что касается хоронима Пактюика на Востоке, среди индоязычных и ираноязычных народов, то она древнеиндийского происхождения. В ее основе лежит слово санскрита pakthā́ “пять”. Вероятно, древние индийцы так называли союз пяти пактюйских племен, который когда-то был в составе индийского государства Гандхара (интересно, что в этих же местах, включая Бактрию, позже со стороны пяти юэчжийских-кушанских племен было создано Кушанское царство).

Мовсес Хоренаци, следуя своим грекоязычним источникам, считал Заруанд/Зараванд (на юго-востоке исторической Армени) соседней с Бактрией областью. Но эта “Бактрия” не может быть Мидия, (или, шире - Иран), так как топоним Зараванд (<др. арм. *z-harav-and) означает “страна юга, страна на юге”. Дело в том, что Зараванд и ее одноименная урарт. клинописная Zaranda находились в бассейне Урмийского озера, т. е. не на юге, а на севере Мидии (и, разумеется, всего Ирана). Значит, “южная страна” Зараванд свое имя получила не с юга, а с севера, то есть со стороны Армянского нагорья. В доахеменидское время там находилась страна Урарту, т. е. армянская Пактюика, а не Бактрия.

Урартское государство возникло в I половине IX в до н. э. на основе военного союза Наирийских племен. В титулатуре царей Урарту упомянуты только три наирийские страны-Шура, Биайна и Тушпа (ср. город Тушпа//Тушпинский город). Упомянутые наирийские страны и являлись основателями первоначально федеративного государства Урарту. Название его отражает именно такое устройство собственного государства. Первый компонент хоронима Urarṭu (<*ur-arṭu) одного происхождения с корнем др. армянского слова уранал “отступаться, отрекаться” (ритуальное, обрядовое слово), который происходит из и.-е. *ōr- (<*or- “говорить, звать, призывать” и т. д.). Этот индоевропейский корень наличествует также в словах греческого языка αρα “молитва, мольба”, “проклятые”, латинского языка ōrō/orare (“просить, говорить”) и т. пр. В основе названия *Ur-arṭu в виде его второго компонента лежит эпитет солнца arṭ- древнейшего солнечного бога армян. Вспомним, что в армянской мифологии носителем социального порядка, и порядка вообще, это бог солнца Арегакн ардар: эпитет ардар < ард-ар, где -ар суффикс, а ard-//*arṭ- < и.-е. *art-. Таким образом, название Урартского государства Ur-arṭu означает “Священный порядок”, т. е. “Священный договор”, “Священный союз”.

Если страны Пактюика и Урарту тождественны, то возможно, что Пактюика подобно хорониму Урарту также означает “Священный договор” или вроде того. По нашему мнению, хороним Пактюика/Πακτυΐκη ни местного (армянского) происхождения, а малоазийско-лидийского. Он является свободным переводом названию Урарту. Наверно, уже в лидийском он означал “согласованность, договор”, т. к. в его основе лежит корень pak′t- (<*pak′-t) индоевропейского происхождения. Он проявляется в таких лидийских именах как онтропоним Пактюес/Πακτυες и потамоним Пактолос//Πακτολος в исконной Лидии (на западе Малой Азии). Вероятно, что корень *pakt- через этрусский язык проник в латинский, где был контаминирован со словами этого языка. В результате появились такие латинские слова, как pactio “договор, соглашение, условие” и pactum “соглашение, договор, условие”. Следует иметь в виду, что этруски, обладавшие более развитой культурой, оказывали влияние на римлян, которые присвоили многие черты этрусской культуры. Известно также, что определенные черты этрусской культуры сходны с культурой древней Малой Азии. Оттуда (по Геродоту, именно из Лидии) эмигрировали предки этрусков- Τυρρηνοί/Τυρσηνοί (по греч.), Etrusci/Tusci (по латин.). А лидийцы в начале VI в до н. э. достигли реки Алюс/Галис, за которой начиналась Армянское нагорье. Здесь находились не только исконная Армения (Армина<*Arme/Armi), но и Пактюика - наследник некогда могучего государства Пактюика/Урарту.

ՊՈՂՈՍՅԱՆ (ԽԱՉԲԱԿՅԱՆ) Գագիկ (Հայաստան)
«Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես
էլ. հասցե՝ gagikp@mail.ru

ԺԵ ԴԱՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ «ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ ԿԱՂՄՈՂԻ» ՀԵՏՔԵՐՈՎ

Նուռնուսի եկեղեցու ճակատային պատի մուտքից ձախ երկրորդ քարաշարքում գտնվող խաչապատկերի վերեւում՝ երրորդ քարաշարքում փորագրած փակագիրը միանշանակ վերծանվում է որպես Աստվածատուր: Հայկական վիմագրերում փակագիրը հանդես է գալիս V-VI դարերից, իսկ ձեռագիր մատյաններում՝ XII դարից: Ինչ՞ կարելի է ասել դրանից ավել: Կարծես թե ոչինչ: Սակայն պարզվում է, որ նույնատիպ փակագիր փորագրվել է մի քանի տեղ: Առայժմ այն հայտնաբերվել է ևս երկու տեղ՝ Կարենիսի եւ Գետարգելի վանքերում:

Եթե Կարենիսի վանքը գտնվում է Նուռնուս բնակավայրի հարևանությամբ՝ մոտ 4 կմ դեպի հյուսիս, Հրազդան գետի հոսանքով վերեւ՝ նույն կիրճում, ապա Գետարգելի վանքը գտնվում է Նուռնուսից մոտ 13,5 կմ հարավ, Հրազդանի կիրճից 3 կմ հեռավորությամբ:

Կարենիսի վանքի փակագիրը հայտնաբերվել է երկհարկ դամբարան-եկեղեցու վերին հարկի՝ այսինքն եկեղեցու, հյուսիսային պատին ներսից:

Գետարգելի վանքի փակագիրը հայտնաբերվել է ԺԳ դարի երկհարկ եկեղեցի-զանգակատան հյուսիսային պատին, արտաքուստ:

Երբ Նուռնուսի փակագրից հետո հայտնաբերվեց Գետարգելի փակագիրը, հեղինակը հաշվի առնելով, որ վիմագրերում առավել շատ են փակագրված անձնանունները, ենթադրում էր, որ վերոհիշյալ ԺԳ դարի եկեղեցիներն ստացել են նվիրատվություններ նույն մեկենասից, որի անունն էր, հավանաբար՝ ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ, ինչը լրացուցիչ ուսումնասիրությունների տեղիք էր տալիս: Այս Աստվածատուրին, ամենայն հավանականությամբ կարելի էր նույնացնել ոմն Ծատուր իշխանի հետ, որը նույն ժամանակահատվածում աշխույժ գործունեություն էր ծավալել Բջնիում: Ինքը Բջնիում և մոտակայքում գրված հիշատակարաններում հիշվում էր իբրև «նախարար, վերակացու և առաջնորդ քաղաքիս Բջնո»:

Սակայն Կարենիսի փակագիրը հայտնաբերելուց հետո ավելի հավանական դարձավ փակագիրը վերագրել եկեղեցիների պատերին նվիրատվական խաչապատկերներ փորագրող վարպետին: Բանն այն է, որ բոլոր երեք եկեղեցիներում փակագիրը գտնվում է նվիրատվական խաչապատկերների կողքին: Ավելին, Կարենիսում եւ Գետարգելում հայտնաբերված փակագրերի կողքին առաջին դեպքում փորագրված է՝ ԿՄՂ, իսկ երկրորդ դեպքում՝ ԿԶՄՂ, ինչը կարդացվում է որպես Կ[Ա]ԶՄ[Ո]Ղ: Ցավոք, Նուռնուսում փակագրի աջակողմյան քարը բացակայում է:

Ի դեպ, Ս. Բարխուդարյանի կարծիքով՝ Գետարգելի փակագիրը վերաբերում է ԺԷ դարին: Սակայն մեր համոզմամբ այս դրույթն անհիմն է: Ի ապացույց մեր կարծիքի ասենք, որ Առինջ գյուղի պատմական գերեզմանոցում կա երկու թվակիր արձանագիր խաչքար, որոնք կերտված են 1424 եւ 1455 թթ. Աստվածատուր վարպետի կողմից:

Այն, որ Առինջի խաչքարերի կերտողն ու վերընշված եկեղեցիների պատերի խաչապատկերներ կերտողն նույն Աստվածատուրն է, վկայում է 1455 թ. խաչքարի և Նուռնուսի ու Կարենիսի խաչերի ոճական նմանությունը, հատկապես հորիզոնական խաչաթևերի մեջ տեղադրված յուրահատուկ կետերը:

Քանի որ առաջին խաչքարի կապգրերով գրված արձանագրության մեջ հիշատակվում են նաև կազմող Աստվածատուրի ծնողները՝ ԿԱՆԿՆԵՑԱԻ Խ[Ա]ՉՍ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒ/ԹԻ[ԻՆ] ԽՈՑԱԴԵՂԻՆ: Կ[Ա]ՉՄ[Ո]Ղ Ա[ՍՏՈՒԱ]ԾԱՏՈՒՐ ԵՒ ԾՆՈՂՍՆ ԻՒՐ / ՅԻԾ[Ե]Ց[Է]Ք, ԹՎ. ՊՀԳ (1424), կարելի է ենթադրել, որ Աստվածատուրն առնջեցի էր:

POGHOSYAN (KHAGHBAKYAN) Gagik (Armenia)
«Region and the world» scientific-analytical journal
e-mail: gagikp@mail.ru

IN THE FOOTSTEPS OF THE NEWLY DISCOVERED 15TH CENTURY CARVER "COMPILER ASTVATSATUR"

In the village of Nurnus, on the facade wall of the church to the left of the entrance above the cross-shaped image, there is an inscription with a cryptogram, which is clearly deciphered as Astvatsatur.

The first Armenian cryptograms date back to the 5th-6th centuries, and are found in manuscripts from the 12th century. What else can be said? It seems to be nothing. However, it turns out that the cryptogram from Nurnus was carved in several places. So far, it has been discovered in two places: in the Karenis and Getargel monasteries.

If the Karenis monastery is located in the vicinity of the Nurnus settlement, about 4 km to the north, upstream of the Hrazdan River, in the same gorge, then the Getargel monastery is located about 13.5 km to the south of Nurnus, 3 km from the Hrazdan gorge.

The cryptogram of the Karenis monastery was discovered on the upper floor of a two-story burial church, that is, on the northern wall of the church from the inside. The Getargel Monastery cryptogram was discovered on the northern wall of a two-story church-bell tower from the 13th century from the outside.

When, after the discovery of the second cryptogram in Getargel, the author assumed that the above-mentioned 13th-century churches had received donations from the same donor, whose name was ASTVATSATUR. This assumption gave rise to additional research. It turned out that Astvatsatur could most likely be identified with a certain prince Tsatur, who was active in the Bjni monastery during the same period. He is mentioned in the chronicles written in Bjni and nearby as "the prince, overseer and leader of the city of Bjno".

However, after the discovery of the third cryptogram in Karenis, it was more likely to assume that this was the name of the carver of the sacrificial crosses on the walls of the churches. The fact is that in all three churches the cryptogram is located next to the sacrificial crosses. Moreover, in the first case, next to the cryptograms found in Karenis and Getargel, the

inscription is carved: KMH, and in the second case KZMH, which is read as K[A]ZM[O]H. Unfortunately, in Nurnus, the stone on the right side of the inscription is missing.

By the way, according to S. Barkhudaryan, the Getargel inscription dates back to the 17th century. However, in our opinion, this statement is unfounded. We can firmly assume that in the historical cemetery of the village of Arinj there are two dated khachkars with inscriptions that were made in 1424 and 1455 by varpet Astvatsatur.

The fact that the creator of the khachkars in Arinj and the creator of the crosses on the walls of the above-mentioned churches is the same Astvatsatur is evidenced by the fact that in 1455 the stylistic similarity of the khachkar and the sacrificial crosses of Nurnus and Karenis, especially the unique dots placed in the horizontal wings of the crosses.

Since the inscription on the khachkar of 1424 mentions the parents of the carver Astvatsatur, it is logical to assume that he was from Arinj.

ПОГОСЯН (ХАХБАКЯН) Гагик (Армения)
«Регион и мир» научно-аналитический журнал
e-mail: gagikp@mail.ru

ПО СЛЕДАМ НОВОНАЙДЕННОГО РЕЗЧИКА XV В. «СОСТАВИТЕЛЯ АСТВАЦАТУРА»

В селении Нурнус, на фасадной стене церкви слева от входа над крестообразным изображением имеется надпись с криптограммой, которая однозначно расшифровывается как Аствацатур.

Первые армянские криптограммы датируются V-VI вв., а в рукописях встречаются с XII в. Что еще можно сказать? Вроде бы ничего. Однако оказывается, что криптограмма из Нурнуса была высечена в нескольких местах. Пока что она обнаружена в двух местах: в монастырях Каренис и Гетаргел.

Если монастырь Каренис находится в окрестностях поселения Нурнус, примерно в 4 км к северу, выше по течению реки Раздан, в том же ущелье, то монастырь Гетаргел находится примерно в 13,5 км к югу от Нурнуса, в 3 км от ущелья Раздан.

Криптограмма монастыря Каренис была обнаружена на верхнем этаже двухэтажной церкви-усыпальницы, то есть на северной стене церкви изнутри.

Криптограмма монастыря Гетаргел была обнаружена на северной стене двухэтажной церкви-колокольни XIII века снаружи.

Когда после обнаружения второй криптограммы в Гетаргеле, автор предположил, что вышеупомянутые церкви XIII века получили пожертвования от одного и того же дарителя, имя которого было АСТВАЦАТУР. Это предположение дало повод для дополнительных исследований. Выяснилось, что Аствацатур, скорее всего, может быть отождествлен с неким князем Цатуром, который действовал в монастыре Бжни в тот же период. Он упоминается в летописях, написанных в Бжни и поблизости как «князь, смотритель и предводитель города Бжно».

Однако после обнаружения третьей криптограммы в Каренисе, более вероятно было предположить, что это имя резчика жертвенных крестов на стенах церквей. Дело

в том, что во всех трех церквях криптограмма расположена рядом с жертвенными крестами. Причем в первом случае рядом с криптограммами, обнаруженными в Каренисе и Гетаргеле, высечена надпись: КМХ, а во втором случае КЗМХ, что читается как К[А]ЗМ[О]Х. К сожалению, в Нурнусе камень с правой стороны надписи отсутствует. Кстати, по мнению С. Бархударяна, надпись Гетаргела относится к XVII веку. Однако, по нашему мнению, это утверждение необоснованно. В доказательство нашего мнения скажем, что на историческом кладбище села Ариндж имеются два датированных хачкара с надписями, которые были сделаны в 1424 и 1455 годах варпетом Аствацатуром.

Тот факт, что создатель хачкаров в Ариндже и создатель крестов на стенах вышеупомянутых церквей является одним и тем же Аствацатуром, свидетельствует то, что в 1455 году стилистическое сходство хачкара и жертвенных крестов Нурнуса и Карениса, особенно уникальные точки, размещенные в горизонтальных крыльях крестов.

Так как в надписи на хачкаре 1424 г., упоминаются родители резчика Аствацатура, то логично предположить, что он был родом из Аринджа.

ՍԱՀԱԿՅԱՆ Վերա (Հայաստան)
«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ
էլ. հասցե՝ verasahakyan@gmail.com

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ (1894–1896 ԹԹ.)՝ ԽՐԻՄՅԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և Հայոց ցեղասպանության հետևանքով առաջացած աշխարհասփյուռ հայ գաղթականության թեման՝ մասնավորապես գաղթականների տեղավորման, ընդունման, կարիքների գնահատման և նոր ձևավորված գաղթավայրերի վերաբերյալ, պատմագրության մեջ ուսումնասիրությունների բավական լայն շրջանակ ունի: Սակայն երբ խոսքը վերաբերում է համիդյան կոտորածների ընթացքում Արևելյան Հայաստան գաղթածների խնդրին, կարելի է վստահաբար ասել, որ թեման գրեթե լուսաբանված չէ: Հատկապես քիչ ուսումնասիրված են գաղթականների տեղաբաշխման քաղաքականությունը, կարիքների գնահատումը, նոր միջավայրին հարմարվելու գործընթացը, ինչպես նաև Հայ Առաքելական եկեղեցու և աշխարհիկ ներկայացուցիչների միջնորդական դերակատարումը:

Վերջին տարիներին մեր ուսումնասիրությունը կենտրոնացած է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատե-

նադարանում պահվող Մկրտիչ Ա. Խրիմյան (1893–1907) կաթողիկոսի արխիվի համակողմանի ուսումնասիրման վրա: Սա չուսումնասիրված և նախկինում չհրապարակված, սկզբնաղբյուրային մեծ արժեք ունեցող ծավալուն արխիվային հավաքածու է, որն ընդգրկում է ավելի քան 8000 նամակ, գրված՝ 1893–1907 թվականներին:

Նամակների հեղինակները մեծամասամբ Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող հայերն են: Նամակագիրների թվում են տառաճանաչ քաղաքացիներ, քահանաներ, տանուտերեր, և ըստ ձեռագրաբանական քննության՝ «հատուկ նամակագիրներ», որոնք հանդես են եկել որպես միջնորդներ, և համագործակցելով Մայր Աթոռի հոգևորականության հետ, ստացել են թուղթ ու գրիչ, գրի առել նամակագրի թելադրած ուղերձը և հանձնել հասցեատիրոջը՝ Ամենայն հայոց հայրապետին:

Վավերագրերի ուսումնասիրությունը բացահայտում է բացառիկ մանրամասներ՝ վկայելով, թե որքան կանոնակարգված, հետևողական և նվիրված աշխատանք է իրականացվել Խրիմյան Հայրիկի և Էջմիածնի հոգևորականության կողմից: Գաղթականների ընդունման, ժամանակավոր կեցության ապահովման, տեղաբաշխման, կարիքների գնահատման, սոցիալական, հոգևոր և հոգեբանական աջակցության ոլորտները հստակ արձանագրված են նամակներում:

Խրիմյան Հայրիկին ուղղված նամակներում դիմողները նրան պատկերացնում են ոչ միայն որպես հոգևոր առաջնորդ, այլև որպես վերջին հույս, հաճախ վկայելով. *«Վերևում Աստված է, իսկ ներքևում՝ Դո՛ւ ես, Վեհափա՛ռ»*:

Նամակները արժեքավոր տեղեկություններ են փոխանցում եկեղեցու և աշխարհիկ կառույցների համագործակցության մեխանիզմների մասին՝ տեղաբաշխման, կարիքների գնահատման և սոցիալական աջակցության կազմակերպման համատեքստում:

Հիմնվելով այս առաջնային ու հավաստի աղբյուրների քննության վրա՝ զուգակցված տպագիր և արխիվային նյութերով, մեր զեկուցումը նպատակ ունի ներկայացնել 19-րդ դարի վերջին Արևելյան Հայաստան գաղթած հայ գաղթականների վերաբնակեցման ուղիները, նոր վայրերն ու պայմանները, ինչպես նաև ազգապահպանության այն հայեցակարգերը, որոնք մշակվել և իրականացվել են հայ հոգևոր դասի կողմից՝ քաղաքական ճգնաժամային պայմաններում:

Զեկուցման մեջ ներկայացվում են 1894–1896թթ. Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցած վերաբնակեցման մի շարք դրվագներ՝ հիմնված Խրիմյանին ուղղված ավելի քան 100 նամակի վերլուծության վրա: Հատուկ ուշադրության են արժանանում տեղական համայնքների արձագանքները՝ գաղթականներին ընդունելու, կեցության, օրվա հաց կամ աշխատանք ապահովելու պատրաստակամության դրսևորումները:

Նամակներից շատերում հանդիպում ենք համայնքային միջնորդագրերի («Վկայագիր» վերնագրով փաստաթղթեր), որոնք համայնքների կողմից կազմված տեղեկագրեր են՝ ուղղված Սուրբ Էջմիածնին՝ հաստատելու տվյալ գաղթականի կարիքավոր լինելը և օգնություն տրամադրելու անհրաժեշտությունը: Այս վկայագրերը հաճախ կազմվում էին Ալեքսանդրապոլի տարբեր գյուղերի քահանաների, տանուտերերի, գրագետ ու հեղինակություն վայելող քաղաքացիների կողմից՝ կից ունենալով նաև մի քանի էջի հասնող ստորագրություններ ու քահանայական կնիքներ:

Ուսումնասիրությունը քննում է տարբեր գյուղական բնակավայրերի վերաբերմունքի շերտերը՝ պատրաստակամությունից մինչև գործնական աջակցություն, ինչպես նաև անդրադառնում գաղթականների ինտեգրման ընթացքին:

Ներկայացվող զեկուցումը պարունակում է արժեքավոր տեղեկություններ ոչ միայն գաղթականների նախկին բնակավայրերի, այլև նրանց նոր վերաբնակեցման վայրերի վերաբերյալ՝ ներառյալ բաշխվածության խնդիրները, ընտանիքների քանակը, գրագիտության մակարդակը, հարմարվողականությունը, աշխատունակությունը և այլ բազմաթիվ հարակից հարցեր:

SAHAKYAN Vera (Armenia)
"Matenadaran" Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts
e-mail: verasahakyan@gmail.com

CERTAIN ASPECTS OF REFUGEE RESETTLEMENT IN THE ALEXANDRAPOL DISTRICT (1894–1896): BASED ON LETTERS ADDRESSED TO CATHOLICOS KHRIMIAN

During the years of the First World War and in the aftermath of the Armenian Genocide, the topic of the global Armenian refugee crisis—particularly the issues of refugee resettlement, reception, assessment of needs, and the formation of new diasporic communities—has been the subject of extensive historical research. However, when it comes to the refugees who fled to Eastern Armenia during the Hamidian massacres, it can be stated with certainty that the topic has received very limited scholarly attention. In particular, the policies of refugee distribution, the assessment of needs, the adaptation to new environments, as well as the mediating role of the Armenian Apostolic Church and secular representatives remain largely unexplored.

In recent years, our research has focused on the comprehensive study of the archive of Catholicos Mkrtich Khrimian (1893–1907), preserved at the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran). This is a vast, previously unexamined and unpublished archival collection of exceptional primary-source value, comprising more than 8,000 letters written between 1893 and 1907.

The majority of these letters were written by Armenians living under Ottoman rule. Among the authors are literate villagers, priests, village headmen (***tanuter***), and—in some cases—so-called "professional letter writers" who have been identified through paleographic analysis as scribes acting as intermediaries. These scribes, in cooperation with the clergy of the Mother See of Holy Etchmiadzin, received writing materials and faithfully recorded the dictated messages, delivering the completed letters to their intended recipient: the Catholicos of All Armenians.

The study of these documents reveals exceptional details, demonstrating how structured, consistent, and dedicated the efforts of Khrimian Hayrik and the clergy of Etchmiadzin were in receiving, assisting, and assessing the needs of the refugees. The

letters provide insights into temporary housing arrangements, allocation policies, and the provision of social, spiritual, and psychological support.

In their letters, petitioners addressed Khrimian not only as a spiritual leader but as their final hope and true advocate, often affirming: *"Above is God, and below—You, Your Holiness."* These letters also offer valuable information about the mechanisms of cooperation between the Church and secular institutions in the context of refugee settlement, needs assessment, and the organisation of material assistance.

Based on the analysis of these primary and credible sources, supplemented by printed and archival materials, this paper aims to reconstruct the history of the resettlement of Armenian refugees who arrived in Eastern Armenia at the end of the nineteenth century. It explores their paths of migration, the conditions they faced in their new environments, and the concepts of national preservation formulated and implemented by the Armenian clergy—especially by the Catholicos of All Armenians—under conditions of political crisis and statelessness.

This report presents several episodes of refugee resettlement in the Alexandrapol district during the years 1894–1896, based on the analysis of more than 100 letters addressed to Catholicos Khrimian. Special attention is paid to the responses of local communities: their willingness to receive refugees, provide shelter, offer daily sustenance, or help secure employment.

Many of these letters include community-issued attestations (documents titled "Certificate" [*Vkayagir*], which were official statements addressed to Etchmiadzin to confirm a refugee's need and request assistance. These attestations were often prepared by priests, village headmen, and literate and respected members of the community, typically accompanied by multiple pages of signatures and ecclesiastical seals.

The study examines the layers of local attitudes across different villages—ranging from expressions of willingness to practical aid—and addresses the process of refugees' integration into local life.

The presented material provides valuable data not only about the refugees' places of origin but also about their new settlements in the Alexandrapol region, including issues of distribution, household size, literacy, adaptability, employability, and a range of related challenges.

СААКЯН Вера (Армения)
"Матенадаран" Научно-исследовательский институт древних рукописей имени Месропа Маштоца
e-mail: verasahakyan@gmail.com

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ РАЗМЕЩЕНИЯ БЕЖЕНЦЕВ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ (1894–1896 ГГ.) НА ОСНОВЕ ПИСЕМ, АДРЕСОВАННЫХ КАТОЛИКОСУ ХРИМЯНУ

В историографии достаточно широко изучена тема армянской диаспоры, возникшей в результате Первой мировой войны и Геноцида армян, особенно в аспекте размещения, приёма, оценки потребностей беженцев и формирования новых поселе-

ний. Однако в случае с армянами, переселившимися в Восточную Армению в период Хамидийских резней, можно с уверенностью утверждать, что эта тема практически не освещена. В частности, слабо изучены политика размещения, оценка потребностей, адаптация к новому окружению, а также посредническая роль Армянской Апостольской Церкви и светских представителей.

В последние годы наше исследование было сосредоточено на комплексном изучении архива католикоса Мкртича I Хримяна (1893–1907), хранящегося в Научно-исследовательском институте древних рукописей имени Месропа Маштоца — Матенадаране. Это обширный архивный фонд, представляющий собой неиспользованный и ранее не опубликованный первоисточник, включающий более 8000 писем, написанных в 1893–1907 годах.

Большинство авторов писем — армяне, находившиеся под властью Османской империи. Среди них — грамотные граждане, священники, деревенские старосты (***тануtер***), а также, по результатам палеографической экспертизы, так называемые «специальные писцы», действовавшие как посредники. Эти писцы, сотрудничая с духовенством Святого Эчмиадзина, получали бумагу и чернила, записывали продиктованные обращения и передавали готовые письма адресату — Всецарскому католикосу всех армян.

Анализ этих документов раскрывает уникальные подробности и свидетельствует о том, насколько организованной, последовательной и преданной была работа Хримяна Айрика и духовенства Эчмиадзина. В письмах подробно отражаются вопросы приёма беженцев, обеспечения временного проживания, размещения, оценки нужд, а также социальной, духовной и психологической поддержки.

В обращениях к Хримяну Айрику авторы писем представляли его не только как духовного лидера, но и как последнюю надежду. Часто они писали: «На небе — Бог, а на земле — Ты, Владыко».

Письма содержат ценные сведения о механизмах сотрудничества между церковными и светскими структурами — в контексте размещения, оценки потребностей и организации социальной поддержки.

Основываясь на этих первичных и достоверных источниках, в сочетании с печатными и архивными материалами, настоящее исследование ставит своей целью представить историю переселения армянских беженцев, прибывших в Восточную Армению в конце XIX века, новые места их проживания и условия жизни, а также концепции национального самосохранения, разработанные и реализованные армянским духовенством в условиях политического кризиса.

В докладе представлены отдельные эпизоды переселения беженцев в Александропольском уезде в 1894–1896 гг. — на основе анализа более чем 100 писем, адресованных католикосу Хримяну. Особое внимание уделено реакции местных сообществ: готовности принять беженцев, обеспечить жильём, питанием или работой.

Во многих письмах встречаются общинные ходатайства — документы под названием «Свидетельство» («Վկայագիր»), направленные в Эчмиадзин для подтверждения бедственного положения конкретного беженца и необходимости оказания помощи. Эти свидетельства составлялись священниками, старостами, грамотны-

ми и уважаемыми жителями деревень Александропольского уезда, часто с приложением нескольких страниц подписей и печатей.

Исследование выявляет различные уровни отношения сельских населённых пунктов к переселенцам—от проявленной готовности до конкретных шагов по оказанию помощи, а также рассматривает процесс включения беженцев в местную жизнь.

Доклад содержит ценные сведения как о прежних местах проживания беженцев, так и о новых местах их поселения в Александропольском уезде — включая вопросы распределения, численности семей, уровня грамотности, адаптации, трудоспособности и других важных аспектов.

ՍԱՐԳՍՅԱՆ Սուրեն (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ
էլ. հասցե՝ sargsyansuren@yandex.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԱԽԿԻՆՈՒՄ ԵՎ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Ժամանակակից հարափոփոխ աշխարհում հասարակություններն ու դրանց սոցիալական կազմը արմատապես փոխվել են, հեշտ անցանելի են դարձել նաև դրանց միջև եղած սահմանազծերը: Նոր տեխնոլոգիաների և տնտեսվարման ձևերի փոփոխությունների արդյունքում մարդիկ շատ արագ հարստանում են, երբեմն էլ՝ սնանկանում: Նաև տևական ժամանակ է, որ աշխարհի զարգացած երկրներում պրոլետարներ և ընչազուրկ գյուղացիներ այլևս չկան: Փոխվել են նաև կուսակցությունների առջև ծառացած խնդիրները: Նրանք մեր օրերում հիմնականում հետապնդում են մեկ խնդիր՝ հասնել իշխանության: Գաղափարախոսական տարբերությունները և մարդկանց սոցիալական վիճակն այժմ այնքան էլ որոշիչ չեն դառնում և նույն կուսակցության մեջ հայտնվում են միանգամայն տարբեր խավերի ներկայացուցիչներ: Այսինքն, մերօրյա կուսակցություններին ավելի բնորոշ են նույն նպատակի շուրջ համախմբված, թիմային շահերով առաջնորդվելու և իշխանության ձգտելու հատկանիշները:

XIX դարի վերջին ստեղծվեցին Արմենական, Հնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները: Չնայած իրենց ծրագրերում տեղ գտած ժամանակին մոդային գաղափարախոսական որոշ ձևակերպումներին, իրենց ավելի քան հարյուրամյա գործունեության ընթացքում, չնչին բացառություններով, նրանք ավելի շատ ազատագրական պայքարի ղեկավարություն, ազգապահպանություն և նմանատիպ այլ առաքելություններ են իրականացրել, քան դասական չափանիշներով՝ քաղաքական: Անկախության տարիներին այդ ավանդականների կողքին հիմնվեցին մի շարք նոր կուսակցու-

թյուններ, որոնց թիվն այսօր 80-ից ավելի է: Ժամանակի ընթացքում այս կամ այն կուսակցության պատմությանը նվիրված աշխատություններ մեզանում գրվել են: Սակայն դասականների հետ համեմատած դրանց առանձնահատուկ բնույթի, գործունեության, որդեգրած ծրագրերի ու նպատակների համեմատության մասին ընդհանրացնող ուսումնասիրություն ցարդ գրված չէ: Մեր զեկուցման մեջ ընդհանուր գծերով ներկայացրել ենք հարցի հիմնադրույթները և փորձել ենք պատասխանել մի շարք պարզաբանման կարիք ունեցող հարցերի:

SARGSYAN Suren (Armenia)
Institute of History of NAS RA
e-mail: sargsyansuren@yandex.ru

ARMENIAN PARTIES IN THE PAST AND PRESENT

In today's rapidly changing world, society and its social structure have undergone significant transformations and the boundaries between them become more easily crossed. This has been facilitated by new technologies and changes in farming practices, which have led to some people becoming rich very quickly and others going bankrupt. It has also been a long time since there are no proletarians and destitute peasants in the developed countries of the world. The problems faced by political parties have also changed. Currently, they mainly pursue one goal - to achieve power. Ideological differences and the social status of people are currently not crucial, and representatives of completely different strata of society find themselves in the same party. In other words, modern parties are more characterized by the features of cohesion around the same goal, guided by team interests and striving for power.

At the end of the 19th century, the parties "Armenakan", "Gnchakyan" and "Dashnaktsutyun" were founded. Despite some fashionable ideological formulations of the time that found a place in their programs, during their more than a century of activity, with rare exceptions, they carried out more missions in leading the liberation struggle, preserving the nation and similar tasks than political ones by classical standards. During the years of independence, along with these traditional parties, a number of new parties were founded, the number of which now exceeds 80. Over time, works were written devoted to the history of this or that party. However, in comparison with classical parties, a general study on their characteristics, activities, adopted programs and goals has not yet been written. This report presents the main provisions of the issue under study and attempts to answer a number of questions requiring clarification.

САРГСЯН Сурен (Армения)
Институт истории НАН РА
e-mail: sargsyansuren@yandex.ru

АРМЯНСКИЕ ПАРТИИ В ПРОШЛОМ И НАСТОЯЩЕМ

В современном меняющемся мире радикально изменились общества и их социальный состав, легко проходимыми стали границы между ними. В результате новых технологий и изменений в способах ведения хозяйства люди очень быстро богатеют, а иногда и разоряются. Прошло так же достаточно времени с тех пор, как в развитых странах мира нет пролетариев и обездоленных крестьян. Изменились и проблемы, с которыми сталкиваются политические партии. В настоящее время они в основном преследуют одну цель - добиться власти. Идеологические различия и социальное положение людей в настоящее время не имеют решающего значения и в одной и той же партии оказываются представители совершенно разных слоев общества.

То есть, сплоченность вокруг одной и той же цели, руководствующаяся командными интересами и стремящаяся к власти характеристика, более присущая современным партиям: другими словами, для современных партий более характерны черты сплоченности вокруг одной и той же цели, руководствоваться командными интересами и стремиться к власти.

В конце XIX века были созданы партии «Арменакан», «Гнчакян» и «Дашнакцутюн». Несмотря на некоторые модные в свое время идеологические формулировки, нашедшие место в их программах, за свою более чем столетнюю деятельность они, за редкими исключениями, выполняли больше миссий по руководству освободительной борьбой, сохранению нации и подобных задач, чем политических по классическим меркам. В годы независимости наряду с этими традиционными партиями был основан ряд новых партий, число которых сегодня превышает 80. Со временем были написаны труды, посвященные истории той или иной партии. Однако, по сравнению с классическими партиями, обобщающее исследование об их особенностях, деятельности, принятых программ и целей еще не написано. В докладе представляются основные положения исследуемого вопроса и сделана попытка ответить на ряд вопросов, требующих разъяснений.

ՍՏԵՓԱՆՅԱՆՑ Ստեփան (Հայաստան)
Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Երևանի մասնաճյուղ
Ռուս-հայկական համալսարան
էլ. հասցե՝ stepan.stepanyants@mail.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿԱՎԿԱՍՈՒՄ ՄՂՎԱԾ ՄԱՐՏԵՐԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Հայրենական մեծ պատերազմին, Խորհրդային Միության բոլոր ժողովուրդների հետ միասին, մասնակցել են նաև հայկական ազգային հրաձգային դիվիզիաները, այդ թվում՝ 89-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ, 261-րդ և 76-րդ դիվիզիաները: Դրանք բոլորը մասնակցել են Հյուսիսային Կովկասի պաշտպանական և հարձակողական մարտերին, ինչպես նաև Ղրիմում պաշտպանական և ազատագրական մարտերին:

Կերչ-Թեոդոսիա դեսանտային գործողությանը մասնակցել է 390-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Ա. Վինոգրադովի, այնուհետև գնդապետ Սիմեոն Զաքյանի հրամանատարությամբ: Ծանր ու արյունալի մարտերում զոհվել է գնդապետ Ս. Զաքյանը: Կերչի մոտ մահացու վիրավորվել է 390-րդ դիվիզիայի հրամանատար գնդապետ Բաբայանը:

1941 թ. դեկտեմբերի մեջ Երևանում ձևավորվել է 89-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Ս. Զաքյանի, այնուհետև գնդապետ Վ. Սարգսյանի հրամանատարությամբ: 89-րդ հրաձգային դիվիզիան մասնակցել է Գոռգնի-Ստարե Բրագունի-Չերվլեննայա-Կեմ Յուրտ հատվածի մարտերին: Այնուհետև դիվիզիան մասնակցել է արյունալի մարտերին Մալգոբեկի մոտ: 1943 թ. փետրվարից դիվիզիայի հրամանատար է նշանակվել գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Նվեր Սաֆարյանը, ով ղեկավարել է նաև Բեռլինի ազատագրական գործողությանը: Դիվիզիան մասնակցել է նաև Նովոռոսիյսկի ազատագրմանը, Տամանյան թերակղզու հերոսական մարտերին, որոնցից հետո այն ստացել է «Թամանյան» պատվավոր անվանումը և պարգևատրվել Կարմիր Աստղի շքանշանով: Դիվիզիայի շատ զինվորներ պարգևատրվել են շքանշաններով և մեդալներով:

409-րդ հայկական հրաձգային դիվիզիան ձևավորվել է 1941թ. հունիսի 28-ին գնդապետ (հետագայում գեներալ-մայոր) Մ. Զապորոժինի հրամանատարությամբ: Այնուհետև դիվիզիան ղեկավարել են գնդապետներ Վ. Գլադկովը, Մ. Դոբրովոլսկին, Գ. Սորոկինը, իսկ 1944 թ.-ից՝ գեներալ-մայոր Ե. Գրեչանինը: Դիվիզիան մասնակցել է Հյուսիսային Կովկասի մարտերին, Մոզդոկի մոտ տեղի ունեցած մարտերին, ինչպես նաև Կուբանի ազատագրմանը, հետագայում՝ Ուկրաինայի, Մոլդովայի, Ավստրիայի ազատագրմանը: Դիվիզիան հասել է մինչև Չեխոսլովակիա, մասնակցելով Պրահայի՝ Չեխոսլովակիայի մայրաքաղաքի ազատագրմանը: 1944 թ. հունվարի 8-ին դիվիզիային շնորհվել է «Կիրովոգրադյան» պատվավոր կոչումը:

1941 թ. հոկտեմբերի 19-ին ձևավորվել է 408-րդ հայկական հրաձգային դիվիզիան՝ գնդապետ Պ. Կիցուկի հրամանատարությամբ: Դիվիզիան մասնակցել է Տուապսեի և Գելենջիկի համար արյունալի մարտերին՝ կրելով ծանր կորուստներ:

Դիվիզիան մի քանի անգամ տրոհվել է, որի հետևանքով՝ թուլացել և նրա ստորաբաժանումները անցել են և միավորվել այլ ռազմական կազմավորումներին:

1941 թ. ձևավորվել է 261-րդ հայկական հրաձգային դիվիզիան, որը մասնակցել է Մայկոպի շրջանում տեղի ունեցած երկարատև արյունալի մարտերին:

Ավելի վաղ՝ դեռևս 1920-ական թվականների սկզբին, ձևավորվել էր 76-րդ հայկական լեռնային հրաձգային դիվիզիան, որը տեղակայվել էր Իրանում՝ դաշնակից երկրների կողմից լենդ-լիզով ուղարկվող օգնության ճանապարհները պաշտպանելու համար, այնուհետև մասնակցել է հերոսական Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերին, Բելառուսիայի և Բալթյան երկրների ազատագրմանը:

Անհրաժեշտ է նշել, որ բոլոր հայկական հրաձգային դիվիզիաները Մեծ Հայրենական պատերազմի ողջ ընթացքում մասնակցել են հերոսաբար և անձնվիրաբար՝ մինչև հաղթական ավարտը:

TEPANYANTS Stepan (Armenia)
Branch of Lomonosov Moscow State University in Yerevan
Russian-Armenian University
e-mail: stepan.stepanyants@mail.ru

PARTICIPATION OF ARMENIAN MILITARY FORMATIONS IN THE BATTLES OF THE NORTH CAUCASUS DURING THE GREAT PATRIOTIC WAR

During the Great Patriotic War, alongside all the peoples of the Soviet Union, Armenian national rifle divisions also took part, including the 89th, 390th, 408th, 409th, 261st, and 76th divisions. All of them participated in defensive and offensive battles in the North Caucasus, as well as in defensive and liberation battles in the Crimea.

The 390th Armenian Rifle Division, under the command of Colonel A. Vinogradov and later Colonel Simeon Zakiyan, took part in the Kerch-Feodosia landing operation. In the fierce and bloody battles, Colonel S. Zakiyan was killed. Near Kerch, the commander of the 390th Division, Colonel Babayan, was mortally wounded.

In December 1941, the 89th Armenian Rifle Division was formed in Yerevan under the command of Colonel S. Zakiyan, and later Colonel V. Sarkisyan. The 89th Rifle Division took part in the fighting in the Grozny-Starie Braguny-Chervlyonnaya-Kem-Yurt area. Later, the division participated in heavy fighting near Malgobek. From February 1943, the division was commanded by Colonel (later Major General) Nver Safaryan, who also commanded it during the Berlin liberation operation. The division also participated in the liberation of Novorossiysk and in the heroic battles for the liberation of the Taman Peninsula in the Caucasus, after which it was named the "Taman" Division and awarded the Order of the Red Star. Many soldiers of the division were decorated with orders and medals.

The 409th Armenian Rifle Division was formed on June 28, 1941, under the command of Colonel (later Major General) M. Zaporozhin. Later, the division was commanded by Colonels V. Gladkov, M. Dobrovolsky, G. Sorokin, and from 1944 by Major General E. Grechany. The division took part in the battles for the North Caucasus, in the battles near Mozdok, as well as in the liberation of Kuban, and later in the liberation of Ukraine, Moldova,

and Austria. It reached Czechoslovakia, participating in the battles for the liberation of Prague, the capital of Czechoslovakia. On January 8, 1944, it was awarded the honorary title "Kirovograd".

On October 19, 1941, the 408th Armenian Rifle Division was formed under the command of Colonel P. Kitsuk. The division took part in bloody battles for Tuapse and Gelendzhik, suffering heavy losses. The division was repeatedly split and weakened, and its units were reassigned to other military formations.

In 1941, the 261st Armenian Rifle Division was formed, which took part in prolonged and bloody battles in the Maykop area.

Earlier, in the early 1920s, the 76th Armenian Mountain Rifle Division had been formed. It was sent to Iran to protect the routes along which Lend-Lease aid from the Allied countries was delivered, and later participated in the heroic battles of Stalingrad and Kursk, as well as in the liberation of Belarus and the Baltic states.

It should be noted that all Armenian rifle divisions took part heroically and selflessly in the Great Patriotic War from its beginning to its victorious end.

СТЕПАНЯНЦ Степан (Армения)
Филиал Московского государственного университета имени М.В. Ломоносова в Ереване
Российско-армянский университет
e-mail: stepan.stepanyants@mail.ru

УЧАСТИЕ АРМЯНСКИХ ВОИНСКИХ ФОРМИРОВАНИЙ В БОЯХ НА СЕВЕРНОМ КАВКАЗЕ В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

В Великой Отечественной войне приняли участие, вместе со всеми народами Советского Союза, также и армянские национальные стрелковые дивизии и в том числе 89-я, 390-я, 408-я, 409-я, 261-я, 76-я. Все они приняли участие в оборонительных и наступательных боях на Северном Кавказе, а также в оборонительных и освободительных боях в Крыму.

В Керченско-Феодосийской десантной операции приняла участие 390-я армянская стрелковая дивизия под командованием полковника А. Виноградова, а затем полковника Симеона Закияна. В тяжёлых кровопролитных боях погиб полковник С. Закиян. Близ Керчи был смертельно ранен командир 390-й дивизии полковник Бабаян.

В декабре 1941 года в Ереване была сформирована 89-я стрелковая армянская дивизия под командованием полковника С. Закияна, а затем полковника В. Саркисяна. 89-я стрелковая дивизия приняла участие в боях в районе Грозный-Старые Брагуны-Червлённая-Кем-Юрт. Затем дивизия приняла участие в кровопролитных боях под Малгобеком. С февраля 1943 года командиром дивизии был назначен полковник (впоследствии генерал-майор) Нвер Сафарян, который командовал дивизией и в Берлинской освободительной операции. Дивизия также приняла участие в освобождении Новороссийска, в героических боях за освобождение Таманского полуострова Кавказа, после

чего дивизия стала называться Таманской и была награждена орденом Красной Звезды. Многие бойцы дивизии были награждены орденами и медалями.

409-я армянская стрелковая дивизия была сформирована 28 июня 1941 года под командованием полковника (впоследствии генерал-майора) М. Запорожина. Затем дивизией командовали полковники В. Гладков, М. Добровольский, Г Сорокин, а с 1944 года генерал-майор Е. Гречаный. Дивизия приняла участие в боях за Северный Кавказ, в боях под Моздоком, а также в боях за освобождение Кубани, а в дальнейшем за освобождение Украины, Молдавии, Австрии. Дошла до Чехословакии приняв участие в боях за освобождение столицы Чехословакии города Прага. 8 января 1944 года ей было присвоено почётное звание "Кировоградской".

19 октября 1941 года была сформирована 408-я армянская стрелковая дивизия под командованием полковника П. Кицука. Дивизия приняла участие в кровопролитных боях за Туапсе и Геленджик, понеся значительные потери в живой силе. Дивизия неоднократно дробилась и тем самым ослабевала, а её части были направлены и переданы в другие воинские формирования.

В 1941 году была сформирована 261-ая армянская стрелковая дивизия, которая приняла участие в кровопролитных затяжных боях в районе Майкопа.

Ещё в начале 1920 годов была сформирована 76-я армянская горно-стрелковая дивизия, которая была направлена в Иран для охраны дорог для идущей по ленд-лизу помощи от союзных стран, а затем приняло участие в героических Сталинградской и Курской битвах, в освобождении Белоруссии и Прибалтике.

Необходимо отметить, что все армянские стрелковые дивизии приняли героическое самоотверженное участие в Великой Отечественной войне от начала и до конца.

ՅԱԿԱՆՅԱՆ Ռուսլան (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ
Էլ. հասցե՝ rooslantsakanyan@gmail.com

ԳՅՈՒՂԸ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻՋԻՆԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱ

Միջինասորեստանյան գյուղական կազմակերպվածության ըմբռնումը նպաստում է հին հասարակություններում գյուղական և քաղաքային համայնքների միջև փոխհարաբերությունների, կայսերական վերահսկողության մեխանիզմների և վաղպետական համակարգերի սոցիալական և տնտեսական հիմքերի վերաբերյալ ավելի խորը և համակարգային պատկերացմանը:

Գյուղի և գյուղական համայնքների դերը Ասորեստանյան պետության ձևավորման և պահպանման գործում զգալիորեն պակաս ուշադրության է արժանացել

մասնագետների կողմից: Մինչդեռ, գյուղերն ու գյուղական բնակավայրերը Ասորեստանի շուրջ երկու հազարամյա պատմության ընթացքում՝ կազմել են պետության սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների էական բաղադրիչները:

Միջինասորեստանյան ժամանակաշրջանում (Ք.ա. մոտ XV դարի վերջին քառորդ – X դարի 2-րդ կես) Ասորեստանի հանդես գալը որպես տարածաշրջանային պետություն՝ պահանջում էր տեղական կառավարման և Ասորեստանի արքայի շուրջ բնակչության համախմբման բարդ մեխանիզմներ: Գյուղական համայնքները ծառայում էին որպես կենտրոնական պետության և Ասորեստանի վերահսկողության տակ գտնվող բազմազան բնակչության միջև հիմնական կապող օղակ՝ նպաստելով նվաճված տարածքների ինտեգրմանը և ռազմարշավների ժամանակ հիմնական մոբիլիզացման ենթական սոցիալական զանգվածը, և այլն: Գյուղերում հիմնական սոցիալական միավորը տնային տնտեսությունն էր (bītu), որը սովորաբար բաղկացած էր գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող միջուկային կամ փոքր ընդլայնված ընտանիքից: Դուր-Կատլիմմուի (Թել-Շեյխ Համադ) նման նահանգային կենտրոնների վարչական տեքստերը տնային տնտեսությունները գրանցում են որպես հարկերի գնահատման և աշխատանքային պարտավորության միավորներ, ինչը ցույց է տալիս դրանց հիմնարար տնտեսական և վարչական կարևորությունը:

Հին մերձավորարևելյան տնային տնտեսություններում, գերակշռում էին հայրական ազգակցական կառուցվածքները, որտեղ սեփականությունը և գյուղատնտեսական հողերը սովորաբար անցնում էին հորից որդիներին: Սակայն, միևնույն ժամանակ, Թել Խուերայի տեքստերը ցույց են տալիս, որ կանայք նույնպես կարող էին ունենալ սեփականություն և մասնակցել տնտեսական գործարքների, մասնավորապես՝ տղամարդկանց տնային տնտեսության ղեկավարի բացակայության դեպքում: Գյուղի բազմաթիվ տնային տնտեսություններ հաճախ պահպանում էին ազգակցական կապեր՝ ձևավորելով ընդլայնված ընտանեկան ցանցեր, որոնք նպաստում էին գյուղատնտեսական աշխատանքների համագործակցությանը, ռեսուրսներ համատեղ օգտագործմանը և ապահովում սոցիալական անվտանգություն:

Միջինասորեստանյան գյուղերն ունեին տեղական կառավարման կառույցներ: Գյուղապետը համակարգում էր հարկերի հավաքագրումը, կազմակերպում համայնքային աշխատանքը և ներկայացնում գյուղի շահերը բարձրագույն իշխանությունների առջև, հանդես գալով միջնորդի դերում, և այլն: Գյուղական կառավարիչները՝ գյուղապետերը, հավանաբար, ընտրվել են տեղական նշանավոր ընտանիքներից, բայց ծառայել են որպես պետական իշխանության ներկայացուցիչներ՝ մարմնավորելով տեղական համայնքային կառույցների ինտեգրումը ավելի լայն վարչական շրջանի մեջ: Եվ չնայած Ասորեստանում վարչական կենտրոնացման աճին, գյուղական համայնքները պահպանել են համայնքային որոշումներ կայացնելու որոշակի լիազորություններ, մասնավորապես՝ ներքին հարցերի վերաբերյալ: Միջինասորեստանյան ժամանակաշրջանի գյուղական կազմակերպվածության ուսումնասիրությունը բացահայտում է բարդ համակարգ, որը հաջողությամբ ինտեգրել է գյուղական համայնքները գավառական և նահանգային շրջանների մեջ:

Վարչաքաղաքական առումով, գյուղերը լիովին ինտեգրված էին հիերարխիկ վարչական կառուցվածքների մեջ, որոնք ապահովում էին արքայական անմիջական

վերահսկողությունը գյուղական բնակչության նկատմամբ՝ պահպանելով որոշակի աստիճանի տեղական ինքնավարություն: Տնտեսական առումով, գյուղական համայնքները զարգացրել են մասնագիտացված տնտեսական գործառույթներ, որոնք նպաստել են պետության բարգավաճմանը և աջակցել քաղաքային կենտրոններին:

Նվաճված տարածքների բնակչության զանգվածային տեղահանության և վերաբնակեցման ասորեստանյան պրակտիկան շարունակական մարտահրավերներ էր ստեղծում գյուղերի կազմակերպման համար: Միջինասորեստանյան վարչական տեքստերը մանրամասն նկարագրում են տեղահանված բնակչությանը առկա համայնքներին ինտեգրելու և նոր բնակավայրեր հիմնելու բարդ ընթացակարգերը:

TSAKANYAN Ruslan (Armenia)
Institute of Oriental Studies of NAS RA
e-mail: rooslantsakanyan@gmail.com

VILLAGE AND RURAL COMMUNITY IN THE MIDDLE ASSYRIAN PERIOD: SOCIAL AND ECONOMIC INTEGRATION

Understanding Middle Assyrian rural organization contributes to a deeper and more systematic understanding of the relationships between rural and urban communities in ancient societies, the mechanisms of imperial control, and the social and economic foundations of early state systems.

The role of the village and rural communities in the formation and maintenance of the Assyrian state has received significantly less attention from scholars. Meanwhile, villages and rural settlements formed essential components of the state's social and economic infrastructure throughout the nearly two millennia of Assyrian history.

In the Middle Assyrian period (c. the 1st quarter of the XV Century – the second half of the X Century BC), Assyria's emergence as a regional state required complex mechanisms for local governance and the consolidation of the population around the Assyrian king. Rural communities served as the main link between the central state and the diverse population under Assyria's control, facilitating the integration of conquered territories and providing the main social mass subject to mobilization during military campaigns, etc. In the villages, the basic social unit was the household (bītu), which usually consisted of a nuclear or small extended family engaged in agricultural production. Administrative texts from provincial centers such as Dūr-Katlimmu (Tell Šēḫ Ḥamad) record households as units of tax assessment and labor obligation, which indicates their fundamental economic and administrative importance.

In Ancient Near Eastern households, patrilineal kinship structures prevailed, with property and agricultural land typically passed from father to son. However, at the same time, the Tell Chuera texts show that women could also own property and participate in economic transactions, particularly in the absence of a male household head. Multiple

village households often maintained kinship ties, forming extended family networks that facilitated cooperative agricultural work, shared resource use, and provided social security.

Middle Assyrian villages had local government structures. The village head coordinated tax collection, organized community work, and represented the village's interests before higher authorities, acting as a mediator, etc. Village administrators, village heads, were probably elected from prominent local families, but served as representatives of state power, embodying the integration of local community structures into a wider administrative district. And despite the growth of administrative centralization in Assyria, rural communities retained some authority to make community decisions, particularly on internal matters. A study of rural organization in the Middle Assyrian period reveals a complex system that successfully integrated rural communities into provincial and state districts.

In administrative terms, villages were fully integrated into hierarchical administrative structures that ensured direct royal control over the rural population while maintaining a certain degree of local autonomy. Economically, rural communities developed specialized economic functions that contributed to the prosperity of the state and supported urban centers.

The Assyrian practice of mass deportation and resettlement of the population of conquered territories posed ongoing challenges to village organization. Middle Assyrian administrative texts describe in detail the complex procedures for integrating displaced populations into existing communities and establishing new settlements.

ЦАКАНЯН Руслан (Армения)
Институт востоковедения НАН РА
e-mail: rooslantsakanyan@gmail.com

ДЕРЕВНЯ И СЕЛЬСКАЯ ОБЩИНА В СРЕДНЕАССИРИЙСКИЙ ПЕРИОД: СОЦИАЛЬНАЯ И ЭКОНОМИЧЕСКАЯ ИНТЕГРАЦИЯ

Понимание организации Среднеассирийского сельского хозяйства способствует более глубокому и системному пониманию взаимоотношений между сельскими и городскими общинами в древних обществах, механизмов имперского контроля и социально-экономических основ ранних государственных систем.

Роль деревни и сельских общин в формировании и поддержании Ассирийского государства до сих пор оставалась предметом значительно меньшего внимания со стороны учёных. Между тем, деревни и сельские поселения составляли важнейшие компоненты социальной и экономической инфраструктуры государства на протяжении почти двух тысячелетий Ассирийской истории.

В среднеассирийский период (ок. последней четверти XV в. – второй половины X в. до н. э.) становление Ассирии как регионального государства потребовало сложных механизмов местного управления и консолидации населения вокруг ассирийского царя. Сельские общины служили основным связующим звеном между центральным государством и разнородным населением, находившимся под контро-

лем Ассирии, способствуя интеграции завоеванных территорий и обеспечивая основную социальную массу, подлежащую мобилизации во время военных походов и т. д. В деревнях основной социальной ячейкой было домохозяйство (bītu), которое обычно состояло из нуклеарной или небольшой расширенной семьи, занимавшейся сельскохозяйственным производством. Административные тексты из провинциальных центров, таких как Дур-Катлимму (Тель-Шейх-Хамад), упоминают домохозяйства как единицы налогообложения и трудовой повинности, что указывает на их основополагающее экономическое и административное значение.

В древних ближневосточных домохозяйствах преобладала патрилинейная структура родства, при которой имущество и сельскохозяйственные угодья обычно передавались от отца к сыну. Однако в то же время тексты Телль-Хуйеры показывают, что женщины также могли владеть имуществом и участвовать в экономических операциях, особенно при отсутствии мужчины-главы семьи.

Многочисленные деревенские домохозяйства часто поддерживали родственные связи, образуя расширенные семейные сети, которые способствовали кооперативному ведению сельскохозяйственных работ, совместному использованию ресурсов и обеспечивали социальную безопасность.

В Среднеассирийских деревнях существовали структуры местного самоуправления. Староста координировал сбор налогов, организовывал общественные работы и представлял интересы деревни перед высшими органами власти, выступая в роли посредника и т.д. Деревенские администраторы, сельские старосты, вероятно, избирались из знатных местных семей, но являлись представителями государственной власти, олицетворяя интеграцию местных общинных структур в более широкий административный округ. Несмотря на рост административной централизации в Ассирии, сельские общины сохраняли определённые полномочия по принятию общинных решений, особенно по внутренним вопросам. Изучение сельской организации в Среднеассирийский период выявляет сложную систему, которая успешно интегрировала сельские общины в провинциальные и государственные округа.

В административном отношении деревни были полностью интегрированы в иерархические административные структуры, обеспечивавшие прямой царский контроль над сельским населением при сохранении определённой степени местной автономии. В экономическом отношении сельские общины развивали специализированные хозяйственные функции, способствовавшие процветанию государства и поддержке городских центров.

Ассирийская практика массовой депортации и переселения населения завоёванных территорий создавала постоянные проблемы для организации деревень. Среднеассирийские административные тексты подробно описывают сложные процедуры интеграции перемещённого населения в существующие общины и создания новых поселений.

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Դիանա (Հայաստան)
Երևանի պետական համալսարան
էլ. հասցե՝ dianaabrahamyan.researcher@gmail.com

«ՋԱՐԴԻ ՁՈՐ». ՏԱՐԱԾՔ ԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցում ներկայացվում է հիշողության նյութականացման գործընթացը Շիրակի մարզի «Ջարդի ձոր» կոչվող տարածքում, որը կապված է 1920 թվականի ողբերգական իրադարձությունների հետ՝ կենտրոնանալով դրա՝ որպես ֆիզիկական և խորհրդանշական լանդշաֆտի ձևավորման պատմության վրա: Դաշտային աշխատանքի ընթացքում ականատես-վերապրածների սերունդներից հավաքված բանավոր պատմությունների, իրականացված մասնագիտական հարցազրույցների և առկա պատմագիտական նյութի համադրման և համեմատական քննության միջոցով փորձել ենք բացահայտել և վերլուծել ուսումնասիրվող տարածքի նշանակությունը և ձևավորման պատմությունը: Ուսումնասիրության հիմքում դրված է այն հարցադրումը, թե ինչպես է կոլեկտիվ հիշողությունը մարմնավորվում տարածության մեջ՝ դառնալով հանրային հիշողության պահպանման և փոխանցման գործիք:

Ջեկուցման ընթացքում շոշափվելիք դրույթները հետևյալն են՝

1. Ինչպե՞ս են նարատիվները ձևավորել Շիրակի մարզում Ջարդի ձորի տարածական բնութագիրը և մնեմոնիկ նշանակությունը:
2. Ինչպե՞ս է ձևավորվել Ջարդի ձորի ֆիզիկական լանդշաֆտը:
3. Ի՞նչ դեր է խաղում Ջարդի ձորում առկա հուշարձանների տարածական դասավորությունը, և ինչպե՞ս է այն ազդում սոցիալական հիշողության պահպանման և փոխանցման վրա:
4. Ինչպե՞ս են կազմակերպվում լանդշաֆտում հիշատակի արարողությունները:

Հետազոտությունը կառուցված է երեք հիմնական փուլերի շուրջ, որոնք ժամանակագրորեն համապատասխանում են տարածքի պատմական և սոցիալ-մշակութային փոփոխություններին:

1960-ական թվականներին, ցեղասպանության խոսույթի տարածմանը զուգահեռ, վերելք է ապրում նաև իրադարձության վերաբերյալ հուշարձանների կառուցման պրակտիկան:Խորհրդային Հայաստանի կոմունիստական հասարակարգի պայմաններում ճարտարապետ Ռաֆայել Եղոյանը 1965 թվականին կարողացավ առաջ քաշել և իրականություն դարձնել մի գաղափար, որը առանցքային նշանակություն ունեցավ Ջարդի ձորի՝ իբրև հիշողության լանդշաֆտի ձևավորման գործում՝ այդպիսով սկիզբ դնելով տարածքի հուշարձայնացման գործընթացին: Չնայած հուշարձանը չունեցավ հանդիսավոր բացում, այդուհանդերձ, այդ քայլով նա «արթնացրեց» տեղի բնակչության շրջանում երկար տարիներ լռեցված և ճնշված հիշողությունները: Այդ իսկ պատճառով այս հուշարձանի հայտնվելը հուշային քաղաքականության կարևոր դրվագ է՝ վկայելով ոչ միայն անձնական նախաձեռնության, այլև հիշողության ընդհատված, բայց զոյատևող շղթայի մասին: Թեև հուշարձան-հուշաղբյուրը

նվիրված է 1915 թվականի Մեծ Եղեռնի զոհերին, սակայն գաղափարի առաջացման խորհրդանշական պատմությամբ, տեղի ընտրության և հատկապես հիմնարկման ժամանակ գտնված մասունքների վրա կառուցման հանգամանքով այն դարձավ 1920 թվականին թուրք-հայկական պատերազմի ընթացքում Ջարդի ձորում իրականացված կոտորածների մասին հիշողության առաջին ամփոփ վկայությունը՝ Ջարդի ձորը Շիրակում դարձնելով մի նոր Դեր-Զոր: 1990–2012 թթ. ին՝ տեղանքում ձևավորվում է կոմեմորատիվ մշակույթ՝ անկախության շրջանի ազգային ինքնության և կրոնական զարթոնքի համատեքստում: Այս ընթացքում ի հայտ է գալիս նոր սիմվոլիկ լեզու, որը ներմուծում է քրիստոնեական խորհրդանիշներ, մասնավորապես՝ խաչքարը, որպես գոյատևման և ազգային ինքնության նշան: Ռաշիդ Առաքելյանի կողմից տեղում առաջին խաչքարի՝ «Կամք»-ի կանգնեցմամբ տեղի է ունենում տարածքի սրբազնացումը: Հետաքրքրական է լանդշաֆտում 2010-ականներից հետո կառուցված նոր հուշարձանների տրամաբանության քննությունը, որտեղ հստակ տեսանելի է հուշարձանների սեմիոտիկ խտացման միտումը՝ երբ տարբեր սերնդային և ինստիտուցիոնալ նախաձեռնությունների արդյունքում տարածքը վերածվում է մեմորիալ համալիրի, որտեղ համակցվում են սգի, ազգային միասնության, նաև կրոնական սիմվոլները: Ծեսերն ու հավաքները դառնում են ոչ միայն ռիտուալացված, այլև մեդիացված՝ ընդգրկելով հաղորդակցության նոր հարթակներ և ամրապնդելով հիշողության հանրային արդիականությունը:

ABRAHAMYAN Diana (Armenia)
Yerevan State University
e-mail: dianaabrahamyan.researcher@gmail.com

“JARDI DZOR”: SPACE AND MEMORY

This report presents the process of memory materialization in the “Jardi Dzor”(The Massacre Gorge) area, situated in the Shirak region of Armenia. The area is associated with the tragic events of 1920. It focuses on the formation of this site as both a physical and symbolic landscape. Through our fieldwork—including oral histories collected from descendants of eyewitness-survivors, professional interviews, and analysis of existing historical literature—the study aims to reveal and analyze the significance and historical development of the site. The research is guided by the central question: how are collective memories embodied in space become tools for the preservation and transmission of public memory?

The key issues addressed in the presentation include:

1. How have narratives shaped the spatial identity and mnemonic significance of “Jardi Dzor”?
2. How did the physical landscape of “Jardi Dzor” take shape?
3. What role does the spatial arrangement of the memorials play in shaping and sustaining social memory?

4. How are commemorative rituals organized within this landscape?

Учителями, как правило, становились грамотные люди с достаточным свободным временем в зимний период, которых называли тирацу (церковные помощники). Жилища напоминали хижины и состояли из одного большого помещения (баг — секция, часть), хлева, отдельного дома для выпечки хлеба и приготовления пищи, а в случае состоятельных хозяев — и из нескольких дополнительных построек (масан). Одежда была довольно скромной. Женщины надевали на тело длинные белые или красные рубашки, которые часто доходили до ног. Поверх рубашки надевали зпун (верхнюю одежду), а сверху завязывали шерстяной красный передник. Девушки носили распущенные платки (фас), поверх которых завязывали разноцветные шелковые ленты, а женщины — колоз, которые сверху обычно обвязывали красной тканью. Мужчины поверх рубашки надевали хазаги, а сверху — пальто, которое местные называли «сако». На поясе носили широкий ремень, иногда — кожаный широкий пояс о складками (сарачаг), который служил карманом. Верхняя часть штанов была очень широкой и постепенно сужалась к низу. На ногах надевали плотные шерстяные чулки карчбук, поверх которых — беспалые чулки еркарбук, называемые тозлуг. И мужчины, и женщины носили трехи (вид обуви), очень немногие надевали ботинки или короткую обувь. На голове носили фетровые или бархатные платки (фас) без кисточек, поверх которых завязывали несколько слоев хлопчатобумажной ткани. Питание было достаточно скудным: супы, плов, кисломолочный суп (танапур), чмур, хариса, пшеничная каша (похиндз), луковый суп (сохджур), яичница. Из зерновых готовили

коркот, булгур и эришта (лапша домашнего приготовления). Молочные продукты включали мацун, масло, топленое масло, взбитые сливки, сыр. В воскресные и праздничные дни соблюдали покой — полевые и прочие работы не выполняли. В воскресенье надевали самую новую одежду и шли в церковь на литургию. Очень часто по воскресеньям совершали паломничество в какую-либо церковь, приносили жертвы (матах), устраивали застолья и танцы. Автор также описывает любимые у местных праздники — Новый год, Рождество и Крещение, Теарнандарач (Сретение), Пасху, Вознесение, Вардавар, которые сопровождались специальными праздничными блюдами, играми, песнями и танцами.

В работе применён метод содержательного анализа. Наша цель — сделать эти ценные материалы общедоступными и подготовить их к публикации, подчеркнув их важность и значение.

ԱՎԵՏԻՍՅԱՆ Մերի (Հայաստան)
Երևան քաղաքի պատմության թանգարան
էլ. հասցե՝ meryavetisyan1984@gmail.com

«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ»-Ն ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՐԱԲԿԻՐՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԵՐԹ

1925թ. մայիսի 29-ին Նոր Արաբկիր ավանի հիմնադրեքով Խորհրդային Հայաստանում մեկնարկեց գաղութահայության և մայր Հայաստանի միասնականության ու համագործակցության արդյունքում ձևավորված մի գործընթաց, որը հետագայում ստացավ «Դեպի հայրենիք շարժում» ձևակերպումը: Ըստ էության, գաղութահայության վերաբնակեցումը Խորհրդային Հայաստանում միայն քաղաքական գործընթաց չէր, այլ հասուն գիտակցությամբ և ազգային գաղափարախոսության հենքով ձևավորված շարժում, որն իրական պատնեշ դարձավ գաղութահայության պատմության ու մշակույթի ձուլման վտանգի դեմ: Խորհրդային Հայաստանում հայրենադարձության սկիզբը դրվեց արաբկիրցիների ներգաղթով, ինչի արդյունքն եղավ Նոր Արաբկիր ավանի կառուցումը: Այսօր, արդեն անկախ Հայաստանի մայրաքաղաք Երևանի հյուսիսային մասում է գտնվում Արաբկիր վարչական շրջանը, որի հարյուրամյակին էլ նվիրված է սույն ուսումնասիրությունը: Նոր Արաբկիր ավանի հիմնադրեքին զուգահեռ տեղի ունեցավ մեկ այլ կարևոր իրադարձություն՝ «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի հրատարակումը: Անհրաժեշտություն կար ստեղծել աշխարհասփյուռ արաբկիրցիներին հասու տեղեկատվական մի հարթակ, որի միջոցով հասարակության լայն շերտերի իրազեկումը առավել համակարգված կդարձներ հայրենիք վերադարձի շարժումը: Ուսումնասիրության նպատակն է ընդգծել թերթի

դերը Խորհրդային Հայաստանում գաղթականների վերաբնակեցման գործընթացում, ինչպես նաև՝ ցույց տալ կատարված այն հսկայածավալ աշխատանքը, որ իրականացրեց թերթը՝ որպես Նոր Արաբկիր ավանի կառուցման պատմության վավերագիր: Թեմայի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային գրադարանում պահպանվող «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի 1925-1983թթ. տպագրված համարները:

Իր շուրջ հիսունհինգ տարիների գոյության ընթացքում, թերթը տպագրվել է միության նստավայրերում՝ Նյու Յորքում, Բոստոնում, Փիլադելֆիայում, Ուոթերթաունում, Փենսիլվանիայի որոշ քաղաքներում: Տարբեր բաժիններից բաղկացած թերթը տեղեկություններ է փոխանցում Նոր Արաբկիր ավանի շինարարության ընթացքի, միության պատգամավորական ժողովների արձանագրությունների, Ամերիկայում արաբկիրցիների միության գործունեության, Խորհրդային Հայաստան այցելած սփյուռքահայ գործիչների տպավորությունների, գաղթավայրերում և Խորհրդային Հայաստանում վերաբնակեցված արաբկիրցիների կյանքի և կենցաղի մասին: Թերթի անցած ճանապարհը հարթ չի եղել:

1951թ. 37-րդ համարում նշանավորելով տեղեկատուի գոյության քառորդ դարը, խմբագրակազմն արձանագրում է, որ տեղեկատուի ստեղծումը սպասված ոգևորությամբ չի ընդունվել: Որոշ շրջանակներ նույնիսկ թերթի ստեղծման համար արվող ծախսերը որակել են նյութական միջոցների մսխում: Քիչ չի եղել նաև հրատարակությունների համար անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական պայմանների սղությունը: Չնայած այս ամենին, Ամերիկայի արաբկիրցիների միության համառ աշխատանքի արդյունքում թերթը անշեղ իրացրեց այն բոլոր գործառույթները, որոնք ի սկզբանե մտածված էին խմբագրակազմի կողմից: Թերթի համարների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն ավելին էր, քան ուղղակի իրազեկման աղբյուր: «Նոր Արաբկիր տեղեկատու»-ն գաղութահայության ոգեշնչումի, համախմբվածության, հայրենիք սփյուռք միասնականությունը ապահովող մի շղթա էր դարձել և ուղիղ կապված էր Խորհրդային Հայաստանում խմորվող հայրենադարձության գործընթացի հետ: Բոլորին հասկանալի, պարզ լեզվով, բայց որ ամենակարևորն է՝ անկողմնակալ, տարիներ շարունակ թերթը գրեց, արձանագրեց պատմական իրողությունները, լուսաբանեց հայտնի ու անհայտ արաբկիրցիներին, նյութական ու հոգևոր արժեքները՝ դառնալով միության հայրենանվեր գործի սպասարկողն ու խոսնակը:

AVETISYAN Mery (Armenia)
Yerevan History Museum
e-mail: meryavetisyan1984@gmail.com

"NEW ARABKIR DIRECTORY" THE OFFICIAL NEWSPAPER OF THE UNION OF AMERICAN-ARMENIAN ARABKIR RESIDENTS

On May 29, 1925, with the founding of the New Arabkir settlement, a process was launched in Soviet Armenia, formed as a result of the unity and cooperation of the

Armenian diaspora and the motherland, which later came to be known as the "Movement to the Homeland". In essence, the repatriation of the Armenian diaspora to Soviet Armenia was not merely a political process, but a movement formed with mature consciousness and based on national ideology, which became a real barrier against the danger of the assimilation of the Armenian diaspora's history and culture. The repatriation to Soviet Armenia began with the immigration of Arabkir residents, which resulted in the construction of the New Arabkir settlement. Today, the Arabkir administrative district is located in the northern part of the capital of independent Armenia, Yerevan, and this study is dedicated to the centennial of that district. Alongside the founding of the New Arabkirsettlement, another important event took place: the publication of the newspaper "New Arabkir Directory".There was a need to create an informational platform accessible to Arabkir residents around the world, through which the awareness of broad segments of society would become more systematic within the movement of returning to the homeland.The aim of the study is to highlight the role of the newspaper in the process of resettlement of refugees in Soviet Armenia, as well as to showcase the enormous work it carried out as a documentary record of the history of the construction of the New Arabkir settlement.This study is based on issues of the “New Arabkir Directory” newspaper, published from 1925 to 1983, which are preserved in the National Library of the Republic of Armenia.

During its nearly fifty-five years of existence, the newspaper was published in the Union's headquarters located in New York, Boston, Philadelphia, Watertown, and several cities in Pennsylvania.Consisting of various sections, the newspaper provides information about the construction process of the New Arabkir settlement, the minutes of the Union's representative meetings, the activities of the Arabkir Union in America, the impressions of Diaspora Armenian figures who visited Soviet Armenia, as well as the lives and daily experiences of Arabkir residents both in the diaspora and those resettled and in Soviet Armenia.The newspaper's journey was not a smooth one. In its 37th issue published in 1951, marking a quarter century of the Directory's existence, the editorial team noted that the creation of the Directory had not been received with the anticipated enthusiasm.

Certain circles even described the expenses incurred for the creation of the newspaper as a waste of material resources. There were also significant shortages of financial and technical conditions necessary for publications.Despite all this, as a result of the persistent efforts of the Union of Arabkir Residents in America, the newspaper consistently fulfilled all the functions originally envisioned by the editorial team. The study of the newspaper's issues revealed that it was more than just a source of information. "The New Arabkir Directory" had become a source of inspiration and unity for the Armenian diaspora, a vital link ensuring the solidarity of the homeland and the diaspora, directly tied to the unfolding repatriation process in Soviet Armenia. In clear and accessible language for everyone, but most importantly, with impartiality, the newspaper, over the years, recorded historical realities, documented both famous and lesser-known Arabkir residents, highlighted material and spiritual values, becoming the servant and the voice of the Union's patriotic cause.

АВЕТИСЯН Мери (Армения)
Музей истории города Еревана
e-mail: meryavetisyan1984@gmail.com

«СПРАВОЧНИК НОВЫЙ АРАБКИР» ОФИЦИАЛЬНАЯ ГАЗЕТА СОЮЗА АМЕРИКАНСКИХ АРМЯН – АРАБКИРЦЕВ

29 мая 1925 года было основано поселение Новый Арабкир, и в Советской Армении начался процесс, сформировавшийся в результате единства и сотрудничества армянской диаспоры и матери-Армении, который впоследствии получил формулировку «Движение на Родину». Переселение армянской диаспоры в Советскую Армению было не просто политическим процессом. Это движение было сформировано зрелым сознанием и основано на национальной идеологии, оно стало реальным заслоном опасности ассимиляции истории и культуры армянской диаспоры. Репатриация в Советской Армении началась с иммиграции жителей Арабкира, в результате чего было построено поселение Новый Арабкир. Сегодня административный район Арабкир расположен в северной части Еревана, столицы независимой Армении, и это исследование посвящено его столетию. Важным событием стало издание газеты «Справочник Новый Арабкир», которое произошло параллельно с основанием поселения Новый Арабкир. Возникла необходимость в создании информационной платформы, которая явилась бы доступной для жителей Арабкира по всему миру, и посредством которой информирование широкой общественности о движении возвращения на родину стало бы более системным.

Целью данного исследования является освещение роли газеты в процессе переселения беженцев в Советскую Армению, а также показ огромной работы, которую газета провела как документ истории строительства поселка Новый Арабкир. Основными материалами для изучения темы послужили номера газеты «Нор Арабкир Информейшн», издававшиеся в период с 1925 по 1983 годы, которые хранятся в Национальной библиотеке Республики Армения.

За почти пятьдесят пять лет своего существования газета издавалась в штабквартирах профсоюза в Нью-Йорке, Бостоне, Филадельфии, Уотертауне и нескольких городах Пенсильвании. Газета состоит из различных разделов, в которых дается информация о ходе строительства поселка Новый Арабкир, протоколах парламентских заседаний союза, деятельности Союза Арабкир в Америке, впечатлениях представителей армянской диаспоры, посетивших Советскую Армению, а также о жизни и быте арабкирцев, переселенных в диаспору и Советскую Армению. Путь газеты не был гладким. В 1951 году в 37-м номере, отмечавшем четверть века существования справочника, редакция отметила, что создание справочника не было встречено с ожидаемым энтузиазмом. В некоторых кругах даже расходы на создание газеты были расценены как пустая трата материальных ресурсов. Существовали также существенные финансовые и технические ограничения для издания. Несмотря на все это, в результате упорной работы Союза Арабкир в Америке газете удалось

неуклонно реализовывать все изначально задуманные редакцией функции. Изучение ее выпусков показало, что она была не просто источником информации. Газета «Справочник Нор Арабкир» стала цепочкой вдохновения, сплоченности и единства для армянской общины на родине и в диаспоре и была напрямую связана с процессом репатриации, назревавшим в Советской Армении.

ԲԱԶԵՅԱՆ Կարինե (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ bazeyan60@yandex.ru

«ԲԱՆՎՈՐ» ԹԵՐԹԸ ՈՐՊԵՍ ՎԱՂԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Սովետական տարիները էթնոմշակութային գործընթացների զարգացման առումով լի էին բարդություններով, հետաքրքիր շրջապտույտներով ու զարմանալի երևույթներով: Արտաքին աշխարհից գրեթե մեկուսացված ԽՍՀՄ-ում, ելնելով նրա ձևավորման և զարգացման առանձնահատկություններից՝ որպես բազմազգ և միաժամանակ միասնական պետություն, տեղի ունեցան բովանդակությամբ և ինտենսիվությամբ եզակի գործընթացներ, որոնք նախանշեցին ավանդական մշակույթի զարգացման յուրահատուկ ուղիներ: Դրանք տարբեր կերպ արտահայտվեցին գյուղական ու քաղաքային բնակավայրերում՝ կապված նոր քաղաքական-գաղափարախոսական, սոցիալ-տնտեսական ու մշակութային պահանջների հետ: Հայ իրականության մեջ այդ փոփոխությունները առավել հետաքրքիր ու յուրահատուկ ձևերով դրսևորվեցին Լենինական քաղաքում, ինչի արդյունքում արդեն XX դ. կեսերին այն դարձավ ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլև ԽՍՀՄ-ի կարևոր արդյունաբերական կենտրոններից մեկը:

1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն ու տնտեսավարման նոր՝ պետական եղանակին անցնելը էական փոփոխություններ առաջացրեց Լենինականի կյանքում (մինչև 1924թ.՝ Ալեքսանդրապոլ): Նախկինում զարգացած արհեստավորական ավանդույթներ ունեցող քաղաքում սկսվեցին լուրջ տեղաշարժեր, որոնց արդյունում որոշակիորեն փոխվեցին ոչ միայն բնակչության կազմը, հիմնական զբաղմունքները, այլև տնտեսական, հասարակական հարաբերություններն ու դրանով պայմանավորված՝ նաև կենցաղավարման մյուս ձևերը: Անցումային այդ խառնակ ժամանակների մասին հարուստ տեղեկություններ է պարունակում 1923 թ-ից հրատարակվող «Բանվոր» թերթը: Այստեղ տպագրված բազմաբնույթ նյութերը, այլ սկզբնաղբյուրների համադրմամբ, հնարավորություն են տալիս վերականգնել

ավանդական քաղաքային մշակույթ ունեցող Ալեքսանդրապոլից նոր՝ արդյունաբերական, խորհրդային Լենինականի անցման գործընթացը:

Լենինականի՝ որպես զարգացող արդյունաբերական ու նոր «բանվորական» մշակույթ կրող քաղաքի վերածվելու համար խորհրդային իշխանությունները կարևորեցին տնտեսական գործոնը: Հետազոտվող ժամանակաշրջանում քաղաքում կառուցվեցին Տեքստիլ, Մսի-պահածոների կոմբինատները, Հացի գործարանը, վերականգնվեցին ու նորացվեցին երկաթգիծը և երկաթուղային կայարանը, շահագործման հանձնվեց քաղաքը խմելու ջրով ապահովող նոր ջրագիծը և այլն: Ըստ այդմ էլ՝ նորակառույց թաղամասերը ստացան համապատասխան ֆաբրիկաների կամ գործարանների անունները, իսկ ավելի ուշ առաջացածները՝ տարածքային անուններ:

Ինչպես ցանկացած խոշոր քաղաքում, բնակության վայրը՝ թաղամասը, շրջանը կամ նույնիսկ փողոցը, միշտ եղել է և մնում է կարևոր մշակութային ցուցիչ, որը կարող է մատնանշել քաղաքացու սոցիալական կարգավիճակը և նրա կենսակերպը, որը կարող է շատ տարբեր լինել:

Այս իրողությունը ցայտուն դրսևորվեց նոր կառուցված այս թաղամասերում, ուր հաստատվեցին տվյալ ձեռնարկության տարբեր էթնիկ ու ենթաէթնիկ ծագումով բանվորները, որոնց աշխատանքային, հարևանական հարաբերությունների հոլովույթում առաջացավ թաղային յուրահատուկ ինքնություն ունեցող նոր մշակույթ, որն առայժմ ուսումնասիրված չէ: Վերոշարադրյալ իրողություններն ու դրանց ողջ գործընթացը հանգամանորեն ներկայացված են «Բանվոր» թերթի էջերում, ինչը էապես հեշտացնում է դրանց ազգաբանական ուսումնասիրությունը:

Հետազոտության նպատակն է հիմնական գծերով ներկայացնել թերթի այն հրապարակումներն ու հաղորդումները, որոնք վերաբերում են վաղխորհրդային՝ 1920-1940-ական թվականների վերոհիշյալ գործընթացներին՝ արժևորելով դրանք որպես կարևոր սկզբնաղբյուր:

BAZEYAN Karine (Armenia)

Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: bazeyan60@yandex.ru

THE “BANVOR” NEWSPAPER AS A PRIMARY SOURCE FOR THE ETHNOGRAPHIC STUDY OF EARLY SOVIET LENINAKAN

The Soviet era, in terms of the development of ethnocultural processes, was marked by complexities, intriguing turns, and remarkable phenomena. In the USSR—almost completely isolated from the outside world—unique processes of content and intensity took place due to the peculiarities of its formation and development as a multiethnic and at the same time unified state. These processes outlined distinctive paths for the evolution of traditional culture and were expressed differently in rural and urban areas, shaped by new political-ideological, socio-economic, and cultural demands. In the Armenian context, these transformations took on particularly interesting and unique forms in the city of

Leninakan, which by the mid-20th century had become not only one of Soviet Armenia's, but also one of the USSR's major industrial centers.

The establishment of Soviet rule in Armenia in 1920 and the transition to a new state-run economic system brought significant changes to the life of Leninakan (known as Alexandropol until 1924). In this city, which had a long-standing tradition of craftsmanship, serious transformations began, leading to shifts not only in the composition of the population and their primary occupations but also in economic and social relations—consequently altering other forms of everyday life. Rich information about this turbulent transitional period is found in the Banvor newspaper, which began publication in 1923. The diverse materials published in this newspaper, when combined with other primary sources, make it possible to reconstruct the transformation from Alexandropol—a city with a traditional urban culture—into the new industrial, Soviet Leninakan.

In order to turn Leninakan into a developing industrial city with a new "working-class" culture, the Soviet authorities prioritized economic development. During the period under study, the city saw the construction of the textile factory, the meat-canning plant, the bread factory, and the restoration and modernization of the railway and the station. A new water pipeline was also built to supply the city with drinking water. As a result, newly built neighborhoods were named after these factories or plants, while others that emerged later received territorial names.

As in any large city, the place of residence—a neighborhood, district, or even a street—has always been and remains a key cultural indicator, often reflecting the social status and lifestyle of its inhabitants, which can vary greatly.

This phenomenon was vividly manifested in the newly built districts, where workers of various ethnic and sub-ethnic backgrounds, employed at the respective enterprises, settled. Through their working and neighborly interactions, a new culture emerged, with distinct neighborhood identities—an area of study that remains largely unexplored. These realities and their full development process are thoroughly presented in the pages of the Banvor newspaper, significantly facilitating their ethnographic analysis.

The aim of this paper is to present the main publications and reports of the newspaper that relate to the aforementioned processes of the early Soviet period—from the 1920s to the 1940s—highlighting them as valuable primary sources.

БАЗЕЯН Карине (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: bazeyan60@yandex.ru

ГАЗЕТА «БАНВОР» КАК ПЕРВОИСТОЧНИК ДЛЯ ЭТНОГРАФИЧЕСКОГО ИЗУЧЕНИЯ РАННЕСОВЕТСКОГО ЛЕНИНАКАНА

Советский период, с точки зрения развития этнокультурных процессов, был насыщен сложностями, интересными поворотами и удивительными явлениями. В

СССР, практически изолированном от внешнего мира, в силу особенностей его формирования и развития как многонационального и одновременно единого государства, происходили уникальные по содержанию и интенсивности процессы, которые предопределили особый путь развития традиционной культуры. Эти процессы проявлялись по-разному в сельских и городских населённых пунктах, в зависимости от новых политико-идеологических, социально-экономических и культурных требований. В армянской действительности эти изменения особенно ярко и своеобразно проявились в городе Ленинакане, который уже к середине XX века стал не только важным промышленным центром Советской Армении, но и всего СССР.

Установление советской власти в Армении в 1920 году и переход к новой государственной системе управления вызвали значительные изменения в жизни Ленинакана (до 1924 года — Александрополь). В городе, ранее отличавшемся развитыми ремесленными традициями, начались серьёзные преобразования, в результате которых изменилась не только структура населения и основные занятия, но и социально-экономические отношения, а вместе с ними — и другие формы повседневной жизни. Богатую информацию об этом переходном и противоречивом времени содержит газета «Банвор», издававшаяся с 1923 года. Разнообразные материалы, опубликованные в ней, в сопоставлении с другими источниками, позволяют воссоздать процесс трансформации Александрополя с его традиционной городской культурой в новый — индустриальный, советский Ленинакан.

Для превращения Ленинакана в развивающийся промышленный город с новой «рабочей» культурой советская власть придавала особое значение экономическому фактору. В рассматриваемый период в городе были построены Текстильный и Мясоконсервный комбинаты, хлебозавод, восстановлены и модернизированы железная дорога и ж/д вокзал, введён в эксплуатацию новый водопровод, обеспечивающий город питьевой водой и др. Соответственно новые кварталы получали названия в честь этих фабрик и заводов, а позже — территориальные наименования.

Как и в любом крупном городе, место жительства — квартал, район или даже улица—всегда было и остаётся важным культурным маркером, указывающим на социальный статус горожанина и его образ жизни, который может существенно различаться. Эта реальность особенно ярко проявилась в новых кварталах, где селились рабочие различных этнических и субэтнических групп, трудившиеся на соответствующих предприятиях. В процессе трудовых и соседских отношений среди них зарождалась новая культура с особой районной идентичностью, которая до сих пор остаётся малоизученной. Все вышеупомянутые процессы подробно освещаются на страницах газеты «Банвор», что значительно облегчает их этнографическое изучение.

Целью данного исследования является представление основных публикаций и сообщений газеты, относящихся к вышеописанным процессам 1920–1940-х годов раннесоветского периода, с акцентом на их значимость как ценного источника.

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ Ռաֆիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ rafik.gabrielyan.iae@gmail.com

ՉԵՅԹՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՐԱՎԱՆԴԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ

Չեյթունը գտնվում է Կիլիկյան Հայաստանի հյուսիս-արևելքում: Այն մի քանի դար շարունակ պահպանել է ինքնավարության որոշակի մակարդակ: Շրջանի աշխարհագրական դիրքը, որը բնութագրվում է զառիվայր լանջերով ու ձորերով և սահմանափակ մատչելիությամբ, նպաստել է ինքնակառավարման հատուկ ձևի ամրապնդմանը և տարածքի օգտագործման ուրույն եղանակների ձևավորմանը:

Սույն աշխատանքը ներկայացնում է պատմական, տեղագրական, ազգագրական և աշխարհագրական աղբյուրների, այդ թվում՝ հին լուսանկարների և ճանապարհորդական նշումների համապարփակ վերլուծություն, որը միտված է Չեյթունի մշակութային լանդշաֆտը վերականգնելուն: Հատուկ ուշադրություն է դարձվում դարավանդային համակարգերին, ինչպես բնակավայրի կառուցման, այնպես էլ գյուղատնտեսական գործունեության մեջ:

Ուսումնասիրությունների համաձայն՝ Չեյթունը հիմնադրվել է 1375-1409 թվականների միջև ընկած ժամանակաշրջանում՝ բյուզանդական բնակավայրի տեղում: Այն առնչվում է սպարապետ Հեթումի կնոջ՝ Զարմանուհու գործունեության հետ:

Չեյթունը զարգացել է որպես ռազմավարական առումով ամրացված կետ՝ նեղ կիրճերի նկատմամբ վերահսկողության, կամուրջների առկայության և դժվարամատչելի վայրեր արագ նահանջելու հնարավորության շնորհիվ: Քաղաքն ուներ դարավանդաձև ճարտարապետություն. տները կառուցվում էին թեքությունների վրա, իսկ կտուրները օգտագործվում էին որպես փողոցներ և բակեր: Ռելիեֆը թելադրում էր տարածության և ռեսուրսների առավելագույն օգտագործում: Կտուրները կառուցվում էին ամուր գերաններով ու սյուներով: Որոշ տներ գտնվում էին ժայռերի վրա՝ ամրացված փայտե հեծաններով: Երկրագործությունն ուներ երկու հիմնական ճյուղ դաշտավարություն և այգեգործությունը: Այն զարգանում էր լանջերի դարավանդման շնորհիվ: Գետերի մոտ գտնվող այգիներում աճեցվում էին խաղող, թուզ, ընկույզ, ձիթապտուղ և այլն:

Չեյթունը ոչ միայն տնտեսական, այլև մշակութային գործունեության կենտրոն էր: Կղզիացած լինելը, ինքնաբավությունը և կենսապայմանները զեյթունցիների մոտ ձևավորել էին ռազմավարական մտածողություն: Եզակի ճարտարապետությունը, տնտեսավարման եղանակները և սոցիալական կազմակերպվածությունը Չեյթունը դարձնում էին լեռնային միջավայրին հարմարվելու վառ օրինակ:

Այսպիսով, ներկայացված ուսումնասիրությունը ընդգծում է Չեյթունի կարևորությունը որպես ինքնաբավ լեռնային բնակավայրի օրինակ, որտեղ հաշվի են առնված տարածության արդյունավետ օգտագործման սկզբունքները:

GABRIELYAN Rafik (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: rafik.gabrielyan.iae@gmail.com

ZEITUN AS A TERRACED SETTLEMENT

Zeytun, located in the northeastern part of Cilician Armenia, is a unique example of an Armenian settlement that maintained a certain level of autonomy for several centuries. The geographical location of the region, characterized by steep gorges, slopes and limited accessibility, contributed to the formation of a special form of self-government and sustainable forms of land use.

The presented work provides a comprehensive analysis of historical, topographic, ethnographic and geoinformation sources, including old photographs and travel notes, in order to reconstruct the cultural landscape of Zeytun. Particular attention is paid to the terracing system, both in the construction of the settlement and in agricultural activities.

According to the study, Zeytun was founded between 1375 and 1409 on the site of a Byzantine settlement. Armenian settlement is associated with the activities of Zarmanuhi, the wife of the sparapet Hethum.

Zeytun developed as a strategically fortified point, thanks to control over narrow gorges, the presence of bridges and the ability to quickly retreat to hard-to-reach areas. The city had a stepped, amphitheater architecture: houses were built on slopes, and the roofs were used as streets and courtyards. This distribution of space ensured the maximum use of limited land and resources. The roof structure included strong beams, clay waterproofing and rainwater drainage systems. Some houses protruded over the cliffs, supported by wooden beams.

In agriculture, a distinction was made between arable farming and gardening. Agriculture was carried out on terraced slopes. In the gardens located near the rivers, grapes, figs, nuts, olives, etc. were grown. Armenians practiced temporary resettlement in "garden houses" (aygetun).

Zeytun was the center of not only economic but also cultural activity. The remoteness, self-sufficiency and special living conditions have formed the skills of self-defense and strategic thinking among the Zeitun people. The unique architecture, economic forms and social organization make Zeitun a vivid example of the adaptation of Armenian culture to the mountain environment.

Thus, the presented study emphasizes the importance of Zeitun as an example of a sustainable mountain civilization, where space is developed with maximum efficiency thanks to traditions, labor and interaction with the natural environment. The terrace culture of Zeitun is the result not only of economic rationality but also of forced political choice in conditions of oppression.

ГАБРИЕЛЯН Рафик (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: rafik.gabrielyan.iae@gmail.com

ЗЕЙТУН КАК ТЕРРАСНОЕ ПОСЕЛЕНИЕ

Зейтун, расположенный в северо-восточной части Киликийской Армении, представляет собой уникальный пример армянского поселения, сохранившего определённый уровень автономии на протяжении нескольких столетий. Географическое положение региона, характеризующееся крутыми ущельями, склонами и ограниченной доступностью, способствовало формированию особой формы самоуправления и устойчивых форм землепользования.

В представленной работе проводится комплексный анализ исторических, топографических, этнографических и геоинформационных источников, включая старые фотографии и путевые заметки, с целью реконструкции культурного ландшафта Зейтуна. Особое внимание уделяется системе террасирования, как в строительстве поселения, так и в сельскохозяйственной деятельности. Согласно исследованию, Зейтун был основан между 1375 и 1409 годами на месте византийского поселения. Армянское заселение, связано с деятельностью Зармануи — супруги спарапета Хетума.

Зейтун развивался как стратегически укреплённый пункт, благодаря контролю над узкими ущельями, наличию мостов и возможностью оперативного отступления в труднодоступные районы. Город имел ступенчатую, амфитеатральную архитектуру: дома строились по склонам, крыши использовались как улицы и дворы. Такое распределение пространства обеспечивало максимальное использование ограниченных земель и ресурсов. Конструкция крыш включала прочные балки, глиняную гидроизоляцию и системы отвода дождевой воды. Некоторые дома выступали над обрывами, поддерживаемые деревянными балками.

В сельском хозяйстве различали хлебопашество и садоводство. Земледелие велось на террасированных склонах. В садах, располагавшихся вблизи рек, выращивали виноград, инжир, орехи, оливки и тд. Армяне практиковали временное переселение в «садовые дома» (айгетун).

Зейтун являлся центром не только экономической, но и культурной активности. Территориальная удалённость, самодостаточность и особые условия жизни сформировали у зейтунцев навыки самозащиты и стратегического мышления. Уникальная архитектура, формы хозяйствования и социальная организация делают Зейтун ярким примером адаптации армянской культуры к горной среде.

Таким образом, представленное исследование подчеркивает значение Зейтуна как образца устойчивой горной цивилизации, где пространство освоено с максимальной эффективностью благодаря традициям, труду и взаимодействию с природной средой. Террасная культура Зейтуна — это результат не только хозяйственной рациональности, но и вынужденного политического выбора в условиях притеснения.

ԳՐԻԳՈՐՅԱՆ Ավետիս (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ gevorg.gyulum.1995@gmail.com
ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ Գևորգ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ hnaget@mail.ru

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԲԵԿՈՒՄԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՆԱԳԻՏԱԿԱՆ/ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻՑ ԱՆԴԻՆ

Ցանկացած հակամարտության ընթացքում տեղի ունեցող տեղահանությունների հետևանքով խախտվում է տվյալ տարածաշրջանի բնիկների հիշողությունը: Ինչ-որ առումով տեղահանվածների հիշողությունները տեղահանության արդյունքում ենթարկվում են «ռեինկարնացիայի», քանի որ պարտադրանքով լքելով իրենց բնօրրանը և տեղափոխվելով նոր տարածք՝ նրանք հիմնականում, կամա-ակամա, մոռանում են իրենց բնիկ տեղավայրերի հուշարձանների հետ կապված սովորույթներն ու ավանդույթները, և դրանցից շատ քիչ բան են կարողանում ադապտացնել նոր բնակավայրերում: Դրանցից շատերն էլ ստիպված հարմարեցվում են տեղի գրված ու չգրված օրենքներին և ձևաբովանդակային առումով զգալի փոփոխությունների են ենթարկվում:

Հնագիտական հուշարձանների վերաբերյալ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչպես են հուշարձանների հարևանությամբ ապրող հասարակությունները վերաբերվում այդ հնավայրերին՝ խմբագրելով հուշարձանների պատմությունը՝ երբեմն դուրս գալով գիտական հիմնավորումներից, վերածվելով միֆականացված ավանդության՝ պատմամշակութային ժառանգությանն ավելացնելով դրա շուրջ ստեղծված բանավոր ժառանգությունը:

Հնագիտական վայրերի մասին ժողովրդական պատմություններն առաջանում և փոփոխվում են դարերի ընթացում՝ ինչպես խմբագրելով և վերապատմելով նախնական պատմությունները, այնպես էլ նախնական պատմության կորստի դեպքում՝ նոր պատմություններ ստեղծելով: Հետևաբար, հնագիտական վայրերի և սոցիալական խմբերի միջև սերտ կապ կա, որը դրսևորվում է բանահյուսության վերարտադրությամբ: Այդ կապերը ոչ միայն հավատալիքների և կրոնական պատկերացումների մակարդակում են, այլև արտացոլում են ավելի լայն աշխարհայացքներ, ժամանակի սոցիալական և քաղաքական ըմբռնումներ:

Հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածի և լեռնաշղթայից անդին եղած ժողովրդական հնությունների ուսումնասիրությունն ի հայտ է բերում հասարակություններում դրսևորված ուշագրավ և համայնքային կյանքում կարևոր դեր ունեցած օրինակներ, երբ հնագիտական մոնումենտալ հուշարձանները (դամբարաններ, գերեզմաններ, ամրոցներ և այլն) ծառայել են որպես հասարակական և իրադարձային կարևոր վայրեր, իսկ վերջին դարերում էթնիկական և կրոնական

խմբերի տեղաշարժերը լեռնաշղթայի երկու կողմերում՝ նպաստել են դրանց մասին հիշողությունների բեկմանը:

Այս համատեքստում ուշագրավ են 1960-ական թվականներից հետո Խորհրդային Միության տարածքում հայկական հուշարձանների նկատմամբ ադրբեջանական վանդալիզմի դրսևորումները: Այդ դեպքերը զուգահեռը եղան Խորհրդային Ադրբեջանի բնիկ, հարյուր տակոսով հայաբնակ շրջաններում հայերի ինքնության նկատմամբ սկիզբ առած բռնարարքների: Ադրբեջանական իշխանությունները՝ սկսած 1960-ական թթ., երկու հիմնական մոտեցում են որդեգրել հայկական մշակույթի, մասնավորապես հուշարձանների նկատմամբ: Առաջինը դրսևորվել է դրանց յուրացմամբ, երկրորդը՝ ոչնչացմամբ:

Հուշարձանների նկատմամբ վայրագության դրսևորումներն ամենացայտուն կերպով արտահայտվեցին նաև պատմական Գարդման գավառում (համապատասխանում է Խորհրդային Ադրբեջանի Ղազախի, Թովուզի, Գետաբեկի, Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի և Ճահումյանի շրջաններին), որոնք իրենց գազաթնակետին հասան 1988-1992 թթ. բռնագաղթի ընթացքում և դրանից հետո, երբ մասսայականորեն ոչնչացվեցին կամ խեղաթյուրվեցին հայկական հուշարձանները, իսկ բնիկների գաղթով սկսվեց դրանց հետ կապված հիշողության բեկումը:

Այդ շրջանի բնակիչները տեղահանությունից հետո հիմնականում վերաբնակվեցին Սևանա լճի արևելյան ավանգանում, այսինքն՝ լեռնաշղթայի մյուս լանջին, ինչը բավական թարմ պահեց հիշողությունները:

Սույն զեկուցմամբ առաջին անգամ փորձ է արվում անդրադառնալ Գարդմանի հայերի բռնագաղթին, հազարամյա բնօրրանի հետ կապված մշակութային հիշողության մոռացությանը, նոր բնակավայրերում դրանց պահպանմանն ու եղած ավանդազրույցները առկա աշխարհագրական արեալին հարմարեցնելուն: Միաժամանակ Սևանա լճի ավազանը դիտարկվում է որպես Հայկական լեռնաշխարհի տարբեր ազգագրական շրջանների մշակութային խաչման վայր:

GRIGORYAN Avetis (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: gevorg.gyulum.1995@gmail.com
GYULUMYAN Gevorg (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: hnaget@mail.ru

THE FRACTURE OF MEMORY ON THE ARMENIAN-AZERBAIJANI BORDER: HISTORICAL MONUMENTS AND THEIR PHILOLOGICAL/ETHNOGRAPHIC LAYERS IN THE SEVAN BASIN AND BEYOND THE MOUNTAIN RANGE

Forced displacements during any conflict inevitably fracture the memory of indigenous populations in affected regions. In a sense, the memories of displaced communities undergo a

kind of "reincarnation" as, being compelled to abandon their ancestral homeland and relocate to new areas, these populations often—voluntarily or involuntarily—forget the customs and traditions tied to the monuments of their original homeland. Only fragments of these cultural elements are adapted to the new environment, many of which are modified to fit the written and unwritten rules of the host society, resulting in substantial structural and semantic transformations.

The study of folklore surrounding archaeological monuments reveals how local communities, living in proximity to these heritage sites, interpret and reinterpret the history of the monuments—often deviating from scholarly narratives and transforming them into mythologized traditions. This process enriches the cultural heritage with oral layers that develop around the site. Over centuries, such folk narratives evolve, modifying or replacing earlier stories—or inventing entirely new ones in the absence of the original narratives. Therefore, there exists a close relationship between archaeological sites and the surrounding social groups, expressed through the reproduction of folklore. These connections transcend mere religious or mythical beliefs and reflect broader worldviews, social consciousness, and political perceptions of the time.

A study of local historical monuments along the Gegharkunik segment of the Armenian-Azerbaijani border and in the regions beyond the mountain ridge reveals significant examples of communal memory. In these areas, monumental archaeological sites (such as burial mounds, cemeteries, fortresses, etc.) have served not only as material heritage but as public and event-centered landmarks. In recent centuries, however, population displacements among ethnic and religious groups on both sides of the ridge have contributed to the fragmentation of memory associated with these sites.

In this context, the acts of Azerbaijani vandalism targeting Armenian monuments after the 1960s in the Soviet Union become particularly striking. These incidents coincided with the early stages of anti-Armenian violence against indigenous Armenian communities living in Soviet Azerbaijan. From the 1960s onward, Azerbaijani authorities adopted two main approaches toward Armenian cultural heritage: appropriation and destruction.

Such acts of cultural violence were most evident in the historical province of Gardman (corresponding to the Soviet Azerbaijani districts of Kazakh, Tovuz, Getabek, Shamkhor, Khanlar, Dashkesan, and Shahumyan), reaching their peak during the forced deportations of 1988–1992. During this period, Armenian monuments were either destroyed or deliberately distorted, and the forced migration of Armenians led to a rupture in the cultural memory associated with them.

Following this displacement, many of the former inhabitants of the Gardman region resettled in the eastern basin of Lake Sevan—on the opposite side of the mountain ridge. This geographical proximity helped preserve and sustain memories of their lost homeland to some extent.

This report presents, for the first time, an attempt to analyze the forced deportation of Armenians from Gardman, the subsequent erosion of memory linked to their ancestral homeland, and the adaptation of related traditions and oral narratives to the new geographical environment. The Sevan Basin is also considered as a unique cultural crossroads of multiple ethnographic regions within the Armenian Highlands, where diverse traditions intersect and coexist.

ГРИГОРЯН Аветис (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: gevorg.gyulum.1995@gmail.com
ГЮЛУМЯН Геворг (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: hnaget@mail.ru

ИЗЛОМ ПАМЯТИ НА АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКОЙ ГРАНИЦЕ: ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ И ИХ ФИЛОЛОГИЧЕСКИЕ/ ЭТНОГРАФИЧЕСКИЕ СЛОИ В БАССЕЙНЕ ОЗЕРА СЕВАН И ЗА ПРЕДЕЛАМИ ГОРНОГО ХРЕБТА

Любой вооружённый конфликт, сопровождающийся насильственным переселением, неизбежно нарушает коллективную память коренного населения. В определённом смысле, воспоминания переселённых общин претерпевают своеобразную «реинкарнацию»: покидая родные земли под принуждением и обосновываясь в новых регионах, люди, как правило, утрачивают связь с памятниками своей прежней родины, забывают связанные с ними обычаи и традиции. Лишь малая часть этих элементов адаптируется к новой среде, причём часто — в изменённом виде, соответствующем местным (написанным и ненаписанным) нормам, что ведёт к их значительным содержательным и формальным преобразованиям.

Изучение народного фольклора, связанного с археологическими памятниками, показывает, как живущие поблизости сообщества воспринимают эти объекты, редактируют их историю, выходя за пределы научного дискурса и превращая её в мифологизированную традицию. Такие процессы добавляют к культурному наследию устные слои, формирующиеся вокруг памятников. С течением веков эти предания изменяются: ранние версии редактируются и пересказываются заново, а в случае утраты первоначального содержания— возникают совершенно новые повествования. Таким образом, между археологическими объектами и социумами, их окружающими, складываются тесные связи, выражающиеся в фольклорной трансляции. Эти связи охватывают не только сферу верований и религиозных представлений, но и более широкие системы мировоззрения, социального и политического самопонимания эпохи.

Исследование памятников народной старины на участке армяно-азербайджанской границы в Гегаркунике и за пределами горного хребта выявляет ценные примеры роли монументальных объектов (курганов, могильников, крепостей и т.п.) в общественной жизни. Эти объекты служили центрами важнейших событий, а позднее — с перемещением этнорелигиозных групп с обеих сторон хребта — начался процесс разрушения связанной с ними памяти.

В этом контексте особо примечательны случаи вандализма в отношении армянских памятников, зафиксированные на территории Советского Союза после 1960-х годов. Эти явления совпали с ростом насилия против армянской идентичности в коренных (в то время полностью армянонаселённых) районах Советского Азербайджана. С начала

1960-х годов азербайджанские власти применяли две основные стратегии по отношению к армянскому культурному наследию: присвоение и уничтожение.

Наиболее ярко эти акты культурного насилия проявились в исторической области Гардман (соответствует районам Казах, Товуз, Гетабек, Шамхор, Ханлар, Дашкесан и Шаумян в составе Советского Азербайджана). В период насильственного выселения армян в 1988–1992 годах и после него армянские памятники подверглись массовому уничтожению и искажению, а утрата памяти сопровождалась депортацией коренного населения.

Большинство переселённых армян из Гардмана обосновались в восточном бассейне озера Севан, то есть на противоположной стороне горного хребта, что способствовало частичному сохранению памяти о покинутой родине.

Настоящее исследование впервые предпринимает попытку осмысления депортации армян из Гардмана, утраты культурной памяти, связанной с тысячелетней родиной, и адаптации связанных с ней преданий и мифов к новой географической среде. Бассейн озера Севан при этом рассматривается как уникальное пространство культурного пересечения различных этнографических регионов Армянского нагорья.

ԳՐԻԳՈՐՅԱՆ Վարդուհի (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ varduhi.grigoryan@iae.am

ԳԱԶՊԵՆ ԿԱՄ «ՀԱՅՈՑ ՄԱՆԱՆԱ». ՄՈՌԱՑՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՔԱՂՑՐԱՑՈՒՅԻՉ

Հայկական ավանդական քաղցրեղենների մեջ իր ուրույն տեղն է ունեցել գազպենը կամ գազպան, որը ստացել են կաղնու, հացենու և այլ տեսակի բույսերի վրա առաջացած հատուկ քաղցրահամ նյութը հավաքելու և մշակելու եղանակով: Տարբերում էին գազպենի երկու տեսակ՝ փոշենման, որ ավելի փոքր բույսերի վրա էր լինում (օրինակ՝ գազ կոչվող մանր փշատերև բույսի), և մեղրանման, որ գոյանում էր ծառերի տերևներին: Նյութը, հիմնականում, հավաքում և մշակում էին կանայք: Գազպենն առավելապես տարածված էր Սասունում և Մուշի դաշտում: Այս քաղցր նյութի հիշատակմանը հանդիպում ենք նաև որոշ բանահյուսական նմուշներում. հատկապես՝ երգերում (այդ թվում՝ աշխատանքային երգեր, որոնք երգվում էին հենց գազպեն հավաքելիս), որոնցում այն գովաբանվում է՝ որպես Աստծո կողմից տրված պարգև, երբեմն անվանվելով նաև սուրբ (օրինակ՝ Սուրբ Գազպեն կիջներ վերան, Մշու Գորանի):

Գազպենը տարբեր բարբառներում հայտնի է նաև գասպա, գազպա, կազպե, մանան, ման և այլ անուններով: Հաճախ այն անվանվում էր նաև «մանանա», քանի որ համարվում էր երկնքից տրվող պարգև: Երբեմն հանդիպում ենք նաև «մեղրացող» անվանը: Այն հանդես էր գալիս որպես մի շարք ավանդական կերակուրների հիմնական քաղցրացուցիչ բաղադրիչ: Ընդ որում՝ այն հնարավոր էր օգտագործել և՛ թարմ վիճակում, և՛ պահել ձմռան համար՝ կճուճներով կամ չորացրած տարբերակով: Շատ շրջաններում, որտեղ գազպենն առատ էր, այն նաև փոխանակում էին այլ մթերքների հետ, ինչի արդյունքում այս քաղցր նյութը դառնում էր տնտեսական կարևոր գործոն:

Տարոնում ընդունված էր հարսանեկան ծեսի ժամանակ գազպենը մատուցել նորապսակներին, իսկ ուխտի գնալիս այն տանում էին՝ որպես կարևոր ընծա վանքին (հենց այս պատճառով հաճախ կոչվել է նաև «Սուրբ Կարապետի հալվա»): Այն օգտագործվել է նաև որպես դեղամիջոց, ինչի մասին վկայում է նաև Մխիթար Հերացին, իսկ Անանիա Շիրակացին այն հիշատակում է Տարոնի բարիքների ցանկում: Չնայած գազպենի այսքան տարածված ու ընդունված լինելուն՝ Հայոց ցեղասպանության հետևանքով տեղի ունեցած գաղթի արդյունքում, քաղցրահամ նյութի բացակայությամբ պայմանավորված, այլ շրջաններում վերաբնակեցվածների սերունդները այլևս չեն պատրաստում և կիրառում այն: Իսկ տնտեսական ու ծիսական մասով դրան հիմնականում փոխարինելու են եկել մեղրը և շաքարը:

Նյութի ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել ՀՀ ԳԱԱ արխիվային նյութերը, որոնք պատմահամեմատական մեթոդի սկզբունքով համադրվել են ազգագրական, գեղարվեստական գրականության մեջ, բանահյուսական նմուշներում տեղ գտած նյութի հետ: Վերլուծվել են քաղցրեղենի ստացման և մշակման ավանդական եղանակները, դիտարկվել, ինչպես հիմնական բնամթերք, այպես էլ ծիսական քաղցրեղեն լինելու հիշատակված տաբերակները: Վեր են հանվել դրա երբեմնի տարածվածությունն ու կարևորությունը հայոց մշակույթում:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գազպենը որոշ շրջաններում փոխարինել է մեղրին, լրացրել քաղցրի հիմնական պաշարն ու հանդես եկել որպես մի շարք ծիսական գործողությունների բաղադրատարր, այն նաև օգտագործվել է որպես դեղամիջոց, եղել տնտեսական հարաբերությունների կարևոր մաս՝ որպես փոխանակվող հիմնական բնամթերքներից մեկը: Դրա ստացման ու պահպանման եղանակները ժամանակի ընթացքում ձևավորել են պատրաստման ավանդական եղանակ, որը տեղահանության հետևանքով մոռացվել է, իսկ դրա օգտագործումը փոխարինվել է մեղրով, շաքարով և այլ քաղցրացուցիչներով:

GRIGORYAN Varduhi (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: varduhi.grigoryan@iae.am

GAZPEN OR THE "ARMENIAN MANNA": A FORGOTTEN TRADITIONAL SWEETENER

Among traditional Armenian sweeteners, gazpen (also known as gazpan) held a distinctive place. This natural substance was harvested and processed from a specific sweet

material that formed on oak, elm, and various other plants. Two main types of gazpen were distinguished: a powdery form that appeared on smaller plants (e.g., a shrub known as gaz), and a honey-like form that developed on tree leaves. The collection and processing of gazpen were primarily carried out by women. It was especially common in the regions of Sasun and the Mush plain. References to this sweet substance are also found in certain examples of Armenian folklore—especially songs, including work songs traditionally sung during gazpen collection. In these songs, gazpen was praised as a divine gift and was at times referred to as sacred (e.g., Surb Gazpen k'ichner veran, Mush's Gorani).

Gazpen is known in various dialects under different names, including gaspa, gazpa, kazpe, manana, man, and others. It was often called "manana" due to its perceived divine origin, likened to the biblical manna from heaven. Occasionally, the term melq'rachogh ("sweetener" or "honey-maker") was also used. Gazpen served as a primary sweetening ingredient in many traditional dishes. It could be consumed fresh or preserved for winter use, either in jars or in dried form. In regions where gazpen was abundant, it was also used as a bartering item for other goods, giving it notable economic importance. In Taron, it was customary to serve gazpen to newlyweds during wedding rituals, and to bring it as an offering to monasteries during pilgrimages. For this reason, it was often referred to as "Surb Karapet's halva." Gazpen was also used medicinally, as noted by Mkhitar Heratsi, and Anania Shirakatsi listed it among the resources of Taron.

Despite its once widespread presence, the tradition of collecting and using gazpen has largely disappeared following the Armenian Genocide, as survivors resettled in regions where the substance was unavailable. In most cases, honey and sugar came to replace it both in culinary and ritual contexts.

This study is based on archival materials from the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA), which were analyzed using the principles of the historical-comparative method. These were cross-referenced with ethnographic data, artistic literature, and examples of folklore containing references to gazpen.

The research examined the traditional methods of obtaining and processing gazpen, considering it both as a natural product and a ritual sweetener. Variants of its use in cultural and ceremonial contexts were explored. The analysis also highlights the extent of its historical usage and significance within Armenian culture.

The study reveals that in some regions, gazpen served as a substitute for honey, supplementing the community's primary sources of sweetness. It was an integral part of various rituals, served as a medicinal substance, and held economic value as a barter item. Over time, the traditional techniques for harvesting and preserving gazpen formed a well-established cultural practice. However, displacement and migration led to the loss of this tradition, and its use has since been replaced by honey, sugar, and other sweeteners.

ГРИГОРЯН Вардуи (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: varduhi.grigoryan@iae.am

ГАЗПЕН ИЛИ «АРМЯНСКАЯ МАННА»: ЗАБЫТЫЙ ТРАДИЦИОННЫЙ ПОДСЛАСТИТЕЛЬ

Исполнители держали по две рюмки — одну на большом, другую на указательном пальце. В Арагацотнской и Гегаркуникской областях танец считался исключительно женским. В селе Уджане Аштаракского района молодым девушкам не позволялось танцевать без рюмок — они были прерогативой старших. По преданиям информаторов из Апарана, “Юри-Юри” включает шесть смен движений. В селе Лусагюха Апаранского района, женщины во время исполнения закрывали лицо платком. В некоторых местах танец исполнялся без рюмок из-за их недоступности. В селе Лернанист Котайкской области использовались платки вместо рюмок. В селе Алапарсе, напротив, только мужчины имели право танцевать с рюмками, и танец продолжался до тех пор, пока рюмки не разбивались.

Таким образом, исходя из вышеизложенных фактов, данный сольный танец в течение нескольких десятилетий не исполнялся в рамках различных обрядовых мероприятий, что привело к утрате его практического функционирования и превращению в составляющую исторической памяти армянской танцевальной культуры.

ՇՈՒՎԱԵՎԱ Ելենա (Հայաստան)
Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ
էլ. հասցե՝ lena478@mail.ru

Վ.Վ. ՎԵՐԵՇՉԱԳԻՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈԼՈԿԱՆՆԵՐԸ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ (1865 թ.)

Ներկայացվող զեկուցման նյութը ներառում է համակողմանի ազգագրական վերլուծություն Վասիլի Վասիլևիչ Վերեշչագինի՝ XIX դարի նշանավոր ռուս մարտանկարչի և ռեալիստի ստեղծագործական ժառանգության, որն անդրադառնում է Անդրկովկասում նրա հանդիպումներին մոլոկանների համայնքների հետ: Հետազոտության հիմքը կազմում են նկարչի ճանապարհային օրագրերը և ակնարկները, ինչպես նաև նրա գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքները, որոնք ստեղծվել են 1865 թ. ազգագրական արշավախմբի շրջանակում:

Զեկուցման շրջանակում մանրամասնորեն դիտարկվում են մոլոկան համայնքի ծիսական և արարողակարգային առանձնահատկությունները, արձանագրվում են ներքին կրոնական տարաձայնությունները, մասնավորապես՝ տարբերությունները ավանդական «մաքուր» մոլոկանների և էքստատիկ ուղղության՝ «ցատկողների» միջև: Բացի այդ, վերլուծության է ենթարկվում նաև տեղական սոցիալական համատեքստը, որի մեջ զարգացել և գոյություն են ունեցել այս կրոնական խմբերը:

Վերեշչագինը կիրառել է համադրական և բազմաշերտ մոտեցում դուխոբորների և մոլոկանների ուսումնասիրության գործում՝ միաժամանակ օգտագործելով գեղարվեստական փաստագրումը և նրանց դավանանքին, կենցաղային ավանդույթներին ու սոցիալ-մշակութային առանձնահատկություններին վերաբերող վերլուծական դիտարկումները: Նրա արձանագրություններն ընդգրկում են ոչ միայն կրոնական կյանքի արտաքին արտահայտությունները՝ հագուստը, ծեսերը, գենդերային դերաբաշխումը և համայնքային սոցիալական հիերարխիան, այլև համայնքի ներսում առկա հոգեբանական և բարոյական հակասությունները, որոնք բնորոշ են փակ և հալածվող խմբերին:

Հատուկ ուշադրության առարկա է դառնում «մաքուր» մոլոկանների աստվածապաշտության ընթացքը: Վերեշչագինը նկարագրում է Սուրբ Գրքի ընթերցման ծեսը՝ ուղեկցվող երեցների մեկնաբանություններով, սաղմոսների խմբակային երգեցողությունը, ինչպես նաև եղբայրության և փոխադարձ ճանաչման խորհրդանշական համբույրի ծեսը: Դրան հակադրվում է «ցատկողների» ուղղությունը, որը բնութագրվում է էքստատիկ դրսևորումներով, երկարատև ժամերգություններով, մարմնական էքստազով ու միստիկ ելույթներով, ինչը Վերեշչագինի կողմից ընկալվում է քննադատական և զգուշավոր վերաբերմունքով:

Վերեշչագինի ստեղծած մոլոկանների գեղարվեստական դիմանկարները ոչ միայն գեղագիտական արժեք են ներկայացնում, այլև կարևոր գիտական աղբյուր են. դրանք հնարավոր են դարձնում ուսումնասիրել ազգային տարազի առանձնահատկությունները, համայնքի անդամների տարիքային ու գենդերային տարբերությունները, ինչպես նաև հոգեբանական ներաշխարհը:

Ընդհանուր առմամբ, Վերեշչագինի հավաքածուի նյութերը կարևոր և եզակի աղբյուր են XIX դարի կեսերի Կովկասի կրոնական փոքրամասնությունների ուսումնասիրման համար՝ միավորելով գեղարվեստական արտահայտչականությունը, էթնոգրաֆիական ճշգրտությունը և մոլոկան համայնքների ներսում տեղի ունեցած մշակութային ու կրոնական գործընթացների խորքային ըմբռնումը:

SHUVAYEVA Elena (Armenia)
Ijevan Branch of Yerevan State University
e-mail: lena478@mail.ru

V.V. VERESHCHAGIN AND THE MOLOKANS OF TRANSCAUCASUS - ETHNOGRAPHIC CHRONICLE OF (1865)

The report presents a comprehensive ethnographic analysis of the materials of Vasily Vasilievich Vereshchagin, one of the most prominent Russian battle painters and realists of the 19th century, focusing on his encounters with the Molokans in the Transcaucasus. The study is based on the artist's travel diaries and essays, as well as his paintings and graphic works created during his 1865 ethnographic expedition. The report thoroughly examines the characteristics of the Molokan community's worship services and rituals,

documents internal religious disagreements—particularly the distinctions between the traditional "pure" Molokans and the ecstatic sect of the "Jumpers"—and analyzes the local social context in which these religious groups existed.

Vereshchagin demonstrates a holistic approach to studying the Doukhobors and Molokans by combining artistic representation with analytical reflection on their doctrine, everyday customs, and sociocultural features. His observations capture not only the external attributes of religious life—such as clothing, rituals, gender roles, and social hierarchy—but also the internal psychological and moral tensions characteristic of these insular and persecuted communities. Special attention is given to the description of the "pure" Molokans' worship, where Vereshchagin records the ritual of Scripture reading accompanied by presbyter interpretations, communal psalm singing, and the ritual of kissing as a symbol of brotherhood and mutual recognition. In contrast, the ecstatic "Jumpers" are described as engaging in prolonged services marked by bodily ecstasy, crying, jumping, shouting, raised hands, and glossolalia, which Vereshchagin regards with skepticism.

Vereshchagin's artistic portraits of the Molokans serve not only aesthetic but also scientific purposes, reflecting details of traditional costume, age and gender distinctions, and the psychological states of community members.

Vereshchagin's materials constitute a unique source for studying the religious minorities of the Caucasus in the mid-19th century, combining artistic expressiveness with ethnographic accuracy and a profound understanding of the cultural and religious processes occurring within the Molokan milieu.

ШУВАЕВА Елена (Армения)
Иджеванский филиал Ереванского государственного университета
e-mail: lena478@mail.ru

В.В. ВЕРЕЩАГИН И МОЛОКАНЕ ЗАКАВКАЗЬЯ — ЭТНОГРАФИЧЕСКАЯ ХРОНИКА (1865 г.)

В докладе проводится комплексный этнографический анализ материалов Василия Васильевича Верещагина, одного из выдающихся русских баталистов и реалистов XIX века, посвящённых его встречам с молоканами в Закавказье. Основой исследования служат путевые дневники и очерки художника, а также его живописные и графические работы, созданные в ходе этнографической экспедиции 1865 года. В докладе подробно рассматриваются особенности богослужений и обрядов молоканской общины, фиксируются внутренние религиозные разногласия, в частности, различия между традиционными «чистыми» молоканами и экстатическим течением «прыгунов», а также анализирует локальный социальный контекст, в котором существовали эти религиозные группы.

Верещагин демонстрирует комплексный подход к изучению духоборов и молокан, сочетая художественную фиксацию с аналитическим осмыслением их вероучения, бытовых традиций и социокультурных особенностей. Его наблюдения отражают не только внешние атрибуты религиозной жизни — одежду, ритуалы, гендерные роли и социальную иерархию — но и внутренние психологические и моральные противоречия, характерные для замкнутых и преследуемых общин. Особое внимание уделяется описанию богослужений «чистых» молокан, где Верещагин фиксирует ритуалы чтения Писания с толкованиями пресвитера, совместное пение псалмов и обряд поцелуев как символ братства и взаимного признания. В противоположность им описывается религиозное течение «прыгунов», характеризующееся экстатическими проявлениями, продолжительными службами, телесным экстазом и мистическими речами, что вызывает у Верещагина скептическое отношение.

Художественные портреты молокан, выполненные Верещагиным, служат не только эстетическим, но и научным целям, отражая детали национального костюма, возрастные и гендерные особенности, а также психологическое состояние представителей общины.

Материалы Верещагина представляют собой уникальный источник для изучения религиозных меньшинств Кавказа середины XIX века, объединяя художественную выразительность с этнографической точностью и глубоким пониманием культурных и религиозных процессов, происходивших в молоканской среде.

ՊԱՊԻԿՅԱՆ Քրիստինե (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ papikyanqristine8@gmail.com

ՉԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ «ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ»-Ը ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

XVII դ. ականավոր պատմագիր Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը բաղկացած է երեք մասից, որը ընդգրկում է հայոց պատմությունը՝ սկսած Արշակունիների թագավորությունից, Սասանյանների դինաստիայի հաստատումից մինչև 1699 թվականը:

Պատմագիրը ծնվել է Կոտայք գավառի Քանաքեռ գյուղում 1627 թ. և իր հետագա ստեղծագործական կյանքն ու գործունեությունը ծավալել է Արագածոտն գավառում՝ Հովհաննավանքում (մահացել է Հովհաննավանքում՝ 1699 թ.): Այս է

պատճառը, որ նա իր աշխատանքի մեծագույն մասը նվիրել է այս շրջանների ուսումնասիրությանը: Քանաքեռցու «Պատմագրութիւն» աշխատության մեջ գրառված նյութերը վերաբերում են ուշ միջնադարի Հայաստանի տնտեսական կյանքի հիմնական ճյուղերին: Մասնավորապես նա անդրադարձել է դաշտամշակությանը և գյուղատնտեսության մյուս ենթաճյուղերին (երկրագործություն, պտղաբուծություն, այգեգործություն): Ուշագրավ են նրա տեղեկությունները նշված բնագավառների հետ կապված արտադրական կառույցների վերաբերյալ: Քանաքեռցին մանրամասն տեղեկություններ է հաղորդում երկրագործության մեջ կիրառվող աշխատանքային գործիքների մասին: Նրա տվյալները կարևոր պատմական-ազգագրական սկզբնաղբյուր են հանդիսանում: Պատմիչը, իր աշխատանքը շարադրելիս, հիմք է ընդունել ոչ միայն վիմագիր արձանագրությունները, մատենագիր գրականությունը, իբրև բանահավաք, ականատես-վկայի ճշգրտությամբ հստակ ու արժանահավատ տեղեկություններ է հաղորդում իր ժամանակաշրջանի պատմության, սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ: Քանաքեռցու «Պատմագրութիւն» երկի առանցքն աշխատավոր, կոռի աշխատանքի տակ կքած հայ գյուղացին է, ով գտնվելով պարսկական տիրապետության տակ՝ ենթարկվում էր ընչաքաղց խաների կամայականություններին, ապօրինի հարստահարումներին ու ծանր հարկային քաղաքականությանը: Պատմագիրը անդրադարձել է նաև պարսիկ խաների կողմից տնտեսության զարգացմանն ուղղված աշխատանքների իրականացմանը, որոնք հետապնդում էին քաղաքական և անձնական շահեր: Պարսիկ խաները հարստություն ձեռք բերելու նկատառումներով Կոտայքի և Արագածոտնի տարածքներում անց են կացնում ջրանցքներ ոռոգման համակարգը բարելավելու համար, ինչը կարող էր նպաստել իրենց հարստացմանը:

Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը կարևոր սկզբնաղբյուր է հանդիսանում իր ապրած ժամանակաշրջանի Հայաստանի պատմության, քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության տեսանկյունից: Նրանում զետեղված ազգագրական նյութերը հիմք են հանդիսանում ուշ միջնադարում հայ ժողովրդի տնտեսական կյանքի նկարագրի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու համար՝ հնարավորություն տալով հետագա նոր ուսումնասիրությունների իրականացմանը: Եթե վաղ և զարգացած միջնադարի պատմիչների հաղորդած տվյալները խիստ կարևոր են Հայաստանի աշխարհիկ և հոգևոր դեմքերի կյանքի և գործունեության զանազան խնդիրները հասկանալու և պարզաբանելու համար, ապա XVII դ. պատմիչների երկերի հիմնական ատաղձը շարքային ժողովուրդն է, որով էլ այն առանձնանում է վաղ շրջանի պատմիչների երկերից: Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը եզակի սկզբնաղբյուր է հասարակ մարդու կյանքն ու կենցաղը լուսաբանելու համար: Նրա հերոսը հայ շինականն է, երկրագործը, արհեստավորը: Այս առումով ուշ միջնադարի պատմիչներ Զաքարիա Քանաքեռցին, Առաքել Դավրիժեցին, Զաքարիա Ագուլեցին, Գրիգոր Դարանաղցին գալիս են նպաստելու շարքային գյուղացու կյանքի ամենատարբեր ոլորտների լուսաբանմանը: Թեման արդիական և կարևոր է այս առումով:

PAPIKYAN Kristine (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: papikyanqristine8@gmail.com

"CHRONICLE" OF ZAKARIA KANAKERTSI AS A SOURCE ON ARMENIAN AGRICULTURE

"The Chronicle", written by the renowned 17th-century Armenian historian Zakaria Kanakertsi, is divided into three parts. It presents a historical account of Armenia from the Arshakid Kingdom and the rise of the Sassanid dynasty up to the year 1699. Zakaria Kanakertsi was born in 1627 in the village of Kanaker in the Kotayk region. He served as the abbot of the Hovhannavank Monastery in the Aragatsotn region and died there in 1699. His chronicle primarily focuses on the regions of Aragatsotn and Kotayk, highlighting the main branches of the late medieval Armenian economy, particularly agriculture — field cultivation as well as related sub-branches such as farming, fruit growing, and gardening. The information he provides serves as a valuable historical and cultural primary source. Kanakertsi based his work on the writings of earlier chroniclers and epigraphic inscriptions carved on various monuments. As a direct witness to many of the events he describes, his accounts are considered credible and accurate. He places special emphasis on the condition of the Armenian peasantry, who, under Persian domination, endured severe oppression, including the tyranny of local khans, unlawful exploitation, and a heavy tax burden. Additionally, Kanakertsi addresses the economic policies carried out by the Persian khans, driven by both political motives and personal interests. In pursuit of wealth, these khans constructed irrigation canals in the territories of Kotayk and Aragatsotn, aiming to boost agricultural productivity and, ultimately, their own profits.

"The Chronicle" of Zakaria Kanakertsi is a valuable source for the study of the historical period in which the author lived, as well as the political, social, and economic life of Armenia during the late Middle Ages. The ethnographic details contained in the work provide a crucial foundation for understanding various aspects of the daily life and economic activities of the Armenian people.

Unlike historians of the early and high Middle Ages, who primarily focused on secular and religious elites, 17th-century Armenian authors shifted their attention to the lives of ordinary people. Particularly noteworthy in this regard is "The Chronicle" of Zakaria Kanakertsi, in which the narrative centers on the farmer, the artisan, and the builder — representatives of the working class. Alongside other late medieval authors such as Arakel Davrizhetsi, Zakaria Aguletsi, and Grigor Daranakhtsi, Kanakertsi made a significant contribution to documenting various aspects of peasant life. The study of this aspect makes the topic of the article particularly relevant.

ПАПИКЯН Кристине (Армения)
Институт Археологии и этнографии НАН РА
e-mail: papikyanqristine8@gmail.com

«ХРОНИКА» ЗАКАРИИ КАНАКЕРЦИ КАК ИСТОЧНИК О ЗЕМЛЕДЕЛИИ АРМЯН

«Хроника» – труд знаменитого историка XVII в. Закарии Канакерци, разделен на три части. В нем он изложил историю Армении, начиная от царства Аршакидов и установления династии Сасанидов вплоть до 1699 г. Историк родился в 1627 г. в селе Канакер Котайкской области и был настоятелем монастыря Ованнаванк в Арагацотнской области. Он умер в Ованнаванке в 1699 г. Его труд в основном посвящен изучению Арагацотна и Котайка, в частности ключевым отраслям экономики позднесредневековой Армении: возделывание полей и другие подотрасли сельского хозяйства (земледелие, плодоводство, садоводство). Он пишет также о производственных строениях, связанных с ними, и дает детальное описание земледельческих орудий. Приводимые им сведения представляют собой ценные историко-культурные первоисточники. В своей работе он опирался на труды предыдущих летописцев, а также на эпиграфические надписи, высеченные на памятниках. Будучи непосредственным свидетелем описываемых событий, Канакерци передает достоверную информацию об исторических реалиях и экономической жизни армянского народа. Особое внимание он уделяет положению крестьян, которые, находясь под персидским гнетом, страдали от тирании ханов, произвола и тяжелого налогового бремени. Историк также коснулся вопроса осуществления хозяйственных работ персидскими ханами, которые преследовали политические и личные интересы. Для обогащения персидские ханы строили каналы на территориях Котайка и Арагацотна для улучшения ирригационной системы, что могло способствовать их обогащению.

«Хроника» Закарии Канакерци является ценным источником для изучения исторической эпохи, в которой жил автор, а также политической, социальной и экономической жизни Армении в позднем Средневековье. Этнографические сведения, содержащиеся в труде, служат важной основой для освещения различных аспектов повседневной и хозяйственной жизни армянского народа.

В отличие от историков раннего и развитого Средневековья, сосредоточенных на деятельности светских и духовных элит, армянские авторы XVII в. уделяют основное внимание жизни простого народа. Особое значение в этом контексте имеет «Хроника» Закарии Канакерци, где в центре повествования находятся земледелец, ремесленник, строитель — представители трудового слоя. Вместе с другими авторами позднего Средневековья, такими как Аракел Даврижеци, Закария Агулеци и Григор Даранахци, он вносит важный вклад в освещение различных сфер жизни крестьянства. Изучение этого аспекта делает тему статьи особенно актуальной.

ՍԱՐԳՍՅԱՆ Արմինե (Հայաստան)
Երևան քաղաքի պատմության թանգարան
էլ. հասցե՝ meryavetisyan1984@gmail.com

ՀԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ (ԸՆԴՀԱՆՈՒՐ) ԽԱՆՈՒԹՆԵՐՆ ԸՍՏ «ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ» ԹԵՐԹԻ

Հին Երևանի ներքաղաքային կյանքի ու կենցաղի տարբեր ոլորտներն ուսումնասիրելու տեսանկյունից անսպառ աղբյուր է «Эриванскія объявленія» թերթը, որն ավելի քան 100 տարի անց էլ չի կորցրել իր արդիականությունը վերոնշյալ հարցերի վերաբերյալ բազմաթիվ նոր բացահայտումներ անելու առումով:

Թերթը հրատարակվել է 1883-1917 թթ.-ին, սկզբում հայերեն, որոշ ժամանակ ռուսերեն, հետո նաև երկլեզու: Այն լույս է տեսել շաբաթը 1-3 անգամ, նախկին Քարվանսարայի (այժմ՝ Աբովյան փողոցին զուգահեռ՝ մինչև Թումանյան փողոցը) թիվ 41 առանձնատանը: Թերթի գլխավոր խմբագիրն էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի շրջանավարտ, մշակութային հայտնի գործիչ Էմին Տեր-Գրիգորյանը: Այն բաժանվում էր անվճար, իսկ տպագրության հետ կապված ծախսերը փոխհատուցվում էին գովազդային վճարներից գոյացած գումարով:

Ներկա շարադրանքում գերազանցապես «Эриванскія объявленія»-ում (այսուհետ կօգտագործենք «Երևանի հայտարարություններ» հայերեն անվանումով հապավումը՝ «ԵՀ») տեղ գտած նյութերի հիման վրա անդրադարձ է արվել 19-րդ դարի վերջերին-20-րդ դարի սկզբներին քաղաքում գործող ունիվերսալ (ընդհանուր) խանութներին, դրանցում վաճառվող ապրանքատեսակներին, խանութների անվանումներին, ընդունված գովազդային դիմելաձևերին և այլն: Վերոհիշյալ հարցերը ներկայացնելու համար, կատարվել են հետևյալ դիտարկումները. ա)ունիվերսալ խանութներում խառը վաճառվում էին ամենատարբեր ապրանքներ՝ սկսած հագուստներից մինչև բնակչության շինբարեկարգման ու կենցաղային պահանջմունքները բավարարող, բ) հայ առևտրականների միջոցով քաղաք էին ներմուծվում եվրոպական ու ռուսական տարբեր ապրանքատեսակներ, որոնք մինչ այդ ընդունված չէին և ծանոթ չէին քաղաքացիներին, գ) քաղաքում ձևավորվում էին առևտրական գիլդիաները և վարձակալությամբ տարածք տրամադրելու ավանդույթը, դ) խանութների ճնշող մասը համապատասխան արտասահմանյան ընկերությունների մասնաճյուղն էին, որոնց սեփականատերը հայեր էին կամ համատեղ սեփականություն էին, ինչի մասին վկայում են դրանց օտար անվանումները՝ «Կորեա», «Եվրոպական», «Փոքր Մոսկվա», «Սաքսոնական», «Յարոսլավլյան» և այլն:

Հատկանշական է նաև, որ «ԵՀ»-ում խանութների վերաբերյալ տեղեկատվությունը հաճախ ստանում ենք միջնորդավորված ձևով, ինչպես, օրինակ՝ «Աստաֆյան փողոցում վաճառվում է 30-90 արշին չափով այգի, հարցնել Իոսիֆ (Հովսեփ) Խաչատրյանցի երկաթեղենի խանութում»:

Թերթի հայտարարությունները թույլ են տալիս ասելու, որ քաղաքի բոլոր խանութները գերազանցապես տեղակայված էին կենտրոնում, մասնավորապես Աստաֆյան (այժմ՝ Աբովյան): Դրանց տերերը մեծահարուստներ էին, ովքեր շատ հա-

ճախ, իրենց առանձնատների առաջին հարկերը տրամադրում էին սեփական խանութներին կամ տալիս էին վարձակալությամբ:

Ուշադրություն է գրավում նաև գովազդներում քաղաքացիներին դիմելու ձևերը, որոնցում հորդորվում է գնորդների նկատմամբ ուշադիր և հարգալից վերաբերմունք դրսևորել:

Շարադրանքում ունիվերսալ խանութները ընդգրկվել են հետևյալ խմբերում՝ երկաթեղենի, ներկերի, կաշվեղենի, կահույքի, ծաղիկների, ոսկեղենի, ժամացույցների, կոսմետիկայի, կարի մեքենաների: Երկաթեղենի խանութներից էին Իսահակ Տեր-Իսահակյանի, Հովսեփ Խաչատրյանցի, Թորոսյան եղբայրների «Նալբանդ», Շահինյանցի խանութները:

Հին Երևանի կահույքի հայտնի խանութներից էր «Կորեան», Օ. և Հ. Մնացականյան եղբայրների ոսկեղենի և ժամացույցների խանութները, ծաղիկների «Ֆլորա» խանութը և Բ. Եղիազարովի ջերմոցը (այստեղ բացի բույսեր ու ծաղիկներ աճեցնելուց, կատարվում էր նաև դրանց վաճառքը):

Շատ հետաքրքիր է կոսմետիկայի խանութների վերաբերյալ տեղեկատվությունը, որի շնորհիվ պատկերացում է ստեղծվում ոչ միայն վաճառվող կոսմետիկ պարագաների մասին, այլև երևում է, որ առանձին կոսմետիկայի խանութներ փաստորեն չեն եղել, այլ դրանք, որպես կանոն վաճառվել են դեղատներում: Բացառություն էր բերդի փողոցում՝ Աֆրիկյանների տանը, գործող «Էկոնոմիա» դեղապարֆումերիա-կոսմետիկայի խանութը:

Կարի մեքենաների խանութների հայտարարություններից տեղեկանում ենք ժամանակի հայտնի կարի մեքենա արտադրող ֆիրմաների մասին, որոնց արտադրանքը ներկրվում էր Երևան: Բացառիկ վկայություն է «Զինգեր» հայտնի կարի մեքենայի 1884թ. հունիսի 22-ին քաղաք մուտք գործելու վերաբերյալ հայտարարությունը:

Հաղորդման մեջ առանձին անդրադարձ է արվել նաև ընդհանուր տեսակետով այն խանութներին, որոնց վերաբերյալ տեղեկատվությունը հաղորդվում է միայն նրանց տերերի անունները նշելով, ինչը թույլ է տալիս հավաքելու հին Երևանի խանութների հնարավոր ամբողջական խճանկարը:

SARGSYAN Armine (Armenia)
Yerevan History Museum
e-mail: meryavetisyan1984@gmail.com

THE UNIVERSAL (GENERAL) STORES OF OLD YEREVAN ACCORDING TO THE «ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ» NEWSPAPER

From the perspective of studying various aspects of inner-city life and everyday practices in Old Yerevan, the«Эриванскія объявленія»newspaper is an inexhaustible source, which, even more than 100 years later, has not lost its relevance for uncovering numerous new insights intothe above-mentioned issues.

The newspaper was published in 1883-1917, initially in Armenian, later for a time in Russian, and eventually in both languages. It was published 1-3 times a week, atHouse No. 41 of the former Caravanserai (now parallel to Abovyan Street, up to Tumanyan Street). The editor-in-chief was Emin Ter-Grigoryan, a graduate of the Lazarian Seminary in Moscow and a prominent cultural figure. The newspaper was distributed free of charge,with printing costs covered by the revenue from advertisements.

In the present study, based primarily on materials published in the «Эриванскія объявленія»(hereafter referred to by its Armenian abbreviation"YA" – "Yerevan Advertisements"), reference is made to the universal (general) stores operating in the city in the late 19th and early 20th centuries, the types of products sold in them, the names of the stores, common advertising forms, and more. To present the above-mentioned issues, the following observations have been made: a) A wide variety of products were sold in universal stores, ranging from clothing to items used for household needs and construction improvement; b)Through Armenian merchants, various European and Russian products, that were previously unfamiliar and uncommon in the city, were imported to Yerevan; c) Trade guilds were taking shape in the city, along with the tradition of renting out premises;d) The majority of stores were branches of relevant foreign companies, whose owners were Armenians or co-owners, as evidenced by their foreign names such as"Korea", "European", "Little Moscow", "Saxon", "Yaroslavl" and others.

It is also noteworthy that in "YA", information about shops is often conveyed indirectly, for example: "A garden measuring 30 to 90 arshins is for sale on Astafyan Street, inquire at Iosif (Hovsep) Khachatryants' hardware store ".

The newspaper announcements allow us to say that all the shops in the city were predominantly located in the center, particularly on Astafyan Street (now Abovyan Street). Their owners were wealthy individuals who often allocated the first floors of their mansions to their own shops or rented them out.

The forms of addressing citizens in the advertisements are also noteworthy, in which sellers are urged to show attentive and respectful behavior toward customers.

In the study, the universal stores were categorized under the following groups: hardware, paint, leather goods, furniture, flowers, jewelry, watches, cosmetics and sewing machines. Among the hardware stores were those of Isahak Ter-Isahakyan, Hovsep Khachatryants, the Torosyan Brothers' "Nalband", and Shahinyants.

Among the famous furniture stores in Old Yerevan was "Korea", the jewelry and watch storesof the O. and H. Mnatsakanyan brothers, the "Flora" flower shop, and B. Yeghi-azarov's greenhouse, where, in addition to growing plants and flowers, they were also sold.

The information on cosmetics stores is particularly interesting,as it provides insight not only into the cosmetic products that were sold but also reveals that, in fact, there were no separate cosmetics stores, but, as a rule, these items were generally sold in pharmacies.The exception was the 'Economia' pharmaceutical-perfumery-cosmetics store, which operated in the Afrikyans’ house on the fortress street.

From the advertisements of sewing machine stores, we learn about the famous sewing machine manufacturing companies of the time, whose products were imported to

Yerevan. A unique testimony is the announcement regarding the entry of the famous 'Singer' sewing machine into the city on June 22, 1884.

This study also makes separate reference to those stores with a general assortment, about which information is provided only through the mention of their owners' names, which allows for the reconstruction of a possible complete mosaic of old Yerevan's stores".

САРГСЯН Армине (Армения)
Музей истории города Еревана
e-mail: meryavetisyan1984@gmail.com

УНИВЕРСАЛЬНЫЕ МАГАЗИНЫ СТАРОГО ЕРЕВАНА СОГЛАСНО ГАЗЕТЕ «ЭРИВАНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ»

С точки зрения изучения городской жизни и различных областей быта старого Еревана газета «Эриванские объявления» является неиссякаемым источником информации, которая по прошествию более 100 лет не потеряла своей актуальности.

Газета издавалась 1883-1917гг. сначала на армянском, некоторое время на русском, затем на двух языках. «Эриванские объявления» выходили от одного, до трех раз в неделю, в особняке под номером 41 на Каравансарайской улице (ныне территория параллельная улице Абовяна, до улицы Туманяна). Главным редактором газеты был выпускник Лазаревского училища, известный деятель культуры Эмин Тер-Григорян. Газета раздавалась бесплатно, а расходы, связанные с типографией, покрывались за счет платы за рекламу.

В данной статье на основе информации из газеты «Эриванские объявления» представлены действующие в конце 19, начале 20в. универсальные магазины, ассортимент их товаров, названия, реклама и т.д. На основе информации можно сделать следующие выводы: Во-первых,в универсальных магазинах продавались самые разные товары, начиная с одежды и до бытовых и строительных товаров. Во-вторых, посредством армянских коммерсантов в город ввозились российские и европейские товары, которые до этого не были известны горожанам. В-третьих, в городе формировались торговые гильдии и традиция аренды территорий. В-четвертых, большинство магазинов являлись филиалами соответствующих заграничных товариществ о чем свидетельствуют их иностранные названия: «Корея», «Европейский», «Малая Москва», « Саксонский», «Ярославский» и т.д.

Примечательно также то, что информацию о магазинах в газете «Эриванские объявления» часто получаем опосредственно, как например, «На Астафьевской улице продается сад размером 30-90 аршин, спросить в магазине железа Иосифа (Овсеп) Хачатрянца». Объявления в газете свидетельствуют о том, что магазины в основном находились в центре города, в частности на Астасфьевской улице (ныне Абовяна).

Владельцы магазинов были богатыми людьми, которые часто первые этажи своих особняков отводили под магазины или сдавали в аренду. Из известных магазинов старого Еревана можно выделить магазины часов и ювелирных изделий братьев Мнацаканянов, магазин цветов «Флора» и теплицу Б. Егиазарова (где не только выращивали, но и продавали цветы). Интересна информация о том, что специализированных магазинов по продаже косметики в городе не было, предметы косметики продавались в аптеках. Исключением был магазин «Эврика» действующий в доме Африкянов на Крепостной улице.

В статье также представлены те универсальные магазины, сведения о которых ограничиваются именами их владельцев, что, однако дополняет информацию о магазинах старого Еревана.

ԳԱԼՍՏՅԱՆ Հասմիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
էլ. հասցե՝ hasmikgalstyan1979@gmail.com

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԻԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐՆ ՈՒ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ

Հայ ժողովրդական երգային բանահյուսությունն առանձնանում է իր ժանրային ու տեսակային բազմազանությամբ, որոնց շարքում յուրահատուկ տեղ ունեն խաղիկները: Վերջիններս փոքրածավալ պարերգեր են՝ ռիթմիկ ու հեշտ հիշվող տեքստերով, պարզ կառուցվածքով, որոնք հատկապես տարածված են գյուղական միջավայրում: Խաղիկները հանպատրաստից հորինված, բանավոր ավանդությամբ փոխանցվող երգեր են, որոնք, անցնելով անհատ կատարողից հանրությանը, դառնում են հասարակական սեփականություն, մշտապես վերամշակվում ու ապրում տարբեր կենցաղային իրավիճակներում:

Խաղիկները, իրենց պատկերավոր ու համարձակ պարզությամբ, արտացոլում են հայ մարդու կենցաղի ու մտածողության գրեթե բոլոր կողմերը՝ հասարակական փոխհարաբերություններ, աշխատանքային գործընթացներ, բնության նկատմամբ վերաբերմունք, հայրենասիրական զգացումներ: Սակայն, անկախ այս բազմազանությունից, խաղիկների գերակշիռ թեման մնում է սերը, որից բխում են զգայական տարբեր դրսևորումներ՝ կարոտ ու թախիծ, ուրախություն ու ցավ, հեգնանք ու ծաղր և այլն:

Պայմանավորված կատարման միջավայրով ու կիրառության ձևով՝ խաղիկները ոչ միայն երգվել են և ուղեկցվել պարերով, այլև արտասանվել են որպես գուշակության տեքստեր՝ հիմնականում Համբարձման տոնի ժամանակ:

Խաղիկների գիտական ուսումնասիրության ակունքները սկսվում են դեռևս XX դարի սկզբին: Կոմիտասը առաջինն էր, որ ձեռնարկեց հայ ժողովրդական երգերի մեղեդիների գրառումն ու ուսումնասիրման գործընթացը, իսկ Մանուկ Աբեղյանն ուսումնասիրեց դրանց բանասիրական կողմերը: Հենց Աբեղյանն էլ, հիմք ընդունելով «խաղ» ժողովրդական անվանումը, ներմուծեց «խաղիկ» եզրույթը՝ ընդգծելով դրանց «պար» իմաստը՝ համապատասխան խաղիկների պարերգային գործառույթի:

Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում այս երգերին տրվում են տարբեր անվանումներ՝ խաղ, խաղիկ, մանի, մընի, խանա, խանե, թաղալո, թաղալու, ջանգյուլում, ջանիման, յայլի, ինչպես նաև պարտան երգեր, ծաղկոցի երգեր, համբարձման կամ ջանգյուլումի երգեր և այլն:

Ներկայացված ուսումնասիրությունը նվիրված է խաղիկների կիրառության միջավայրի ու անվանումների տարբերակների քննությանը: Հիմնական նպատակն է դիտարկել խաղիկների գործառույթը սոցիալ-մշակութային համատեքստում, ինչպես

նաև ուսումնասիրել դրանց անվանումները՝ լեզվաբանական և պատմամշակութային տեսանկյուններից: Լինելով ժողովրդի բանավոր և ոչ նյութական մշակութային ժառանգության բաղկացուցիչ՝ խաղիկների հետազոտությունը հիմնվում է որակական մեթոդաբանության վրա՝ ներառյալ տեքստաբանական վերլուծությունը, լեզվաբանական քննությունը, աղբյուրների համադրությունը և դաշտային ուսումնասիրությունները:

Աշխատանքում հատուկ ուշադրություն է դարձվում խնդրո առարկա երգերի անվանումների ստուգաբանությանը, ինչպես նաև խաղիկների կրկնակների (հանգերգ, դարձ, խանա) գործառույթին: Պարերգերի կատարման ժամանակ հենց կրկնակներն են որոշում պարի բնույթն ու ռիթմը: Դրանք հաճախ հանդես են գալիս որպես տեքստից անկախ բաղադրիչներ՝ դառնալով ցանկացած պարերգային կառուցվածքի անբաժան մաս:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ խաղիկը ժողովրդական գիտակցության գեղարվեստական արտահայտություններից է,որն իր պատկերային համակարգով արտացոլում է առարկայական իրականությունն ու ձեռք բերում պատմամշակութային արժեք:

GALSTYAN Hasmik (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
Shirak Centre for Armenological Studies of NAS RA
e-mail: hasmikgalstyan1979@gmail.com

AN OVERVIEW OF ARMENIAN FOLK SONGS (KHAGHIKS) AND THEIR NAMES

Armenian folk song tradition is rich in its genres and types, among which khaghiks hold a distinct place. These are small-scale dance songs, characterized by rhythmic and easily memorable texts, simple structures, and widespread use particularly in rural settings. Khaghiks are often improvised compositions passed down orally; they evolve from individual performers to collective heritage, becoming public property and undergoing constant transformation as part of everyday life.

With their vivid imagery and expressive simplicity, khaghiks reflect nearly every aspect of the Armenian worldview and daily life: social relationships, labor processes, connection to nature, and patriotic sentiments. Nevertheless, love remains the predominant theme, from which arise a range of emotional expressions-longing and melancholy, joy and sorrow, irony and satire, among others.

Depending on their performance context and use, kaghiks have functioned not only as songs accompanied by dance but also as spoken texts used for divination, most commonly during the Feast of Ascension (Hambardzum).

The academic study of kaghiks dates back to the early 20th century. Komitas initiated the collection and musical study of Armenian folk melodies, while Manuk Abeghyan undertook their philological research. It was Abeghyan who introduced the term “khaghik”, deriving it from the folk term “khagh” (meaning “game” or “dance”), to emphasize the dance-related function of the songs.

Across Armenia's ethnographic regions, these songs are known by various names: khagh, kaghik, mani, mni, khana, khane, taghalo, taghalu, jangyulum, janiman, yayli, as well as partun songs, tsaghkots songs, Ascension or Jangyulum songs.

The present study is dedicated to the analysis of khaghiks mainly focusing on their functional contexts and the variations of their names. The main aim is to study the role and function of khaghiks within their socio-cultural environment and to explore their nomenclature from both linguistic and historical-cultural perspectives. As an integral part of Armenia's oral and intangible cultural heritage, the study of khaghiks is grounded in qualitative research methodology, including textual analysis, linguistic examination, comparative source study, and ethnographic fieldwork.

This research pays particular attention to the etymology of these names, as well as to the role of refrains (hangerg, dardz, khana) in the structure of khaghiks. During performance, refrains determine the type and rhythm of the dance. Often acting as fixed formulas or invariants, refrains may stand independently of the main text, becoming integral parts of any dance-song structure. The study shows that khaghiks represent an artistic expression of collective consciousness, mirroring objective reality through imagery and acquiring significant historical and cultural value.

ГАЛСТЯН Асмик (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: hasmikgalstyan1979@gmail.com

ОБЗОР АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПЕСЕН (ХАХИКОВ) И ИХ НАЗВАНИЙ

Армянская народная песенная традиция богата жанрами и видами, среди которых особое место занимают хахики. Это небольшие танцевальные песни, отличающиеся ритмичным и легко запоминающимся текстом, простой структурой и широким распространением, особенно в сельской местности. Хахики часто представляют собой импровизированные композиции, передающиеся устно; они переходят от индивидуального исполнения к коллективному наследию, становятся народным достоянием и постоянно трансформируются, являясь частью повседневной жизни.

Благодаря ярким образам и выразительной простоте, хахики отражают практически все аспекты армянского мировоззрения и повседневности: социальные отношения, трудовые процессы, связь с природой, патриотические чувства. Тем не менее, главенствующей темой остаётся любовь, порождающая широкий спектр эмоциональных выражений — тоску и грусть, радость и печаль, иронию и сатиру.

В зависимости от контекста исполнения и назначения, хахики функционировали не только как песни, сопровождающие танец, но и как речевые тексты, использовавшиеся для гаданий, особенно в период праздника Вознесения (Амбардзум).

Академическое изучение хахиков началось в начале XX века. Комитас положил начало сбору и музыкальному исследованию армянских народных мелодий, в то время как Манук Абегян занялся их филологическим изучением. Именно Абегян ввёл термин «хахик», производный от народного слова «хах» (в значении «игра» или «танец»), чтобы подчеркнуть танцевальную функцию этих песен.

В разных этнографических регионах Армении эти песни известны под различными названиями: хах, хахик, мани, мни, хана, хане, тагало, тагалу, джангюлум, джаниман, яйли, а также как партунские песни, цахкоцские песни, песни Вознесения или джангюлум-песни.

Настоящее исследование посвящено анализу хахиков, с акцентом на их функциональные контексты и вариативность названий. Основной целью является изучение роли и функций хахиков в их социокультурной среде, а также исследование их номенклатуры с лингвистической и историко-культурной точек зрения. Будучи неотъемлемой частью устного и нематериального культурного наследия Армении, изучение хахиков основано на качественной методологии, включающей текстовый анализ, лингвистическое исследование, сравнительное изучение источников и этнографическую полевую работу.

Особое внимание в исследовании уделяется этимологии названий, а также роли рефренов (хангерг, дарц, хана) в структуре хахиков. Во время исполнения рефрены определяют тип и ритм танца. Часто являясь устойчивыми формулами или инвариантами, рефрены могут существовать независимо от основного текста, становясь неотъемлемой частью любой танцевально-песенной структуры. Исследование показывает, что хагики представляют собой художественное выражение коллективного сознания, отражающее объективную реальность через образность и обладающее значительной историко-культурной ценностью.

ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ Գևորգ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ hnaget@mail.ru

ԿԿՈՒ ԵՎ ԲՎԵՃ ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Հայ բանահյուսության մեջ զգալի թիվ են կազմում կկվի և բվեճի մասին հյուսված ավանդազրույցները, որոնցում, սոսկ ժողովրդական հավատալիքներից զատ, արտացոլված են նաև հնագույն առասպելաբանական պատկերացումներ, որոնցից ամենատիպիկը, թերևս, մարդուց թռչնի կերպափոխումն է, քանի որ այս թռչուններին վերաբերող զրույցները հիմնականում ծագումնաբանական են:

Կկուն ու բվեճը, սակայն, Հայկական լեռնաշխարհի տարբեր ազգագրական շրջաններում հաճախ հանդիպում են նաև (բվեճը՝ մշտապես) բոլորովին այլ՝ բացատրության կարիք զգացող անուններով: Դրանցից ամենացցունը կկվի դեպքում՝ «Բերուկ և գագո», իսկ բվեճի դեպքում՝ «Սհակ/Սըհակ» թռչնանուններն են: Ցօրս այդ թռչնանունները հոլովվում են առանձին՝ որպես կկվի և բվեճի հետ առնչություն չունեցող, որը ճիշտ մոտեցում չէ:

«Բերուկ և գագո» թռչնանունը գիտական շրջանառության մեջ է դրել անվանի գրականագետ, բանագետ Արամ Ղանալանյանը: 1969թ. հրատարակվում է նրա «Ավանդապատում» կոթողային աշխատությունը, որն ուսումնասիրությունից զատ,

պարունակում է նաև իննը հարյուրից ավելի ավանդազրույց, որոնց ընդհանուր պատումները միասին մոտենում են երկու հազարի սահմանին: Գրքի «Կենդանիներ» բաժնում տեղ է գտել նաև «Բեբուկ և գագո» վերնագրով մի ավանդազրույցի երկու տարբերակ, որոնք խորթ մոր խարդավանքների պատճառով զարնան սկզբից կանկառ հավաքելուց գնացած, ակամա, միմյանց սպանած և անելանելի վիճակից թռչնի կերպափոխված որբ քույր ու եղբայր են:

Ղանալանյանի համար սկզբնաղբյուրներ են հանդիսացել Գևորգ Հալաջյանի՝ Դերսիմի ազգագրության մասին՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող նյութերն ու Պոլսի «Բիւրակն» շաբաթաթերթի 1899 թ. համարներից մեկում Ատիլ ստորագրությամբ տպագրված «Գագօ, Գագօ (Հէքեաթ)» ավանդազրույցը: Բանագետն այս ավանդազրույցը դասակարգել է առանձին ենթավերնագրով, ինչպես դասակարգված են, օրինակ, աղավնու, ագռավի, արագիլի և այլ թռչունների մասին հյուսված զրույցները: Հենց այս բաժանումն էլ հետագա ուսումնասիրողների մոտ տպավորություն է ստեղծել, որ դրանք առանձին թռչուններ են, ուստի նրանք էլ իրենց հերթին առաջնորդվել են նույն կերպ:

Բվեճ թռչունի հետ կապված՝ «Սհակ» թռչնանունն առաջին անգամ հանդիպում է Գարեգին Սրվանձտյանցի՝ 1884 թ., լույս տեսած «Համով-հոտով» գրքում տեղ գտած ավանդազրույցում («Սըհակ»), որը բանահավաք-ազգագրագետը գրի է առել Բաղեշում: Սրա սյուժեն հիմնաքարային նմանություններ ունի Հալաջյանի և Ատիլի հաղորդած ավանդազրույցների հետ. այս դեպքում էլ քրոջ մոտից անհետանում է նրա մազերը սանրող եղբայրը, որի փնտրելով ու կանչելով, անելանելի վիճակից նա կերպափոխվում է՝ դառնալով թռչուն:

Այս թռչնի մասին ավանդազրույցը նույնպես Ղանալանյանը դասակարգել է առանձին ենթավերնագրի («Սհակ թռչուն») ներքո, որը նույնպես առանց քննության ելակետ է ընդունվել հետագա ուսումնասիրողների կողմից՝ ելնելով Ղանալանյանի՝ նորագույն շրջանի հայ բանագիտության մեջ ունեցած անկյունաքարային նշանակությունից:

Բանագիտական նյութերի ուսումնասիրությունները թույլ են տալիս եզրակացնել, որ քննո առարկա թռչունների մասին հյուսված ավանդազրույցները, թռչունների առասպելաբանական կերպարները սյուժետային և մոտիվային զգալի նմանություններ ունեն միմյանց հետ և հաճախ համարյա նույնանում են, քանի որ երկուսի դեպքում էլ.

ա. հերոսները որբ քույր ու եղբայր են,

բ. ավանդազրույցները ծագումնաբանական են, որոշ առումներով՝ նաև ստուգաբանական, քանի որ բացատրում են տվյալ թռչնանունների առաջացման պատճառները,

գ. ծագումը բխում է վշտից կամ անելանելի վիճակից ելնելու նպատակով՝ մարդուց թռչնի փոխակերպմամբ,

դ. կերպափոխումը տեղի է ունենում կերպափոխվողի՝ Աստծուն ուղղված խնդրանքով, որն Աստված կատարում է:

Ուստի այս երկու թռչունների շուրջ հյուսված ավանդազրույցների քննությունն ու առասպելաբանական կերպարների համեմատությունը պայմանավորված են հենց

վերը նշված ընդհանրություններով: Նշենք նաև, որ զեկուցումը, բացի հիշատակված ավանդազրույցներից, հարստացված է նաև այլ՝ ավելի ուշ շրջանում գրառված կամ ուղղակի «Ավանդապատում»-ում չընդգրկված ավանդազրույցներով, սակայն հիմնական ատաղձը հիշատակվածներն են, քանի որ դրանցով լուծվում են, ինչպես նշվեց, այդ թռչունների թե՛ առասպելաբանական կերպարները, թե՛ անունների առաջացման պատճառները: Սույն զեկուցմամբ առաջին անգամ փորձ է արվում՝ տալու բոլոր այդ հարցերի պատասխանները:

GYULUMYAN Gevorg (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: hnaget@mail.ru

FOLKLORIC AND MYTHOLOGICAL IMAGES OF THE CUCKOO AND THE LITTLE OWL IN ARMENIAN LEGENDS

In Armenian folklore, a considerable number of legends are dedicated to the cuckoo and the little owl, in which not only folk beliefs but also ancient mythological concepts are reflected. Among the most characteristic of these is, arguably, the motif of human-to-bird transformation, as the stories concerning these birds are predominantly etiological in nature.

Nevertheless, in various ethnographic regions of the Armenian Highlands, the cuckoo and the little owl (the latter almost universally) often appear under entirely different names, which demand explanation. The most striking examples include "Bebuk and Gago" in reference to the cuckoo, and "S'hak/Sahak" as a name for the little owl. To this day, these bird names are treated independently, unconnected to the cuckoo or the owl—an approach that is not methodologically sound.

The name "Bebuk and Gago" was introduced into scholarly circulation by the renowned literary scholar and folklorist Aram Khanalanyan. In 1969, he published his monumental work "Avandapatum" ("Legendary Narrative"), which, in addition to a detailed study, includes more than 900 legends; the total number of plot variants within the volume approaches 2,000. In the section titled "Animals", two versions of a legend titled "Bebuk and Gago" are recorded, telling the story of an orphaned brother and sister who, due to the schemes of their stepmother, go to collect kank'ar herbs in early spring, unintentionally kill one another, and, in utter despair, are transformed into birds. Khanalanyan's sources include ethnographic material on Dersim by Gevorg Halajyan preserved in the archives of the Institute of Archaeology and Ethnography of the Armenian National Academy of Sciences, as well as a folktale titled "Gago, Gago, Gago (Hekyat)", published under the pen name Atil in the 1899 issue of the Biurakn newspaper of Constantinople.

Khanalanyan classified these legends under a separate subheading, similar to the way he grouped tales about the dove, crow, stork, and other birds. This taxonomy created the

impression among later researchers that “Bebuk and Gago” were distinct bird species—an interpretation that was subsequently followed without question.

As for the name "S’hak" in connection with the owl, it first appears in a folktale recorded by Garegin Srvandztyan in his 1884 publication “Hamov-hotov”. The narrative, collected in Bitlis (Baghesh), shares fundamental similarities with the stories cited by Halajyan and Atil. In this version, too, the brother disappears while combing his sister’s hair; she searches for him in vain, and, consumed by sorrow, is transformed into a bird while calling his name.

This tale was also classified by Khanalanyan under a distinct subheading ("S’hak Bird"), which later researchers adopted as a given—largely due to Khanalanyan’s foundational status in modern Armenian folklore studies.

Analysis of these folkloric materials leads to the conclusion that the legends surrounding these birds exhibit considerable thematic and structural parallels, often bordering on full overlap. In both cases:

a) the protagonists are orphaned siblings (brother and sister);
b) the tales are etiological, and in some cases also etymological, as they explain the origins of specific bird names;
c) the transformation occurs as a result of sorrow or a desperate situation, resolved through metamorphosis into a bird;
d) the metamorphosis is granted by God in response to a plea from the suffering character.

Thus, the study and comparison of the legends surrounding these two birds are justified by the shared features outlined above. It should also be noted that, in addition to the aforementioned sources, the report incorporates other versions recorded in later periods or not included in Avandapatum. However, the core foundation remains based on these principal narratives, as they contain both the mythological representations of the birds and explanations for the origins of their names.

This report presents, for the first time, an attempt to offer comprehensive answers to all these questions.

ГЮЛУМЯН Геворг (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: hnaget@mail.ru

ФОЛЬКЛОРНЫЕ И МИФОЛОГИЧЕСКИЕ ОБРАЗЫ КУКУШКИ И СОВЁНКА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ ПРЕДАНИЯХ

В армянском фольклоре значительное место занимают предания о кукушке и совёнке, в которых, помимо народных поверий, отражены и древние мифологические представления. Одним из самых характерных элементов этих преданий, безу-

словно, является мотив превращения человека в птицу, поскольку рассказы, связанные с этими птицами, в основном являются этиологическими по своей сути.

Однако в различных этнографических районах Армянского нагорья кукушка и совёнок (последний — практически всегда) часто встречаются под совершенно другими названиями, требующими отдельного объяснения. Наиболее примечательными среди них являются названия «Бебук и Гаго» для кукушки и «Схак» или «Сыхак» для совёнка. До сих пор эти названия трактуются отдельно и не связываются с кукушкой или совёнком, что не является корректным подходом.

Научное обращение к названию «Бебук и Гаго» впервые предложил известный литературовед и фольклорист Арам Ханалян. В 1969 году выходит его фундаментальный труд «Авандапатум», в котором наряду с исследованием собрано и опубликовано более девятисот преданий, а общее число сюжетов приближается к двум тысячам. В разделе «Животные» книги приводятся две версии предания под названием «Бебук и Гаго», где из-за козней мачехи, осиротевшие брат и сестра, отправившиеся весной собирать канкар, по недоразумению убивают друг друга, а затем в безысходности превращаются в птиц. В качестве источников Ханалян использовал материалы Геворга Халачяна об этнографии Дерсима, хранящиеся в архиве Института археологии и этнографии НАН РА, а также опубликованное под псевдонимом Атил в газете «Бюракн» (Константинополь, 1899 г.) предание под заголовком «Гаго, Гаго, Гаго (Сказание)».

Ханалян классифицировал эти рассказы под отдельным подзаголовком, аналогично тому, как он группировал предания о голубе, вороне, аисте и других птицах. Именно это распределение породило у последующих исследователей впечатление, будто речь идёт о самостоятельных птицах, и они также продолжили воспринимать их как отдельные виды.

Что касается названия «Сыхак» в связи с совёнком, то оно впервые появляется в предании, записанном в Битлисе (Багеш) и опубликованном Гарегином Сревандзтянцем в 1884 году в книге «Хамов-Хотов». Сюжет этого сказания имеет ключевые параллели с версиями Халачяна и Атиля: и здесь брат, расчёсывавший волосы сестры, внезапно исчезает, а сестра, безуспешно его разыскивая и зовя, в отчаянии превращается в птицу.

Это предание также было классифицировано Ханаляном под отдельным подзаголовком («Птица Схак»), что в дальнейшем также было воспринято исследователями без дополнительного анализа — во многом благодаря авторитету Ханаляна как одной из ключевых фигур в новейшей армянской фольклористике.

Анализ научных источников позволяет сделать вывод, что предания, связанные с указанными птицами, имеют значительные сюжетные и мотивные параллели, вплоть до почти полной идентичности. В обоих случаях:

а) героями являются осиротевшие брат и сестра;

б) предания имеют этиологический, а частично — и этимологический характер, объясняя происхождение соответствующих названий;

в) превращение связано с горем или безысходной ситуацией, где метаморфоза в птицу — единственный выход;
г) превращение совершается по мольбе героя к Богу, который отвечает на её просьбу.

Հայոց պատմագրական աղբյուրները վկայում են, որ երդումը կարևոր դեր է ունեցել ինչպես անձնական հարաբերություններում, այնպես էլ պետական կառավարման և միջազգային քաղաքականության մեջ: Այն ոչ միայն իրավական և բարոյական երաշխիք էր, այլև հզոր հոգեբանական գործոն, որը պարտավորեցնում էր անձին պահպանել իր խոստումը: Հետևաբար, հայոց պատմության մեջ երդումը պետք է դիտարկել որպես ազգային ինքնության, մշակութային արժեքների և իրավական մտածողության անբաժան մաս:

Հայ պատմագրության մեջ երդման երևույթը հանդիպում է տարբեր պատմիչների աշխատություններում, որտեղ այն ոչ միայն փաստագրական տարր է, այլև կարևոր միջոց՝ պատմական իրադարձությունների ընթացքը հասկանալու համար:

Հայ մատենագիտության մեջ երդումը դիտարկվում է հետևյալ կարևոր ասպեկտներով.

- Երդումը՝ որպես հավատարմության երաշխիք, քաղաքական դաշինքների, պայմանագրերի ու դավանանքի հաստատման միջոց:
- Երդումը՝ որպես սրբազան պարտավորություն, կրոնական ուխտերի, եկեղեցական ուխտագրությունների մաս:
- Երդումը՝ որպես իրավական և դատական գործառույթ, վկաների, մեղադրյալների ու դատական գործընթացների կարևոր տարր:
- Երդման խախտումը որպես դավաճանությունների, դաշինքների խզման և քաղաքական անկայունության պատճառ:

Այսինքն՝ երդումը հայոց պատմության ընթացքում հանդիսացել է պետականության, դիվանագիտության և կրոնական կյանքի առանցքային տարրերից մեկը: Այն ապահովել է դաշինքների կայունությունը, պայմանագրերի պարտավորությունների կատարումը և հավատարմության ամրապնդումը: Այն հանդիսացել է նաև սոցիալական կարգուկանոնի երաշխիք, որի խախտումը բերում էր ոչ միայն իրավական, այլև բարոյական ծանր հետևանքների:

Այսօր երդման ինստիտուտը շարունակում է պահպանել իր կարևորությունը, թեև այն ավելի շատ դրսևորվում է իրավական և պետական գործընթացներում՝ դա-

տարաններում, պետական պաշտոնների ստանձման ժամանակ և միջազգային հարաբերություններում, սակայն նրա դերը մնում է կարևոր՝ որպես հավաստիության, հավատարմության և բարոյական պատասխանատվության խորհրդանիշ:

GHREJYAN Lusine (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: lgrejyan@yandex.ru

THE SYMBOL OF THE OATH AND ITS ROLE IN ARMENIAN HISTORIOGRAPHICAL SOURCES

The institution of the oath in Armenian cultural, legal, and spiritual life was formed and established in the early period, starting from the 5th century. Already then, the first Armenian chroniclers (such as Pavstos Buzand, Movses Khorenatsi, Yeghishe, Kagankatvatsi, and others) recorded the role of the sacred word, the oath, in shaping historical events and social relations. With the transition to the Middle Ages, the oath evolved into a multi-layered institution, combining moral, legal, ecclesiastical, and political functions.

Armenian legal compilations, church canonical texts, and chronicle sources testify to how deeply rooted the culture of the sacred word was in society, serving as a pillar of trust and a foundation for responsibility. Throughout history, the oath was an important tool for securing obligations, affirming faith, and ensuring alliances. It was not merely an act of legal or political significance but a phenomenon deeply embedded in cultural, social, and religious systems. In Armenian history, the institution of the oath manifested itself in the conclusion of diplomatic treaties, oaths of allegiance, and in the context of affirming religious and moral norms. Armenian historiographical sources indicate that the oath played a crucial role in both personal relationships, state administration, and international politics. It served not only as a legal and moral guarantee but also as a powerful psychological factor obliging a person to keep their promise. Consequently, in Armenian history, the oath should be considered an integral part of national identity, cultural values, and legal thinking.

In Armenian historiography, the phenomenon of the oath is reflected in the works of various historiographers, acting not only as documentary evidence but also as a key means for understanding the course of historical events. In Armenian written tradition, the oath is considered in the following key aspects:

- Oath as a Guarantee of Loyalty: A means for affirming political alliances, treaties, and strengthening faith.
- Oath as a Sacred Obligation: Part of religious vows and ecclesiastical agreements.
- Oath as a Legal and Judicial Function: An important element in judicial processes, testimonies, and accusations.

• Consequences of Breaking an Oath: A cause of betrayals, dissolution of alliances, and political instability.

Thus, throughout Armenian history, the oath was one of the key elements of statehood, diplomacy, and religious life. It ensured the stability of alliances, the fulfillment of contractual obligations, and the strengthening of loyalty. The oath also acted as a guarantee of public order, the violation of which entailed not only legal but also severe moral consequences. In the modern world, the institution of the oath continues to maintain its significance, and despite the fact that today it is largely manifested in legal and state processes — in judicial proceedings, when entering public office, and in international relations — its role remains important as a symbol of credibility, fidelity, and moral responsibility.

КРЕДЖЯН Лусине (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: lgrejyan@yandex.ru

СИМВОЛ КЛЯТВЫ И ЕЕ РОЛЬ В АРМЯНСКИХ ИСТОРИОГРАФИЧЕСКИХ ИСТОЧНИКАХ

Институт клятвы в армянской культурной, правовой и духовной жизни сформировался и утвердился еще в ранний период - начиная с V века. Уже тогда первые армянские летописцы (такие как Павстос Бузанд, Мовсес Хоренаци, Егише, Каганкатваци и другие) зафиксировали роль священного слова, клятвы, в формировании исторических событий и общественных отношений. С переходом в Средневековье клятва оформилась как многослойный институт, объединивший в себе моральные, правовые, церковные и политические функции.

Армянские правовые сборники, церковные канонические тексты и летописные источники свидетельствуют о том, насколько глубоко укоренилась в обществе культура священного слова, служившая опорой доверия и основой ответственности. Клятва на протяжении всей истории была важным инструментом для закрепления обязательств, утверждения вероисповедания и обеспечения союзов. Это не просто акт юридического или политического значения, а явление, глубоко укоренённое в культурных, социальных и религиозных системах. В истории армян институт клятвы проявлялся как при заключении дипломатических договоров, так и в присягах на верность, а также в контексте утверждения религиозных и нравственных норм. Армянские историографические источники свидетельствуют, что клятва играла важную роль как в личных отношениях, так и в государственном управлении и международной политике. Она служила не только юридической и моральной гарантией, но и мощным психологическим фактором, обязывавшим человека сдержать своё обещание. Следовательно, в истории армян клятву следует

рассматривать как неотъемлемую часть национальной идентичности, культурных ценностей и правового мышления.

В армянской историографии феномен клятвы находит отражение в трудах различных историографов, выступая не только как документальное свидетельство, но и как ключевое средство для понимания хода исторических событий.

В армянской письменной традиции клятва рассматривается в следующих ключевых аспектах:

- Клятва- как гарантия верности: средство для утверждения политических союзов, договоров и укрепления веры.
- Клятва - как священное обязательство: часть религиозных обетов и церковных соглашений.
- Клятва - как юридическая и судебная функция: важный элемент в судебных процессах, свидетельских показаниях и обвинениях.
- Последствия нарушения Клятвы: причина предательств, разрыва союзов и политической нестабильности.

Таким образом, клятва на протяжении армянской истории являлась одним из ключевых элементов государственности, дипломатии и религиозной жизни. Она обеспечивала стабильность союзов, выполнение договорных обязательств и укрепление верности. Клятва также выступала гарантией общественного порядка, нарушение которой влекло за собой не только юридические, но и тяжёлые моральные последствия. В современном мире институт клятвы продолжает сохранять свою значимость, и несмотря на то, что в наши дни он в большей степени проявляется в юридических и государственных процессах — в судопроизводстве, при вступлении в государственные должности и в международных отношениях, тем не менее, его роль остаётся важной как символ достоверности, верности и моральной ответственности.

ՄԱԴԱԹՅԱՆ Լուսինե (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Հայ-ռուսական համալսարան
էլ. հասցե՝ madatyanlusine@yandex.ru

ԺԱՄԱՆԱԿԻ ԵՎ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Ժողովրդական հեքիաթները բնորոշվում են մի շարք յուրահատկություններով, այդ թվում՝ ժամանակի և տարածության յուրօրինակ դրսևորումներով: Բանահիտական ուսումնասիրություններում հեքիաթի մեջ գործածվող ժամանակի և տա-

րածքի վերաբերյալ կան տարբեր մոտեցումներ: Ըստ հիմնական մոտեցումների՝ հեքիաթում ժամանակը և տարածությունը հաճախ հանդես են գալիս որպես երկրորդական տարրեր, քանի որ այս ժանրում առավել կարևոր են իրադարձությունների ընթացքն ու արդյունքները: Սակայն կան տեսություններ, որոնք ընդգծում են, որ հեքիաթային ժամանակը իրական ժամանակի խեղաթյուրված տարբերակն է, և առաջարկում են ժանրին բնորոշ ժամանակային մոդելներ: Տարածության ընկալման առումով ևս նկատվում է հետաքրքիր միտում՝ այն հանդես է գալիս որպես հետնաֆոն, որն ակտիվանում է սյուժեի զարգացման անհրաժեշտության պարագայում: Այս աշխատանքում հեքիաթը դիտարկվում է որպես յուրահատուկ աշխարհ՝ մեկուսացված իրականությունից: Այդ աշխարհում ժամանակն ու տարածությունը գործում են ոչ թե իրականության տրամաբանությամբ, այլ հեքիաթին բնորոշ կառուցվածքային և ոճական գործառույթներով:

Հետազոտության նպատակն է բացահայտել, թե ինչպես են ժամանակը և տարածությունը արտահայտվում և գործառվում հեքիաթի պատումում՝ տարբեր մշակույթներում: Հետազոտությունը կատարվել է համեմատական ու զուգադրական, համատեքստային վերլուծության և ճանաչողական լեզվաբանության հիմնադրույթների հիման վրա: Որպես փաստական նյութ ընտրվել է հայկական «Հազարան Բլբուլ» հեքիաթաշարը, իսկ համեմատության նպատակով վերլուծության են ենթարկվել նույն հեքիաթախմբի իռլանդական և շոտլանդական զուգահեռները: Բացի այդ, իրականացվել են մասնակի համեմատություններ նաև Գրիմ եղբայրների «Ոսկե թռչուն» հեքիաթի հետ: Ընտրված հեքիաթները ընդգրկում են ժամանակի և տարածության դրսևորման բազմազան ձևեր, ինչը նպաստում է ավելի ամբողջական պատկեր ստանալու:

Հեքիաթներում թե՛ ժամանակը, թե՛ տարածությունը հիմնականում արտահայտվում են անորոշության և երկմտանքի միջոցով՝ նպաստելով ժանրին բնորոշ առեղծվածային մթնոլորտի ստեղծմանը: Նույնիսկ այն դեպքերում, երբ առկա է թվային կամ անվանական հստակեցում, դրանք հաճախ ուղեկցվում են երկիմաստություն արտահայտող միավորներով՝ օրինակ, հայերենում՝ շաղկապ «յա»-ով, անգլերենում՝ մոտավորություն արտահայտող մակբայով (օր.՝ about): Երբեմն հնարավոր է տարածքի անվանական և ժամանակի թվային հստակ գործածության հանդիպել: Վերջիններս հատուկ իմաստային նրբերանգներ են կրում, իսկ տարածական անվանումը (շոտլանդական հեքիաթում) առաջին հայացքից թվում է որոշարկված, սակայն տեղանունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անհավանական է նման անունով տարածք գտնել Շոտլանդիայում առհասարակ:

Նշենք նաև, որ այս հեքիաթներում հանդիպում են ժամանակի փոխանվանական արտահայտություններ, որոնք ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից ունեն հետաքրքիր մեկնաբանություններ:

Բացի այդ, վերլուծվող հեքիաթներում հաճախ նկատվում է գործողությունների ակնթարթային զարգացում, որը նպաստում է պատումի դինամիկ և առեղծվածային բնույթի ձևավորմանը: Այս երևույթը կարելի է մեկնաբանել որպես պատումը մանրամասնությունից զերծ պահող խնայողական հնար:

Ուսումնասիրվող հեքիաթներում տարածաժամանակային արտահայտումները նույնպես պարզ դրսևորված են: Տարածական եզրույթների կիրառումը ենթադրում է ժամանակային ընթացքը: Հավելենք, որ տարածական տեղափոխությունը ուսումնասիրված հեքիաթներում հիմնականում նույնական է: Տարբեր է միայն չար հերոսների տարածական տեղափոխությունը:

Այսպիսով, հայկական և բրիտանական ATU 550 թվահամարի հեքիաթների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակի ու տարածության արտահայտման եղանակները կրում են համընդհանուր բնույթ, և դրանց հիմնական տարբերությունները պայմանավորված են սոսկ լեզվական ու մշակութային առանձնահատկություններով:

MADATYAN Lusine (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
Armenian-Russian University
e-mail: madatyanlusine@yandex.ru

A COMPARATIVE ANALYSIS OF TIME AND SPACE IN ARMENIAN AND BRITISH FAIRY TALES

Folk tales are characterized by a number of unique features, including their distinct representations of time and space. The aim of this study is to explore how time and space are expressed and function within the structure of folk tales across different cultures. The research is based on comparative, contextual, and cognitive linguistic approaches.

To provide a comprehensive analysis, several theoretical works have been examined, focusing on the role of time and space in the fairy tale genre. According to the dominant view, time and space play a secondary role in folk tales, as the progression and outcome of events are considered more central. However, other perspectives argue that time in fairy tales is a distorted version of real time and propose models of temporal structures specific to the genre. Regarding space, it is often treated as a background element that becomes active when required for plot development.

Drawing on folkloristic and cognitive linguistic theories, this study argues that the folktale creates a distinct world, separate from reality, where time and space operate not according to the logic of the real world, but according to genre-specific structural and stylistic functions.

The primary material analyzed includes the Armenian "The Thousand-Voiced Nightingale" tale cycle, compared with Irish and Scottish counterparts from the same tale group. Partial comparisons were also made with the Grimm brothers' tale "The Golden Bird." These tales offer diverse manifestations of time and space, contributing to a more complete understanding.

In these tales, both time and space are predominantly marked by ambiguity and uncertainty, reinforcing the mysterious atmosphere characteristic of the genre. Even when numeric or nominal references to time and place are given, they are often accompanied by ambiguity-such as the Armenian conjunction “յu” or the English adverb “about.” In some cases, more definite references do occur, carrying subtle semantic nuances. For instance, although a Scottish tale may use a specific place name, further investigation reveals that it is likely fictional or untraceable in actual geography.

Additionally, these tales often contain substitutive expressions for time, which are particularly meaningful from a cognitive linguistic perspective. This approach allows for the identification and interpretation of unique spatiotemporal expressions.

Another recurring feature is the instantaneous development of events, which enhances the dynamic and enigmatic nature of the narrative. This can be interpreted as a genre-specific device that maintains narrative economy.

Spatiotemporal expressions in the examined tales are also closely interconnected: spatial formulations often imply the passage of time. Moreover, spatial movement patterns are largely consistent across the tales, except in the case of the movements of evil forces, which follow different logic.

In conclusion, the comparative analysis of Armenian and British ATU 550 type tales demonstrates that the ways time and space are expressed show universal patterns, while the differences observed are mostly due to linguistic and cultural particularities.

МАДАТЯН Лусине (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
Армяно-Российский университет
e-mail: madatyanlusine@yandex.ru

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ВРЕМЕНИ И ПРОСТРАНСТВА В АРМЯНСКИХ И БРИТАНСКИХ СКАЗКАХ

Народные сказки отличаются рядом уникальных особенностей, в том числе своеобразным выражением времени и пространства. Цель данного исследования — выявить, как время и пространство представлены и функционируют в структуре сказок разных культур. Исследование выполнено на основе сравнительного, контекстуального и когнитивно-лингвистического подходов.

Для всестороннего анализа были рассмотрены различные теоретические работы, посвященные роли времени и пространства в жанре сказки. Согласно доминирующей точке зрения, время и пространство в сказке играют второстепенную роль, поскольку главным в этом жанре считается ход и результат событий. Тем не менее, существуют и другие подходы, утверждающие, что сказочное время — это искажённая версия реального времени, и предлагаются специфические для жанра модели

времени. Пространство, в свою очередь, часто выступает как фон, активизирующийся при необходимости развития сюжета.

Опираясь на фольклористические и когнитивно-лингвистические подходы, исследование показывает, что сказка как особый жанр создает уникальный мир, изолированный от реальности, где время и пространство подчиняются не логике реального мира, а жанровым структурным и стилистическим функциям.

В качестве основного материала рассмотрен армянский сказочный цикл «Хазаран Блбул», в сравнении с ирландскими и шотландскими параллелями той же сказочной группы. Частично были также привлечены элементы сказки братьев Гримм «Золотая птица». Выбор этих сказок обусловлен тем, что в них представлены разнообразные формы выражения времени и пространства.

В анализируемых сказках время и пространство в основном выражены через неопределенность и двусмысленность, что усиливает характерную для жанра атмосферу загадочности. Даже в тех случаях, когда присутствуют числовые или номинальные указания, они часто сопровождаются средствами, вызывающими неуверенность — например, союзом «յա» в армянском языке или наречием «about» в английском. В ряде случаев встречаются и более точные обозначения времени и места, однако они несут особые смысловые оттенки. Так, в шотландской сказке может использоваться, казалось бы, конкретное географическое название, но исследования показывают, что оно, скорее всего, вымышленное.

Следует также отметить наличие замещающих выражений времени, которые с позиций когнитивной лингвистики поддаются интересной интерпретации. Этот подход позволяет выявить и проанализировать уникальные формы выражения времени и пространства.

Еще одной важной чертой является мгновенное развитие событий, придающее повествованию динамику и загадочность. Это явление можно рассматривать как жанровое средство экономии повествования.

Пространственно-временные выражения в исследуемых сказках тесно взаимосвязаны: пространственные формулировки часто предполагают течение времени. Следует добавить, что пространственные перемещения в сказках в целом совпадают, за исключением перемещений злых персонажей, которые подчиняются иной логике.

Таким образом, сравнительный анализ армянских и британских сказок типа ATU 550 показывает, что способы выражения времени и пространства носят универсальный характер, а различия обусловлены в основном языковыми и культурными особенностями.

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Շիրակի պետական համալսարան
էլ. հասցե՝ hasvrej@mail.ru
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հասմիկ Հ. (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղ
էլ. հասցե՝ hasmik.har@mail.ru

ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ԽԱՂԻԿՆԵՐՈՒՄ

Ինչպես բանահյուսական մյուս ժանրերում, այնպես էլ խաղիկներում կան կայուն միավորներ, որոնք բանաձևային մտածողության արգասիք են: Դրանք դիտարկելի են տարբեր մակարդակներում: Այստեղ մենք դիտարկել ենք կրկնակները և կրկնատողերը: Այս բաղադրիչները լավագույնս կրում են բանաձևային մտածողության յուրահատկությունները բովանդակային և կառուցվածքային մակարդակներում:

Դեռևս Մ. Աբեղյանը նշել է, որ այս փոքրիկ երգերը հատկապես քնարական բնույթի են և ունեն շատ հակիրճ բովանդակություն: Դրանք երբեմն հարափոփոխ են և հաճախ աղերսվում են բնության նկարագրին, ժողովրդական կյանքից բխող դեպքերի թվարկմամբ ստանում են իմաստաբանական որոշակի արժեք: Հետևաբար, այս ժանրի նմուշները բավական բազմազան են՝ հատկապես գործառութային-թեմատիկ նշանակությամբ: Դրանք նախկինում ունեցել են կատարման հստակ վայր և համատեքստ, հետագայում համատեքստն ընդլայնվել է՝ ըստ հասարակական պահանջների:

Բանաձևային դրսևորումները հաճախ նկատելի են խաղիկների բացականչություններում, որոնք բխում են պարային շեշտերից և շարժումներից: Սրանք փոքրիկ դարձվածքներ են, որոնք հիշեցնում են ձայնարկություններ և բխում են խաղիկի բովանդակությունից: Շարունակ կրկնվելով՝ դրանք նպաստում են խաղիկի կառուցվածքի կայունությանը և հանդիսանում են հորինվածքի բանաձևային կառուցվածքի ամենակայուն տարրերից մեկը: Այսպես՝ ժամանակի ընթացքում ինչպես հաճախ հանդիպում է բանավոր արվեստում, համատեքստից բխող առանձնահատկություններով բոլորովին նոր տներ են ավելանում և այս բանաձև-ձայնարկությունների շնորհիվ է, որ խաղիկը կամ պարերգը պահպանում է իր ավանդական նկարագիրը: Բանաձևային արտահայտություններով հարուստ են Շիրակում տարածված վիճակի երգերն ու մանիները/ Ջա՛ն, վիճակ, ջա՛ն, ջա՛ն/:

Պատահական չէ, որ Կոմիտասը գտնում էր, որ ժողովրդական եղանակներին գույն տվողը հենց այս կրկնակներն են:

Կախված հորինվածքի առանձնահատկություններից՝ այս բանաձև-կրկնակները կարող են հանդիպել խաղիկի սկզբում, յուրաքանչյուր տողի վերջում կամ ավարտին՝ իբրև կրկնատող: Վերջինս տարբերվում է կրկնակ ձայնարկությունից նրանով, որ մի ամբողջ տող է կամ երկու տող և կրում է բովանդակային ավելի լուրջ կշիռ:

Խաղիկները կատարվում ենք փոխեփոխ երգեցողությամբ՝ տարբեր խմբերի կամ մեներգչի ու խմբի հաջորդաբար կատարմամբ: Հաճախ դրանք ուղեկցվում են պարով:

Բնականաբար, կարևորվում է այս ժանրին պատկանող յուրաքանչյուր նմուշի հորինման ու կատարման համատեքստն ու միջավայրը: Հենց բանաձևային դրսևորումները հնարավորություն են տվել ոչ միայն պահպանել այս կամ այն խաղիկը բավական տևական ժամանակաշրջան, այլև նպաստել են ժանրի նոր նմուշների ի հայտ գալու և ավանդական նկարագիրը պահպանելու գործընթացին:

MATIKYAN Hasmik (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
Shirak State University
e-mail: hasvrej@mail.ru
HARUTYUNYAN Hasmik H. (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
Gyumri Branch of Yerevan Komitas State Conservatory
e-mail: hasmik.har@mail.ru

FEATURES OF FORMULAIC THINKING IN SHIRAK DANCE SONGS

As in other genres of oral folk art, Armenian khaghiks/folk songs/ contain stable units that are the result of formulaic thinking. These elements can be traced on various levels. In this case, repetitions and recurring lines are examined. These components most clearly reflect the characteristics of formulaic thinking both in terms of content and structure.

As early as M. Abeghyan, it was noted that these short songs are mostly lyrical in nature and are distinguished by extreme conciseness. They are subject to change and often acquire semantic value through descriptions of nature and references to phenomena from folk life. Consequently, samples of this genre are quite diverse, especially in terms of their functional and thematic significance. Previously, they had a specific place and context for performance, but later, depending on social needs, this context expanded.

Formulaic elements often appear in exclamations that accompany these songs, stemming from the rhythmic accents and movements of the dance. These are short expressions, reminiscent of calls or shouts, derived from the content of the game or dance. Through constant repetition, they contribute to the structural stability of the piece and are among the most stable elements of formulaic composition. Thus, as often happens in oral creativity, entirely new stanzas emerge over time due to contextual peculiarities, yet it is precisely these formulaic exclamations that allow the game or dance song to retain its traditional character.

Dance songs and mani (especially ritual Ascension songs, such as “Jan, vichak, jan, jan”) common in Shirak are rich in formulaic expressions.

It is no coincidence that Komitas believed that these repetitions give folk melodies their distinctive colour. Depending on the features of the composition, such formulaic repetitions may appear at the beginning of the dance song, at the end of each line, or as a refrain. The refrain differs from a brief exclamation in that it consists of a whole line or even two, and carries more significant semantic weight.

Dance songs are performed alternately — by two groups or by a soloist and a choir in turn. They are often accompanied by dancing.

Therefore, the context and environment in which samples of this genre are created and performed are extremely important. It is precisely the formulaic elements that, over time, have made it possible not only to preserve a given dance song but also to foster the emergence of new samples of the genre, all while maintaining its traditional form.

МАТИКЯН Асмик (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Ширакский государственный университет
e-mail: hasvrej@mail.ru
АРУТЮНЯН Асмик А. (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Гюмрийский филиал Ереванской государственной консерватории
e-mail: hasmik.har@mail.ru

ОСОБЕННОСТИ ФОРМУЛЬНОГО МЫШЛЕНИЯ В ШИРАКСКИХ ПЛЯСОВЫХ ПЕСНЯХ

Как и в других жанрах устного народного творчества, в армянских плясовых песнях существуют устойчивые единицы, являющиеся результатом формульного мышления. Эти элементы можно проследить на различных уровнях. В данном случае рассматриваются повторы и повторяющиеся строки. Именно эти компоненты в наибольшей степени отражают особенности формульного мышления как на содержательном, так и на структурном уровнях.

Еще М. Абегян отмечал, что эти маленькие песенки в основном лирического характера и отличаются предельной лаконичностью. Они подвержены изменениям и зачастую приобретают смысловую ценность за счёт описаний природы и упоминаний явлений из народной жизни. Следовательно, образцы этого жанра достаточно разнообразны, особенно с точки зрения их функционально-тематического значения. Ранее они имели конкретное место и контекст исполнения, а впоследствии, в зависимости от общественных потребностей, этот контекст расширился.

Формульные элементы часто проявляются в восклицаниях, сопровождающих эти песенки, происходящих от ритмических акцентов и движений танца. Это короткие выражения, напоминающие возгласы, вытекающие из содержания игры. Постоянно повторяясь, они способствуют структурной устойчивости произведения и являются одними из самых стабильных элементов формульной композиции. Таким образом, как это часто бывает в устном творчестве, со временем появляются совершенно новые строфы, обусловленные контекстуальными особенностями, однако именно благодаря этим формульным возгласам игра или плясовая песня сохраняет свой традиционный облик.

Формульными выражениями богаты распространённые в Шираке плясовые песни и мани (особенно обрядовые песни Вознесения: например, «Джан, вичак, джан, джан» — «Джан, жребий, джан, джан!»).

Не случайно Комитас считал, что именно эти повторы придают народной мелодии особый колорит. В зависимости от особенностей композиции, такие формульные повторы могут встречаться в начале плясовых песен, в конце каждой строки или в завершении в виде рефрена. Последний отличается от краткого возгласа тем, что представляет собой целую строку или даже две, и несёт более значимую смысловую нагрузку.

Плясовые песни исполняются попеременно — двумя группами или солистом и хором поочерёдно. Часто они сопровождаются танцем.

Таким образом, чрезвычайно важным является контекст и среда, в которых создаются и исполняются образцы этого жанра. Именно формульные элементы на протяжении длительного времени позволили не только сохранить ту или иную плясовую песню, но и способствовали появлению новых образцов жанра, при этом сохранив его традиционный облик.

ՄԱՏԻԿՅԱՆ Հասմիկ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ hasvrej@mail.ru

ԿԱՐՍԻ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ[1]

Քնարական բանահյուսությունը՝ որպես բանավոր մշակույթի կարևոր ժառանգություն, թույլ է տալիս բացահայտել տեղական մշակույթի առանձնահատկությունները: Ի մասնավորի, Կարսի տարածաշրջանի և Շիրակի մարզի ազգագրական ու բանահյուսական քնարական նմուշներում արտացոլվում են տեղի հայ բնակչության լեզվամտածողության յուրահատկությունները, կենցաղի, զբաղմունքի ձևերը և այլն:

Կարսի պատմաազգագրական մարզը և Շիրակի տարածաշրջանը քնարական բանահյուսության դիտանկյունից ուշագրավ են. կարսեցին և շիրակցին քնարական ուրույն մտածողությամբ են ձևավորում իրենց ասելիքը. քնարական բացառիկ

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 25RG-6B114 գիտական թեմայի շրջանակներում:

նմուշներ են ծնվում կենցաղային գործերի, ծիսական կարևոր արարողությունների /հարսանիք/ ժամանակ:

Մեր հետազոտության նպատակն է վերլուծել քնարական բանահյուսության տեքստերը միջգիտակարգային մոտեցմամբ /լեզվաբանության, բանագիտության, ազգագրության, պատմագիտության դիտակետերից/: Աշխատանքի փաստական նյութը լինելու են Կարս.հայոց բանահյուսական մշակույթը և Շիրակ. հայոց բանահյուսական մշակույթը՝ բանահյուսական ժողովածուները, ինչպես նաև մերօրյա դաշտային գրառումները: Քնարական բանահյուսության նմուշները դիախրոնիկ մեթոդաբանությամբ քննելու շնորհիվ բացահայտել ենք մի շարք կարևոր գծեր.

- Բանահյուսական նյութի հանկարծաստեղծման մեխանիզմները,
- Ժանրային ներթափանցումները,
- Խոսվածքային բազմազանությունը և այլն:

Քնարական բանահյուսությանը անդրադառնալիս՝ կիզակետում ենք ունեցել նշանավոր բանագետ Ս. Հարությունյանի քնարական երգերի դասակարգումը. սիրո, ուրախության, պանդխտության, սգո հայրենները, ժողովրդական խաղիկները, որոնց թվում են վիճակի կամ ջանգյուլումի ծիսական երգերը, հարսանեկան և սիրո երգերը, օրորոցային երգերը, աշխատանքային երգերի որոշ տեսակներ:

Նշված քնարական սեռի ստեղծագործությունները հիշյալ ուսումնասիրության մեջ մեկտեղ վերլուծելը նպատակային է՝

- պարզելու քնարական հերոսի ապրումները տարաբնույթ իրավիճակներում,
- ընդգծելու սյուժետային, նկարագրական տարրերի առկայությունը յուրաքանչյուր երգատեսակում,
- տարորոշելու Կարսի և Շիրակի քնարական միջավայրի ձևավորման ակունքները, զարգացումը և բովանդակային շերտերը:

Բանահյուսական նյութի ավանդականությունը և ժամանակի ընթացքում կրած փոփոխությունները վեր հանելու միտումով պայմանավորված՝ փորձելու ենք քննել Կարսի տարածաշրջանում ապրած բանասացների հիշողությունները՝ համեմատելով այն նյութերի հետ, որոնք ժամանակի ընթացքում մեզ են փոխանցել Շիրակում ապրող այն կարսեցիները, որոնք ներգաղթել են Արևմտյան Հայաստանից:

Ամփոփելով նշենք, որ Կարսի և Շիրակի բանահյուսական նմուշները, ունենալով կառուցվածքային և բովանդակային ընդհանրություններ, երբեմն տարբերություններով են հատկորոշվում, որը բացատրվում է պատմական անցյալով:

MATIKYAN Hasmik (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAS RA
e-mail: hasvrej@mail.ru

COMPARATIVE STUDY OF THE LYRIC FOLKLORE OF KARS AND SHIRAK[1]

Lyric folklore, as an important legacy of oral culture, makes it possible to reveal the characteristics of local culture. In particular, the ethnographic and lyrical-folkloric samples from the Kars region and the Shirak province reflect the linguistic worldview of the local Armenian population, their ways of life, occupations, and more.

From a historical and ethnographic perspective, the Kars area and the Shirak region are of particular interest: both Kars and Shirak natives express themselves with a distinctive lyrical mindset. Unique lyric samples are created during everyday activities and during important rituals — for example, weddings.

The aim of our study is to analyze the texts of lyric folklore using an interdisciplinary approach — from the perspectives of linguistics, folkloristics, ethnography, and history. The factual basis of this work includes the folklore collections "Kars: Armenian Folklore Culture" and "Shirak: Armenian Folklore Culture", as well as contemporary field recordings.

Through diachronic analysis of lyrical folklore samples, we identify several important features:

- mechanisms of spontaneous folklore creation,
- genre interpenetration,
- diversity of speech forms, etc.

A key focus in the study of lyrical folklore is the classification of lyric songs proposed by the renowned folklorist S. Harutyunyan. These include songs of love, joy, exile, mourning (ayrens), traditional play songs (including ritual songs such as jangyulum), wedding and love songs, lullabies, and certain types of work songs.

Analyzing these lyrical genres within the framework of this study serves several purposes:

- to identify the experiences of the lyrical protagonist in various situations,
- to highlight the presence of plot and descriptive elements in each type of song,
- to distinguish the origins, development, and thematic layers of the lyrical environment in Kars and Shirak.

In an effort to uncover both the traditional aspects of the folklore material and the changes it has undergone over time, we will attempt to study the memories of storytellers

[1] The research was carried out with the financial support of the Committee on Higher Education and Science of the Ministry of Education, Science and Sports of the Republic of Armenia within the framework of the scientific topic 25RG-6B114.

who lived in the Kars region and compare them with materials passed down to us by Kars natives who migrated from Western Armenia and now live in Shirak.

In conclusion, it should be noted that while the folklore samples of Kars and Shirak share structural and thematic similarities, they are also characterized by certain differences, which are explained by their distinct historical backgrounds.

МАТИКЯН Асмик (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: hasvrej@mail.ru

СРАВНИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ ЛИРИЧЕСКОГО ФОЛЬКЛОРА КАРСА И ШИРАКА[1]

Лирический фольклор, как важное наследие устной культуры, позволяет раскрыть особенности местной культуры. В частности, в этнографических и фольклорно-лирических образцах Карсского региона и Ширакской области отражаются особенности языкового мышления местного армянского населения, формы быта, занятий и т.д.

С историко-этнографической точки зрения Карсская область и Ширакский регион представляют особый интерес: и карсцы, и ширакцы формируют свое высказывание с присущим им лирическим мышлением. Уникальные лирические образцы рождаются во время повседневной деятельности, а также во время важнейших обрядов — например, свадеб.

Цель нашего исследования — проанализировать тексты лирического фольклора в междисциплинарном подходе: с позиций лингвистики, фольклористики, этнографии и истории. Фактической основой работы являются фольклорные сборники «Карс: армянская фольклорная культура» и «Ширак: армянская фольклорная культура», а также современные полевые записи.

Благодаря диахроническому анализу образцов лирического фольклора мы выявляем ряд важных особенностей:

- механизмы спонтанного создания фольклорного материала,
- жанровые пересечения,
- разнообразие речевых форм и др.

В изучении лирического фольклора в центре внимания была классификация лирических песен, предложенная выдающимся фольклористом С. Арутюняном: это песни о любви, радости, изгнании, скорби (айрены), народные игровые песни, в том числе обрядовые песни состояния (джангюлюм), свадебные и любовные песни, колыбельные песни, а также некоторые виды трудовых песен.

[1] Исследование выполнено при финансовой поддержке Комитета по высшему образованию и науке Министерства образования, науки и спорта Республики Армения в рамках научной темы 25RG-6B114.

Анализ указанных произведений лирического жанра в рамках данного исследования имеет следующие цели:

- выявить переживания лирического героя в различных ситуациях,
- подчеркнуть наличие сюжетных и описательных элементов в каждом виде песен,
- различить истоки, развитие и смысловые слои лирической среды Карса и Ширака.

Стремясь выявить традиционные черты фольклорного материала и изменения, произошедшие со временем, мы попытаемся проанализировать воспоминания сказителей, живших в регионе Карса, сравнив их с теми материалами, которые были переданы нам карсцами, переселившимися из Западной Армении и ныне живущими в Ширake.

В заключение отметим, что, несмотря на структурные и содержательные сходства, фольклорные образцы Карса и Ширака характеризуются и определенными различиями, что обусловлено их историческим прошлым.

ՊԵՏՐՈՍՅԱՆ Մելինե (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ petrosyanmeline90@gmail.com

ՏԱՐԵՊՏՈՒՅՏԻ ՓՈՒԼԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԾԻՍԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մանկական բանահյուսության ժանրատեսակներից են համարվում ծիսական երգերը: Ծիսական երգերը ժամանակի ընթացքում փոխանցվելով մանկաշխարհի՝ դարձել են երեխաների սեփականությունը՝ ամրապնդելով երեխա - մեծահասակ ժառանգորդական կապը: Այս երևույթը նկատվում է ինչպես Հայաստանի ազգագրական տարբեր շրջաններում, այնպես էլ Արցախում: Ծիսական երգերի մանկաշխարհ տեղափոխվելու հարցը պայմանավորված է նաև խաղային ենթատեքստի առկայությամբ: Որոշ մանկական ծեսեր ասոցացավում են խաղերի հետ, ինչն էլ գրավում ու հետաքրքիր է դարձնում երեխաներին:

Հիմք ընդունելով պատմահամեմատական, տեքստաբանական վերլուծության մեթոդները՝ փորձել ենք առաջին անգամ ուսումնասիրել տարեպտույտի փուլերը Արցախի մանկական ծիսական բանահյուսության մեջ: Զուգահեռներ ենք անցկացրել աշխարհի տարբեր ժողովուրդների տարեպտույտի մանկական ծիսական երգերի հետ՝ տալով դրանց ընդհանրությունները և բացահայտելով մանկական ծիսական երգերի առնչակցական կապերը բնության ու կենդանական աշխարհի հետ:

Արցախում տարածված տոների մեծամասնությանը երեխաները լուրջ ներգրավվածություն են ունեցել, այս փաստը բացատրվում է այն հանգամանքով, որ դրանց շնորհիվ երեխաները ներգրավվում էին մեծահասակների կյանքին ու կենցաղին: Օրինակ, Նոր տարվա գլխավոր ծեսերից համարվող գոտեկախ, կոտեկա կամ կոտեկախ կոչվող ծեսը կատարվում էր հենց երեխաների մասնակցությամբ: Այն իրականացվում էր գիշերը 10-12 տարեկան տղաների, իսկ որոշ տեղերում՝ աղջնակների խմբերի ծիսական շրջայցերով և տոնը շնորհավորելու յուրօրինակ ավանդույթով: Խմբերը պարելով շրջում էին փողոցներում և որևէ մեկի տանը մոտենալիս սկսում էին երգել: Այդպիսով երեխաները ավետում էին հին տարվա ավարտը ու ազդարարում Նոր տարվա սկիզբը: Քրիստոսի ծնունդը կամ Սուրբ ծնունդը ևս յուրահատուկ ու սիրված տոն էր համարվում: Այս տոնին պատանիներն առավելապես հանդես էին գալիս «Ավետիս», «Ալելուաներ» երգելով, ինչպես օրինակ՝ Հադրութում «Ավետիս» երգող պատանիները շրջում էին հարևան գյուղերով ու մթերքներ հավաքում, այնուհետև եղած պաշարով խնջույքներ կազմակերպում: Սա ևս խոսում է ժողովրդի կյանքում տոնակատարությունների կարևորության ու ծեսերի ֆունկցիոնալ արժեքի մասին, որն առավելապես ուղղված էր համայնքային միապաղաղ կյանքն առավել հետաքրքիր ու գունեղ դարձնելուն:

Հաջորդ տոնը, որում երեխաներն ունեին լուրջ ներգրավվածություն, կարող ենք համարել Ծաղկազարդը: Առհասարակ, հայ իրականության մեջ Ծաղկազարդն ամենալուսավոր ու գունեղ տոներից է: Հենց այս տոնի ընթացքում են կատարվում անձրևաբեր ու անձրևախափան ծեսերը՝ Նարիի կամ Նուրինի մասնակցությամբ: Նարին կամ Նուրին ծիսական տիկնիկներ են, որոնց բարբառային տարբերակները Արցախում հայտնի են «Գոդի», «Ճոլի» անվանմամբ: Այս ծիսական երգերի կենցաղավարումը երեխաների միջավայրում պայմանավորված է բառակրկնությունների, տողակրկնությունների, բաղաձայնույթների, ներքին հանգավորման, զվարճախոսական հետաքրքիր երանգավարման առկայությամբ, ինչպես նաև մեծահասակների կյանքին ու կենցաղին առավել լավ ծանոթանալու հնարավորություն է: Վերոնշյալ հատկանիշներն առավել գրավիչ ու հետաքրքրաշարժ են դարձնում ծիսական երգը, ինչն էլ նպաստում է դրանց անցմանը մանկաշխարհ:

Արցախում առանձնակի սիրով ու ոգևորությամբ են տոնում Վարդավառը: Այդ են փաստում ոչ միայն ծիսական տոնախմբությունները, այլև ժողովրդի կյանքի կարևորագույն բաժադրիչ դարձած վարդավառյան ուխտագնացությունները: Արցախցիները հիմնականում բարձրանում էին լեռները՝ Մռավ, Մեծ Քիրս, Դիզափայտ, ինչի մասնակիցն էին լինում նաև երեխաները:

Ժամանակակից աշխարհում նոր ծիսական երգեր չեն ստեղծվում, այսօրինակ հմայական ասույթներում երեխաների ներգրավվածությունը սահմանափակ է: Ինչպես բանահյուսական այլ ժանրերի, այնպես էլ ծիսական երգերի սահմանափակ գործածությունը պայմանավորված է այլընտրանքային տարբեր միջոցներով:

PETROSYAN Meline (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: petrosyanmeline90@gmail.com

THE STAGES OF YEAR-TRANSITION RITUAL IN THE CHILDREN'S FOLKLORE OF ARTSAKH

Over time many songs, originally rooted in sacred and communal practices, were passed down into the realm of childhood and became part of children's cultural heritage. This transition helped reinforce the intergenerational bond between children and adults. The phenomenon is observed not only in various ethnographic regions of Armenia but also in Artsakh. The integration of ritual songs into children's lives is often linked to their playful subtexts. Many of these rituals are closely connected with games, which makes them more accessible, engaging, and enjoyable for children.

Using historical-comparative and textual analysis methods, this study offers the first detailed exploration of the "Tareptuyt" (year-transition) ritual as it appears in the children's ritual folklore of Artsakh. It draws parallels between these local traditions and similar year-transition songs found in the children's folklore of other cultures, emphasizing shared motifs and uncovering symbolic associations with nature and the animal world.

Children in Artsakh have traditionally played a vital role in many regional festivals. These celebrations served not only as cultural milestones but also as a way to integrate children into the everyday and ceremonial life of the adult community. One prominent example is the New Year ritual known as "Gotekakh," "Kotekha," or "Kotekakh," which was performed at night by groups of boys aged 10 to 12 and, in some regions, girls as well. As they moved from house to house in ceremonial procession, they sang songs to mark the end of the old year and welcome the new.

Christmas (the birth of Christ) was another deeply cherished celebration. During this holiday, youth often sang "Avetis" or "Alleluia" songs. In Hadrut, for instance, boys would visit neighboring villages singing "Avetis" while collecting food, which they later used to host festive gatherings. Such practices highlight the significance of celebrations and the essential role of ritual in community life, serving to infuse otherwise routine existence with joy and meaning.

Another important holiday, involving children, was Palm Sunday (Tsaghkazard), one of the most joyful and colorful celebrations in Armenian culture. During Tsaghkazard, rain-calling and rain-stopping rituals were performed using symbolic figures such as Nari or Nurin which are ritual dolls known in various Artsakh dialects as "Godi" or "Choli." These ritual songs, enriched with repetitive structures, alliteration, internal rhymes, and playful intonation, were especially captivating for children. At the same time, they offered children a glimpse into adult cultural practices and societal roles.

Vardavar is another holiday celebrated in Artsakh with special enthusiasm and joy. This is evidenced not only by the ritual festivities but also by the pilgrimages associated with the holiday, which became essential components of the people's lives. Residents of

Artsakh would typically climb mountains such as Mrav, Mets Kirs, and Dizapayt, and children were also active participants in these pilgrimages.

In the modern world, new ritual songs are no longer being created, and children's involvement in such enchanting rituals is limited. As with other genres of folklore, the limited use of ritual songs today is largely due to the presence of alternative means of entertainment and expression.

Vardavar is yet another holiday celebrated with great enthusiasm in Artsakh. Its importance is evidenced by both the associated ritual festivities and the pilgrimages it inspired. Communities would often travel to sacred mountain sites such as Mrav, Mets Kirs, and Dizapayt, with children actively participating in these journeys.

In conclusion, the creation of new ritual songs has come less common in contemporary times, and children's involvement in these meaningful traditions has notably decreased. This decline reflects a broader trend affecting many genres of folklore, largely driven by the growing influence of modern forms of entertainment and communication, which have gradually replaced traditional cultural practices in daily life.

ПЕТРОСЯН Мелине (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: petrosyanmeline90@gmail.com

ЭТАПЫ РИТУАЛА ПЕРЕХОДА ГОДА В ДЕТСКОМ ФОЛЬКЛОРЕ АРЦАХА

Обрядовые песни считаются одним из жанров детского фольклора. Со временем эти обрядовые песни были переданы в детскую среду и стали её культурным достоянием, укрепляя тем самым связь между поколениями — детьми и взрослыми. Это явление наблюдается не только в различных этнографических регионах Армении, но и в Арцахе. Передача обрядовых песен в детскую сферу обусловлена также наличием игровых подтекстов. Некоторые детские обряды ассоциируются с играми, что делает их более привлекательными и интересными для детей.

Основываясь на историко-сравнительном и текстологическом методах анализа, мы впервые попытались изучить этапы «Тарептуйта» (ритуала смены года) в детском обрядовом фольклоре Арцаха. Мы провели параллели с детскими обрядовыми песнями о смене года у разных народов мира, выявив их сходства и раскрыв ассоциативные связи этих песен с природой и животным миром.

Дети в Арцахе играли значительную роль во многих традиционных праздниках региона. Это можно объяснить тем, что через подобные мероприятия дети вовлекались в жизнь и быт взрослых. Например, один из главных новогодних обрядов — «Готеках», «Котеха» или «Котеках» — проводился с участием исключительно детей. Этот обряд происходил ночью: группы мальчиков 10–12 лет, а в некоторых местах и девочек, совершали обрядовое шествие и произносили особые праздничные поздравления. Танцуя по улицам и подходя к домам, они начинали петь. Таким образом дети возвещали об окончании старого года и начале нового.

Рождество Христово, или Святое Рождество, также считалось особенным и любимым праздником. В этот день молодежь часто исполняла песни «Аветис» или «Аллилуя». Например, в Гадруте мальчики, поющие «Аветис», обходили соседние села, собирали продукты, после чего устраивали праздничные застолья. Это ещё раз подчёркивает важность праздников и функциональную ценность обрядов в жизни народа, особенно их роль в оживлении и украшении повседневной, порой однообразной жизни общины.

Другим праздником, в котором дети играли заметную роль, является Вербное воскресенье (Цахказард). В целом, Цахказард считается одним из самых светлых и красочных праздников в армянской традиции. Именно в этот день проводятся обряды вызывания или прекращения дождя с участием персонажей Нари или Нурин. Нари и Нурин — это обрядовые куклы, которые в разных диалектах Арцаха известны под названиями «Годи» или «Чоли». Внедрение этих обрядовых песен в детскую культуру связано с повторениями слов, строк, аллитерациями, внутренними рифмами, весёлыми и игровыми интонациями, а также с возможностью детей лучше узнать жизнь и быт взрослых. Эти особенности делают обрядовые песни особенно увлекательными и привлекательными, способствуя их переходу в детскую среду.

Вардавар — ещё один праздник, который в Арцахе отмечается с особой любовью и воодушевлением. Об этом свидетельствуют не только обрядовые торжества, но и паломничества, ставшие важной частью жизни народа. Жители Арцаха в эти дни поднимались на такие горы, как Мрав, Мец Кирс, Дизапайт, и дети также активно участвовали в этих паломничествах.

В современном мире новые обрядовые песни больше не создаются, а участие детей в подобных волшебных обрядах стало ограниченным. Как и в случае с другими жанрами фольклора, ограниченное использование обрядовых песен сегодня связано с наличием альтернативных способов развлечения и самовыражения.

ՍԱՀԱԿՅԱՆ Լիլիթ (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
էլ. հասցե՝ sahakyanlilit1982@gmail.com

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՀԱՅ ԲԱՆԱՎՈՐ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԴԻՑԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայ բանավոր ավանդության և համաշխարհային դիցաբանության համատեքստում կերպարանափոխության (կերպափոխման) մոտիվը զբաղեցնում է կարևոր տեղ: Կերպարանափոխության գաղափարը գալիս է հնագույն պատկերացումների խորքից և արտացոլում է մարդու աշխարհընկալումը, մշակութային հիշողությունն

ու ժառանգությունը: Այն արտահայտվում է տարբեր պատումներում՝ հրաշապատում հեքիաթներում, առասպելներում, ավանդազրույցներում, կենդանապատումներում, ծիսական պատկերացումներում:

Աշխատանքի նպատակն է վերհանել կերպարանափոխության խորհրդանշական գործառույթները հայ բանավոր ավանդության մեջ՝ համադրելով դրանք համաշխարհային դիցաբանական ու առասպելաբանական համակարգերում ձևավորված պատկերացումների հետ:

Ուսումնասիրության ընթացքում վերլուծվել են կերպարանափոխության տարբեր դրսևորումները՝ դասակարգելով ըստ դիպաշարային նպատակի, տեղակայման, տևողության և իմաստաբանական շերտերի:

Հետազոտությունն իրականացվել է պատմահամեմատական, տիպաբանական և վերլուծական մեթոդներով՝ հիմնվելով հայ բանավոր ավանդության տպագիր ժողովածուների, մասնագիտական գրականության, ինչպես նաև համաշխարհային առասպելաբանության վերաբերյալ ուսումնասիրությունների վրա: Ուշադրություն է դարձվել ինչպես հայ ժողովրդական հրաշապատում հեքիաթներում, այնպես էլ համահնդեվրոպական դիցաբանության մեջ կերպարանափոխության թեմայի մշակվածության խնդրին:

Ըստ ուսումնասիրված նյութերի՝ կերպարանափոխության մոտիվը հանդես է գալիս բազմաձև կերպարային փոխակերպումներով՝ մարդ–կենդանի, մարդ–բույս, մարդ–թռչուն, որոնք իրենց հերթին ունեն տարբեր խորհրդանշական գործառույթներ՝ փրկություն, պատիժ, մաքրագործում, ինքնաճանաչում, վերածնունդ և այլն: Կերպափոխվող կերպարները կարող են լինել ինչպես պատժվողներ, այնպես էլ փրկություն ստացողներ. կերպարանքի փոփոխությունը կարող է ունենալ ժամանակավոր կամ մշտական բնույթ՝ կախված դիպաշարի կառուցվածքից և վերջնանպատակից: Դրանց խորհրդանշական իմաստը կապվում է ինչպես տոտեմական, այնպես էլ մոգական պատկերացումների և հավատալիքների հետ:

Համեմատական վերլուծությամբ երևում է, որ հնդեվրոպական առասպելաբանական համակարգերում կերպարանափոխությունը տարածված համամարդկային և միջմշակութային մոտիվ է, մասնավորապես՝ գայլի, շան, արջի և այլ տոտեմային կենդանիների կերպարային փոխակերպումներով: Հայ առասպելաբանության և ժողովրդական բանահյուսության մեջ առանձնանում են կենդանամարդկային կերպարները՝ դարձվորյակության երևույթով (werewolf), ինչպես նաև կենդանացած բույսերը, առարկաները, շներին ու թռչուններին մարդկային հատկություններով օժտելու պատկերացումները:

Հայ և հնդեվրոպական դիցաբանական համակարգերում կերպարանափոխությունը կապված Է ռազմի, բնության տարերային ուժերի, մարդու և բնության միասնության, հրաշագործ կարողությունների, սահմանախախտման և վերափոխման գաղափարների հետ՝ սահմանների վերացման միջոցով շեշտելով բնության ու մարդու սերտ կապը: Կերպափոխման մոտիվը դիտարկվում է որպես իրական և երևակայական աշխարհների սահմանների խախտման դրսևորում, ինչը հնարավորություն է տալիս բացահայտելու տարբեր արժեքային համակարգեր, ծեսեր և հնագույն խորհրդանիշներ: Կերպարանափոխության պատկերագիրը ներ-

կայացնում է յուրահատուկ անցումային ճանապարհ, որի ընթացքում հերոսները հաղթահարում են փորձությունները, վերաիմաստավորում են իրենց ինքնությունը և անցնում գոյաբանական վերակազմավորման ընթացքով, որոնք պայմանավորված են տվյալ պատումի դիպաշարային կառուցվածքով և մշակութային համատեքստով:

Կերպարանափոխության մոտիվը չի մնում միայն հնագույն հավատալիքների շրջանակում. այն վերապրում է և վերարտադրվում է ժամանակակից մշակույթում՝ վերահաստատելով իր սիմվոլիկ ուժն ու մշակութային կենսունակությունը տարբեր ժամանակներում ու միջավայրերում: Ներկայացված ուսումնասիրությունները ոչ միայն լուսաբանում են հնագույն պատկերացումների ծագումնաբանությունը, այլև ցույց են տալիս դրանց առկայությունը, կիրառելիությունը և շարունակականությունը ժամանակակից մշակույթում՝ գրական ստեղծագործություններում, արվեստում, մուլտֆիլմերում, խաղերում, անիմացիոն, գեղարվեստական ֆիլմերում, այլուր:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կերպարանափոխության մոտիվը հայ բանավոր ավանդության և համաշխարհային դիցաբանության մեջ հանդես է գալիս որպես բազմաշերտ խորհրդանշական երևույթ: Այն վերապրում և վերարտադրվում է նաև ժամանակակից մշակույթում՝ պահպանելով իր արժեքային և մշակութային կենսունակությունը:

SAHAKYAN Lilit (Armenia)
Institute of Archaeology and Ethnography of NAS RA
e-mail: sahakyanlilit1982@gmail.com

THE SYMBOLIC FUNCTIONS OF METAMORPHOSIS IN THE CONTEXT OF ARMENIAN ORAL TRADITION AND WORLD MYTHOLOGY

In the context of Armenian oral tradition and world mythology, the motif of metamorphosis (transformation) occupies an important place. The idea of transformation originates from ancient beliefs and reflects human perceptions of the world, cultural memory, and heritage. It is expressed in various narratives, including wonder tales, myths, legends, fables, and ritual beliefs.

This study aims to uncover the symbolic functions of metamorphosis in Armenian oral tradition by comparing them with concepts formed in global mythological systems.

During the research, various manifestations of transformation were analyzed and classified according to narrative purpose, location, duration, and semantic layers.

The research was carried out using historical-comparative, typological, and analytical methods, based on printed collections of Armenian oral traditions, academic literature, as well as studies on global mythology. Attention was paid to the elaboration of the theme of transformation in Armenian folk wonder tales and Indo-European mythology.

According to the materials studied, the motif of metamorphosis appears in multiple forms of character transformation—human to animal, human to plant, human to bird—

which in turn carry different symbolic functions such as salvation, punishment, purification, self-discovery, rebirth, and so forth. The transformed characters may either be punished or receive salvation. The transformation may be temporary or permanent, depending on the narrative structure and final purpose. Their symbolic meaning is tied to both totemic and magical beliefs and ideas.

Comparative analysis reveals that in Indo-European mythological systems, transformation is a widespread, universal, and cross-cultural motif, particularly through character changes involving wolves, dogs, bears, and other totemic animals. In Armenian mythology and folklore, animal-human hybrid figures are prominent, including the phenomenon of shapeshifting (e.g., werewolves), as well as animated plants, objects, and the attribution of human qualities to dogs and birds.

In both Armenian and Indo-European mythological systems, metamorphosis is linked to war, elemental forces of nature, the unity of humans and nature, magical powers, boundary-crossing, and transformation. Through the dissolution of boundaries, it emphasizes the close connection between humans and nature. The motif of metamorphosis is viewed as a manifestation of crossing the boundary between real and imaginary worlds, which allows the revelation of different value systems, rituals, and ancient symbols. The imagery of transformation presents a unique transitional journey, during which heroes overcome trials, reinterpret their identities, and undergo an ontological reconfiguration determined by the narrative structure and cultural context.

The motif of metamorphosis does not remain confined to ancient beliefs—it endures and is reproduced in modern culture, reaffirming its symbolic power and cultural vitality across different eras and environments. The studies presented not only shed light on the origins of ancient beliefs but also reveal their presence, applicability, and continuity in modern culture through literary works, art, cartoons, games, animations, feature films, and more.

The research showed that the motif of metamorphosis in Armenian oral tradition and world mythology functions as a multilayered symbolic phenomenon. It continues to survive and be reproduced in contemporary culture, preserving its value-based and cultural vitality.

СААКЯН Лилит (Армения)
Институт археологии и этнографии НАН РА
e-mail: sahakyanlilit1982@gmail.com

СИМВОЛИЧЕСКИЕ ФУНКЦИИ МЕТАМОРФОЗЫ В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ УСТНОЙ ТРАДИЦИИ И МИРОВОЙ МИФОЛОГИИ

Мотив метаморфозы (превращения) занимает важное место в контексте армянской устной традиции и мировой мифологии. Идея метаморфозы восходит к глубокой древности и отражает мировосприятие человека, а также культурную память и наследие. Она находит выражение в различных повествовательных формах — волшебных сказках, мифах, легендах, притчах, а также в обрядовых и культовых представлениях.

Цель настоящей работы — выявить символические функции метаморфозы в армянской устной традиции, сопоставив их с представлениями, сложившимися в мировых мифологических и мифопоэтических системах.

В ходе исследования были проанализированы различные проявления метаморфозы, классифицированные по цели в сюжетной структуре, месту действия, продолжительности и смысловым уровням.

Исследование было проведено с использованием историко-сравнительного, типологического и аналитического методов. В качестве источников использовались печатные сборники армянского устного народного творчества, специализированная научная литература, а также исследования по мировой мифологии. Особое внимание было уделено степени проработанности темы метаморфозы как в армянских народных волшебных сказках, так и в индоевропейской мифологической традиции.

На основе изученного материала выявлено, что мотив метаморфозы представлен в многообразных образных трансформациях: человек — животное, человек — растение, человек — птица. Каждое из этих превращений выполняет различные символические функции: спасение, наказание, очищение, самопознание, возрождение и др. Персонажи, подвергающиеся метаморфозе, могут быть как наказуемыми, так и спасаемыми. Превращение может быть как временным, так и постоянным — в зависимости от структуры и финала конкретного сюжета. Символический смысл метаморфозы связан как с тотемическими, так и с магическими представлениями и верованиями.

Сравнительный анализ показывает, что в индоевропейских мифологических системах метаморфоза является универсальным и межкультурным мотивом. Особенно распространены превращения в образы тотемных животных — волка, собаки, медведя и других. В армянской мифологии и фольклоре выделяются человеко-животные образы (например, оборотни), а также анимированные растения и предметы, наделение собак и птиц человеческими качествами.

В армянской и индоевропейской мифологических системах метаморфоза связана с темами войны, природных стихий, единства человека и природы, чудесных способностей, нарушения границ и преобразования. Через преодоление границ подчеркивается тесная связь между человеком и природой. Мотив метаморфозы рассматривается как выражение перехода между реальным и воображаемым мирами, что позволяет раскрыть различные системы ценностей, ритуалы и древние символы. Образ метаморфозы представляет собой своеобразный переходный путь, в ходе которого герой преодолевает испытания, переосмысливает свою идентичность и проходит онтологическую трансформацию — в зависимости от сюжетной структуры и культурного контекста повествования.

Мотив метаморфозы не ограничивается рамками древних верований — он сохраняется и воспроизводится в современной культуре, подтверждая свою символическую силу и культурную жизнеспособность в различные эпохи и в разных средах. Представленные исследования не только проливают свет на происхождение древних представлений, но и демонстрируют их актуальность, применимость и преемствен-

ность в современной культуре — в литературе, искусстве, мультфильмах, играх, анимации, художественном кино и других формах искусства.

Исследование показало, что мотив метаморфозы в армянской устной традиции и мировой мифологии выступает как многослойное символическое явление. Этот мотив продолжает существовать и возрождаться в современном культурном пространстве, сохраняя свою ценностную и мифопоэтическую силу.

ՍԱՀԱԿՅԱՆ Կարինե (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ sahakyanani@mail.ru

ԳՅՈՒՄՐՈՒ ԿԵՐՊԱՐԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՆԱՎԱՐՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

Գյումրու կերպարը դիտարկվել է ոչ այնքան որպես ֆիզիկական միջավայր, որքան բանավոր պատմությունների մեջ ապրող «անավարտ» քաղաք, որը կիսատ է մնացել իր պատմական ընթացքով, սակայն շարունակում է գոյատևել մշակութային հիշողության մեջ:

Սոցիալ-մշակութային անավարտության խնդիրը Գյումրու պարագայում ուրվագծվում է մի քանի շերտերում: Առաջին՝ երկրաշարժից հետո նարատիվային կիսատ մնացած գործընթացը, որը ոչ միայն ֆիզիկական, այլև մշակութաբանական անավարտություն է ստեղծել: Տվյալ իրավիճակը կարելի է բնութագրել որպես «կանգնած ժամանակ», իսկ այս արտահայտությունը հաճախ տեղ է գտնում նաև բանավոր պատմություններում, երկրորդ՝ հին քաղաքի և նոր սոցիալական միջավայրի բախումը՝ հին ձևակերպումների, արժեքային համակարգերի վերաիմաստավորումը, երրորդ՝ ինքնության կառուցման պրոցեսը, երբ գյումրեցի լինելը կապված է ոչ միայն տեղանքի, այլև հիշողության, վերապրման և հումորային դիմադրության հետ: Բանավոր պատմությունների մեջ Գյումրին դառնում է յուրօրինակ խորհրդանիշ՝ կիսավեր շինությունների, բայց կենդանի ձայների քաղաք: Վշտի պարադոքսը և հումորը, որը գյումրեցիների ինքնաարտահայտման և գոյատևման կարևոր գործոն է, բանավոր պատմումներում հանդես են գալիս որպես մշակութային պաշտպանության ձևեր: Գյումրու լավատեսությունը պարզապես զգացողություն չէ, այլ կոլեկտիվ մշակութային դիմադրողականության մի ձև: Այն արտահայտվում է խոսքի, վարքի, հումորի, առօրյա կյանքի և խորհրդանիշների մեջ: Մեծ աղետներից հետո վերապրելով՝ Գյումրին ոչ միայն չկորցրեց իր ոգին, այլև դարձավ դրա պահապանն ու փոխանցողը ապագա սերունդների համար: Տարբեր վկայություններ և հուշապատումներ բացահայտում են, թե ինչպես է մարդկային հիշողությունը ստրեսից հետո մեր-

ժում լիարժեք փակումը, ընդ որում՝ մշտապես պահելով «անավարտության» գաղափարը՝ որպես ինքնության բաղադրիչ: Գյումրին իր «անավարտությամբ» դառնում է մշակութային ինքնության շարունակական առանցք, որտեղ անցյալն ու ներկան մշտապես վերաիմաստավորվում են, իսկ խոսքը՝ որպես գործիք, պահպանում է քաղաքի հիշողությունն ու կերպարը: Անավարտության գաղափարը բացահայտում է նաև լայն հնարավորություն մտածելու ժամանակակից հայկական քաղաքային ինքնության մասին: Այն ընդգծում է, որ ոչ մի մշակույթ կամ համայնք լիարժեք «ավարտված» չէ՝ միշտ գտնվելով վերափոխման, վերաիմաստավորման և վերակառուցման փուլում: Այս տեսանկյունից Գյումրին վերածվում է համազգային խորհրդանիշի՝ իբրև հավերժ վերակենդանացող, փորձառության մեջ ուժ գտնող և հումորով դիմակայող հասարակության մոդել: Անավարտ քաղաքի գաղափարը էթնոմշակութային հայեցակարգ է, որն ընդգծում է, որ քաղաքը՝ որպես սոցիալ-մշակութային տարածք, երբեք լիովին ավարտված չէ: Քաղաքը՝ որպես կենդանի օրգանիզմ, անընդհատ զարգանում է, փոխվում է տարբեր գործոնների ազդեցության տակ՝ հարստանալով նորագույն միֆերով և վերապատմումներով: Սոցիալ-մշակութային անավարտության զգացողությունը արտահայտվում է գյումրեցու բանավոր խոսքում, հուշերում, նարատիվներում: Նյութական հիմնապայուններից զատ՝ բանավոր մշակույթը սահմանում է մի քաղաք, որի ամբողջականությունը երբեք պայմանավորված չի եղել միայն ֆիզիկական ավարտվածությամբ: Քաղաքը դիտվում է ոչ միայն որպես ֆիզիկական տարածք, այլև որպես սոցիալական օրգանիզմ, որում համակեցության մեջ են մտնում տարբեր խմբեր, արժեքներ, հակամարտություններ, ավանդույթներ և սովորույթներ: Որպես հետևանք՝ Գյումրին ներկայացվում է որպես մշակութային հիշողության կենդանի տարածք, որի «անավարտ» կերպարը ոչ թե խոցելիությունն է, այլ վերապրումի, վերակառուցման և ինքնության շարունակականության նշան՝ արտացոլված բանավոր մշակույթի բազմաշերտության մեջ:

SAHAKYAN Karine (Armenia)
Shirak Center for Armenological Studies of NAR RA
e-mail: sahakyanani@mail.ru

THE IMAGE OF GYUMRI AND THE PROBLEM OF SOCIO-CULTURAL INCOMPLETENESS IN ORAL NARRATIVES

The image of Gyumri was considered not so much as a physical environment, but as an “unfinished” city living in oral stories, which remained unfinished in its historical course, but continues to exist in cultural memory. The problem of socio-cultural incompleteness in the case of Gyumri is outlined in several layers.

Firstly, the unfinished narrative process after the earthquake, which created not only physical but also cultural incompleteness. This situation can be described as “stopped time”, and this expression is often found in oral stories, secondly, the clash of the old city and the new social environment – a rethinking of old formulations and value systems,

thirdly, the process of constructing identity, when the existence of a Gyumri resident is associated not only with a place, but also with memory, experience and humorous resistance. In oral histories, Gyumri becomes a unique symbol: a city of half-ruined buildings but living voices. The paradox of grief and humor, which are important factors in the self-expression and survival of the people of Gyumri, act as forms of cultural defense in oral narratives.

Gyumri's optimism is not just a feeling, but a form of collective cultural resistance. It is expressed in speech, behavior, humor, everyday life and symbols. Having survived major disasters, Gyumri not only did not lose its spirit, but also became its keeper and transmitter for future generations. Various testimonies and memoirs show how human memory refuses to be completely closed after stress, while constantly preserving the idea of «incompleteness» as a component of identity.

Gyumri, with its «incompleteness», becomes a continuous platform of cultural identity, where the past and the present are constantly rethought, and speech, as an instrument, preserves the memory and image of the city. The idea of incompleteness also opens up a wide range of possibilities for thinking about contemporary Armenian urban identity. It emphasizes that no culture or community is completely “finished,” always being in a state of transformation, rethinking, and reconstruction. From this perspective, Gyumri becomes a national symbol as a model of a society that is eternally reborn, draws strength from experience, and resists with humor. The idea of an unfinished city is an ethnocultural concept that emphasizes that a city as a socio-cultural space is never completely finished. The city, as a living organism, is constantly evolving, changing under the influence of various factors, enriched by the latest myths and retellings. The feeling of socio-cultural incompleteness is expressed in the oral speech, memoirs, and narratives of Gyumri residents.

In addition to material pillars, oral culture defines a city whose integrity has never been conditioned by physical completion alone. The city is viewed not only as a physical space, but also as a social organism in which various groups, values, conflicts, traditions and customs coexist.

As a result, Gyumri is presented as a living space of cultural memory, whose “unfinished” image is not a sign of vulnerability, but a sign of survival, reconstruction and continuity of identity, reflected in the multi-layered oral culture.

СААКЯН Карине (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: sahakyanani@mail.ru

ОБРАЗ ГЮМРИ И ПРОБЛЕМА СОЦИОКУЛЬТУРНОЙ НЕЗАВЕРШЁННОСТИ В УСТНЫХ НАРРАТИВАХ

Образ Гюмри рассматривался не столько как физическая среда, сколько как «незавершенный» город, живущий в устных рассказах, который остался незавершен-

ным в своем историческом ходе, но продолжает существовать в культурной памяти. Проблема социокультурной неполноты в случае Гюмри очерчена в нескольких слоях. Во-первых, незавершенный повествовательный процесс после землетрясения, создавший не только физическую, но и культурную неполноту.

Эту ситуацию можно описать как «остановившееся время», и это выражение часто встречается в устных рассказах, во-вторых, столкновение старого города и новой социальной среды — переосмысление старых формулировок и систем ценностей, в-третьих, процесс конструирования идентичности, когда бытие жителя Гюмри связано не только с местом, но и с памятью, переживанием и юмористическим сопротивлением. В устных историях Гюмри становится уникальным символом: городом полуразрушенных зданий, но живых голосов. Парадокс скорби и юмора, которые являются важными факторами самовыражения и выживания жителей Гюмри, выступают в качестве форм культурной защиты в устных повествованиях. Оптимизм Гюмри — это не просто чувство, а форма коллективного культурного сопротивления. Он выражается в речи, поведении, юморе, повседневной жизни и символах. Пережив крупные катастрофы, Гюмри не только не утратил свой дух, но и стал его хранителем и передатчиком для будущих поколений.

Различные свидетельства и мемуары показывают, как человеческая память отказывается от полной закрытости после стресса, при этом постоянно сохраняя идею «незавершенности» как компонента идентичности. Гюмри, с его «незавершенностью», становится непрерывной платформой культурной идентичности, где прошлое и настоящее постоянно переосмысливаются, а речь, как инструмент, сохраняет память и образ города. Идея незавершенности также раскрывает широкие возможности для размышлений о современной армянской городской идентичности. Она подчеркивает, что ни одна культура или сообщество не являются полностью «законченными», всегда находясь в стадии трансформации, переосмысления и реконструкции. С этой точки зрения Гюмри превращается в национальный символ как модель общества, которое вечно возрождается, черпает силы в опыте и с юмором противостоит. Идея незавершенного города — этнокультурная концепция, которая подчеркивает, что город как социокультурное пространство никогда не бывает полностью завершенным. Город, как живой организм, постоянно развивается, меняется под воздействием различных факторов, обогащается новейшими мифами и пересказами. Ощущение социокультурной незавершенности выражается в устной речи, мемуарах и повествованиях жителей Гюмри. Помимо материальных столпов, устная культура определяет город, целостность которого никогда не была обусловлена только физической завершенностью. Город рассматривается не только как физическое пространство, но и как социальный организм, в котором сосуществуют различные группы, ценности, конфликты, традиции и обычаи. В результате Гюмри представляется как живое пространство культурной памяти, чей «незавершенный» образ является не признаком уязвимости, а признаком выживания, реконструкции и преемственности идентичности, отраженной в многослойности устной культуры.

ԱՎԵՏԻՍՅԱՆ Գայանե Հ. (Հայաստան)
Շիրակի պետական համալսարան
էլ. հասցե՝ gayaneavetisyan2@gmail.com

ՍԻԲԻՐՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒ «ՄՇԵՑԻ ԱՌԱՔԵԼԸ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐԸ» ՊԱՏՄՎԱԾՔՈՒՄ

Ձեկույցի շրջանակներում անդրադարձել ենք վաստակաշատ գրող Գ. Մահարու կյանքի մի հատվածին, որը տևել է շուրջ տասնյոթ տարի: Գրող, որի անվան և գործի շուրջ առայսօր շարունակվում են գրական բանավեճերն ու քննարկումները:

Դժվարին կյանք էր վիճակված գրողին՝ որբություն, որբանոցից որբանոց, կրկնակի աքսոր, հրատարակչական դժվարություններ և մշտական հալածանքներ: Բայց այս ամենով հանդերձ՝ նա կարողացել է դժվարին պայմաններում անգամ ստեղծել հոգևոր հարուստ արժեքներ պարունակող գեղարվեստական ինքնատիպ գործեր:

Հետազոտությունը և ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք վերլուծության և համադրության մեթոդները:

Քննության ենք առել Գ.Մահարու «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքի գեղարվեստական առանձնահատկությունները, որի շրջանակներում փորձել ենք ներկայացնել սիբիրյան տաժանակրության, աքսորի տարիների պատկերները:

Վերլուծություն.Գրողն առաջին անգամ փորձում էր մտնել արգելված գոտի՝ բանտ, բարաք, ճամբար, մենախուց, ներկայացնել անվանի և շարքային մարդկանց, տարբեր ազգերի քրեականների, որոնք չէին կորցրել իրենց բարոյական կերպարը: Վավերագրական-փաստագրական այս պատմվածքը պատկերում էր խորհրդային իշխանության տարիներին բռնադատվածների հալածական կյանքը սիբիրյան հեռավոր ճամբարներում:

Ինքնակենսագրական հիմք ունեցող «Մշեցի Առաքելը և ուրիշները» պատմվածքը «Սիբիրյան պատմվածքներ» շարքից է, որի հերոսները մատնվել են բախտի քմահաճույքին Սիբիրի հեռավոր տայգաներում: Հեղինակը շարքի այս և մյուս ստեղծագործություններում ցույց է տալիս տաժանակրության անմարդկային պայմանները, անմեղ դատապարտված բանտարկյալների ամենօրյա ջանքը իրենց մարդկային նկարագիրը չկորցնելու համար:

Քննարկվող թեման արդիական և հետաքրքիր է ինչպես գրողի, այնպես էլ նորագույն շրջանի հայ գրականության մեջ գեղարվեստական խոսքի պատկերաստեղծման և գրական նոր կերպարների յուրահատկությունների բացահայտման դիտանկյունից, իսկ առաջադիր խնդիրը՝ մանկավարժական մտքի արդի պահանջների համապատկերում դրանք ընթերցողներին ներկայացնելը:

AVETISYAN Gayane H. (Armenia)
Shirak State University
e-mail: gayaneavetisyan2@gmail.com

DESCRIPTION OF THE SIBERIAN YEARS IN GURGEN MAHARI'S STORY "ARAKEL FROM MUSH AND OTHERS"

This article addresses a significant and challenging period in the life of the distinguished and respected writer Gurgen Mahari, which lasted about seventeen years. Mahari remains a subject of ongoing literary debate and discussion.

The writer endured a difficult life marked by orphanhood, transfers from one orphanage to another, repeated exile, publication difficulties, and constant persecution. Despite all these hardships, he was able to create artistically unique works containing profound spiritual values, even in the harshest conditions.

In this research, we have applied methods of analysis and comparison.

We have examined the literary features of Gurgen Mahari's story "Arakel from Mush and Others," focusing particularly on the portrayal of the Siberian penal years and exile.

For the first time, the writer attempted to enter a forbidden zone — prison, barracks, camp, solitary confinement — and depict both renowned and ordinary people, criminals of various nationalities who had not lost their moral character.

This documentary-literary story reflects the persecuted lives of the repressed during the Soviet era in distant Siberian camps. The semi-autobiographical "Arakel from Mush and Others" belongs to the "Siberian Stories" series, whose protagonists were left to the whims of fate in the remote Siberian taiga.

In this and other works in the series, the author portrays the inhuman conditions of forced labor and the daily struggle of unjustly convicted prisoners to retain their human dignity.

The subject under discussion is relevant and compelling both in the context of the writer's body of work and in terms of uncovering the peculiarities of artistic expression and new literary characters in contemporary Armenian literature. The primary objective is to present these themes to readers in accordance with the current demands of pedagogical thought.

АВЕТИСЯН Гаяне О. (Армения)
Ширакский государственный университет
e-mail: gayaneavetisyan2@gmail.com

ОПИСАНИЕ СИБИРСКИХ ЛЕТ В РАССКАЗЕ ГУРГЕНА МААРИ «АРАКЕЛ ИЗ МУША И ДРУГИЕ»

В данной статье рассматривается один из сложных периодов жизни заслуженного и уважаемого писателя Гургена Маари, длившийся около семнадцати лет.

Вокруг имени и творчества писателя до сих пор продолжаются литературные дискуссии и обсуждения.

Жизнь писателя была чрезвычайно трудной — сиротство, переходы из одного детдома в другой, повторная ссылка, издательские трудности и постоянные преследования. Несмотря на всё это, он сумел даже в тяжёлых условиях создать художественно самобытные произведения, наполненные духовными ценностями.

В исследовании применены методы анализа и сопоставления. Мы рассмотрели художественные особенности рассказа Гургена Маари «Аракел из Муша и другие», в рамках которого попытались представить картину ссыльных лет в Сибири.

Писатель впервые пытался проникнуть в запретную зону — тюрьму, барак, лагерь, одиночную камеру, — чтобы показать как известных, так и обычных людей, представителей различных национальностей, находящихся в заключении, но не потерявших своего нравственного облика.

Этот документально-художественный рассказ отображает преследуемую жизнь репрессированных во времена советской власти в отдалённых сибирских лагерях. Полуавтобиографический рассказ «Аракел из Муша и другие» входит в цикл «Сибирские рассказы», герои которого оказались во власти жестокой судьбы в далёкой тайге.

В этом и других произведениях серии автор показывает нечеловеческие условия каторги, ежедневные усилия несправедливо осуждённых сохранить своё человеческое достоинство.

Обсуждаемая тема актуальна и интересна как в контексте творчества писателя, так и в свете раскрытия особенностей художественного образа и новых литературных героев в современной армянской литературе. Главная задача — представить эти темы читателям с точки зрения современных педагогических требований.

ԿԱՐԱԽԱՆՅԱՆ Նարինե (Հայաստան)
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղ
էլ. հասցե՝ narineqarhanyan@gmail.com

ԴԱՎԻԹ ՄՇԵՑՈՒ «ԱՅԼԱ-ԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Ձեկուցումը նվիրված է ժամանակակից բանաստեղծ Դավիթ Մշեցու «Այլագրություն» բանաստեղծական ժողովածուին (Երևան, 2020): Գրքի վերնագիրն անգամ արտասովոր է՝ «Այլա-գրություն», որը ենթադրում է այլ//ուրիշ գիր//գրություն: Հեղինակը այլագրության//այլագրումի միջոցով կոդավորել (գաղտնագրել) է իր ասե-

լիքը՝ գործածելով պատկերավորման ինքնատիպ եղանակներ ու միջոցներ, արտահայտելով իր քաղաքացիական դիրքորոշումը, սրտի խոռվքն ու պոռթկումը:

«Այլա-գրություն» գրքում Դավիթ Մշեցին հաստատում է բանաստեղծի գրական հավատամքը՝ ուսումնասիրել նախորդներին ու ժամանակակից գրականությունը, բայց ստեղծել իր ուրույն//այլ բանաստեղծությունը, այս դեպքում՝ «Այլ-ագրություն»-ը: Գրքում հեղինակը գնում է ինքնաճանաչման ճանապարհով: Սիրուն կամ հայրենիքին փարվելիս//գրկելիս հասու է լինում լույսին//ճշմարտությանը («Ես հասու եղա մթին աշխարհի…»): «Տիգրան Մե՞ծն էր Մեծ, //թե՞ Արտավազդը». տարբեր են ընկալումները հոգու և գլխի, հոգու և մտքի նույն ծաղկի//արմատի//հողի//ժողովրդի հանդեպ: Բանաստեղծը մթագնումի մեջ փորձում է փնտրել «արթնացումը»: Արթնացումը զգացած հեղինակը տառապում է անորոշ ներկայի պատճառով: Մերթ հարբած Կալիգուլան է պարում, մերթ՝ նախորդ օրվա հոգեհանգստից հետո խրախճանք է: Ասել է թե՝ խրախճանք ժանտախտի ժամանակ:

«Այլա-գրություն» գրքում հեղինակը ներկայացրել է իր վախերն ու տագնապները ազգի ինքնության կորստի համար: Բանաստեղծական ժողովածուի մեջ Մշեցին երգում է իր անմահության երգը, որ նաև իր ազգի հավերժության երգն է: Այսպես՝ «Ես չեմ մահանա» սկսվածքով բանաստեղծության յուրաքանչյուր տան առաջին տողի փոփոխությունը հավերժության հավատով է լցնում՝ «ես չեմ մահանա», «ես չեմ չորանա», «ես չեմ կորանա»: Մշեցին հավատում է իր ազգի հառնումին: Դավիթ Մշեցու գիրքը ինքնության համար պայքարի մասին է և սթափության կոչ ու ըմբոստացում է ներկայիս դառն ու անհեթեթ իրականության դեմ:

«Այլա-գրություն» բանաստեղծական ժողովածուի մեջ հեղինակը գործածել է ինքնատիպ խորհրդապատկերներ: Հետաքրքրական են գունային խաղարկումները՝ կարմիր, դեղին, սև և այլն: Այսպես օրինակ՝ բանաստեղծը կարմիրը ներկայացնում է մերթ որպես արյան ու մահվան, մայրամուտի գույն, մերթ՝ որդան կարմիրի գույն, որ թագավորական գույն էր: Բանաստեղծի հոր աչքերը միշտ վառվում են կարմիր կրակով, որ ընկալվում է որպես ազատության խորհրդանիշ, քանի որ նա պայքարում էր Արցախի ազատագրման համար: Դեղինը հայոց կրակի//արևի ու քաջության աստված Վահագնի խորհուրդն է ներկայացնում, որ ընկալվում է որպես փրկության արև, բայց ավելի հաճախ Մշեցին այն ներկայացնում է որպես մատնության ու դավաճանության խորհրդանշան, ինչպես կերպարվեստում (Հուդան հաճախ է պատկերված դեղին շորերով): Մշեցին հմտորեն օգտագործել է գույնի պոետիկան: Օրերը դեղին են, «դեղին ձյունը» ժամանակավորապես քողարկում է ախտերը և այլն:

Մշեցու պոետիկայում ծառապատկերումը ևս ինքնատիպ խորհուրդ է ստանում: Հայոց բազմադարյա մշակույթը ներկայացված է հաստաբուն կաղնու օրինակով, որը պայքարում է հանուն թփերի: Բանաստեղծը հավատում է ճղատված ծառի ճյուղավորվելուն և պտղավորվելուն՝ արմատն ամուր պահելու դեպքում: Ազգին հասած պատուհասները ներկայացվել է ձմռան//մահվան խորհրդանիշի միջոցով, որի հակադրությունը կյանքն է//հառնումը:

Այսպիսով, Դավիթ Մշեցու «Այլա-գրություն» վերնագրով բանաստեղծական ժողովածուն ձևի ու բովանդակության կուռ միասնություն է, և հեղինակը լավագույն ձևով է կարողացել իր ասելիքը հաղորդել ընթերցողին:

KARAKHANYAN Narine (Armenia)
Gyumri branch of the National Polytechnic University of Armenia
e-mail: narineqarhanyan@gmail.com

COLLECTION OF POEMS BY DAVID MSHETSI "AYLA-GRUTYUN"

The report is dedicated to the collection of poems "Ayla-grutyun" ("Alter-writing") by the contemporary poet David Mshetsi (Yerevan, 2020). The title of the book is even unusual: "Ayla-grutyun" ("Alter-writing"), which implies alter//other writing. The author has encoded (encrypted) his message through alter-writing, employing unique ways and methods of imagery to express his civic stance, the turmoil, and the outburst of his heart.

In the book "Ayla-grutyun" ("Alter-writing"), David Mshetsi confirms the poet's literary credo: to study the works of predecessors and contemporary literature, yet to create his own unique//other poem, in this case, "Ayla-grutyun" ("Alter-writing"). In the book, the author embarks on a path of self-recognition. When one embraces the beloved or the homeland, one reaches the light//truth ("I have reached the dark world..."). "Was Tigran the Great truly great //or was it Artavazd?". There are different perceptions of the soul and the head, the soul and the mind towards the same flower// the root// the earth//the people. The poet tries to search for "awakening" in the darkness. The author, who has experienced awakening, suffers from an uncertain present. Sometimes, it is a drunken Caligula dancing; other times, a feast after the previous day's funeral. In other words, a feast during the plague.

In the book "Ayla-grutyun" ("Alter-writing''), the author has presented his fears and anxieties about the loss of the nation's identity. In the collection of poems, Mshetsi sings the song of his immortality, which is also the song of eternity of his people. Thus, the change in the first line of each stanza of the poem beginning with "I will not die" fills us with faith in eternity: ''I will not die'', "I will not wither'', ''I will not stoop''. Mshetsi believes in the rebirth of his nation. David Mshetsi's book is about the struggle for identity and is a call for sobriety and rebellion against the current bitter and absurd reality.

In the poetry collection ''Ayla-grutyun'' ("Alter-writing'') the author used unique symbols. The color combinations are interesting: red, yellow, black, etc. For example, the poet presents red sometimes as the color of blood and death, the color of sunset, and sometimes as the color of Vordan Karmir (a dye made from a worm-like insect), which was a royal color. The poet's father's eyes always burn with red fire, which is perceived as a symbol of freedom, as he fought for the liberation of Artsakh. Yellow represents the symbol of the Armenian god of fire//sun and courage, Vahagn, who is perceived as the sun of salvation. But, more often Mshetsi presents it as a symbol of betrayal and treachery, as in fine art (Judas is often depicted in yellow clothes). Mshetsi skillfully has used the poetics of color. The days are yellow, "the yellow snow" temporarily masks the diseases, and so on. In Mshetsi's poetics, the depiction of trees also takes on a unique symbolic meaning. The centuries-old Armenian culture is represented by the example of a thick-trunked oak tree that fights for the sake of the bushes. The poet believes in the ability of a broken tree to branch out and bear fruit again if the roots are kept strong. The calamities that befell the

nation are represented through the symbol of winter//death, the opposite of which is life//resurrection.

Thus, David Mshetsi's collection of poems entitled “Ayla-grutyun” (“Alter-writing’’) is a solid unity of form and content, and the author has managed to convey his message to the reader in the best possible way.

КАРАХАНЯН Нарине (Армения)
Гюмрийский филиал Национального политехнического университета Армении
e-mail: narineqarhanyan@gmail.com

СБОРНИК СТИХОВ ДАВИДА МШЕЦИ "АЙЛА-ГРУТЮН"

Доклад посвящен сборнику стихов «Айла-грутюн» («Ино-писание») современного поэта Давида Мшеци (Ереван, 2020). Даже название книги необычно: «Айла-грутюн» («Ино-писание»), что подразумевает иное писание- инописание. Автор закодировал (зашифровал) свое послание через аллегорию, используя уникальные способы и средства визуализации, выражая свою гражданскую позицию, смятение и порыв своего сердца.

В книге «Айла-грутюн» («Ино-писание») Давид Мшеци подтверждает литературное убеждение поэта: изучать предшественников и современную литературу, но создавать свое уникальное//иное стихотворение, в данном случае «Иное писание». В книге автор следует по пути самопознания. Прильнув к любовям или к родине, человек достигает света//истины («Я достиг темного мира…»). «Был ли Тигран Великий Великим, //или Артавазд?». Различаются восприятия души и головы, души и ума, одного и того же цветка//корня//почвы//народа. Поэт пытается искать «пробуждение» во тьме. Автор, почувствовавший пробуждение, страдает из-за неопределенного настоящего. Иногда пляшет пьяный Калигула, иногда пир после вчерашних похорон. Так сказать, пир во время чумы.

В книге «Айла-грутюн» («Ино-писание») автор представляет свои страхи и тревоги по поводу утраты идентичности нации. В сборнике стихов Мшеци поет свою песню бессмертия, которая также является песней вечности его нации. Так, начиная с «Я не умру», изменение первой строки каждой строфы стихотворения наполнено верой в вечность: «Я не умру», «я не увяну», «я не погибну». Мшеци верит в возрождение своей нации. Книга Давида Мшеци о борьбе за идентичность и является призывом к трезвости и бунту против нынешней горькой и абсурдной реальности. В сборнике стихов «Айла-грутюн» («Ино-писание») автор использовал уникальные символы. Интересны цветовые решения: красный, желтый, черный и т. д. Например, поэт представляет красный цвет иногда как цвет крови и смерти, заката, иногда как цвет багрянки, который был царским цветом. Глаза отца поэта всегда горят красным огнем, что воспринимается как символ свободы, так как он боролся за освобождение Арцаха. Желтый цвет представляет символику Ваагна, армянского бога огня/солнца и мужества, который воспринимается как солнце спасения, но чаще Мшеци пред-

ставляет его как символ предательства и измены, как в изобразительном искусстве (Иуда часто изображается в желтых одеждах). Мшеци умело использовал поэтику цвета. Дни желтые, «желтый снег» временно скрывает нечистоты и т. д.

В поэтике Мшеци изображение деревьев также приобретает уникальный смысл. Многовековая армянская культура представлена на примере толстого дуба, который борется ради кустов. Поэт верит в разветвление и плодоношение увядшего дерева, при условии, что корень остается крепким. Бедствия, постигшие народ, представлены через символ зимы//смерти, противоположностью которой является жизнь//воскрешение.

Таким образом, сборник стихов Давида Мшеци «Айла-грутюн» («Иописание») представляет собой цельное единство формы и содержания, и автору удалось наилучшим образом донести свое послание до читателя.

ՀԱՅՍԱՆ Դանիելա (Ռումինիա)
Սուչավայի Ստեֆան Չել Մարեի համալսարան
էլ. հասցե՝ danielahaisan@litere.usv.ro

ԲԱՂՄԱՄՈԴԱԼՈՒԹՅՈՒՆՆ ԻՐ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՄԲ. ՕՍԿԱՐ ՈՒԱՅԼԴԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄԻՋՆՇԱՆԱՅԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ (2019–2020)

Իմ զեկույցում մտադիր եմ անդրադառնալ Օսկար Ուայլդի այն հեքիաթներին, որոնք ընդգրկված են նրա «Երջանիկ իշխանը և այլ պատմություններ» ժողովածուում (1888թ.) (մասնավորապես՝ «Երջանիկ իշխանը», «Սոխակի և վարդի մասին», «Եսասեր հսկան», «Նվիրված ընկերը» և «Հրաշալի հրթիռը»), որոնք առատորեն նկարազարդվել են Անկա Սմըրընդաքեի կողմից միահեքիաթ գրքաշարով, որը լույս է տեսել Cartier հրատարակչության կողմից (Բուխարեստ, Քիշնև) 2019–2020 թթ.:

Թեև թարգմանությունը, որն իրականացվել է ռումինացի վիպասան Լավինիա Բրանիշտեի կողմից, աչքի է ընկնում տարօրինակ բառացիությամբ, տեքստի և պատկերի փոխազդեցության բնույթը վկայում է բարդ բազմակողային մոտեցման մասին, որը ցույց է տալիս, որ մանկական գրքերը, ի վերջո, նախատեսված են երկակի լսարանի համար:

Մարիա Նիկոլաևայի և Քերոլ Սքոթի 2006 թ. դասակարգման համաձայն՝ տեքստի և պատկերի փոխազդեցության հայտնաբերված ձևերը տատանվում են սի-

մետրիկի (երբ տեքստն ու պատկերները հաղորդում են նույնատիպ տեղեկատվություն), լրացնողի (երբ տեքստն ու պատկերները լրացնում են միմյանց բացերը) և ուժեղացնողի միջև (այս դեպքում պատկերը սովորաբար ավելի շատ տեղեկատվություն է տալիս, քան տեքստը՝ երբեմն նույնիսկ ընթերցողին զգուշացնելով հերոսների մասին կամ մատնանշելով տարբեր տեքստային նրբերանգներ):

HAISAN Daniela (Romania)
"Stefan cel Mare" University of Suceava
e-mail: danielahaisan@litere.usv.ro

MULTIMODALITY AT ITS BEST: AN INTERSEMIOTIC TRANSLATION OF OSCAR WILDE'S FAIRY-TALES (2019-2020)

In my communication I intend to look into Oscar Wilde's fairy-tales included in "The Happy Prince and Other Stories" volume (1888) (namely "The Happy Prince," "The Nightingale and the Rose," "The Selfish Giant," "The Devoted Friend," and "The Remarkable Rocket"), copiously illustrated by Anca Smărăndache in a series of one-tale books published by Cartier (Bucharest, Kishinev) between 2019 and 2020.

Whereas the translation itself (done by Romanian novelist Lavinia Braniște) displays an uncanny type of literality, the nature of the text-image interaction testifies to a complex multimodal endeavour which points to children's books ultimately being intended for a double audience.

Following Maria Nikolajeva and Carole Scott's 2006 classification, the types of text-image interaction identified vary between symmetrical (with the text and illustration offering the same kind of information), complementary (with the text and illustration filling each other's gaps), and enhancing (in this particular case, the image offering typically more information than the text, sometimes to the point of warning the reader against characters or pointing to various other textual subtleties).

The research was conducted in the frame of the project "Creativity and Multimodality in Translated Children's Books in Romania and Moldova since the 1990s" (PN-IV-PCB-ROMD-2024-0497).

ХАЙСАН Даниэла (Румыния)
Университет Штефана чел Маре, Сучава
e-mail: danielahaisan@litere.usv.ro

МУЛЬТИМОДАЛЬНОСТЬ ВО ВСЕЙ КРАСЕ: ИНТЕРСЕМИОТИЧЕСКИЙ ПЕРЕВОД СКАЗОК ОСКАРА УАЙЛЬДА (2019–2020)

В своём докладе я намереваюсь рассмотреть сказки Оскара Уайльда, вошедшие в сборник «Счастливый принц и другие сказки» (1888) (а именно: «Счастливый

принц», «Соловей и роза», «Эгоистичный великан», «Преданный друг» и «Замечательная ракета»), которые были обильно проиллюстрированы Анкой Смэрындэкэ в серии книг, каждая из которых посвящена одной сказке, изданных издательством Cartier (Бухарест, Кишинёв) в 2019–2020 годах.

Хотя сам перевод, выполненный румынской писательницей Лавинией Брэниште, отличается необычной буквальностью, характер взаимодействия текста и изображения свидетельствует о сложном мультимодальном замысле, указывающем на то, что детские книги на самом деле ориентированы на двойную аудиторию.

Следуя классификации Марии Николаевой и Кэрол Скотт (2006), выявленные типы взаимодействия текста и изображения варьируются от симметричного (когда текст и иллюстрация предоставляют один и тот же тип информации), комплементарного (когда текст и иллюстрация дополняют пробелы друг друга) до усиливающего (в данном случае изображение, как правило, содержит больше информации, чем текст — вплоть до того, что предупреждает читателя о персонажах или указывает на различные текстовые тонкости).

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Սերգո (Հայաստան)
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
էլ. հասցե՝ serhayr@mail.ru

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայր մեր»-ը քրիստոնեական առաջին և ամենատարածված աղոթքներից է՝ Հիսուս Քրիստոսի շնորհական աղոթքը, որ նա հայտնեց իր աշակերտներին որպես ճշմարիտ աղոթքի օրինակ: Ասվում կամ երգվում է բոլոր խորհրդակատարությունների ժամանակ՝ սկզբում և վերջում, ամեն անգամ խորհրդանշելով Տիրոջ հայտնութենական խոսքն իր իսկ մասին, թե՝ «Ես եմ Ալֆան և Օմեգան, Սկիզբը և Վախճանը, Առաջինը և Վերջինը»:

Հայ հոգևոր մեկնողական գրականության մեջ այս աղոթքը, որ նաև ունի Տէրունական անունը, ամենաշատ մեկնված ավետարանական հատվածն է: Շատերն են՝ Գրիգոր Ա Լուսավորիչ, Հակոբ Մծբնացի, Եղիշե, Ներսես Լամբրոնացի, Ղազար Փարպեցի, Ստեփանոս Սյունեցի, Հովհան Ոսկեբերան, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Տաթևացի և բազում ուրիշներ, մինչև մեր օրերը ուղղակի կամ անուղղակի անդրադարձել Տէրունական աղօթքին, մեկնաբանելով նրա այս կամ այն արտահայտությունը: Ընդ որում՝ նրանցից շատերն աղոթքը մեկնաբանել են ամենայն բծախնդրությամբ ու մանրակրկիտ: Զորօրինակ՝ այս իմաստուն ու խորագիտակ հայրերից մեկը՝ Գր. Տաթևացին, դա արել է բացարձակապես բառ առ բառ, հաճախ նույն հասկացությունը կամ բառը բացատրելով ամենատարբեր մեկնակետերից:

Ի դեպ, այն հանգամանքը, որ Ղուկասի Ավետարանը «Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն» արտահայտությունից հետո չունի «այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի քո է ...» խոսքերը, թույլ է տալիս կարծել, որ վերջիններս աղոթքին ավելացվել են ավելի ուշ: Նման կարծիքի օգտին է վկայում նաև այն փաստարկը, որ Ղուկաս ավետարանիչի մոտ աղոթքի բացակայող հատածը առկա չէ նաև հունարենում, լատիներենում ու մի քանի հին ու նոր լեզուներում:

Աղոթքը պարունակում է յոթ ասույթ (խնդրվածք). առաջին երեքը (Սուրբ եղիցի անուն քո, Եկեսցէ արքայութիւն քո,Եղիցին կամք քո) փառաբանում են աստծուն, մյուս չորս ասույթները վերաբերում են մարդուն. մարդը խնդրում է, որ աստված տա իրեն հանապազորյա հացը, թողնի պարտքերը, չտանի փորձության ու փրկի չարից: Եվ քանի որ աղոթողն իրեն ամբողջովին հանձնում է աստծուն, ուստի և աղոթքի վերջում միայն նրանում է ճանաչում հավիտենական արքային, հավերժ զորությունն ու փառքը՝ զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամե՛ն:

Այնուհանդերձ, այս պարագայում Տերունականի մասին խոսքը աղոթքի լեզվական կողմին է վերաբերում. մասնավորաբար՝ թարգմանական առումով ուշադրություն է գրավում աղոթք-խնդրանքի վերջին ասույթը՝ «...զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս», որ թարգմանաբար ժամանակակից հայերենում ունի «...քանի որ Քոնն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս, ամեն» տեսքը: Բանն այն է, որ դասական գրաբարում եմ պակասավոր բայը, իբրև պարզ ստորոգյալ (է-ական բայ) գործածվելիս, տարիմաստություններ է դրսևորում՝ պայմանավորված նախադասության ենթակայի հարացույցով՝ ուղղականով ենթակայի հետ ունի *գոյություն ունենալ, լինել* իմաստը, տրականով ենթակայի հետ՝ *պիտի, պետք է, հնարավոր է* իմաստները, սեռականով ենթակայի հետ՝ *ունենալու* իմաստ, բայց թեք հոլովաձևերով ենթակաները արդի հայերեն են թարգմանվում սովորաբար ուղղականաձև (Էր նորա դուստր մի - Նա ուներ մի աղջիկ: Էր ինձ լինել ի տան Ես պիտի տանը լինեի):

Ելնելով վերոնշյալից՝ հնարավոր է համարվում աղոթքի վերջին ասույթի արդի հայերեն թարգմանության այսպիսի տարբերակ՝ քանի որ Դու՛ ունես արքայություն և զորություն և փառք հավիտենապես: Ամե՛ն: Տարբերակը հիմնավորվում է հետևյալ նկատառումներով.

ա) Պահպանվում են գրաբարի է-ական բայ-ստորոգյալի և նրա սեռականաձև ենթակայի թարգմանության յուրահատկությունները (հմմտ. Քո՛ է ... - Դո՛ւ ունես...):

բ) Տրամաբանորեն շեշտելով՝ առանձնակի ընդգծում է աղոթողի՝ հասարակ մահկանացուի աներկբա և անբեկանելի հավատն առ Բարձրյալը՝ վերջինիս ունեցած ամենաէական հատկանիշների (արքայություն և զորություն և փառք հավիտենապես) հանգույն:

գ) Ավելի հարազատ է բնագրին՝ գոյականների քերականական հատկանիշների նույնության առումով: Երկու դեպքում էլ գոյականները քերականորեն անորոշ են (Հմմտ.Քանի որ Քո՛նն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս. Ամեն:-Քանի որ Դո՛ւ ունես արքայություն և զորություն և փառք հավիտենապես. Ամեն):

HAYRAPETYAN Sergo (Armenia)
Shirak Center for Armenologocal Studies of NAS RA
e-mail: serhayr@mail.ru

EQUIVALENCE IN TRANSLATION

"Our Father" is one of the first and most widespread Christian prayers, the grace-bestowing prayer of Jesus Christ, which He revealed to His disciples as an example of true prayer. It is recited or sung during all sacraments — at the beginning and at the end, each time symbolizing the Lord's revelatory word about Himself, that "I am the Alpha and the Omega, the Beginning and the End, the First and the Last".

In Armenian spiritual exegetical literature, this prayer, also known as «Տէրունական», is the most commented-on passage from the Gospels. Many — Grigor the Illuminator, Hakob Mtsbnetsi, Yeghishe, Nerses Lambronatsi, Ghazar Parpetsi, Stepanos Syunetsi, John Chrysostom, Grigor Narekatsi, Grigor Tatevatsi, and many others up to our days — have directly or indirectly referred to the «Տէրունական» prayer, commenting on one or another of its phrases. Moreover, many of them interpreted the prayer with the utmost meticulousness and thoroughness. For example, one of these wise and profound fathers — Gr. Tatevatsi — did so literally word by word, often explaining the same concept or word from the most diverse perspectives.

Incidentally, the fact that in the Gospel of Luke, after the phrase After the phrase "And lead us not into temptation," there is no "but deliver us from evil, for yours is..." are missing, allows us to suppose that these words were added to the prayer later. Supporting this view is also the argument that in Luke's version the missing part of the prayer does not appear in Greek, Latin, and a number of ancient and modern languages.

The prayer contains seven petitions. The first three ("Thy name shines forth" — Սուրբ եղիցի անուն քո, "Thy kingdom come" — Եկեսցէ արքայութիւն քո, "Thy will be done" — Եղիցին կամք քո) glorify God; the other four relate to the human being: the person asks God to give him daily bread, forgive debts, not lead into temptation, and deliver from the evil one. And since the one who prays fully entrusts himself to God, at the end of the prayer he recognizes only in Him the eternal King, eternal power, and glory — "For thine is the kingdom, and the power, and the glory, forever and ever. Amen." («Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամե՛ն»).

At the same time, in this case, the discussion concerns the linguistic aspect of the prayer; in particular, from the point of view of translation, attention is drawn to the last petition of the prayer — «...զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս», which in the modern Armenian translation appears as: «...քանի որ Քոնն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս, ամեն» ("...for thine is the kingdom, and the power, and the glory, forever and ever, amen").

The point is that in classical Grabar, the auxiliary verb «է», functioning as a simple predicate (substantive verb), shows different meanings depending on the case of the subject: with the nominative it means "to exist, to be," with the dative — "should, must, can," and with the genitive — "to have." However, subjects in oblique cases in modern

Armenian are usually translated into the nominative (compare «Էր նորա դուստր մի» — “He had a daughter”; «Էր ինձ լինել ի տան» — “I had to be at home”).

Based on the above, the following version of the modern Armenian translation of the prayer’s last petition can be considered acceptable: «քանի որ Դու՛ ունես արքայություն և զորություն և փառք հավիտենապես: Ամե՛ն:». This version is justified by the following considerations:

a) It preserves the peculiarities of translating the substantive verb-predicate and its genitive subject from Grabar (cf. «Քո՛ է ...» - «Դո՛ւ ունես...» — (“It is yours...” — “You have...”)).
b) Logically, it especially emphasizes the unequivocal and unwavering faith of the one praying — a mere mortal — in the Almighty, in His possession of the most essential attributes (kingdom, power, and glory forever).
c) It more closely corresponds to the original in terms of the grammatical indefiniteness of the nouns: in both cases, the nouns are grammatically indefinite (cf. «Քանի որ Քո՛նն է արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս. Ամեն» — «Քանի որ Դու՛ ունես արքայություն և զորություն և փառք հավիտենապես. Ամեն»).

АЙРАПЕТЯН Серго (Армения)
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
e-mail: serhayr@mail.ru

О ПЕРЕВОДНОЙ ЭКВИВАЛЕНТНОСТИ

«Отче наш» — одна из первых и самых распространённых христианских молитв, благодатная молитва Иисуса Христа, которую Он открыл Своим ученикам как пример истинной молитвы. Она произносится или поётся во время всех таинств — в начале и в конце, каждый раз символизируя откровенное слово Господа о Самом Себе, что «Я есмь Альфа и Омега, Начало и Конец, Первый и Последний».

В армянской духовной экзегетической литературе эта молитва, также именуемая «Терунакан» (Տէրունական), является самым комментируемым евангельским отрывком. Многие — Григор Просветитель, Иаков Нисибиский, Егище, Нерсес Ламбронаци, Лазарь Парпеци, Степанос Сюнеци, Иоанн Златоуст, Григор Нарекаци, Григор Татеваци и множество других, вплоть до наших дней, прямо или косвенно обращались к «Терунакан» молитве, комментируя ту или иную её фразу. При этом многие из них истолковывали молитву с величайшей тщательностью и скрупулёзностью. Например, один из этих мудрых и глубокомысленных отцов - Гр. Татеваци - сделал это буквально слово за словом, часто объясняя одно и то же понятие или слово с самых различных точек зрения.

